Ս. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼԵՈՆ ԲԱՇԱԼՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ս. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆ

A 1/10241

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1969

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

С. А. МАНУКЯН

Левон Башалян

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1969

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Արևմտահայ ռեալիստական արձակի, մասնավորապես նորավեպի և պատմվածքի զարգացման երախտավոր մշակներից է Լևոն Բաշալյանը: Նա չի թողել մեծաքանակ գրական ժառանգություն, սակայն ստեղծել է գեղարվեստական մի շարք անժխտելի արժեքներ, որոնք հայ դասական գրականության ընտիր էջերից են: Նա վաղ վար դրեց իր կարող գրիչը: Ստեղծագործական անդրանիկ քայլերից մինչև իր մահը, շուրջ վաթսուն տարի տևող մի պատկառելի ժամանակահատվածում, Լ. Բաշալյանը բուռն թափով և անընդմեջ զբաղվեց գրականությամբ միայն սկզբնական մեկուկես տասնամյակում և գրեթե լռեց: Նրա նուրբ ու բնատուր քանքարը չբացահայտվեց մինչև վերջ, ամբողջ խորությամբ ու լայնությամբ: Ահա ինչու նրան ևս, Տ. Կամսարականի պես, անվանել են «դասալիք» և

«ծույլ»[1]: Բայց ոչ ոք չի ժխտել նրա ինքնատիպ տաղանդը և առաջատար դերը արևմտահայ հանրածանոթ «ութսունականների» գրական-հասարակական շարժման պատմության մեջ: Նա այդ շահեկան շարժման հիմնադիրներից և սյուներից մեկն էր՝ Ա. Արփիարյանի, Գ. Զոհրապի, Տ. Կամսարականի և մյուսների հետ միասին: Մեծ ու շնորհակալ է Բաշալյանի ծառայությունը այն դժվարին ու արգասավոր պայքարին, որ «ութսունականները» մղում էին կյանքի, գրականության, մշակույթի բոլոր բնագավառներում: Նա առաջադեմ հասարակական գործիչ էր, դեմոկրատ հրապարակագիր, գրաքննադատ և գրող, թեև նրա հայացքները զերծ չէին որոշ սահմանափակությունից: Այն ամենը, ինչ անցյալ դարի վերջերին հուզում, այլեկոծում էր ողջ արևմտահայությանը և «ութսունականներին», կարելի է գտնել Լ. Բաշալյանի գրական ժառանգության մեջ: Եվ տեսականորեն՝ հրապարակախոսական ու գրաքննադատական հոդվածներով, և գործնականում՝ գեղարվեստական ստեղծագործություններով, նա հետևողականորեն պաշտպանում էր «կյանքն ինչպես որ է»[2] ռեալիստական, ինչպես ինքը կասեր՝

---

1 Տակավին 1901-ին Ա. Չոպանյանը գրել է. «Ըսած եմ, այո. թե «ծույլ» մըն է, և ատի ամենեն առաջ իրեն եմ ըսած, որովհետև ես կմտածեմ, թե Բաշալյան կարող է արտադրել շատ ավելի մեծ գրական գործ մը. քան ինչ որ արտադրած է, եթե... իր բոլոր ուժերն ու խանդերը գրականության նվիրե» («Անահիտ», 1901, № 3, էջ 77):

2 Այս վերնագիրն ունի Լ. Բաշալյանի մի հոդվածը, որտեղ խոսվում է գրական նոր սերնդի խնդիրների մասին (տե՛ս «Հայրենիք», օրաթերթ. 1893, № 403):

«իրապաշտական» սկզբունքը, այն տեսակետը, թե «Սուրբ պարտականություն է աշակերտել իրականության» (Արփիարյան), թե «Գրականությունը ժողովրդյան կյանքեն պիտի քաղվի՝ ժողովրդյան կյանքին ծառայելու համար» (Զոհրապ): Այս սկզբունքներով է առաջնորդվել նա, ստեղծելով իր փայլուն գեղարվեստական գործերը, որոնցից չորսը՝ «Ղալաթիա «Բեսը»-ը», «Տերտերին ոսկոր», «Աղավնիները» և «Ցեղին ձայնը» տեղ են գտել հայ գրականության ընտիր էջերի՝ Հովհ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Վրթ. Փափազյանի կազմած «Հայ գրողներ» գրքում. իսկ կազմողները, գեղարվեստական խոսքի այդ մեծանուն վարպետները, Բաշալյանի հիշյալ գործերը, ապա նաև «Զարթոնքը», «Արիան», «Կաղանդը» և մյուսները բնութագրել են որպես «նշանակալից պատմվածքներ և գողտրիկ նորավեպեր»[1]: Պետք է ընդգծել, որ ընդհանրապես Լ. Բաշալյանի մասին բարձր գնահատականի ջերմ խոսք են ասել մեր գրականության ու մշակույթի ականավոր վարպետները՝ Ս. Շիրվանզադեն, Ա. Արփիարյանը, Գ. Զոհրապը, Տ. Կամսարականը, Ա. Չոպանյանը, Ե. Օտյանը, Վ. Փափազյանը, Վ. Թեքեյանը, Զ. Եսայանը և ուրիշներ: Նրա նորավեպերն ու պատմվածքները համարվել են «անկորնչելի հրաշակերտ»[2], «հոյակապ էջեր... որոնք օր մը մեր ծաղկաքաղներուն մեջ պիտի անցնին և հոն ընդմիշտ պիտի մնան իբր կատարյալ արձա-

---

[1] «Հայ գրողներ», Բ գիրք, «Օտարահայ գրողներ», Թիֆլիս, 1910, էջ 805:

[2] Ե. Օտյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 4, Երևան, 1962, էջ 131:

Ներկա մենագրությունը հայ գրականության գրեթե չգնահատված տաղանդավոր ներկայացուցիչներից մեկի գրական ստեղծագործության, հասարակական, հրապարակախոսական ու լրագրական գործունեության առաջին ուսումնասիրության փորձն է: Հեղինակը ձգտել է ի մի բերել Լևոն Բաշալյանի գրական ժառանգությունը և որոշել նրա տեղը հայ գրականության մեջ:

7—2—3

կի... նմուշներ»[1]: Համընդհանուր հիացմունք է առաջ բերել շարունակ Բաշալյանի պերճ ու կուռ հայերենը. նրան բնորոշել են որպես «բառերի արժեքը միշտ կշռող, նախադասության մեջ նրանց տեղն իմացող հմուտ ոսկերիչ, որ թանկագին քարերով շարում էր իր պսպղուն աշխարհաբարը»[2]: Բաշալյանի անունը հանախակի հիշատակվել է գրականության պատմության տարբեր գրքերում, առանձին գրողների և գրական պրոբլեմների նվիրված մենագրություններում, պարբերական մամուլի էջերում: Սակայն նրա ստեղծագործությունը ըստ արժանվույն վերլուծված ու գնահատված չէ: Ավելին, մամուլում ցրված նրա երկերը երկար ժամանակ մատչելի չէին ընթերցող լայն շրջաններին: Բավական է ասել, որ այդ երկերի միայն մի մասը առանձին գրքով լույս է տեսել հեղինակի գրական բեմելից 60 տարի հետո, 1943-ին Փարիզում («Նորավեպեր և պատմվածքներ»), իսկ մեզ մոտ ավելի ուշ՝ 1962-ին («Ընտիր երկեր»): Այդ ժողովածուներին կցված Ս. Զոպանյանի և Վ. Դավթյանի առաջաբանները մեզ հայտնի ամենածավալուն ուսումնասիրություններն են Բաշալյանի մասին: Պարզ է, որ առաջաբանների բնույթն ու ծավալը թույլ չէին կարող տալ հեղինակներին համգամանորեն քննելու և արժեքավորելու գրողի ամբողջ ժառանգությունը:

Ներկա գրքույկը Բաշալյանին նվիրված մենագրական ու-

---

[1] Ս. Զոպանյան, Լևոն Բաշալյանը և իր գործը, Բաշալյանի «Նորավեպեր և պատմվածքներ» ժողովածուի առաջաբանը. Փարիզ, 1943, էջ Ժ:

[2] Վահրամ Փափազյան, Սրտիս պարտքը, Երևան, 1959, էջ 139:

Լևոն Բաշալյան
(1868—1943)

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ

սումնասիրության առաջին փորձն է, որի նպատակն է հիմա-ռոտակի գծել գրողի ստեղծագործական ուղին և ներկայացնել նրա գրական դիմանկարը։ Մեր ուշադրության կենտրոնում եղել է Բաշալյանի գեղարվեստական ժառանգությունը, իսկ հասարակական, հրապարակախոսական, գրաքննադատական ու լրագրական գործունեությանը անդրադարձել ենք այնքա-նով, որքանով դա անհրաժեշտ է ամբողջական գաղափար տա-լու տաղանդավոր արձակագրի մասին։ Հասկանալի է, որ եր-կար տարիներ հանիրավի մոռացության մատնված և գրեթե չուսումնասիրված մի գրողի վերաբերյալ այս անդրանիկ մե-նագրությունը հեռու է անթերի ու սպառիչ խոսք լինելու որևէ հավակնությունից։

ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՆ

Լևոն Բաշալյանը ծնվել է 1868 թ. սեպտեմբերի 24-ին, Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում, «Սկյուտարի սոխակ» Պետրոս Դուրյանի ծննդավայրում։ Հայրը Բալուից Պոլիս հրավիրված հմուտ ճարտարապետ էր, ղեկավարում էր «վարդի ու սոխակի» հայրենիք Ալեմդաղում կառուցվող մի սարայի շինությունը։ Ընտանիքը կիրթ էր, արվեստասեր ու գրասեր և հատուկ զբաղվում էր փոքրիկ Լևոնի դաստիարակությամբ։ Մինչև դպրոց հաճախելը, մանուկ Բաշալյանը Սկյուտար-Իճադիեի Գայանե հանըմի մանկապարտեզի սանն էր, արդեն գրաճանաչ էր, բավականին գիտեր անգլերեն և ֆրանսերեն։ Ութ տարեկան հասակում նա ընդունվում է նորաբաց Պերպերյան վարժարանը՝ պոլսահայ լավագույն ուսումնական հաստատություններից մեկը, ուր ավելի քան կես դար (1876—1922) հիմնավոր կրթություն են ստացել հայ մանուկները, այդ թվում աչքի ընկնող բանաստեղծներ ու գրագետներ Սիամանթոն, Ռ. Սևակը, Ե. Օտյանը և ուրիշներ։ Իբրև վարժարանի առաջին սաներից մեկը. Բաշալյանն աշակերտում է դպրոցի հիմնադիր, անվանի մանկավարժ, գրող ու հրապարակագիր Ռեթեոս Պերպերյանին, որի

մասին Գր. Զոհրապը գրել է. «Մեր ազգի կրթության հոյակապ վաստակավորն է ան, իր դաստիարակության գործը պարզապես հիանալի է»[1]։

Հմուտ մանկավարժի, Զոհրապի բնութագրմամբ՝ «մեր ժամանակի ամենեն նշանավոր դեմքերեն մինը» հանդիսացող «դաստիարակի, խորհողի, գրագետի»[2] ղեկավարած դպրոցում ընդունակ ու ընթերցասեր Բաշալյանը ձեռք է բերում լուրջ գիտելիքներ, մասնավորապես խորանալով լեզվի ու գրականության, պատմության ու բանասիրության՝ իր նախասիրած առարկաների մեջ։ Աշակերտական նստարանից նա գրելու և թարգմանելու փորձեր է կատարում, դրսևորելով շարադրելու նախանձելի հմտություն։ Դպրոցը նրան պատրաստում էր գրական-հրապարակախոսական ինքնուրույն գործունեության։ Թեև վարժարանն ավարտելուց հետո, 1883-ի օգոստոսին, նա «գործ է փնտրում առևտրական ու սեղանավորական տուներուն»[3] մեջ, ինչպես բոլոր նորավարտները, սակայն այլ ուղի էր սպասում պատանուն։ Որոշ ժամանակ անց «Բուրաստան մանկանց» հանդեսի հրատարակիչ-խմբագիր Կ. Գարակուլյանի հանձնարարականով Բաշալյանը ներկայանում է «Մասիս» շաբաթաթերթի տնօրենին (Կ. Ութուճյան) փոխարինող Բ. Պողաճյանին՝ աշխատանքի անցնելու իբրև օգնական-խմբագիր։ Պողաճյանը, բնականորեն, կասկածամտությամբ է նայում «անբեղ-անմորուս» 16-ամյա պատանուն և առաջարկում

1 Գր. Զոհրապ, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1962, էջ 45։

2 Նույն տեղում, էջ 469։

3 Ճառ Լևոն Բաշալյանի (իր հոբելյանի առթիվ), «Անահիտ», 1934, № 5—6, էջ 92։

է «Թան» ու «Թայմս» թերթերից թարգմանել երկու փոքրիկ լուր։ Բաշալյանն արագորեն ու ճշտությամբ կատարում է առաջադրանքը, թարգմանությունններն ուղարկվում են տպարան շարվելու, իսկ ինքն ընդունվում է աշխատանքի՝ 1884-ի հունվարի 1-ից։ Վերհիշելով այդ մասին, Բաշալյանը հետագայում գրել է. «Ինքը (Պողաճյանը —Ս. Մ.) ավելի զարմացած կթվեր իմ մեջս գտած կարողութենին, քան ես՝ իմ դյուրալի հաջողութենին»[1]։ Նույն՝ 1884-ին, երբ «Մասիսի» հրատարակության իրավունքը վաճառվում է «Արևելք»-ին և սկսում է լույս տեսնել Ա. Արփիարյանի խմբագրությամբ, Լ. Բաշալյանը մնում է օգնական-խմբագիր, դառնում «ութսունականների» ճանաչված ղեկավար Արփիարյանի «աջ ձեռքը»։ Եվ նույն թվականից էլ, նույն պարբերականներում սկսում են լույս տեսնել սկսնակ Բաշալյանի նախ՝ թարգմանությունները (ֆրանսիական գրականությունից ու լուրեր թերթերից), հրապարակախոսական ու գրաքննադատական հոդվածները, ապա նաև՝ նորավեպերը, պատմվածքները, քրոնիկները։ Պետք է ասել, որ գրական գործունեության սկզբնական շրջանում Բաշալյանը գտնվում էր ռոմանտիկական ուղղության ազդեցության տակ և դավանում էր գրաբարախառն աշխարհաբարը։ Սակայն դա պարզապես աննշան տուրք էր իր պատկառելի ու հեղինակավոր ուսուցիչ Ռ. Պերպերյանին և նրա համախոհներին՝ Թ. Թերզյանին, Հ. Գուրգենին, Մ. Գարագաշյանին և մյուսներին, անցման մի շատ կարճատև ժամանակաշրջան, որն արագորեն հաղթահար-

[1] Նույն տեղում։

վեց՝ առանց շոշափելի որևէ հետք թողնելու Բաշալյանի ստեղծագործության մեջ։ Նրա գրական ուսուցիչները դարձան ռեալիստ մեծ գրողներ Գ. Ֆլոբերը, Գի դը Մոպասանը, Ա. Դոդեն, Է. Զոլան, շատով նաև՝ ռուսական ռեալիստական արձակի հանճարներ Լ. Տոլստոյը, Ի. Տուրգենևը, Ֆ. Դոստոևսկին։ Նա շատ բան սովորեց նախորդ ու ժամանակակից հայ գրողներից և ժողովրդական բանահյուսությունից, որը նա համարել է «ճշմարիտ գոհար»[1]։ Անվերապահորեն ընդունելով ռեալիզմին, Բաշալյանը շուտով դարձավ արևմտահայ աշխարհաբարի ոչ միայն ամենաչքեղ ջատագովներից, այլև ամենահմուտ վարպետներից մեկը։ Կարճ ժամանակում ձեռք բերելով խոր գիտելիքներ և ստեղծելով մի շարք արժեքավոր գործեր, նա արդեն 80-ական թվականների կեսերին լուրջ հեղինակություն էր գրական շրջաններում, նոր սերնդի եռանդագին ու բարի խորհրդատուներից մեկը։ Պոլսահայ նշանավոր գրողներից շատերը՝ Ա. Չոպանյանը, Գ. Զոհրապը, Տ. Կամսարականը, Ե. Օտյանը, Վ. Թեքեյանը և ուրիշներ երախտագիտությամբ են նշել Բաշալյանի անունը, որպես իրենց գրական անդրանիկ քայլերը խրախուսողի ու քաջալերողի։ Նրանք բոլորն էլ միահամուռ շեշտել են Բաշալյանի արտակարգ գրավիչ ուժը, երիտասարդ տաղանդներին ճանաչելու և առաջ քաշելու ազնիվ բնավորությունը։ Այս առթիվ Ա. Արփիարյանը գրել է. «Հայերենի հմուտ, գրասեր ճաշակով օժտված, գրելու կոչում ունեցող ու միանգամայն շատ համակրելի երիտասարդը (Բա-

---

[1] Լ. Բաշալյան, Նոր գիրքերը, «Հայրենիք», 1895, № 1152։

չալյանը—Ս. Մ.) շուտով իր շուրջը կհավաքե իրեն տարեկիցները և իրմե տարեցները, և ամենքը միասին մեր գրականության նոր շարժ մը կուտան»[1]։ Ա. Չոպանյանը ասել է, թե «Ան (Բաշալյանը—Ս. Մ.) ըլլալ առաջին խրախուսողներեն մին եղած է, գրական եղբոր մը ջերմությամբ գնահատելով իմ սկսնակի փորձերս և հյուրընկալելով զանոնք «Արևելքի» և հետո «Մասիսի» մեջ»[2]։ Բաշալյանն առաջիններից մեկն է, որ գրախոսել ու գնահատել է արևմտահայ 80-ական թվականների գրականության այնպիսի աչքի ընկնող երևույթներ, ինչպես Ղ. Ալիշանի «Սիսվանը», Գ. Սրվանձտյանի «Թորոս-աղբարը», Գ. Զոհրապի «Անհետացած սերունդ մը» և Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպերը, Ա. Արփիարյանի «Կյանքի պատկերները», Մ. Կյուրճյանի «Պանդուխտի կյանքեն» և այլն։ Նա իր գործունեության հենց սկզբնական շրջանում ջերմորեն է արտահայտվել Վ. Հյուգոյի «Թշվառների» (Գ. Չիլինկիրյանի թարգմանությամբ), Դ. Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոյի», Բ. Ստոուի «Քեռի Թոմասի տնակի» մասին, Ց. Դուստուևսկու մի երկի առթիվ գրել է, թե նա «Իվան Թուրկենեֆի և Լեոն Թոլսթոյի հետ կը կազմե ռուս վիպասանաց ամենափայլուն երրորդությունը»[3]։ Բազմաթիվ մեծ ու փոքր երկերի թվում նա ֆրանսերեն բնագրից թարգմանել ու հրատարակել է Ժյուլ-Վեռնի «Սև

[1] «Արևմտյան հայոց արդի գրականությունը», «Բանբեր գրականության և արվեստի», Բ գիրք, 1904, էջ 173։

[2] Ա. Չոպանյան, Լևոն Բաշալյանը և իր գործը, Բաշալյանի «Նորավեպեր և պատմվածքներ» գրքում, Փարիզ, 1943, էջ Ը։

[3] Լ. Բ. (Լևոն Բաշալյան), Զանազանք, «Մասիս», 1886, № 3807։

Հնդկաստան» վեպը (1889)։ Չնայած երիտասարդ տարիքին, Բաշալյանն արդեն 80-ական թվականներին ակտիվ հասարակական գործիչ էր՝ սոցիալական և ազգային ազատության համար, սուլթանհամիդյան ռեակցիոն ռեժիմի դեմ մղվող պայքարի մարտիկ։ Որպես այդպիսին, 1890-ի հուլիսի 15-ի Գում-Գափուի հայտնի բողոքի ցույցից հետո, Բաշալյանը ևս Արփիարյանի և ուրիշների նման ենթակա էր ձերբակալման, սակայն խուսափելով հաշվեհարդարից, գաղտնի հեռանում է Պոլսից և ապաստանում Փարիզում։ Այստեղ նա գերազանցորեն զբաղվում է ընթերցանությամբ, մոտիկից ծանոթանում իր սիրելի գրողների հայրենիքին, գրական ու կուլտուրական կյանքին։ 1891-ի ամռանը, երբ բանտից ազատված Ա. Արփիարյանը սկսում է խմբագրել «Հայրենիք» օրաթերթը, վերջինիս հրատարակիչ Հովհ. Շահնազարյանի ջանքերով ու միջնորդությամբ Բաշալյանն ստանում է Պոլիս վերադառնալու արտոնություն և ժամանելուն պես ստանձնում է թերթի օգնական-խմբագրի պարտականությունը։ Ժամանակակիցների միահամուռ վկայությամբ «Հայրենիք» օրաթերթը, շարունակելով «ութսունականների» օրգաններ «Արևելքի» և «Մասիսի» սկսած բուռն պայքարը հետադիմության ու բռնակալության դեմ՝ ազատ կյանքի և ռեալիստական գրականության համար, շուտով դառնում է արևմտահայ ամենամասսայական պարբերականը, իսկապես ամեն հայրենասեր հայի «խրճիթին թերթը», ինչպես ասված է առաջին համարի (1891, 13 հուլիսի) խմբագրականում։ Հաստատելով, որ «Հայրենիքը» ժամանակի «ամենաժողովրդական թերթն էր», որը «զարգացուց քննադա-

տական ոգին, գեղեցիկ գրականության սերը տարածեց ժողո-վըրդին բոլոր խավերուն մեջ», նույն թերթում հանդես եկած Ա. Չոպանյանը Ա. Արփիարյանի, Ե. Օտյանի և ուրիշների թվում հատուկ ընդգծում է Լ. Բաշալյանի կարևոր դերը այդ գործում։ Նշելով, թե Բաշալյանը օրաթերթի «գրական խմբագրապետն էր», որին հանձնարարված էր հետևել «լեզվի մաքրության պահպանմանը», ընտրել, ստուգել գեղարվեստական բաժնի նյութերը, Չոպանյանը գրում է. «Հայրենիքը» այդպիսի գիտակից ու խղճամիտ գրագետի մը ղեկավարության տակ դարձավ մեծարժեք օրգան մը, ամենեն նորագեղ, ամենեն բեղմնավոր թերթը, զոր արևմտահայերն ունեցած ըլլային մինչև այն ատեն»[1]։ «Հայրենիքին» մատուցած խոշոր ծառայությունները, թերթի էջերում տպագրվող փայլուն հոդվածները, քրոնիկները, գողարիկ նորավեպերը և ակնարկները («Մտքին ու դրամին պայքարը», «Խոհարար և վիպասան», «Գրելե առաջ», «Աղան», «Աղար», «Արմաշի ուխտագնացությունը», «Միջերկրականի հիշատակներ», «Աղավնիներ», «Զարթոնք» և այլն), նախորդ տարիների շոշափելի գրական-հրապարակախոսական վաստակի հետ միասին («Հմայաթափ», «Ղալաթիո «Բեռդ-ը», «Խաչախաչին», «Սյուզենիի Վարպետ», «Անժել», «Նոր զգեստը», «Պալըխչի Գևորգ», «Տերտերին ուխտը», «1885 տարին Թուրքիո հայ գրականության համար» և այլն) արդեն 90-ական թվականներին բավականին լայն հռչակ են բերում երի-

---

1 Ա. Չոպանյան, Լևոն Բաշալյանը և իր գործը, Բաշալյանի «Նորավեպեր և պատմվածքներ» գրքում, էջ ժ—ժէ։

տասարդ Բաշալյանին։ Նա լուրջ հեղինակություն էր վայելում պոլսահայ «գրական աշխարհում» և ընթերցողների շրջանում։ Պոլսի, այսպես կոչված, «գրական սալոնների» ցանկալի հյուրն էր նա։ Ընդսմին, պետք է նկատի ունենալ, որ այդ սալոնները, մասնավորապես Մատակյաններինը և Մալեզյաններինը, սովորական ժամանցի վայր չէին, այլ յուրօրինակ ակումբ, որտեղ հավաքվում էին ժամանակի անվանի և երիտասարդ գրեթե բոլոր գրողները, մամուլի և մշակույթի գործիչները, մտավորականները՝ Ե. Տեմիրճիպաշյանը, Ա. Արփիարյանը, Գ. Զոհրապը, Տ. Կամսարականը, Ե. Օտյանը, Հ. Ալփիարը, Սիպիլը, Զ. Եսայանը, Ալփաւլանը (Ալ. Փանոսյան), գավառներից՝ Հ. Թլկատինցին, Ռ. Զարդարյանը, Մալկարացի Կարոն (Արտ. Հարությունյան) և շատ ուրիշներ։ Նրանք երբեմն կազմակերպում էին գրական ժամանցներ, բայց հիմնականում զբաղվում էին ասուլիսով, վիճում օրվա կենսական խնդիրների, գրականության, արվեստի, գրական ուղղությունների, գրողի կոչման, ժողովրդի կրթության, լուսավորության, մարդկային բարոյականության և բազում ուրիշ հրատապ հարցերի մասին, կազմում էին «գրական և կրթական ծրագրեր»[1],—ինչպես ասված է Զապել Եսայանի անտիպ հուշերում։ Սույն հուշերում կարդում ենք. «Ամեն շաբաթ իրիկուն տիկին Մատակյանի տունը կը հավաքվեին ժամանակին հայտնի գրողներ և մտավորականներ, մասնավորապես «Հայրենիք»-ի խմբագրա-

[1] Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Զ. Եսայանի ֆոնդ, թղթապանակ № 6 («Ինքնակենսագրություն»), էջ 380։

2—396

կան կազմը... Տիկին Մատակյանի սալոնը հաճախող գրական անձերուն մեջ Լևոն Բաշալյան ամենեն երիտասարդն էր։ Անի-կա հռչակ ստացած էր արդեն իր մեկ քանի վիպակներով (ի՛մա նորավեպերով ու պատմվածքներով—Ս. Մ.), որոնք մեծ ազդեցություն գործեր էին ռեալիստական գրականության կազ-մության մեջ»[1]։ Երիտասարդ գրողին և մարդուն բնութագրող ուշագրավ էջեր ենք տեսնում նաև Անայիսի (Ե. Ավետիսյանի) հուշերի գրքում։ Նա ևս հաստատում է Բաշալյանի հեղինակու-թյունը գրական սալոններում, ընթերցողների մեջ։ Մասնավո-րապես վերհիշելով իր հորաքրոջ տանը երբեմն տեղի ունեցած հավաքույթները, նա գրում է. «Հոն էր նաև Լևոն Բաշալյան գրագետը, նորընձյուղ, վայելչակազմ, ցանցրահեր, արդեն սրտեր ըղկող, քիչ մը արհամարհոտ, բայց անհունապես հա-ճելի... Ինչ որ մասնավորապես հաճելի էր երիտասարդ գրա-գետին քով, իր գեղեցիկ գրվածքներեն դուրս, իր ծաղկե-ծաղիկ թևածող թռչունի նման խոսակցությունն էր, նյութե-նյութ անցնելով սիրուն դյուրությամբ մը»[2]։ Բաշալյանը, թեև երի-տասարդ, սակայն արդեն ուներ խոր գիտելիքներ, նուրբ ճա-շակ, կիրթ վարվելակերպ, հաճելի զրուցակից էր և սրամիտ ու բանիմաց բանավիճող։ Այս մասին ականատեսի հավաստի վկայություն ունի նաև ականավոր արտիստ Վահրամ Փափազ-յանը։ Հանրածանոթ դերասանուհի Ազնիվ Հրաչյայի բնակա-րանը Բաքվում համարելով «լուսավոր մտքերի ժամադրա-

1 ԳԱԲ, Զ. Եսայանի ֆոնդ, № 6, էջ 363 և 383։

2 Անայիս, «Հուշեր», Փարիզ, 1949, էջ 67—68։

վայր», նա գրել է. «Այն կարճ ժամանակը, որ ես անցկացրի Բաքվում, ինչե՞ր չտեսա այդ տանը. ես տեսա բոլորը, ինչ ուներ Կովկասը, նրա ձյունապատ լեռների ոգին ոսկի բառերի ջրվեժ էր դառնում Հրաչյայի փոքրիկ սալոնում, մտքերի բախման այնպիսի հմայիչ պատկեր, որ ես երբեմն մոռանում էի Պոլսո հետ՝ Փարիզն անգամ:

Եվ ո՞վ կարող էր լիաթոք շնչել բարձրորակ մտքերի, արտահայտության նրբին ձևերի այդ մթնոլորտում, եթե ոչ խոսքի հմայիչ սուսերամարտիկ Բաշալյանը, որը ոչ միայն ձեռնոց էր նետում ամեն մի րոպե, այլ բարձրացնում էր նետված ձեռնոցը՝ ասպետի նման: ...Հաճախ մի բառով կամ մի նայվածքով, կամ անակնկալ ժպտով շեշտված մի կարճ հարցումով. ինչպես Զոհրապը գիտեր անել, մերկացնում էր իր խոսակցի հոգին և ներքնաշխարհը նրա՝ ափի մեջ առած նյութ էր քաղում իր գրչի համար»[1]:

Բաշալյանը որպես գրող, հրապարակագիր և «Հայրենիք»-ի խմբագիրներից մեկը՝ ճանաչված ու սիրված դեմք էր ոչ միայն Պոլսում, այլև գավառներում: Այս մասին շատ հետաքրքրական հիշողություններ ունի նույն օրաթերթի մյուս օգնական-խմբագիր Երվանդ Օտյանը: Նա հավաստում է, որ «Հայրենիքը», ժամանակի այդ «ամենեն ավելի տարածված ժողովրդական օրաթերթը», հատկապես մեծ համակրանք էր վայելում գավառների մեջ, և Պոլիս ժամանող գավառացի

---

1 Վ. Փափազյան, *Սրտիս պարտքը*, Երևան, 1959, էջ 137—138:

յուրաքանչյուր գրասեր փափագում էր տեսնել խմբագիրներին, ճանաչել նրանց, շնորհակալություն հայտնել. «Այցելուն նախ բնականաբար Արփիարյանը կուզեր ճանաչել, հետո Բաշալյանն ու Օտյանը», որոնց գիտեր արդեն անուններով։ Բայց որովհետև վերջին երկուսը շատ երիտասարդ էին, պատկառանք ազդելու փոխարեն կարող էին հուսախաբանել այցելուներին, ուստի թերթի հեղինակությունը և խմբագիրների նկատմամբ կազմված բարձր կարծիքը պահպանելու համար Արփիարյանը իր ընկերներին ներկայացնում էր որպես Բաշալյանի և Օտյանի զավակներ...

— Լևոն Բաշալյանը և Երվանդ Օտյանը հոս չեն, կըսեր, բայց իրենց զավակները հոս են. և մեզ կը ներկայացներ իբրև Բաշալյանի և Օտյանի զավակները։

Մարդը կսկսեր գովեստներ շռայլել մեր հորը և կը մեկներ, խնդրելով որ իր խորին հարգանքները հաղորդենք Լևոն Բաշալյանին և Երվանդ Օտյանին»[1]։

Գավառի ու կենտրոնի աշխատավորության, արևմտահայության ճնշված, ունեզուրկ ներքնախավերի և բոլոր առաջադեմ մարդկանց հարգանքը վայելող գրողն ու լրագրողը, բնական է, չէր կարող չվաստակել նաև պետական իշխանությունների, հարստահարիչ վերնախավերի, խավարին վարժված հետադիմական տարրերի բուռն թշնամանքը։ Իբրև օրինակ հիշատակենք միայն մեկ բնորոշ փաստ։ Հարուստների, «ազնվաշուքների», կեղեքիչ եկեղեցականների, էֆենդիների և աղա-

1 Ե. Օտյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1962, էջ 33—34։

ների դեմ ուղղված բազմաթիվ հոդվածների և հատկապես «Աղան» մերկացնող քրոնիկի համար, ուր կոնկրետ ու վավերական ձևով ցույց է տրվում, թե ինչպես «տգետ, ամբարտավան, գծուծ, շահամոլ» աղաները աշխատավոր գյուղացիներին հոշոտում են գայլերի պես, նրանց պատճառով տեղի են ունենում «ողբերգություններ, որոնք արյուններով կսկսին և արցունքներով կվերջանան»[1], Բաղեշի աղաները դիմում են իշխանություններին և պահանջում դատաստան տեսնել իրենց «պատիվն արատավորող» հեղինակի հետ: Իսկ դատաստանը, և այն էլ արյունոտ դատաստանը, արդեն պատրաստվում էին տեսնել «կարմիր սուլթանն» ու կեռ յաթաղանը: Օրավուր ուժեղացող հայահալած քաղաքականության պայմաններում Լ. Բաշալյանը մեկն էր այն մտավորականներից, որոնց ոչնչացնելու դավերն արդեն նյութվում էին: Շատերի թվում այդ զգում ու հասկանում էր նաև գրողը, որը 1895—1896 թվականների ջարդերի ժամանակ մտահոգված էր ոչ այնքան իր անձի, որքան հայ ժողովրդի ողբերգական վիճակով: 1895-ի մայիսի 25-ին նա Չոպանյանին գրել է. «Իրականությունը ի՜նչ անողոք է Արշակ»[2], իսկ 1896-ի ապրիլի 8-ին ավելացրել. «Ի՞նչ պիտի ըլլանք, ի՞նչ, ի՞նչ... պիտի կրնա՞նք գոնե հայրենիքը փրկել»[3]:

Բուն Պոլսում 1896-ի օգոստոսի 14-ի հայկական ջարդերից խուսափելով Բաշալյանը կրկին, բազմաթիվ այլ գրողների ու մտավորականների նման (Արփիարյան, Օտյան և ուրիշ-

---

1 «Հայրենիք», 1895, № 1242:

2 ԳԱԹ, Լ. Բաշալյան, Նամակներ Ա. Չոպանյանին, № 1224:

3 Նույն տեղում, № 1225:

ներ), ստիպված թողնում է իր ծննդավայրը, այս անգամ՝ ընդմիշտ։ Այլևս հայրենի տուն չվերադառնալը, որ նա չէր նախատեսել, հետագայում շատ է վշտացրել Բաշալյանին, սակայն դա էլ հենց եղավ նրա փրկությունը 1915-ի ապրիլյան եղեռնից։

Մի որոշ ժամանակ ապաստանելով Սելանիկում (մորեղբոր մոտ), ապա անցնելով Փարիզ, Լ. Բաշալյանը 1897-ին հաստատվում է Լոնդոնում, ուր Ա. Արփիարյանի հետ խմբագրում է նախ «Մարտ» թերթը, ապա՝ «Նոր կյանք» կիսամսյա հանդեսը։ Երկու պարբերականն էլ հնչակյանների օրգանն էին, բայց ինքը՝ այդ կուսակցության անդամ Լ. Բաշալյանը հեռու էր նեղ-կուսակցական մտայնությունից։ Ա. Չոպանյանին գրած մի նամակում, 1898-ի օգոստոսի 4-ին, նա ասել է. «Իրականությունը սա է, որ «Նոր կյանքը» իր առաջին թերթի ճակատի «Հրատարակություն Հնչակյան կուսակցության» վերնագրեն զատ ուրիշ կապ չունի այդ մարմնին հետ»[1]։ Անկախ իր «կուսակցական պատկանելիությունից», «Նոր կյանքը» որոշակի զարկ տվեց ժամանակի հայ գրականության զարգացմանը։ Նրա էջերում առաջին անգամ երևան եկան Ե. Օտյանի քաղաքական սատիրայի գլուխգործոցներից՝ «Հեղափոխության մակաբույծները», «Պրոպագանդիստը», Ա. Արփիարյանի «Օրագրողի վերհիշումներ», «Գրական դեմքեր» և այլ ուշագրավ գործերը, Պարույրի (Մ. Կյուրճյան) «Մարտիկ աղա» աղմուկ հանած վեպը, Չոպանյանի, Վ. Սվաճյանի և ուրիշների, ինչ-

---

1 Լ. Բաշալյան, Նամակներ Ա. Չոպանյանին, ԳԱԹ, № 1254։

պես նաև հենց իր՝ Լ. Բաշալյանի մի շարք արժեքավոր ստեղծագործությունները («Կաղանդ» և այլն): Իզուր չէ, որ հանդեսը, Ն. Օտյանի հեղինակավոր վկայությամբ՝ «խանդավառ ընդունելություն գտավ արտասահմանի հայության մեջ»[1]:

Մեծ սիրով ու իրեն հատուկ հմտությամբ վարելով «Նոր կյանքի» խմբագրման ու հրատարակման աշխատանքները, որոնք գերազանցորեն ծանրացած էին իր ուսերին, Լ. Բաշալյանը Լոնդոնում ապրում է նյութական ու հոգեկան դժվարին վիճակ: Հանդեսը շարունակելու համար պահանջվում էր ահագին գումար, որ ինքը չուներ և ձեռք էր բերում մեծ դժվարությամբ. հոգու վրա ծանրացած էր հայկական կոտորածների ցավը և չէր երևում որևէ լուսավոր կետ «Հայկական հարցի» լուծման գործում. «Ես իսկ կզարմանամ կոր, թե ինչպես կըրնամ կոր տանիլ այս կյանքը»[2],—գրել է նա մի նամակում: Մի ուրիշ նամակում ցավ է հայտնել, թե «կը զգամ կոր, որ կը ծերանամ կոր. կը ծերանամ կոր ոչ միայն հոգով, այլև մարմնով ալ»[3], և դա այն դեպքում, երբ ընդամենը 30 տարեկան էր... Ապրուստի միջոցներ հայթայթելու և թերևս որոշ հոգեկան խաղաղություն ունենալու նպատակով, 1903-ին[4] Լ. Բաշալյանը մեկնում է Բաքու՝ որպես նավթահանքեր փորող ֆրանսիական մի ընկերության պաշտոնյա: Քիչ հետո դառնալով այդ նույն ընկերության տնօրենը (դիրեկտոր), նա փոքր ընդմիջումներով

---

1 Ն. Օտյան, *Երկերի ժողովածու*, հատ. 4, Երևան, 1962, էջ 131:

2 Լ. Բաշալյան. *Նամակներ Ա. Չոպանյանին*, ԳԱԲ, № 1228:

3 *Նույն տեղում*, № 1267:

4 *Տե՛ս* Լ. Բաշալյան. *Ընտիր երկեր*, Երևան, 1962, էջ 263:

մոտ 20 տարի ապրում ու աշխատում է «Կովկասյան էլդորադո»-ում, «սև ոսկու» հանքերում։ Ինչպես ինքն է ասել Ա. Չոպանյանին, նա ձգտում էր մի որոշ գումար «ետ գցել», վերադառնալ Փարիզ և նորից լծվել ստեղծագործական աշխատանքի, իրագործել իր վաղեմի երազանքը՝ գրել մի քանի վեպ։ Հիշատակելով իրեն հասցեագրված նամակը, Չոպանյանը գրել է. «Թե իր երազն էր, նյութական ավելի ամուր կացության մը հասնելե հետո, քաշվիլ գործի կյանքեն, գալ Փարիզի շրջակայքը, տեղ մը հաստատվիլ՝ իր ամուսնացած քրոջ հետ, և ինքզինքը նորեն նվիրել գրականության, հորինելով մանավանդ քանի մը վեպեր, որոնց վրա կը մտածեր հաճախ»[1]։ Երազը չիրականացավ, Բաշալյանը փաստորեն դարձավ «կատարյալ գործի մարդ մը»[2], գրեթե հեռացավ գրական աշխարհից, եթե չհաշվենք մի քանի արդեն տպագրված նորավեպերի («Խաչախաչին», «Ղալաթիո «Բեսդ»-ը», «Տերտերին ուխտը», «Աղավնիներ») վերամշակումն ու վերահրատարակումը «Մուրճ» ամսագրում, որոշ թարգմանություններ ֆրանսիական բանաստեղծներից (Էմ. Վերհառն և ուրիշներ) և անձնական շփումը Բաքվի գրական շրջանների հետ։ «Զարմանալի և անբացատրելի հոգեբանական երևույթով մը,— գրել է Ա. Չոպանյանը,— հայ խոսքի այդ մեծ արվեստագետը տարիներով անջատված մնաց իր բուն կոչումեն, գրականութենեն»[3]։ Մեզ

---

1 Ա. Չոպանյան, *Լևոն Բաշալյանը և իր գործը, Բաշալյանի «Նորավեպեր և պատմվածքներ» գրքում, Փարիզ, 1943, էջ ԺԹ։*

2 Ե. Օտյան, *Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1962, էջ 395։*

3 Ա. Չոպանյան, *Նշվ. գիրքը, էջ ԺԸ։*

թվում է՝ մեկից ավելի շարժառիթներ կային դրա համար։ Նախ՝ Բաշալյանը չէր գտնվում արևմտահայ կյանքի հորձանքում, ինչպես 80—90-ական թվականներին։ Արևմտահայ կյանքն էլ արդեն առաջվանը չէր, կանխամտածված կոտորածները կամաց-կամաց դատարկում էին և ի վերջո ամայացրին Արևմտյան Հայաստանը։ Իսկ Բաքվում Բաշալյանի մեջ չէր մնացել առաջվա երիտասարդական խանդավառությունը, չկար եռանդուն հայրենասերների նախկին շրջապատը և միասնական պայքարը սրբազան նպատակի համար։ Այսպիսով, բացակայում էր ստեղծագործական ազդակը, ներշնչող ուժը։ Այնուհետև՝ Բաշալյանը, ականատեսի վկայությամբ, Բաքվում «խեղդվում էր այդ ծուխ ու մուրից»[1], հոգեկան տագնապ էր ապրում հայ ժողովրդի արևմտյան հատվածին սպառնացող մահացու վտանգի և արևելահայերի նկատմամբ ցարիզմի վարած դաժան քաղաքականության համար (1903-ի նոր հրովարտակը, մտավորականների դեմ ուժեղացող հալածանքները, 1905-ի հայ-ադրբեջանական ընդհարումները և այլն), ցավով սրտի, չըմբռնելով ամբողջ Ռուսաստանում ազատագրական փոթորկալի պայքարի ելած հեղափոխական պրոլետարիատի պատմական առաքելությունը (միսիան)։ Ուրեմն՝ լուսավոր կետ, ոգևորության իսկական աղբյուր գրեթե չուներ Բաշալյանն արդեն մինչև 1914-ի համաշխարհային սպանդը և 1915-ի հայկական եղեռնը։ Վերջապես՝ չպետք է մոռանալ, որ նա բազմազբաղ «գործի մարդ» էր, պաշտոնն ստիպում էր

[1] Վահրամ Փափազյան, *Սրտիս պարտքը*, Երևան, 1959, էջ 138։

շարժման մեջ լինել, հսկել նավթահանքերը, մեկնել տարբեր քաղաքներ, վատնելով ժամանակը, ուժն ու եռանդը։

1914-ի օգոստոսին Բաշալյանը Փարիզում էր, նույն թվականի հոկտեմբերին՝ Պետերբուրգում, որտեղից էլ քիչ հետո մեկնում է Լոնդոն՝ Ռուսաստանին ռազմամթերք մատակարարող մի ընկերության հանձնարարությամբ։ Ամիսներ շարունակ քարշ է գալիս նա ճանապարհին, կրելով մեծ դժվարություններ՝ որպես Անտանտին թշնամի տերության հպատակ (թուրքահպատակ)[1]։ Առհասարակ ինչպես առաջ, այնպես էլ այդ տարիներին Բաշալյանը թափառական կյանք է վարում. լինելով Հունաստանում, Եգիպտոսում, Սիրիայում, Շվեդիայում, Ֆինլանդիայում, Լեհաստանում, Իտալիայում, ռուսական, ֆրանսիական, անգլիական մի շարք քաղաքներում։ 1920-ի հոկտեմբերին Լ. Բաշալյանը Կովկասից, Երևանի վրայով մեկնում է Կ. Պոլիս, անցնում Փարիզ, ուր և հաստատվում է վերջնականապես։

Լ. Բաշալյանի այս շրջանի՝ «փարիզյան կյանքը» նույնպես չի ընթացել բարեկեցիկ ու խաղաղ պայմաններում։ Նա միշտ մտահոգված էր հարազատ ժողովրդի բախտով։ Սփյուռքահայ մյուս առաջադեմ գրողների ու մտավորականների նման, նա ևս պարզ տեսնում էր, որ հայ ժողովուրդը վերջապես իրականացրեց իր անկախության ու ինքնուրույն պետականության դարավոր երազանքը՝ Հայաստանում հաստատելով խոր-

---

[1] Տե՛ս Լ. Բաշալյան, Թուրքահպատակի մը արկածները մեծ պատերազմի ատեն, «Ընտիր երկեր», Երևան, 1962, էջ 248—271։

հըրդային իշխանություն։ Նա գիտակցում էր, որ պետք է ամեն ինչ անել, ամեն կերպ օգնել, որ ամրապնդվի ու զարգանա նորաստեղծ Խորհրդային Հայաստանը՝ աշխարհասփյուռ հայության միակ հայրենիքն ու հույսի հանգրվանը։ Պատահական չէ, որ նա խորին համոզմունքով միացավ Ա. Չիրվանզադեի, Ա. Չոպանյանի, Տ. Կամսարականի, Է. Շահինի և մյուսների հայտնի «բողոք»-ին, որտեղ, ի հակակշիռ դաշնակցական լուտանքների, ասված է. «Մեզ համար անհերքելի իրողություն մըն է, որ Հայաստան մը գոյություն ունի այսօր։ Մենք համոզված ենք, որ ան իր գոյությունը կրնա պահպանել ու զարգանալ միայն Խորհրդային Միության հետ դաշնակցած»[1]։

Լ. Բաշալյանը Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) ամենաակտիվ գործիչներից էր, Հայ գաղթականաց կենտրոնական հանձնաժողովի ընդհանուր քարտուղարը, Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) և նրա կենտրոնական վարչության մշտական ու գործուն անդամը։ Հենց այս ընկերության հանձնարարությամբ էլ նա 1924-ին ժամանում է Երևան, Խորհրդային Հայաստանում բանակցություններ վարելու՝ բարեգործական աշխատանքների գծով։ Հայտնի է, որ այդ ժամանակ, խորհրդային կարգերի հաստատման չորրորդ տարում դեռ նոր էր սկսվել հայ ժողովրդի ազգային վերածնունդը, տնտեսական ու կուլտուրական առաջընթաց զարգացումը, դեռ թարմ էին առաջին իմպերիալիստական պատերազմի,

1 «Ապագա», 1926, № 14։ (Այդ «բողոքի» մասին մանրամասն տե՛ս Ս. Սարինյանի «Սոցիալիստական վերածննդի հայ գրականության պատմությունից» գիրքը, Երևան, 1959, էջ 136—141)։

Հայկական եղեռնի ու հետագա տնտեսական քայքայման հասցրած վերքերը, դեռ նոր էր երկիրը բարձրանում ավերակներից ու մոխիրներից։ Բայց արդեն այն, ինչ կատարված էր և կատարվում էր, իսկական հրաշք էր, որպիսին չէր կարող տեղի ունենալ երբեք՝ առանց խորհրդային իշխանության պատմական հաղթանակի։ Եվ բուռն հիացմունքի, ուրախության ու հպարտության խոր զգացմունքներով է լցվում հայրենասեր Բաշալյանի սիրտը։ Ազատ ու վերաշինվող Հայաստանից վերադառնալուն պես, Կահիրեի «Արև» թերթի հաղորդման համաձայն, նա խանդավառությամբ սկսում է պատմել իր տեսածների մասին. «Ամեն խելքը գլուխը հայ,—ասել է Բաշալյանը,— պետք է ընդունի, որ այն աղետներեն հետո, որոնց թատերաբեմը եղավ մեր երկիրը, դեռ քանի մը տարի առաջ, կարելի չէր սպասել, որ մեկ օրեն մյուսը դրախտի վերածվի ան։ Բայց կրնամ ականատեսի վկայությամբ հավաստել, թե արդի կառավարությունը մեծ աշխատություն կը թափի երկրին կացությունը աստիճանաբար բարվոքելու համար և այս ճամփուն մեջ արդեն հաջողված է իրագործել գնահատելի առաջադիմություն»[1]։ Մեծ առաջադիմություն է տեսնում և՛ «քաղաքական մարզին մեջ» (շնորհիվ «կառավարության իմաստուն վարվելակերպի»), և՛ «երկրին ներքին ապահովության» մեջ, և՛ տնտեսական ու կուլտուրական բնագավառներում։ Երկիրը, ասում է նա՝ «լծված է շինարարական անխոնջ աշխատանքի, որուն բարերար արդյունքները արդեն կը տեսնվին Հայաստա-

1 «Արև», 1924, 26 դեկտեմբերի (տե՛ս նաև Աս. Ասատրյանի նշված գիրքը, էջ 160—161)։

նի բոլոր անկյունները: Բայց ինչ որ առանձնապես զարմացուց ու խանդավառեց... այն հսկայական աշխատանքն է, որ կը թափվի այնտեղ ժողովրդին մտավորական մակարդակը բարձրացնելու համար»: Իսկ երբ հարց են տալիս, թե «Ի՞նչ է ձեր ընդհանուր տպավորությունը Հայաստանի մասին.— Սքանչելի՜ է, եղբայր, սքանչելի՜... Եղավ Բաշալյանի պատասխանը»:

Միայն խոսքով չէր, որ հայրենասեր գործիչը սքանչանում էր իր ազատ հայրենիքի վերածնունդով ու առաջընթացով: Նա ամենաակտիվ մասնակցություն ունեցավ այն միջոցների հավաքմանը, որոնցով կառուցվեցին մի ամբողջ շարք ավաններ (Նուբարաշեն, Արաբկիր, Մալաթիա, Խարբերդ), դպրոցներ, հիվանդանոցներ (ակնաբուժարան, ծննդատուն-մայրանոց և այլն): իր մի շարք ելույթներում ու հոդվածներում դրսևորելով անկեղծ սեր, ուրախության ու ոգևորության բուռն զգացումներ մայր-հայրենիքի տնտեսական ու մշակութային վերելքի առթիվ, նա սփյուռքահայությունը կապում էր Խորհրդային Հայաստանի հետ, կամուրջ գցում չար ճակատագրի հարվածով կիսված նույն ժողովրդի տարանջատ հատվածների և հարազատ, բայց հեռավոր սրտերի միջև: Այդ կապի ամրապնդման համար նա բաց չէր թողնում որևէ առիթ ու հնարավորություն: Իբրև օրինակ հիշատակենք հետևյալ փաստը: 1928-ին Տիգրան Կամսարականի անվան մրցանակներ շնորհվեցին մի խումբ սովետահայ գրողների: Այդ առթիվ Լ. Բաշալյանը անմիջապես հոդված գրեց մրցանակի արժանացած Ստ. Զորյանի («Գրադարանի աղջիկը») և Ա. Բակունցի («Իվան բեյ», «Օրանջիա») մասին, հատուկ ընդգծելով թե՛ հեղինակների

տաղանդի ուժը, թե՛ այդ ուժի աղբյուրը հանդիսացող հայրենիքի առաջընթացը. «Ինչ որ ալ ըլլա, այն վիթխարի հեղաշըրջումը, որուն ականատեսներն ենք, կարելի չէ, որ գիրենք չը հարստացնե նոր հուզումներով և իմ համոզումս է, թե երկուքն ալ հետզհետե ավելի արժեքավոր բաժին մը ունին բերելիք մեր գեղարվեստին»[1]։

Նույն 1928 թվականին Լ. Բաշալյանը ստանձնում է ֆրանսերեն-հայերեն «Լը Ֆուայե» («Օջախ») ամսաթերթի խմբագրությունը, որ վարում է մինչև 1932 թվականը։ Այս մասին նա գրել է, թե «Արևելք»-«Մասիս», «Հայրենիք» և «Նոր կյանք» պարբերականներից հետո՝ «Իմ գրական կյանքիս չորրորդ հանգրվանը եղավ «Ֆուայեն», զոր չորս տարի խմբագրեցի միայնակ»[2]։ Դժբախտաբար, մեր ձեռքի տակ չի եղել այդ ամսաթերթի ամբողջ համալիրը և առայժմ չենք կարող ասել, թե «գրական կյանքի» այդ շրջանում որքանո՞վ է բեղմնավոր եղել գրողի գրիչը և ի՞նչ է արտադրել։ Մեզ հայտնի է միայն Ա. Չոպանյանի վկայությունը, որի համաձայն հիշյալ պարբերականի ֆրանսերեն բաժնում տպագրվել են կարևոր լուրեր, հաղորդագրություններ, տեղեկանքներ հատկապես փարիզահայ գաղութի, սփյուռքահայության և խորհրդային Հայաստանի աշխատավորության առօրյա կյանքից ու պատմական անցյալից, իսկ «Հայերեն բաժինը կը պարունակեր շահեկան էջեր, հոն միշտ կը գտնեինք Բաշալյանի գեղեցիկ աշխարհաբարը,

1 Լ. Բաշալյան, Տիգրան Կամսարականի մրցանակը. Ստեփան Զորյան և Ակսել Բակունց, «Ապագա», 1928, № 45։

2 Ճառ Լևոն Բաշալյանի, «Անահիտ», 1934, № 5—6, էջ 94։

սեղմ ու վայելուչ ոճը. ան հոն մերթ կուտար առօրյա հարցերու վրա ամուր հոդվածներ»[1]: Կարելի է ենթադրել, որ Բաշալյանը գեղարվեստական ստեղծագործություններով հանդես չի եկել իր խմբագրած «Օջախ» ամսաթերթի մեջ, այլապես Չոպանյանը թերևս հիշատակեր նաև այդ մասին: Եվ առհասարակ, որքան մեզ հաջողվել է պարզել, Լ. Բաշալյանը կյանքի վերջին քառասուն տարիների ընթացքում գրել է առավելապես գրական-հրապարակախոսական հոդվածներ, մի քանի պատկեր, որոնք հիմնականում հուշեր են անցյալից («Ելտըզ Քյոշկեն Ներսեն», «Անցորդի մը օրագիրը», «Լոտոս» և այլն) և «Թուրքահպատակի մը արկածները մեծ պատերազմին ատեն» ճանապարհորդական նոթերը: Նրա գրիչն այդ ժամանակամիջոցում չէր գործում այնպիսի հախուռն թափով և շահեկան արգասավորությամբ, ինչպես մինչ 1900-ական թվականները: Ընդհանրապես Բաշալյանը շատ ավելի բեղմնավոր եղավ որպես հրապարակագիր, լրագրող, գրաքննադատ, քան իբրև գեղարվեստական արձակի վարպետ: Նրա քրոնիկները, ակնարկները, գրական-հրապարակախոսական հոդվածները, քաղաքական տեսությունները, հուշագրությունները հասնում են մի քանի հարյուրի: Դրանք երբեմն ստորագրված են հեղինակի անվան-ազգանվան սկզբնատառերով կամ կեղծանուններով («Լ. Բ.», «Լ. Զարթումյան», «Թափառիկ», «Մենիկ», «Ծիծեռնակ», «Լ. Զ.») և առայժմ ցրված են պարբերական մամուլի էջե-

---

1 Ա. Չոպանյան, Լևոն Բաշալյանը և իր գործը, Բաշալյանի «Նորավեպեր և պատմվածքներ» (1943) ժողովածուի առաջաբանը, էջ ԻԱ:

րում։ Այդ նյութերը կարող են կազմել մի քանի մեծադիր հատորներ, մինչդեռ նորավեպերն ու պատմվածքները, թվով ընդամենը հազիվ երեք տասնյակ, կարելի է ամփոփել փոքրադիր մի հատորյակի մեջ։ Ու հենց վերջիններս են Բաշալյանի համեստ, բայց ծանրակշիռ ավանդը հայ գրականության գանձարանը։ Պատահական չէ, որ նրա լավագույն նորավեպերն ու պատմվածքները հրատարակվել ու վերահրատարակվել են թե արևմտահայ, թե արևելահայ մամուլում («Արևելք», «Մասիս, «Հայրենիք», «Նոր կյանք», Մուրճ» և այլն), հայ գրականության հատընտիր էջերում ու դասագրքերում («Հայ գրողներ», «Ծաղիկ նոր գրականության», «Մեղրագետ» և այլն)՝ վերջերս նաև՝ աշխարհի տասնյակ ժողովուրդների լեզուներով թարգմանված «Հայկական նովելներ» ռուսերեն գրքում։ Նրա ստեղծագործությունները առանձին ժողովածուներով լույս են տեսել Կահիրեում՝ «էջեր հայ գրականության» (1942), Փարիզում՝ «Նորավեպեր և պատմվածքներ» (1943), Հալեպում՝ «Պատմըվածքներ» (1945) և Երևանում՝ «Ընտիր երկեր» (1962)։ Փարիզյան հրատարակության առաջաբանում Ա. Չոպանյանը նշում է, թե նախատեսված է լույս ընծայել նաև ընտիր քրոնիկների, ակնարկների, հոդվածների մի ժողովածու, որն, ինչքան գիտենք, դեռևս չկա հրապարակի վրա։ Լևոն Բաշալյանը կենդանության ժամանակ այդպես էլ չտեսավ իր երկերի շատ թե քիչ ամբողջական մի ժողովածուի հրատարակությունը։ Նա վախճանվեց 1943 թվականի փետրվարի 1-ին Ֆրանսիայի Վիշի քաղաքում, ուր տեղափոխվել էր Փարիզից՝ համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին։ Նա 75 տարեկան էր,

ները «սրտի կաթված մը զինք հանկարծ զգետնեց»[1]։ Հանկարծամահ եղավ և անշուք թաղվեց մեր գրականության այն համեստ և արժանավոր մշակներից մեկը, որոնք «ցվերջ կը պահեն իրենց անունին հմայքը»[2]։

---

1 Ա. Չոպանյան, *Մեկնողները*, «Անահիտ», 1949, № 1, էջ 40։

2 Թեոդիկ, *Ամենուն տարեցույցը*, 1909, էջ 383։

«ՈՒԹՍՈՒՆԱԿԱՆՆԵՐԻ» ՇԱՐՔԵՐՈՒՄ

Անցյալ դարի 80-ական թվականներին, երբ գրական ասպարեզ իջավ Լևոն Բաշալյանը, արևմտահայության առաջ ավելի քան երբևէ սուր կերպով ծառացած էին հրատապ լուծում պահանջող բազմաթիվ դժվարին, բարդ ու կնճռոտ հարցեր։ Կար աշխատավոր զանգվածների սոցիալական ճնշումն ու շահագործումը, մարդկային իրավունքների ու արժանապատվության ոտնահարումը, որ գնալով ուժեղանում էին կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց։ Սպառնալի չափերի էր հասնում բնակչության ճնշող մեծամասնության՝ գավառների գյուղացիության տնտեսական փլուզումը, որը պատճառ էր դառնում նաև հայ ժողովրդի տխուր ճակատագրից անբաժան պանդխտության աննախընթաց ծավալման։ Աճում էր քաղաքային ներքնախավերի՝ արհեստավորների, գործավոր բանվորների, մշակների, ազնիվ աշխատանքի բոլոր մարդկանց թշվառությունը։ Բուրժուական բարքերը գալիս էին ապականելու ընտանիք, կենցաղ, բարոյականություն, մարդկային հարաբերություններ։ Ու այդ ամենի հետ միասին կար հարցերի հարցը՝ ազգային ճնշումը, սուլ-

թանհամիդյան հայահալած քաղաքականությունը։ Սրվում էր կեռ յաթաղանը, որը պիտի արյունով «լուծեր» տարբեր «վեհաժողովներում» ծեծված «հայկական հարցը»։ Մոտենում էր փոթորիկը, որ մահացու ոռնոցով պիտի 1895—96-ին և հատկապես 1915-ին պայթեր արևմտահայության գլխին՝ ամայացնելով մի շեն ու պատմական երկիր, բնաջնջելով, հալածելով, գաղթի ու սովամահության արհավիրքին մատնելով մի ամբողջ ժողովուրդ։ Մինչ այդ՝ թուրքական իշխանությունները, որոշակի դասեր քաղելով զեյթունցիների ազգային-ազատագրական հերոսական պայքարից, փորձ էին անում մահացու հարված հասցնել հայ ժողովրդի հոգևոր կյանքին՝ լեզվին, դպրոցին, մամուլին, գրականությանը, ազգային ողջ մշակույթին, «սրտին ու մտքին»—ինչպես դիպուկ ասել է Գ. Զոհրապը։ Նրանց նպատակն էր ընկճել ժողովրդի՝ դարերով կանգուն ինքնության ոգին, ազատության անմար ձգտումը, ըմբոստության ու պայքարի հորաճուն կամքը, դարձնել հոգևոր ստրուկ և ի վերջո՝ կլանել։ Մահացու վտանգը կանխելու և արևմտահայության առաջ ծառացած մյուս հրատապ հարցերը լուծելու միջոցներ էին որոնում հայ ժողովրդի լավագույն զավակները, առաջավոր մտավորականները, հասարակական գործիչները, հրապարակագիրները, գրողները։ Նրանք հասկանում էին, որ հրամայական պահանջ էր՝ կյանքի կոչել ժողովրդի կենսունակ ուժերը, կոփել տոկալու և դիմադրելու զորությունը, աճեցնել առողջ հայրենասերների սերունդ, կրթել մտքերը, բացել աչքերը, կողմնորոշել կյանքի բազմակնճիռ բավիղներում։ Եվ այդ գործի զորեղ ու գործուն միջոցներից

մեկը, թերևս ամենակենսունակը, նրանք համարում էին գրականությունը։ «Բարգավաճ գրականություն մը,— ասված է «Հայրենիք» թերթի մի խմբագրական հոդվածում,— կը նպաստե ժողովրդին մեջ տարածելու զգացումի մաքրություն, սրտի ազնվացում, գաղափարի ընդարձակում, այն ամեն միջոցները, որոնցով մարդիկ դյուրություն կունենան ապականության տարրերեն զերծ մնալով, թե նյութական և թե բարոյապես քաջառողջ կյանք վարելու։ Գրականությունը զորավոր հականեխական մըն է ընդդեմ շատ մը հիվանդության, որոնք կը ջլատեն, կը սպառեն, կը մահացնեն մարդուն»[1]։

Ահա այդպիսի բարգավաճ և առողջարար, վերքեր բուժող գրականության զարգացմանն էին ձեռնամուխ եղել 80-ական թվականներից սկսած մի խումբ գրողներ ու հրապարակախոսներ, որոնց ընդունված է անվանել «ութսունականներ» կամ «Հայրենիք»-ի խումբ։ Գրական այդ նոր սերնդի ավագ ու կրտսեր ներկայացուցիչները՝ Ա. Արփիարյան, Գ. Զոհրապ, Տ. Կամսարական, Լ. Բաշալյան, Մ. Կյուրճյան, Հ. Ասատուր, Ե. Օտյան, Ա. Չոպանյան, Հ. Բլկատինցի, Երուխան և ուրիշներ՝ սկզբից ևեթ արևմտահայ գրականության ու լրագրության մեջ բերին մի թարմ հոսանք, որն առավել ցայտուն կերպով դրսևորվեց Ա. Արփիարյանի խմբագրած «Արևելք», «Մասիս» և «Հայրենիք» պարբերականներում։ Պատահական չէ, որ վերջիններս կարճ ժամանակամիջոցում լայն ժողովրդականություն ձեռք բերին և արժանացան թե՛ արևմտահայ և թե՛ արևե-

---

1 «Հայրենիք», 1894, № 963։

լահայ գրական շրջանների ուշադրությանն ու խրախուսանք-ներին: «Մշակի» հանրածանոթ խմբագիր Գր. Արծրունին 1884-ին գրել է. «Իր կենդանի բովանդակությամբ «Արևելքը» կատարելապես մի նորություն է»[1]: «Պոլսո նոր լրագրությունը «Արևելքով» կը սկսի»[2]—իր մեծ հեղինակությամբ հաստատել է Գր. Զոհրապը: Ա. Չոպանյանի, Ե. Օտյանի և շատերի նման բարձր գնահատելով «Հայրենիք» թերթի ծառայությունները: Լ. Բաշալյանը գրում է. «խանդավառության և հավատքի օրեր էին՝ տիրող սարսափին տակ հազիվ-հազ զսպված և որևէ գնով արտահայտվելու հետամուտ: Նոր վերածնության հիանալի շրջան, որուն նեցուկն էր մեր թերթը»[3]: Խանդավառության աղբյուրը այն հավատն էր, որ տիրող սարսափը անզոր է զսպելու ազատության ու ազգային գոյության դատը պաշտպանող ժողովրդի հոգեկան զարթոնքը և դիմադրողականության աճը, ժողովուրդ, որը դրսևորում էր «դժբախտության մեջ գոտեպնդվելու, ծառանալու, իր ներքին ուժերն ամփոփելու, իր կյանքի պահպանմանն համառելու հրաշալի կամք»[4]: Առաջին հերթին՝ հենց այդ կամքի արտահայտությունն էր և նույն կամքի ամրապնդմանն էր ուղղված «ութսունականների» ամբողջ գործունեությունը: «Արևելքը» իր պարտականությանց առաջինը պիտի համարի,—ասված է այդ թերթի անդրանիկ հա-

1 «Մշակ», 1884, № 8:

2 Գ. Զոհրապ, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1962, էջ 217:

3 Ճառ Լևոն Բաշալյանի, «Անահիտ», 1934, № 5—6, էջ 93:

4 Երուխան, Հոռետեսությունը քննադատության մեջ, «Շանթ» (Ղալաթիա), 1911, № 3:

մարի ծրագրային խմբագրականում,— լավ ուսումնասիրել հայ ժողովրդին կյանքը՝ իր ամեն երևույթներում ներքև և հետամուտ լինել ըստ կարելույն գոհացում տալ նորա բարոյական և մտավոր պահանջներուն»[1]։ Պահանջներն անչափ շատ էին ու բազմակնճիռ, մինչդեռ «ութսունականների» պայքարի միակ զենքը՝ մամուլն ու գրականությունը՝ գտնվում էր գրաքննության ամենադաժան խստության պայմաններում, երբ բանտարկություն, աքսոր, մահապատիժ էր սպառնում բռնապետական կարգերի դեմ ամեն մի չնչին ակնարկի համար անգամ»[2]։ Ու չնայած հեղձուցիչ մղձավանջին ու լուծման սպասող հարցերի առատությանը, «ութսունականները» մշակել էին աշխատանքի և պայքարի հստակ ծրագիր, որի կենսագործումը խիզախորեն ու հաջողությամբ առաջ էին տանում[3]։ Արդեն մի

1 «Արևելք», 1884, № 1։

2 Հ. Պարոնյանը պատմում է, որ փնտրում էին «այն ամեն գրքերն, որոնց մեջ Հայաստան բառը կը գտնվի... Ամեն օր կը ձերբակալվին և կը բանտարկվին Հայկա և Վարդանա պատկերներն» («Փարոս Հայաստանի», 1880, № 4)։ Գրաքննությունը հետզհետե այնպիսի այլանդակ խստության հասավ, որ ոչ միայն արգելվում էին որևէ ազատ խոսք, ազգասիրական արտահայտություն, «ազատ» ու «գերի» բառերը (տե՛ս Ա. Արփիարյանի Կարմիր ժամուց վիպակը), այլև սովորական ջրի բանաձևը՝ H_2O, որի մեջ տեսնում էին Համիդ 2-րդը հավասար է 0-ի (զրոյի) «թաքնված» միտքը...

3 «Ութսունականների» գրական-հասարակական ծրագրի և գործունեության մասին տե՛ս «Հայ նոր գրականության պատմության» 3-րդ հատորի (1964) «Ներածությունը», որի հեղինակն է Ս. Սարինյանը, Գ. Ստեփանյանի «Արփիար Արփիարյան» (1955), Մ. Հյուսյանի «Գրիգոր Զոհրապ» (1957), Հ. Մարգարյանի «Տիգրան Կամսարական» (1964) մենագրությունները։

քանի տարում նրանք այնքան շոշափելի տեսական ու գործնական աշխատանք էին կատարել հասարակական-գրական նոր շարժման առաջընթացի ուղղությամբ, որ հայ քննադատական ռեալիզմի խոշորագույն վարպետ Ա. Շիրվանզադեն հարկ էր համարում 1889-ին հայտարարել ի լուր հայ հասարակության. «Կ. Պոլսի «Արևելք» լրագիրը վերջին ժամանակ սկսել է առանձին ուշադրություն դարձնել ժամանակակից հայ գրականության և մասնավորապես վիպասանության վրա։ Մի խումբ երիտասարդ գրագետներ... այդ թերթի էջերում բացարձակ բողոքում են սխալ և վերացական ուղղության դեմ, որ մինչև այժմ տիրապետում է տաճկահայերի գրականության մեջ»[1]։ Այս երևույթը համարելով «շատ ուրախալի ինքնաճանաչության նշան», նա «Մասիս» պարբերականի 1889-ի սեպտեմբերի 1-ի համարի առթիվ ասում է. «Դատելով այդ համարից, «Մասիսի» ուղղությունը բավական համակրելի է և խելացի։ Ինչպես երևում է, երկշաբաթաթերթը սկսել է լրջորեն զբաղվել ընկերական և հասարակական խնդիրներով»[2]։

Ականավոր գրողը ուղղակի շեշտում է «ութսունականների» գրական գործունեության բուն էությունը՝ պայքարը «սխալ և վերացական ուղղության», այսինքն՝ իր դարն անցած ռոմանտիզմի դեմ, հանուն ռեալիստական գրականության և ժամանակի կենսական հասարակական խնդիրներին անդրադառ-

---

[1] Ա. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 10, Երևան, 1962, էջ 87—88։

[2] Նույն տեղում, էջ 90—91։

նալու փաստը։ Հիրավի, «ուխտունականները», չժխտելով հանդերձ ռոմանտիկական գրական դպրոցի պատմական դերը, գտնում էին, որ այդ ուղղությունը չի կարող ծառայել նոր ժամանակների հրատապ հարցերը, այդ թվում՝ իրենց առաջ ծառացած դժվարին խնդիրները լուծելու գործին։ Լիովին համոզված լինելով, որ միայն ռեալիստական գրականությունն է կոչված պատմական նոր պայմաններում դառնալու «դարի հոգեբանության» հայելին և առաջընթացի զենք, նրանք տեսականորեն սուր պայքար ծավալեցին ռոմանտիզմի դեմ, իսկ գործնականում՝ սկսեցին արևմտահայ ռեալիստական արձակի վերջնական հաղթանակի հիմքերը բարձրացնել։

Հայտնի է, որ վերացական երազանքների գրականության պաշտպանությամբ էր հանդես գալիս, հատկապես իր կյանքի վերջին տարիներին, Գր. Օտյանը, որը լուրջ հեղինակություն և ծանրակշիռ ազդեցություն ուներ գրական շրջաններում։ Հենց այս պատճառով էլ «ուխտունականների» պարագլուխ Ա. Արփիարյանի և նրա զինակիցների «հակառոմանտիկական» պայքարի մասին խոսելիս, ինչպես նկատվել է մեր բանասիրության մեջ, հարկ է լինում անդրադառնալ Լ. Հալևիի «Աբբա Քոնսթանթեն» վեպի թարգմանությանը կցված Գր. Օտյանի առաջաբանին և դրա դեմ ուղղված Ա. Արփիարյանի պատասխան հոդվածին։

Հիշյալ առաջաբանում Գր. Օտյանը քարոզում էր, թե վիպասանությունը (և առհասարակ գեղարվեստական գրականությունը) կոչված է մարդկանց «հեռու տանել» իրական կյանքից, դեպի «պատկի ծաղկի» բույրով հագեցված, «ճնճղուկնե-

րի ճլվլոցով» լեցուն ինչ-որ «դրախտային» ըղձալի աշխարհ և դրանով իսկ՝ մխիթարել նրանց։ Այս իմաստով էր նա գրում, թե «Վեպը ինչո՞ւ է. որպեսզի մարդը մխիթարվի իրականությենեն»[1]։ Հիմնովին մերժելով այս տեսակետը, Արփիարյանը գրել է. «Մխիթարությունը վերջին ապավենն է անոնց, որոնք իրենց ցավերուն այլևս դարման չեն կրնար հուսալ, իսկ արդի վիպասանությունը չուզեր վշտերու սփոփանք հայթայթելով միայն շատանալ, այլ նաև կետ նպատակին է՝ աջակցել անոնց, որ ընկերական թշվառության դարմաններ որոնելու հետամուտ են։ Վեպը իրական կյանքի պատկերը կը պարզե և մեզի կը մղե ընկերական վիճակին վրա խորհրդածելու»[2]։ Նա երիտասարդ գրողներին կոչ էր անում ուսումնասիրել «մեր ամեն խավերուն ցավերն ու վշտերը», համարձակ մուտք գործել «ցավոց ու տառապանաց հանդիսավայրերը», «այն մութ ու խոնավ հարկերը, ուր խշտիներուն վրա ղարիբն է հոգեվարք»[3]։ Ըստ Արփիարյանի՝ «Ազգային մատենագրությունը պետք է որ թափանցե ժողովրդին ամեն խավերուն, ամեն դասակարգերուն մեջ, ուսումնասիրե անոր սիրտը, միտքը, կյանքը, ավանդությունները, իմաստասիրությունը, պատմությունը, տնտեսական վիճակը, վերջապես այն ամեն բաները, որոնք միանալով կը կազմեն ինչ-որ կը կոչվի «կյանք»»[4]։ Ի դեպ, Նալբանդյանի

---

1 Լ. Հալևի, Աբբա Կոնստանտեն, թարգմ. Եվփիմե, Պ. Օտյան, Կ. Պոլիս, 1885, էջ Գ։

2 «Արևելք», 1885, 7 մարտի։

3 Նույն տեղում։

4 «Հայրենիք», 1892, № 261։

նման, Արփիարյանը ևս խոսելով ժողովրդի ցավերը դարմանելու մասին, նկատի ունի աշխատավոր և ունեզուրկ խավերը. «Այդ ժողովուրդը,— ասում է նա,— երկրագործն է, արհեստավորն է, աշխատողն է, «անարգյալ ռամիկն» է»[1]: Սրանց համար է հենց, որ գրականությունը «կռվի պետք ունի, որ զորանա և զորացնե ժողովրդի միտքն ու հոգին»[2]: Իսկ կռվի, միտք ու հոգի զորացնող գրականություն կարող են ստեղծել ռեալիստները. դրանք, ըստ Արփիարյանի «Առաքյալներ են, որք մասնավոր կոչում մը ունին մարդկության ցավերը թեթևացնել, տառապանքները սփոփել, անոնց աղետներուն, ընկերական կազմակերպության առաջ բերած չարիքներուն դարմանը փնտրել»[3]: Ներկայացնել կյանքը «իր բոլոր խեղճության մեջ» և «հեղափոխել մեր բարքերը»[4]—ահա Արփիարյանի կարևոր պահանջը երիտասարդ գրողներից: Եվ բոլոր այս հարցերում «ութսունականները» միահամուռ պաշտպանում էին իրենց պարագլուխ Ա. Արփիարյանին. Գ. Զոհրապը, Տ. Կամսարականը, Լ. Բաշալյանը— «ութսունականների» գրական շարժման սկզբնավորողները՝ Ա. Արփիարյանի հետ միասին դարձան արևմտահայ ռեալիստական արձակի վերջնական հաղթանակի առաջամարտիկները և տեսաբանները:

Տակավին պատանի Լևոն Բաշալյանը լուրջ ուշադրության

---

1 Հրազդան (Ա. Արփիարյան). Գրական կյանք, «Արևելք», 1888, № 1389:

2 «Արևելք», 1884, № 3:

3 «Հայրենիք», 1892, № 177:

4 «Արևելք», 1884, № 39:

գրավեց առաջին հերթին իբրև գրաքննադատ: 1886-ի փետրվարի 1-ին «Մասիս»-ում տպագրվեց նրա «1885 տարին Թուրքիո հայ գրականության համար» հոդվածը, որի մասին Ա. Արփիարյանն ասել է. «Բաշալյանն իր թարմ հասակին մեջ իսկ ուշադրություն կը գրավեր մտքին հասունությամբը: Ու միշտ մնաց լավ խորհող, լավ կշռող գրագետը»[1]: Այդ հոդվածը արևմտահայ մեկ տարվա գրականության համառոտ տեսությունն է. և իրոք հասուն մտքի արդյունք: Բաշալյանը անդրադառնում է մի շարք գրքերի, բարձր գնահատում Ղ. Ալիշանի, Գ. Սրվանձտյանի, Ա. Արփիարյանի ու ուրիշների գործերը, պարզացնելով այն տեսակետը, թե՝ «գրականությունը ազգի մը մտավորական կենաց հայելին է»[2], իսկ իսկական գրողը պետք է ունենա «եռանդուն հոգի» ու «թափանցող միտք»: «Մասիս»-ի նույն համարում տպված մի այլ հոդվածում նա բարձր է գնահատում ռուսական ռեալիստական արձակի երեք տիտաններին՝ Լ. Տոլստոյին, Ի. Տուրգենևին, Ֆ. Դոստոևսկուն: Կոնկրետացնելով իր խոսքը Դոստոևսկու մասին, նա ընդգծում է այն փաստը, որ «Ռուսիո այդ մեծ հեղինակը... յուր ընկերային վեպերուն մեջ նպատակ ընտրած է իրեն՝ երևան ածել ընկերության ամեն թաքուն վերքերն, ժողովրդյան ցավերն և գեղացվույն՝ «մուժիկին» տառապանքները»: Այնուհետև ընթերցողներին ծանոթացնելով Դոստոևսկու «Ծննդյան ծառը» պատմվածքին, որի թարգմանությունը տպված է նույն «Մա-

1 «Բանբեր գրականության և արվեստի», 1904, Բ գիրք, էջ 173:

2 «Մասիս», 1886, № 3807, էջ 628:

մխում», ասում է. «Այսօր բաղդ ունինք ընթերցողաց ներկայացնելու Տասթաևսքիի մեկ պատմությունն, փոքրիկ հրաշակերտ մը յուր ճշգրտության մեջ։ Մարդկային սրտի այդ մանրակրկիտ խուզարկուն անդ ի հայտ բերած է յուր գլխավոր հատկությունն, երբ կը խոսի փոքունց և նվաստից վրա. անդ դրած է յուր սիրտն ողջույն։ Վստահ ենք, թե ընթերցողը պիտի համակվի հեղինակին սրտահուզությամբ»[1]։ Ինչպես տեսնում ենք, Բաշալյանը ևս շեշտը դնում է ա՛յն գրականության վրա, որը կոչված է ճշգրտությամբ վեր հանել հասարակության խոցերն ու վերքերը, մարդկային հոգու ելևէջները։ Այս իմաստով Լ. Բաշալյանի գրական հայացքների համար չափազանց ուշագրավ է նրա գրախոսությունը՝ Հով. Հովհաննիսյանի 1887 թ. «Բանաստեղծություններ» անդրանիկ ժողովածուի մասին։ Նույն տարվա նոյեմբերին գրված այդ գրախոսության մեջ Բաշալյանը հատուկ շեշտում է, թե «հեռուեն կուգա» այդ գիրքը, սակայն «ինչքա՛ն մոտ է մեր սրտերուն»[2]։ Իհարկե, Հովհաննիսյանի բանաստեղծական երախայրիքը ամենուր ընդունվեց խանդավառությամբ և գնահատվեց որպես մի նոր ու թարմ խոսք, բայց «ութսունականների» համար դա ուներ մի առանձնահատուկ հնչեղություն, ընկալվում էր որպես սեփական մտորումների արձագանք։ Եվ իրոք, երիտասարդ Հովհաննիսյանը հեռավոր Մոսկվայում բանաստեղծից պահանջում էր «սրտի խոսք» ասել, թեկուզ ցավալի, բայց այնպիսի

---

1 Լ. Բ. (Բաշալյան), Ջանադանք, «Մասիս», 1886, № 3807, էջ 644։

2 «Արևելք», 1887, № 1154։

խոսք, որ «վեր հանի մեր հոգին», «կրակ վառի մեր սրտում» («Աշուղ»), ճիշտ այնպես, ինչպես «ութսունականներն» էին ծրագրել, թե գրական երկերը «թող հոշոտեն մեր սրտերը, բայց հեղափոխեն մեր բարքերը»[1] (Արփիարյան): Այստեղ, անշուշտ, խոսք չի կարող լինել գրական ազդեցության մասին, իսկ հայացքների ու տեսակետների նմանությունը պայմանավորված էր հայ ժողովրդի իրական կյանքով, այդ կյանքի բերմունքով: Հովհ. Հովհաննիսյանը և «ութսունականները» միևնույն ժողովրդի զավակներն էին, ռուսահայ երիտասարդ բանաստեղծը, իր արևմտահայ գրչեղբայրների նման, ընտրում էր ոչ թե վարդագույն երազների, «թռչնոց մեղեդիների», վայելչության աշխարհ տանող ճանապարհը, այլ «ամբոխի անվերջ տառապանքը» և հառաչանքը թեթևացնելու «ազնիվ ու վսեմ, թեև փշալից» ուղին («Երկու ճանապարհ»): «Ութսունականները» պայքար էին մղում բռնակալության, համիդյան դաժան վարչակարգի և հայկական «մեծատուն», «ազնվաշուք» էֆենդիության դեմ և երիտասարդ գրողներին կոչ էին անում երգել աշխատավոր մարդու ցավերն ու հոգսերը, տանջանքն ու տենչանքը, ուստի նրանց սրտին անչափ հարազատ էր «Գյուղի ժամը», «Հատիկը», «Այս օրերում», «Գիշերվա երգը», «Մնաք բարով», «Երբ մատաղ մուսաս...» և տասնյակ այլ բանաստեղծությունների հեղինակի ձայնը՝ «սուրբ ճշմարտություն և սուրբ գաղափար» հնչեցնող ձայնը, որը մերթ կոչ էր անում՝

Անխնա դատիր եղեռնագործին,

1 «Արևելք», 1884, № 39:

Մեծատան երեսն այրիր ամոթով...
(«Երբ մատաղ մուսաս»);

մերթ ազդարարում՝

Աղքատությունն ես սիրեցի,
Խեղճի լացը, հառաչանք,
Ես գրիչս նվիրեցի
Վիշտ երգելու և տանջանք:
(«Մնաք բարով»):

Ահա թե ի՛նչը նկատի ուներ Լ. Բաշալյանը, երբ անկեղծ խանդավառությամբ ու սրտի ողջ ջերմությամբ բարձր էր գնահատում Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների ժողովածուն, որի մասին նա գրել է. «Հյուսիսեն, ձյունապատ պայծառությանց և գարնանագեղ տարածությանց, համապարփակ մշուշի և ճառագայթարձակ արևու երկրեն կուգա այս գիրքը, որ ձմռան վեհ տխրությունն ու գարնան ժպիտն ունի, մշուշի սաստիկ մելամաղձությունն և կենսալի ճաճանչներն արփիույն: Հեռուեն կուգա, այլ ինչքա՜ն մոտ է մեր սրտերուն: Բանաստեղծական գիրք մը, բայց այս տեսակ բանաստեղծության գիրք մը երբեք չէր եկած ռուսահայոցմե»[1]: Մաքուր զգացմունքների և «սուրբ գաղափարների» ռեալիստական քնքուշ ու համակիր քնարերգության արժանի գնահատականն է սա՝ տրված արևմտահայ ռեալիստական արձակի զարգացմանը հետամուտ երիտասարդ Բաշալյանի կողմից:

1 «Արևելք», 1887, № 1154:

Լ. Բաշալյանի մի շարք գրաքննադատական հոդվածների վերնագրերն անգամ պարզ ու որոշակի խոսում են նրա գեղագիտական հայացքների մասին: Ահա դրանցից միայն մի քանիսը. «Կյանքն ինչպես որ է», «Ժողովրդական գրականություն», «Կեղծ գրականություն»: Հետևելով «կյանքն ինչպես որ է» ռեալիստական սկզբունքին, Բաշալյանը ևս գտնում էր, որ դա չի նշանակում լուսանկարել իրականությունը, անդրադառնալ բոլոր մանրուքներին, ընկնել բնապաշտության (նատուրալիզմի) գիրկը: Նրա համոզմամբ՝ գեղարվեստական գրականությունը պետք է արտացոլի կյանքը՝ զանազանելով «էականը ավելորդեն, դիպվածականը՝ հիմնականեն», ընդունակ լինի «արտաքին պատյանին տակ ներքին մարդը տեսնելու», գեղեցիկ ձևի մեջ «ժողովրդին հոգին ու ձգտումները խտացնելու»[1]: Նա կեղծ է համարում «անխորհուրդ ու անմիտ» երկերը, որոնց հեղինակները ամբողջ բովանդակությունը զոհաբերում են «ուռուցիկ ու անամեջ ճարտասանությանը», մինչդեռ ճշմարիտ արվեստագետը պետք է մեզ ներկայացնի «առույգ ու ամբողջ ծաղկի փթթումը՝ իր խնկալից ու պարզ բույրով»[2]: Բաշալյանի գեղագիտական հայացքների մանիֆեստը կարելի է համարել նրա «Գրելե առաջ» հոդվածը, որն ուսանելի շատ կողմեր ունի երիտասարդ ստեղծագործողների համար: Գրիչ վերցնելուց առաջ գրողն, ըստ Բաշալյանի, պետք է իրեն պատրաստ զգա, իսկ դրա համար.

ա) «Պետք է նախ դիտել, լարված ուշադրությամբ դիտել

---

1 «Հայրենիք», 1893, № 629 («Ժողովրդական գրականություն»):

2 Լ. Բաշալյան, Կեղծ գրականությունը, «Հայրենիք», 1894, № 41:

չորս կողմը, բնության ու ընկերության մեջտեղ դրած տեսարանները բաղդատել իրար հետ, անցնող երևույթի մը, խուսափուկ պատկերի մը գծերը որոշել, անոնց էությունը թափանցել, անոնց մեջ գտնել որոշիչ հանգամանքները, մասնավոր հատկությունները, որոնք նոր են ամեն դիտողի համար ու խորհրդածել անոնց վրա, եզրակացության մը հանգիլ»:

բ) «Հետո՝ ուսումնասիրել շատ բան՝ միջավայրը, բարքերը, սովորությունները, զքեզ շրջապատողներուն գաղափարները, զգացումները, փնտրել, թե ի՞նչ հանգամանքներու մեջ ի հայտ կուգան ամենեն ավելի սաստկությամբ, ի՞նչ պարագաներ ծնունդ կուտան անոնց կնճիռներուն և պայքարներուն; աշխատել գտնել բոլոր այն թաքուն, անտեսանելի պատճառները, որոնք շարժման մեջ կը դնեն զանոնք»:

գ) «Ու սիրտ վարժեցնել ըմբռնելու բոլոր ցավերը, որ կան մարդկության մեջ, կարեկցելու բոլոր տառապանքներուն, անոնք որ դուրսեն կը տեսնվին և անոնք որ մութին մեջ կը կողկողին»:

դ) «Ու շատ կարդալ, նախ՝ մեր գրողները, յուրացնելու համար անոնց լեզուն, և հետո՝ մարդկության բոլոր մեծ մտքերուն արտադրությունները, անոնց մեջ փնտրելով ընդլայնումը քու բոլոր մտածումներուդ և զգացումներուդ, ներշնչվելով անոնց լայն նայվածքեն, որ անհուն հորիզոններ կը ընդգրկե..., միտքդ ու սիրտդ ընդարձակելով անոնց ընկերակցության մեջ»[1]:

[1] «Հայրենիք», 1894, № 983:

Այս գրքերից Լ. Բաշալյանը անդրադարձել գրականության հարցերին, գնահատել կամ մերժել այս կամ այն ստեղծագործությունը: Նա, բնականորեն, քննադատել է այն հեղինակներին, որոնք շրջապատը դիտելու, ուսումնասիրելու և տեսածն ու զգացածը ճշմարտացի արվեստով պատկերելու փոխարեն ընկնում էին վերացական երազանքների և անհող երևակայության գիրկը: Իբրև օրինակ հիշատակենք նրա գրախոսությունը Բենիամին Եղիազարյանի «Լուծյալ սեր» վեպի մասին: Բաշալյանը, իհարկե, խրախուսելի է համարում, որ գավառից Պոլիս եկած խարակոնիսցի երիտասարդ խոհարարը ձգտել է գիրք գրել, «իր միջավայրեն վեր բարձրանալ», բայց ահա ընթացել է «կեղծ գրականության» ճանապարհով, իր մտածումները «պարզ ու հստակ կերպով» հայտնելու փոխարեն տուրք է տվել «ուռուցիկ, սնամեջ, սխալ, անբնական» ոճին ու վերացական դատողություններին. «Վեպ գրելու համար ամենեն հրաշալի դիրքն ուներ ինքը և գիտցած չէ օգտվել անկե: Սքանչելի դիտարանի մը մեջ կը գտնվեր՝ մեր ընտանեկան բարքերուն բոլոր թաքուն կողմերը, մարդկային սրտին բոլոր ծածուկ ծալքերը ուսումնասիրելու համար, և անմտորեն արհամարհած է այս ամենը՝ լոկ հետևելու համար իր երևակայության, որ լավ ու ճշմարիտ առաջնորդ մը չէ եղած իրեն»[1]:

Այս չի նշանակում, սակայն, թե Բաշալյանը, ինչպես և մյուս «ութսունականները», դեմ էր ընդհանրապես երևակայությանը, երազանքին: Ընդհակառակը, նա «հրաշակերտ» և

[1] Լ. Բաշալյան, Խոհարար և վիպասան, «Հայրենիք», 1894, № 720:

4—396

«անմահ գիրք» է համարում Դ. Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո» հռչակավոր վեպը հենց նրա համար, որ այն գրված է վառ երևակայությամբ, առողջ ու կազդուրիչ է, մղում է դեպի «ինքնավստահ խիզախումներ» և «մեծ ու զորավոր երազներ»[1], ուսուցանում է դիմանալ, տոկալ, մաքառել, հավատալ։ Նման գրքեր ու գրվածքներ, ըստ Բաշալյանի, ավելի քան անհրաժեշտ էին այն մղձավանջային պայմաններում, որի մեջ ապրում էր արևմտահայությունը և պայքարում սուլթանհամիդյան ազգային-քաղաքական դաժան ճնշումների ու հայազգի հարստահարիչների դեմ։ Կարևորն այն է, որ երևակայությունը չլինի սնամեջ, չխանգարի ճշմարտացիությանը։ Այս տեսակետից բնորոշ է Բաշալյանի «Բաց նամակը առ Տիգրան Արփիարյան», որտեղ խոսվում է կյանքի անարդարություններն ու արատները բեմ հանելու կարևորության մասին։ Տ. Արփիարյանը ևս ցավով է խոսում այդ արատների մասին, բայց դրանց դեմ կռիվ հայտարարելու փոխարեն ինչ-որ «մխիթարանք» որոնելու է միտում։ Բաշալյանը ցույց է տալիս, թե ինչպես շատ հաճախ արտաքին պարկեշտության տակ սքողվում է ներքին այլանդակությունը. երիտասարդը այգում «սիրակաթ խոսքեր» է ասում սիրած աղջկան, իսկ տանը՝ նրա հորից առաջին հերթին օժիտի չափն է հարցնում... Եկեղեցու գավթում գայլն էլ գառ է ձևանում՝ «գավիթեն դուրս ելլելուն սպասեցե՛ք...»։ Այս է իրականությունը, իսկ «իրականութենեն երես չես դարձներ»։ Ահա թե ինչու «Երբ որ կյանքին մեջ ու

---

[1] Լ. Բ. (Բաշալյան), Ռոբինզոն, «Հայրենիք», 1895, № 1319։

անկից ալ թատրոնին վրա փոխադրված կը տեսնեմ ծույլեր, որոնք առանց վազելու կը հասնին, վատեր, որոնք մրցման մեջ կը հաջողին, անմիտներ, որոնց փորը կուշտ է, ապուշներ, որոնք խելացի կը համարվին և, ավելի ընդլայնելով այս տեսությունը, երբոր կը տեսնեմ Դրամը, Չարությունը, Մոլությունը, Կեղծավորությունը, որոնք հաղթական կելլեն, ան ատեն կընդվզիմ և կը ջանամ որ անոնցմե զգացած նողկանքս գրով կամ խոսքով ուրիշներուն փոխանցեմ, երազուն հոգիներուն թողլով կապույտին մեջ փնտրել բարի ու անուշ հոգիները, որոնք իրենց անմատչելի հեռավորությունը կը պահեն միշտ»[1]։

Ակնհայտ է, որ այստեղ ոչ միայն արտահայտված է ուժգին ընդվզում կյանքից կտրված գրականության ու արվեստի դեմ, այլև ուղղակի պահանջ՝ ստեղծելու մարտական, խարազանող, քննադատական ռեալիզմի գործեր, Ա. Արփիարյանի ասած «հակահարուստ գրականությունը»[2]։ Սա պակաս կարևոր չէր, քան ռոմանտիզմի դեմ մղվող պայքարը, ավելի շուտ՝ նույն պայքարի մի անբաժանելի մասն էր։ Հասարակական հարաբերությունների հեղաբեկման պայմաններում, հայ ամիրայությանը փոխարինելու եկած էֆենդիությունը այն հիմնական տարրն էր, որ ոչ միայն հարստահարում էր աշխատավոր զանգվածներին, նրանց հասցնելով ծայրահեղ թշվառության, այլև թուրքական բռնապետության հետ գործակցած կաշկանդում, արգելակում էր հայ ժողովրդի ազգային-ազա-

1 «Հայրենիք», 1894, № 816։

2 Տե՛ս «Բանբեր գրականության և արվեստի», Բ գիրք. 1904, էջ 167։

տագրական ղարթոնքը, հոգևոր ու մտավոր առաջընթացը։ «Տգետ ու հավակնոտ մարդեր էին այս «մեծատուն» կոչվողները,— գրել է Ար. Արփիարյանը,— ազգային ամեն գործերում միջամտելու, ամեն գործերում վրա տիրաբար իշխելու հավակնորդներ, որոնք կուզեին հայ ցեղը կառավարել, անոր նվիրելով «խելքերնին», որմով բազմափարթամ չէին և անոր խնայելով ինչ որ կը սպասվեր իրենցմե՝ դրամ»[1]։ Ահա այս խավի դեմ «ուծտունականների» պայքարի առաջին շարքերում նույնպես մենք տեսնում ենք Լ. Բաշալյանին։ Նրա վերաբերմունքը «մեծատունների» նկատմամբ արդեն պարզ երևում է վերը կատարված մեջբերումից, ու այդ ոգով էլ սնեղծված են նրա տասնյակ քրոնիկներն ու հրապարակախոսական հոդվածները, որոնցից մի քանիսին արժե անդրադառնալ։

Իր առաջին իսկ քաղաքական քրոնիկների ու հոդվածների մեջ Լ. Բաշալյանը հանդես է գալիս ընդդեմ բռնության, կամայականության, սոցիալ-քաղաքական անարդարության, նշավակելով դարեդար սրբագործված «իրավունքը հզորագույնի»[2]։ Այդ «իրավունքով» են «զորեղները» իշխում «թույլերի» վրա, ապօրինի կերպով զավթում ուրիշների հողը, ունեցվածքը, ոտնահարում նրանց արժանապատվությունը։ Ու դրանք,— այդ «հզորագույն» կոչվող տարրերն են, որ հոգով ու գործով գռեհիկ են, տգեղ, բայց իրենց զարդարում են «ազ-

1 Նույն տեղում։

2 Լ. Բ. (Բաշալյան), Գերմանիա և Ալզաս-Լորեն, «Մասիս», 1885, № 3795, էջ 350։

նըվական», «աղնվաշուք», «էֆենդի» և այլ նման պիտակներով, ոսկու փայլով շպարում են իրենց կեղտերը, անարժան կերպով փառք են ստեղծում իրենց անվան շուրջը, կաշառում մամուլը, հասարակական կարծիքը, եկեղեցին, գրականությունը։ «Հարո՜ւստ... լրագրերը իրենց ամենեն փայփայիչ ածականներն ունին անոր համար։ Հանդեսներն իրենց ամենեն փառավոր թիկնաթոռները, եկեղեցիներն իրենց ամենեն յուղաթորմ աղոթքները»[1]։ Հատկանշական է, որ հարուստներին տրվող այդ ածականների մասին նույնիսկ հատուկ խմբագրական կա «ութսունականների» «Հայրենիք» լրագրում և վերնագրված է հենց «Ածականներ»։ Խմբագրականում ասված է. «Հաշիվ ըրինք, թե մեկ շաբաթվա մեջ գրվելիք Մեծապատիվները, Աղնվաշուքները, Վսեմափայլները, Վսեմաշուքները, Ամենապատիվները, Գերապատիվները, Արժանապատիվները եթե քովե քով դնենք գրեթե կես «Հայրենիք» կը լեցվի... Ի՞նչ պիտի ըլլար, եթե «Ոսկեշուք» ածականն ալ հնարված լիներ»[2]։ Ճղճղան այդ ածականներով «զուգված-զարդարված» մարդիկ մեծավ մասամբ իրականում կորցրել են մարդկային դեմքը. վաշխառուն, օրինակ, «դրամին անպատկառ ու անբարոյական տիրապետությունը, խեղճերուն ու կարոտներուն անողոք ու բիրտ շահագործումը կը ներկայացնե»[3], ինչպես դա, ըստ Բաշալյանի, առանձնապես ցայտուն կերպով ցույց են տալիս

[1] Լ. Բաշալյան, *Մտքին և դրամին պայքարը*, «Հայրենիք», 1891, № 87։

[2] «Հայրենիք», 1891, № 31։

[3] Լ. Բաշալյան, *Սերը երդիքներուն տակ*, «Հայրենիք», 1895, № 1100։

գավառագիրները։ «Աղան այն տգետ, ունևոր, ազդեցիկ, ամբարտավան ու գծուծ տիպարն է, որ մեր մեջ, ամեն տեղ, հանրային գործին գլուխը անցած... իր բովանդակ ծանրության տակ կը խեղդե ամեն շարժում դեպի բարվոքումը, փոփոխության, հառաջադիմության բոլոր փորձերը կը խափանե և ամեն միջոցներով կ՚աշխատի մշտնջենավորել վիճակ մը, ուր իր անձնական շահը և սնապարծությունը գոհացումներ կը գտնեն»[1]։ Եկեղեցականները մեծ մասամբ անարժան մարդիկ են, որոնց գործը եղել է և մնում է «կատարակել հասարակությունը», սերմանել գժտություն, մարդկանց «իրարու դեմ հանել»[2]։ Եվ առհասարակ, խոր ընդհանրացում կատարելով գրում է Լ. Բաշալյանը, «բոլոր այդ հարուստները— հին խոսք մը կրկնելով, իրենց համար ըսված է կարծես հատկապես—դրամապանակ մը ունին իրենց սրտին տեղ, այդ դրամապանակին պես աղտոտ ու ճմռթկած հոգիով մը»[3]։ Իսկ ո՞րն է այդ ամենի ծնող հիմնական հողը։ Դա սեփականատիրական հասարակարգն է, որտեղ տեղի ունեցող նոր տեղաշարժերն ու հեղաբեկումները, «ընկերական (սոցիալական) կերպարանափոխությունք այնպես բրած են, որ մարդս գայլ է այսօր մարդու համար»[4]։ Գայլային օրենքն էլ, բնականորեն, իր ամբողջ ահռելի

1 Լ. Բաշալյան, *Աղան*, «Հայրենիք», 1895, № 1242։

2 Լ. Բաշալյան, *Անօրինակ թաղականներ*, «Հայրենիք», 1895, № 1155 և 1156։

3 Լ. Բաշալյան, *Ոսկի հորթին առջև*, «Նոր կյանք», 1899, № 22, էջ 358։

4 Լ. Բաշալյան, *Բարոյական պարզացումը*, «Հայրենիք», 1893, № 436։

ծանրությամբ ճնշում է ազնիվ ու արդար վաստակի մարդկանց, ստեղծելով սոցիալական ծայրահեղ բևեռացում, մի կողմից՝ մի կույտ վերնախավերի անհուն հարստություն, մյուս կողմից՝ միլիոնների ծով թշվառություն: Կյանքը, ըստ Բաշալյանի, հարթ ճանապարհ չէ, այլ լցուն է «ծիծաղով ու արցունքով», խառնուրդ է «ցավի ու վայելքի, գինարբուքի ու զրկանքի»[1]: Ծիծաղն ու վայելքը, շվայտությունն ու գինարբուքը հարուստների բաժինն է, «ի վերուստ» սահմանված հենց նրանց համար, ովքեր չեն ստեղծում նյութական արժեքներ ու բնավ չեն հոգում այդ արժեքներն ստեղծող աշխատավոր զանգվածների մասին: Ընդհակառակը, նրանց մեղքով է, որ աշխատանքի մարդու համար «թշվառության դաշտը անսահման է, ցուրտ, լերկ, փշալից» և միլիոնավոր ունեզուրկները «կյանքի դժնդակ ճամբան... բոպիկ ոտքերով կերթան տատասկներու մէջէն»[2]: Այս էլ դեռ բոլորը չէ: Բուրժուականացող վերնախավերը արատավորում են ընտանիքը, սերը, բարոյական պարզ նորմաները, մի իրողություն, որի մասին ցնցող օրինակներ են բերված Լ. Բաշալյանի ոչ միայն վերը հիշատակված, այլև «Ջահ մը», «Մեռելի մը վրա», «Քանիներ տեսա, որ ընկճեցան», «Ի՞նչ կը բերեն Փարիզեն», «Բարոյական զարգացումը», «Ամուր կուլան», «Աղտը» և տասնյակ ուրիշ քրոնիկների ու հոդվածների մեջ, ինչպես նաև գեղարվեստական ստեղծագործություններում: Շահասիրությունը

---

[1] Լ. Բաշալյան, Փարիզյան կյանք, «Հայրենիք», 1891, № 18:

[2] Լ. Բ. (Բաշալյան), Հոգածություն, «Հայրենիք», 1894, № 791:

այնքան է ներթափանցել կյանք, որ երիտասարդությունը խակական կրթության ձգտելու փոխարեն ընտրում է առավել շահավետ մասնագիտություններ, իսկ շատ հաճախ էլ գիտության փոխարեն ձեռք է բերում... «գեղեցիկ փողկապ կամ լավ հարդարված մազեր»[1]։

Բաշալյանի խոր համոզմունքն այն է, որ «ընդհանուրին օգուտը մեկ քանիի շահուն չի զոհվիր»[2]։ Սակայն դարեր շարունակ, ինչպես նոր ժամանակներում, այնպես էլ խոր անցյալում, որպես սեփականատիրական կարգերում սրբագործված օրենք ու իրավունք, իշխող վերնախավերը «ընդհանուրի օգուտը» միշտ էլ զոհաբերել են իրենց անձնական, անհատական շահերին։ Այս մասին մի խոսուն փաստաթուղթ է Լ. Բաշալյանի «Հայաստան 14-րդ դարու» յուրօրինակ գրվածքը, որ կարելի է անվանել «հեքիաթ-հոդված»։ Բրիտանական թանգարանում գրողը հանդիպում է անգլիացի մի ճանապարհորդի (Ջոն Մոնտևիլի) ուղեգրական նոթագրությունների գրքին, որից թարգմանում և իր մեկնաբանություններով ներկայացնում է մի հատված՝ նվիրված Հայաստանին։

Այդ ճանապարհորդը XIV դարում լինում է Հայաստանում։ Այստեղ նա տեսնում է մի տաճար և տաճարում մի բազե, որին հսկում է գեղեցկադույն մի բամբիշ։ Ով որ երեք օր շարունակ կարողանում է ակնդետ նայել այդ բազեի աչքերին՝ բամբիշը նրան պարգևում է ուզած շնորհքը և բարիքը։ Հայ

1 Լ. Բաշալյան, Ի՞նչ կը բերեն Փարիզեն, «Հայրենիք», 1892, № 274։
2 Լ. Բաշալյան, Ընդհանուրին օգուտը, «Հայրենիք», 1895, № 1102։

թագավորը կատարում է պայմանը և որևէ իմաստություն, ժողովրդի համար որևէ բարիք ցանկանալու փոխարեն պահանջում է, որ բամբիշը կենակցի իր հետ։ Նրան հասկացնում են, թե տաճարը սրբավայր է և այդտեղ կարող են բավարարվել միայն հոգևոր պահանջմունքներ։ Սակայն թագավորը պնդում է իր պահանջը և ահա նրան բարեմաղթությունների տեղակ արժանացնում են անեծքի, ցանկանալով, որ նա պատերազմներ ունենա՝ առանց խաղաղության, մինչև 9-րդ պորտը դառնա թշնամիների ստրուկը և ամեն բարիքի կարոտ մնա... «Ու այդտեղից ի վեր ոչ Հայաստանի թագավորը և ոչ երկիրը երբևէ խաղաղություն կամ բարօրություն տեսած են»[1]։

Մի երիտասարդ, նույնպես կատարելով պայմանը, խնդրում է իրեն պարգևել մշտական հաջողություն առևտրի մեջ։ Ուզածը կատարվում է և դառնալով վաճառական, նա շրջում է երկրից երկիր ու մեծ հարստություն դիզում, ստեղծելով իր անձի համար վայելք ու ճոխություն։

Պայմանը կատարում է նաև մի հոգևորական, որը պահանջում է մշտապես ոսկով լցուն, երբեք չդատարկվող մի քսակ։ Ստանում է քսակը և այդ օրից կրոնավորների մեջ սկսվում է երկպառակություն, կատաղի պայքար՝ այդ «հրաշալի գանձը» իրար ձեռքից խլելու համար։

Ահա մեր ժողովրդի մակաբույծ վերնախավերի խորիմաստ բնութագիրը։ Նրանցից ոչ մեկի մտքովն անգամ չի անցնում որևէ պահանջ ներկայացնել ի բարօրություն ամբողջ

1 Լ. Զ. (Զարդումյան-Բաշալյան). Հայաստան 14-րդ դարու, «Նոր կյանք», 1898, № 18, էջ 285։

ժողովրդի։ Ընդհակառակը, իրենց անձնական շահերից ելնելով, նրանք միայն վնաս ու չարիք են բերում։ Դժվար չէ նկատել, որ Լ. Բաշալյանը իր այս յուրատեսակ «Հեքիաթ-Հոդվածում» մատնանշում է աշխարհիկ ու հոգևորական հարստահարիչների պատճառած աղետները։ Իհարկե, այդ չի նշանակում, թե Բաշալյանը ժխտում էր հայոց պատմության լուսավոր էջերը, հայրենանվեր գործիչների խոշոր ծառայությունները։ Նրա խոսքը միայն մեր ժողովրդի արյունը ծծող, սեփական շահը ամեն ինչից վեր դասող պորտաբույծ տարրերի մասին է, որոնց դեմոկրատ գրողը խորապես ատում էր։ Նրա սերն ու համակրանքը ընդհանուր՝ ժողովրդական լայն զանգվածների՝ հողի արդար մշակի, գործավորի (բանվորի), արհեստավորի, պանդուխտի, մի խոսքով՝ «հասարակ մարդու» կողմն էր, որի կենսական շահերի պաշտպանությունը բոլոր «ուխտանականների» ուշադրության կենտրոնում է եղել։ Անշուշտ, նրանց նման Բաշալյանը ևս չէր տեսնում «թշվառության դաշտը», իր բառերով ասած՝ «բոլորովին արգասավորելու», փշի ու տատասկի տեղ «ծաղիկներ բացելու»[1], այսինքն՝ սեփականատիրական հասարակարգը վերափոխելու հեղափոխական ուղին և չէր էլ կարող տեսնել միապետական-ավատական Թուրքիայում, ուր չկային ուժեղ արդյունաբերական բուրժուազիա և կազմակերպված բանվոր դասակարգ, չկային պայմաններ պրոլետարական հեղափոխության համար։ Սակայն ճիշտ չէր լինի պնդել, թե նա չէր որոնում «սոցիալական չարիքը վերացնելու միջոցներ»—ինչպես գրել է Վ. Դաբևսյանը։ Բաշալ-

---

1 Լ. Բ. (Բաշալյան), Հոգածություն, «Հայրենիք», 1894, № 791։

յանի երկերի սովետական հրատարակության նրա առաջաբանում կարդում ենք, թե ռեալիստ գրողը «նկատում է սոցիալական պայմաններից բխած չարիքը, ներքին ցավ է զգում ժողովրդական խավերի թշվառության ու նախապաշարումների հանդեպ, բայց չի խորանում երևույթի սոցիալական դրդապատճառների մեջ, լոկ նկարագրում է, արձանագրում փաստը: Նա չի որոնում չարիքը վերացնելու միջոցներ»[1]:

Այստեղ ճիշտն այն է, որ Բաշալյանն իրոք նկատում է սոցիալական չարիքը և ցավ է զգում ժողովրդական խավերի թշվառության համար: Բայց նախ՝ Բաշալյանը բնավ էլ անտարբեր ու անկիրք փաստագրող չէ, այլ ունի պարզ ու որոշակի վերաբերմունք երևույթների նկատմամբ: Այդ մենք տեսանք արդեն նրա քրոնիկների ու հոդվածների օրինակով, կտեսնենք նաև նորավեպերն ու պատմվածքները քննարկելիս: Այնուհետև, ճիշտ չէ, թե Բաշալյանը չէր որոնում «չարիքը վերացնելու միջոցներ». ընդհակառակը, որոնում էր, ճիշտ այնպես, ինչպես մյուս «ութսունականները». այլ բան է, որ նա չէր գտնում սոցիալական վերքերը բուժելու իսկական «դեղն ու դարմանը»: Բաշալյանը շարունակ մերկացնում էր հասարակության խոցերն ու արատները, այլանդակ, անմարդկային բարքերն ու օրենքները, ամբողջ հոգով ապրում էր ժողովրդի հույզերով ու հույսերով, աշխատավորներին ազատ ու երջանիկ տեսնելու բուռն ցանկությամբ: Կրկնում ենք, նա հասու չէր իսկական ազատության հասնելու միջոցներին, բայց մի՞թե պատահ-

---

1 Վ. Դաէնյան, Լևոն Բաշալյան, վերջինիս «Ընտիր երկեր» ժողովածուում, Երևան, 1962, էջ 7:

կան է, որ երբ հայ ժողովուրդը խորհրդային իրավակարգում ձեռք բերեց այդ ազատությունը, Բաշալյանը, մյուս սփյուռքահայ առաջադեմ մտավորականների նման, սրտանց ողջունեց այդ պատմական փաստը, ինչպես արդեն տեսանք նրա կյանքի ուղին գծելիս: Հարկավ, նա չհասավ սեփականատիրական հասարակարգը արմատապես հեղաշրջելու գաղափարին, բայց «ութսունականների» շարքերում հետևողականորեն պայքարեց այդ նույն հասարակության դեմ, սոցիալական և ազգային ազատության համար, անկախ իր կուսակցական ու քաղաքական դավանանքից, մեծ ծառայություն մատուցելով ժողովրդին: Բաշալյանը հումանիստ էր ու իսկական ազգասեր, թշնամի էր ազգային ատելության ու երկպառակության ռասիստական տեսության: Սրա վառ արտահայտություններից մեկն է տակավին 1886-ին գրված նրա մի հոդվածը ֆրանսացի Է. Դյումոնի «Հրեացյալ Ֆրանսիա» գրքի մասին: Այս գրքի հեղինակը քննադատության էր ենթարկում այն բոլոր ֆրանսացիներին, որոնք հրեական ծագում ունեին կամ համակրանք էին տածում հրեաների նկատմամբ: Նա առաջարկում էր Ֆրանսիայից վտարել բոլոր հրեաներին, բռնագրավել նրանց ունեցվածքը: Բաշալյանը, ժամանակի առաջավոր մտավորականների հետ միասին, որոնք հանդես եկան այդ կատաղի ռասիզմի դեմ, խստիվ դատապարտում է նրա «միջնադարյան գաղափարները և կլերական տեսությունները», լիովին միանալով նշանավոր գրող Անատոլ Ֆրանսին, որը հայտարարել էր, թե՝ «Կարհամարհենք, կատենք այդ վայրագ խոսքերը»[1] (Դյումոնի

[1] Լ. Բ. (Բաշալյան). Հրեական խնդիրներ, «Մասիս», 1886, № 3820:

հրեատյաց խոսքերը)։ Ուշագրավ է նաև Լ. Բաշալյանի մեկ ուրիշ հոդվածը հանրածանոթ «Դրեյֆուսի գործի» վերաբերյալ, ավելի շուտ՝ այդ գործի կապակցությամբ էմ. Զոլային մեկ տարվա բանտարկության դատապարտելու առթիվ։ Զոլայի հայտնի նամակի «Կ՚ամբաստանեմ», —գրում է Բաշալյանը,— պիտի մնա իբր է՛ն վսեմ աղաղակը արդարության ծարավի մարդու մը», հենց միայն այդ նամակի համար էլ՝ «Մեծ մարդ մըն է ան, Մարդ մը»[1]—շեշտում է Բաշալյանը։ Զոլային դատելը և դատապարտելը, ըստ նրա, սափ, խաբեության, խարդախության հաղթանակն էր, բայց միայն ժամանակավոր, որովհետև մարդասիրությունն ու ճշմարտությունը բանտում չես պարփակի. «Սա դատեն Զոլլա կելլե ա՛լ ավելի խոշորացած, մեծ լուսապսակով մը՝ մարդասիրության լուսապսակը։ Ճշմարտության համար ըմբոստ մարդուն հոյակապ փառքը ունի ան հիմակ, մշտնջենական փառքը, որ պատմության մեջ պիտի բաժնե Ծորտանո-Պրունոներու, Գալիլեյներու, Էտիեն Մարսելներու հետ»[2]։ Բաշալյանը շարունակ քննադատել է կապիտալիստական երկրների զավթողական քաղաքականությունը, ազգային ամեն տեսակ ճնշումն ու հալածանքները, «քաղաքակրթության» և «օգնության» անվան տակ՝ սեփական շահերի համար մի ազգի միջամտությունը մյուսի գործերին։ Խոսելով «Հայկական հարցի» և 1895—1896-ի հայկական ջարդերի

---

1 Լ. Զարբումյան (Բաշալյան), *Մարդ մը*, «Նոր կյանք», 1898, № 2, էջ 32։

2 *Նույն տեղում*, № 5, էջ 80։

առթիվ «մեծ տերությունների» վերաբերմունքի մասին, Բաշալյանը գրել է. «Այս վերջացող դարուն վախճանին ամբողջ աշխարհի մեջ մենք՝ հայերս միայն գտնվեցանք այնքան միամիտ՝ կարծելու, թե եվրոպական ազգերը վարող աղղակները զգացումներն են և ոչ թե շահերը: Սուղի նստավ մեզի անիկա»[1]: Հատկանշալի է, որ «եվրոպական ազգեր» ասելով, հեղինակը նկատի ունի արևմտա-եվրոպական այն պետությունները, որոնց թողտվության, ապա նաև ուղղակի օգնության պայմաններում տեղի ունեցան թե 1895—96-ի և թե մանավանդ 1915-ի արյունոտ ջարդերը: Ինչ վերաբերում է տարբեր երկրների ժողովուրդներին, ժողովուրդների լավագույն զավակներին, ապա Բաշալյանը առանց որևէ ազգային կամ դավանական խտրականության գնահատել է նրանց ըստ արժանվույն՝ սկսած իր սիրելի գրողներից մինչև հասարակական-քաղաքական ականավոր գործիչներն ու շարքային լավ մարդիկ:

Շատ կարելի էր խոսել Լ. Բաշալյանի հրապարակախոսական ու գրաքննադատական գործունեության մասին, սակայն, կարծում ենք, որ ասվածից պարզ է, թե ինչպես նա անդրադարձել է այն բոլոր հարցերին, որոնք հուզում էին «ութսունականներին»: Կրկնու՞մ էր արդյոք նա մտքի ու գրչի իր մյուս ընկերներին: Այո՛, բայց այնքանով, որքանով նրանք բոլորն էլ հարուստ փաստական նյութի հիման վրա արծարծում էին միևնույն հրատապ խնդիրները, իսկ նրանց գործունեությանը

[1] Լ. Զ. (Զարբումյան-Բաշալյան), *Օրվան քաղաքականությունը*, «Նոր կյանք», 1898, № 2, էջ 31:

ավելի քան սողական է «կրկնությունը գիտության մայրն է» արտահայտությունը՝ իր լավագույն իմաստով:

«Ութսունականները» չէին կարող «չկրկնել», այսինքն՝ չլրացնել մեկը մյուսին, չարել միևնույն կենսական հարցերը, որոնք անհրաժեշտ էր հասցնել ժողովրդի գիտակցությանը: Նույնիսկ այն ժամանակ, երբ Գր. Զոհրապը, Հ. Ասատուրը, Տ. Կամսարականը անջատվելով «Հայրենիք» օրաթերթից, հիմնեցին «Մասիս» գրական հանդեսը, Զոհրապը հարկ համարեց նորից հիշեցնելու, որ՝ «Արևելքի կազմող ուժերը (իմա՝ «ութսունականները»—Ս. Մ.) մասամբ այսօր անջատված են՝ առանց շեղելու իրենց նպատակեն, Հայրենիքի, Մասիսի մեջ շարունակելու միասին սկսած վաստակը և իրարու մոտ, բայց ոչ իրարու դեմ հանելով իրենց պեսպիսությունը», ուշադրության կենտրոնում պահելով միևնույն «հանրային խնդիրներու հոգածությունը..., ճշմարտությունը ամենուրեք փնտրելու հարկը»[1]: Հանրային, համաժողովրդական, համընդհանուր խնդիրներ շոշափելիս «ութսունականներն» իրոք դրսևորում էին զարմանալի պեսպիսություն, ինքնուրույն տաղանդ, բոլորն էլ միահամուռ կերպով առաջնության դափնին պարգևելով իրենց պարագլուխ Ա. Արփիարյանին, որի մասին Գ. Զոհրապը, իր մյուս ընկերների լիակատար համաձայնությամբ, գրել է. «Իրմով սկսած ու քաջալերած է միշտ այն երիտասարդ գրողներու շարքը, որ մեր հրապարակագրության այժմու, ռամիկ թե որ կուզեք, բայց հասկնալի ու սրտի մոտիկ հանգամանքը

1 Գ. Զոհրապ, Երկերի ժողովածու, հտ. 2, 1962, էջ 317:

տված են»[1]*։ Այդ երիտասարդ գրողների՝ մեծ երախտավոր «ութսունականների» առաջին շարքերումն էր նաև Լևոն Բաշալյանը՝ թե որպես լրագրող, հասարակական գործիչ, գրական քննադատ և թե իբրև արձակագիր, գեղարվեստական խոսքի ինքնատիպ վարպետ։*

---

1 *Նույն տեղում, հատ. 1, էջ 420։*

ՆՈՐԱՎԻՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՓՈՐՁԸ

Լեոն Բաշալյանը այն հեղինակներից է, որոնք գրականության մեջ մուտք են գործում միանգամից, գրական առաջին իսկ քայլերից արժանանում ընդհանուր ուշադրության: Նա օժտված էր իսկական գրողի բնածին քանքարով, ու երբ 1886-ին տպագրվեց 19-ամյա երիտասարդի անդրանիկ լուրջ հոդվածը՝ «1885 տարին Թուրքիո հայ գրականության համար», ժամանակի հեղինակավոր դեմքերից մեկը՝ Ե. Տեմիրճիպաշյանը ոգևորված գրեց. «Հույժ սիրեցի «Մասիսին» սույն տեսությունն անցյալ ամի գրականության վրա: Բաց հայացքով մը գրվածն էր. հասուն մաքի ծնունդ ու վարժ գրչի արդյունք... Պ. Լեոն Բաշալյան կարող քան երազող միտք մը կերևի: Չի հեռանար նյութեն, չի մոլորիր դժվար, անել—այլև հեշտագին—ճամբուն մեջ: Կարգավորություն յուր նախադասությանց մեջ, կարգապահություն յուր բոլոր հոդվածոց մեջ կը տիրե»[1]: Թերևս սա ասված է սկսնակ հեղինակին խրախուսելու նպատակով. մի բան, որ Տեմիրճիպաշյանը արել է նաև Տ. Կամսարականի,

---

1 «Բանբեր գրականության և արվեստի», Բ գիրք, 1904, էջ 173:

5—396

Գ. Զոհրապի ու մյուս «ութսունականների» նկատմամբ։ Սակայն անժխտելի է, որ հմուտ լեզվագետն ու գրագետը, Զոհրապի բնութագրմամբ «աշխարհաբարի այս Նարեկացին»[1], ճիշտ է նկատել Բաշալյանի հասուն միտքը և վարժ գրիչը։ Պատահական չէ, որ գրականության մի տարվա տեսությանը նվիրված այդ հոդվածից ընդամենը երկու տարի հետո, 1888-ին լույս տեսավ Բաշալյանի գեղարվեստական անդրանիկ ստեղծագործությունը՝ «Հմայաթափ» նորավեպը և նույնպես գնահատվեց իբրև ժամանակի գրական ամենալուրջ երևույթներից մեկը։ Ահա թե ինչ է գրել այդ մասին Ա. Արփիարյանը. «Իր առաջին նորավեպն, որ հրատարակվեցավ ընդհատված չորս «Մասիս»ներուն» մեջ, հրապարակ հանած էր դիտող, զգացող գրագետ մը։ Բազմաթիվ հատկություններ ցույց տված էր։ Նրբին հեգնություն, սրտաբուխ կորով, բանաստեղծական ներշնչում, անագյուտ ոճ ու պերճ հայերեն իր գլխավոր հատկանիշներն էին»[2]։ Իհարկե, այդ հատկանիշները գնալով պիտի խորանային ու զարգանային, կատարելության հասնեին Բաշալյանի հետագա ստեղծագործությունների մեջ, սակայն «Հմայաթափը» լիակատար իրավունք էր տալիս Արփիարյանին՝ նորավիպագրական այդ նախափորձի հիման վրա մատնանշելու երիտասարդ արձակագրի հիմնական առանձնահատկությունները։ Այն էլ պիտի նկատի ունենալ, որ «կորովի» ու «կարուկ

---

1 Գր. Զոհրապ, Եղիա Տեմիրճիպաշյան, *Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1962, էջ 406։*

2 Ա. Արփիարյան, *Մասիս 1884—1893 (Գ հոդված), «Հայրենիք», 1893, № 356։*

«կարնող» գրականության համար մաքառող Արփիարյանը չէր կարող բարձր չգնահատել մի նորավեպ, որտեղ արվեստի միջոցներով շոշափված են «ուլթռանականների» գրական ծրագրի մի քանի կարևոր կետերը՝ կյանքից կտրված, «եթերային» արվեստի ցավալի հետևանքները երիտասարդության կյանքում, հարուստ վերնախավերի արատավոր բարքերը, համեստ աշխատավորի վիճակն ու հույզերը:

«Հմայաթափ»-ում, որ հեղինակն անվանել է «Նորավեպ Պոլսո կյանքէ», արծարծվում է գլխավորապես այն հարցը, թե ի՞նչ ազդեցություն կարող է թողնել մարդկանց վրա, ի՞նչ սերունդ կարող է դաստիարակել «օդային կապույտ պարիկների»[1] գրականությունը, որը հեռու է կյանքից, լի է տխուր ու ողբերգական դեպքերով, վերացական, անհող երազանքներով: Այդպիսի գրականությամբ է սնվել ահա նորավեպի կենտրոնական կերպարը՝ Գևորգ Բաստրմաճյանը: Հենց սկզբից հեղինակը մի նուրբ ու իմաստալից պատկերով հասկացնում է, որ վատ գրքերը այդ ընդունակ պատանուն զրկել են ինքնուրույնությունից. «Աչերը կփայլեին այն ապակիի գույնով, որ մասնավոր երանգ մը չներկայացներ, այլ շրջակա առարկայից գույնին ցոլացումն է զոգցես»[2] (կարծես թե—Ս. Մ.): Հիրավի. Գևորգը ամբողջապես իր կարդացած գրքերի արտացոլանքն է, կտրված է միջավայրից ու ընկերներից, չի մասնակցում աշակերտական խաղերին ու կատակներին, անգամ չի ժպտում, երբ դասարանում պայթում է հոմերական քրքիջ... Նրա գլուխը

---

1 Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, Երևան, 1962, էջ 28:

2 Նույն տեղում, էջ 9:

դարձել է «սովորականեն տարբեր գաղափարաց պահարան մ՝ է»[1]։ Ու այդ ոչ-սովորական գաղափարների ազդեցությամբ ինքն էլ շարադրում է «միշտ տխուր ու մելամաղձիկ ոճի»[2] ոտանավորներ։ Նա չի ճանաչում կյանքը, ուստի ոտանավորների մեջ ներդնում է «իր երազատենչ մտքին ցնորքները ողջույն», չի ճանաչում սերը, ուստի անդրադառնում է «սիրատենչիկ տարտամ մրմունջներուն»[3]։ Ուշագրավ է, որ նորավեպում ասվում է, թե «Արևելք» լրագիրը հրաժարվում է տպագրել այդ ոտանավորները, քանի որ դրանք «շատ վերացական էին»։

«Վարդագույն երազներ» փայփայող և վերացական ոտանավորներով իրեն մխիթարող Գևորգը, դպրոցն ավարտելուն պես, բախվում է իրական կյանքին, կարծես երկնքից ուղղակի ընկնում է դժոխք. «Է՜հ, ի՜նչ երազ. ա՜յս է եղեր կյանքը,— հիասթափված իր պատրանքներից բացականչում է նա,— բանաստեղծներուն երգած օդային կապույտ պարիկներն ասո՜նք են եղեր, և իդեականին ամենեն հոգեպարար անուրջներն այս խեղկատակ կերպարանաց տակ մարմին կառնու եղեր»[4]։ Այո՛, պատասխանում է ռեալիստ արձակագիրը, կյանքը Գ. Օտյանի նշած եդեմական «բուրաստանը» չէ, այլ պայքարի ասպարեզ, որի անարդար ու չար օրենքները ճզմում են Գևորգի նման հոգեպես «տկար ու վեհերոտ» մարդկանց, «հեզ ու խոնարհ բնա-

1 Նույն տեղում, էջ 9։

2 Նույն տեղում, էջ 10։

3 Նույն տեղում, էջ 15։

4 Լ. Բաշալյան, Խոհարար և վիպասան, «Հայրենիք», 1894, № 720։

վորությունների», որքան էլ նրանք ունենան նույն Գևորգի որո-շակի ընդունակությունն ու բարեմասնությունները։ Գևորգը վարժարանում իր մտավոր օժտվածությամբ եզ[illegible] աշակերտը, միշտ մրցանակներ է շահել շարադրություն[illegible] ավարտելուց հետո նշանակվելով ուսուցիչ՝ բարեխղճորեն կա-տարում է իր գործը, սակայն քանի որ վարժվել է «անիրական, երևակայական ոլորտներուն մեջ սավառնելուն»[1], ուստի իրական կյանքում ոչ միայն չի կարողանում սավառնել, այլև ոտքերը քարշ տալ և վայր է ընկնում հրաղափշուր։ Կյանքում ստացած առաջին իսկ հարվածից նա հիվանդանում, անկողին է ընկնում, պատրանքներից հետո իր սիրտը համարելով դա-տարկ մի անդունդ... Ու անկողնում էլ նա սկսում է խորհրդա-ծել կյանքի ու մահվան մասին. «Դուրյանը միտքս կ՚իյնա ան-դադար, ու անոր տողերուն ամենեն վսեմը թերևս միտքս չել-լար ամեն վայրկյան.

Ի՞նչ, երազե մը ետք գրկել ցո՞ւրտ շիրիմ։

Ե՛ս ալ, ե՞ս ալ արդյոք պիտի գրկեմ ցուրտ շիրիմը... Ո՞րն է լավը.— Արև-արեգական տակ, մարդկային ընդհանուր ցըն-ծության ու հրճվանաց մեջ, թաքուն անտեսանելի որդ մը... ո՞ղջ-ո՞ղջ, հաճույքով, փափկությամբ հատցնե՞ սիրտդ, թե՞ իրենց անկուշտ ախորժակեն վարյալ անասնիկներու երամ մը կրծե լմնցնե ղքեզ մեկ անգամեն, հողին ներքև, գերեզմանին պա՞ղ և հավերժակա՞ն միայնության մեջ»[2]։

Բաշալյանն այս տողերով ավարտում է նորավեպը, ըն-

---

[1] Լ. Բաշալյան. Ընտիր երկեր, էջ 29։

[2] Նույն տեղում։

թերցողին թողնելով խորհել, թե ո՞ր ճանապարհը կընտրի Գևորգը, այսինքն՝ կգերադասի վերջ տալ իր կյանքին, թե՞ կշարունակի ապրել։ Բայց այստեղ Դուրյանի ցավոտ ու ցասկոտ տողը օգնում է հասկանալու, որ Գևորգը սիրում է կյանքը, ցանկանում է ապրել, և խորտակվել են նրա պատրանքները սնամեջ ու անկյանք գրականությունից, որն ըստ նորավեպից բխող եզրակացության, չի կարող սնել լիարժեք սերունդ, ողջախոհ ու կենսունակ, կյանքի պայքարին դիմացող մարդիկ։ Բայց միայն այդ գրականությունը չէ, որ պատճառ է դառնում Գևորգի դժբախտության։ Մեծագույն մեղքը ընկնում է հասարակության, միջավայրի վրա, քանի որ ո՛չ մեկը չի օգնում նոր-նոր ձևավորվող երիտասարդին՝ ճիշտ դաստիարակվելու և կողմնորոշվելու. «Ոչ մեկուն մաքին կանցներ արգելք լինել նորա գործոց»[1],—կարծեք իմիջիայլոց ասում է Բաշալյանը, դրանով իսկ ընդգծելով և՛ «եթերային» գրականության վնասակարությունը, և՛ դրա դեմ պայքարի բացակայությունը։ Ավելին, նա քննադատության կրակն ուղղում է հիմնականում Գևորգին շրջապատող հասարակության դեմ, այն կարգերի ու բարքերի դեմ, որոնք արտոնում են ոմանց՝ ծաղրելու և ստորացնելու ուրիշներին։ Ինչքան էլ որ Գևորգը ծաղրի առարկա է դառնում վարժարանում՝ իր ինքնամփոփվածության, տարիքին չհամապատասխանող մեկուսացվածության ու տխրության համար, կամ թե որպես ուսուցիչ՝ թուլակամություն դրսևորելու պատճառով, ամենաուժեղ հարվածը ի վերջո նա ստանում է Ձյումպյուլյան հարուստ ընտանիքում, ուր

1 Նույն տեղում, էջ 13։

պարապում է երկու երեխաների հետ։ Նյութապես ապահով այդ ընտանիքում անփորձ ու դեռահաս ուսուցչին թվում է, թե ինքը «երկնային դրախտ ղտած էր ալ»..., բայց հասու չէ, որ ինքը այդ «դրախտին» խորթ է։ Տանտիկինը նրա վրա նայում է որպես սովորական մի առարկայի, որին գնել է ոսկով և կարող է հետը վարվել իր ուզածի պես։ Տիկին Զյումպյուլյանը պատկանում է այն «վերին խավերին», որոնք անգործությունից ձանձրանում են, գրքերից հագենում, շարունակ որոնում զվարճանալու միջոցներ և առիթներ։ Եվ ահա, հանձին Գեորգի նա տեսնում է ծաղրի ու զվարճանալու համար առիթ։

«Օր մը, դասի ատեն, հանակնկալս ներս մտավ սենեկեն։ Գոհարիկ (նրա դուստրը—Ս. Մ.) ոտանավոր մը ուզած էր երիտասարդեն (Գեորգից—Ս. Մ.), և նա ալ բերած էր փոքրիկ քերթված մը դեռատի օրիորդին համար։ Տիկին Զյումպյուլյան առավ զայն աղջկանը ձեռքեն և կարդաց.

Երբ տեսնես
Գոհարիկ,
Համբուրիկ
Դու կուղես
Առնել յուր
Այտեն բյուր։

— Օ՜, դու նշանավոր բանաստեղծ ես եղեր, և մենք չէինք գիտեր մինչև հիմա։ Առաջին ոտանավո՞րդ է այս, թե ուրիշներ ունիս գրած։

— Ոչ՛, տիկին, ուրիշներ ալ գրած ունիմ, սակայն երևան չեմ հանած, ինձ համար պահած եմ։

— Ի՞նչ դժբախտություն։ Ազգը զրկե՞լ այսպիսի տաղանդավոր արտադրություններե,— ըսավ տիկին Ջյումպյուլյան ժպտելով»[1]։

Ա. Արփիարյանի նշած «նրբին հեգնությունը» պարունակող այս հատվածում արդեն ակնհայտ է տիկին Ջյումպյուլյանի վերաբերմունքը «հասարակ վարժապետի» նկատմամբ։ Նա ոչ թե պոեզիան չի հասկանում և ի միջի այլոց է ծաղրում Գևորգի «քերթվածը», այլ «բավական զարգացյալ միտք մ'ուներ, կհետևեր ֆրանսական գրական շարժման և իր գրադարանը լեցուն էր ֆրանսացի նշանավոր վիպասանաց նորագույն գործերով»[2]։ Ուրեմն՝ նա պարզապես «թարմ» նյութ է գտնում զվարճանալու համար, որին, իհարկե, մասնակից է դարձնում նաև իր նմաններին։ Նրա պահանջով Գևորգն արտագրում և բերում է ոտանավորների մի տետր, իսկ տիկինը հրավիրում է ընկերուհիներին և հայտնում, թե հեղինակը «միանգամայն նշանավոր բանաստեղծ մ'է», եթե կուզեք «հոս բերել տամ զինքն և իրեն կարդացնել տանք, կզվարճանանք»... Ու զվարճանում են, սկզբում թարնված ժպիտներով (որպեսզի Գևորգը «չխրտնի» միանգամից և վարժվի իր վիճակին), ապա՝ ազմկոտ ծիծաղով, թեև 19-ամյա տղան կարդում է տխուր էջեր՝ «իր բոլոր ցնորական անուրջներն, իր գիշերային մենիկ ոգևության այս կսկծալի եղերգությունները թափելով այդ ծիծաղկոտ սրահին մեջ»[3]։ Ոտանավորների մեջ Գևորգը դրել էր

1 Նույն տեղում, էջ 19—20։

2 Նույն տեղում, էջ 19։

3 Նույն տեղում, էջ 20—21։

«իր սիրտը ողջույն», գրել էր կարծես «իր սրտին արյունով», բայց «ծիծաղկոտ սրահի» այցելուների համար ի՞նչ արժեն ինչ-որ աղքատ դասատուի սիրտն ու արյունը... Նրանցից ոմանք նրան համարում են «խենթ», բայց բոլորն էլ բավարարված են.

— Այնուհանդերձ աղեկ զվարճացուց մեզի: Միայն դեմքն ամբողջ կատակերգություն մը կարժե:.

— Քանի որ ձեռքիդ տակը այսպես դանձ մը ունեիր, ի՞նչու համար մինչև հիմա երևան չէիր հաներ զայն[1]:

Այդ «գանձն» էլ, իհարկե, որոշ ժամանակ անց կորցնում է իր հմայքը, և կորցնում է այն օրից, երբ ուզում է հավաստել, թե ինքն էլ սիրտ ունի, ունի մարդկային զգացմունքներ: Զանձրանալով «եղերերգություններից», տիկին Զյումպյուլյանը պահանջում է հորինել «սիրո տաք շունչով գրված բան մը». չէ՞ որ «ամեն բանաստեղծ իր սրտին մեկ առարկան կունենա, որուն կուղղե իր աղերսները»[2]: Ցնորքներով տարված, բնավ չզգալով, թե ինքը «խնդալու ինչ զվարճալի առարկա մ'էր դարձած», Գևորգը իր «սիրո տաք շունչը» ներդնում է մի նամակի մեջ և հանձնում իր «սրտի ընտրյալ» տիկին Զյումպյուլյանին... «Դրախտի» դուռը անմիջապես փակվում է նրա առաջ, և պատրանքների խորտակման անհուն վիշտը նրան ձգում է անկողին: Ու ոչ-ոք այլևս չի հետաքրքրվում նրա բախտով, իսկ այն գրքային-բանաստեղծական կյանքը, որին նա ծանոթ էր, լիովին կորցնում է հմայքը Գևորգի համար (այստեղից էլ՝ «Հմայաթափ» վերնագիրը):

---

1 Նույն տեղում, էջ 21:

2 Նույն տեղում, էջ 22:

Գևորգը մեկն է նրանցից, որոնց անվանի գրող Ստ. Զորյանը հետո պիտի անվաներ «տխուր մարդիկ»։ Մանուկ հասակում նա զրկվում է մորից, շուկայական միջնորդ հայրը երբեք «փայլուն գործեր» չի կարողանում տեսնել, թեև «գեշ-աղեկ կապրեցներ ընտանիքը»։ Գևորգի 17 տարին նոր բոլորած, մահանում է նաև հայրը, և դպրոցական աշակերտը մնում է հորաքրոջ խնամքին, նրա օգնությամբ մի կերպ ապրելով մինչև վարժարանն ավարտելը։ «Արհամարհանաց և դառն զրկանաց» տարիներ է անցկացնում դպրոցում, հագնվում է խղճուկ, երբեք չզգալով «նյութական վայելքների» հրապույրը։ Երբ «Արևելքը» մերժում է տպագրել ուղարկված ոտանավորը, Գևորգը «Չզարմացավ, բախտն ե՞րբ ժպտած էր իրեն. սիրտը վարժված էր դառնությանց՝ պատանեկության մատաղ տարիներեն»։ Այս ամենի վրա ավելացրած անառողջ, վնասաբեր «հոխակ գևոր սնունդը» և ապա սպանիչ ծաղր ու ծանակը «ծիծաղկոտ սրահներում»— կատացլի կերպարի այն վիճակը, որ ռեալիստորեն գծել է սկսնակ Բաշալյանը։ Ու որքան էլ հեղինակը իր հերոսին դրել է ծանր վիճակների մեջ, երբեք չի շեղվել իրականությունից, չի իդեալականացրել նրան և դուրս չի բերել որպես բացասական գծերի խտացում։ Եվ բոլոր դեպքերում շոշափելիորեն զգացվում է ներքին համակրանք հերոսի նկատմամբ, այսինքն՝ «ցածր խավերին» պատկանող մարդկանց նկատմամբ։ Այս համակրանքը հետո պիտի նոր ուժով, նոր երանգներով ու նոր որակով դրսևորվեր Բաշալյանի հաջորդ նորավեպերում ու պատմվածքներում, սակայն «Հմայաթափի» մեջ ևս այն ցայտուն կերպով արտահայտված է Գևորգի հորա-

քրոջ՝ Աղավնի հանըմի հպանցիկ, բայց կենդանի կերպարի միջոցով։

Հասկանալի է, որ «Հմայաթափի», որպես նորավեպի (նովելլի) ժանրային առանձնահատկությունները պահանջում էին զարգացնել մեկ-միասնական թեմա՝ վերացական գրականության և մարդկային արժանապատվությունը ոտնահարելու սովոր հասարակության բացասական դերի բացահայտումը։ Սակայն այսպես կոչված «օժանդակ» թեմաները, որոնք գալիս են լրացնելու և ամբողջականացնելու կենտրոնական հերոսի կերպարը, երբեք չեն դիտվել որպես «անօրինական տարր» նորավեպի մեջ։ Մանավանդ այնպիսի նորավեպի, ինչպիսին «Հմայաթափն» է, որը մի տեսակ ծրագրային բնույթ ունի։ Տիկին Ջյումպյուլյանի և Աղավնի հանըմի օժանդակ կերպարները գալիս են ընդգծելու էությունը այն միջավայրի, որտեղ գործում է կենտրոնական հերոս Գևորգը և վառ կերպով ցույց են տալիս պատկերվող կյանքի սոցիալական ծայրահեղ բևեռացումը, մի բևեռում՝ Ջյումպյուլյանների արատավոր կենցաղն ու անմարդկային վերաբերմունքը մարդու նկատմամբ, մյուսում՝ Աղավնիների աղքատիկ ապրելակերպն ու խոր մարդկությունը։ Պարզ ու հասարակ, «բուխ սիրտ կնիկ» է Աղավնի հանըմը, որը ճակատի քրտինքով մեծացրել է և՛ իր որդուն, և՛ եղբորորդի Գևորգին։ Որդին հասակն առած տղա է, աշխատում է մի այլ քաղաքում և հոգում մոր մասին, սակայն եղբորորդու ուսումը կիսատ չթողնելու համար Աղավնի հանըմը շարունակում է ձեռագործով զբաղվել և վաստակել նրա ուսման վարձը։ Գորովագութ մայր է նա, նյութական կարիքից անբաժան,

բայց բարի ժպիտը միշտ դեմքին, հուսատու խրատներն ու խորհուրդը շուրթերին: Բացառիկ հմայիչ է Աղավնի հանըմը՝ ծանր վշտից անկողին ընկած Գևորգին խնամելիս. պահապան հրեշտակի նման նա հետևում է հիվանդին, հաճախ «քովը կուգա, վերմակը լավ մը կծածկե ուսին կողմեն և անուշ ձայնով մը, մանկան մը հետ խոսելու պես, կհարցնե խանդաղատանքով.

— Բան մը կուզե՞ս, յավրում, մեկ տեղդ կցավի՞ կոր, տաքությունդ նա՞սըլ է»[1] (ինչպե՞ս է—Ս. Մ.):

Հիվանդի քիչ առողջանալուց հետո, պարզ հոգով զրուցում է հետը, խորհուրդ տալիս թողնել ուսուցչությունը, այլևս չգնալ «ան տունը» (Զյումպյուլյանների), որ «աղեկ չեկավ»: Վերջին պատառ հացը ուրիշի հետ կիսելու պատրաստակամությամբ լեցուն այդ աղքատ կինը ժողովրդի մշակած բարոյական պարզ ու վսեմ նորմաների մարմնացումն է և տպավորվում է հիշողության մեջ, թեև նորավեպում ժլատ է հեղինակային բնութագիրը:

«Հմայաթափը» Բաշալյանի՝ նորավեպ գրելու առաջին նախափորձն է և զերծ չէ տակավին դպրոցական տարիներին հեղինակի դավանած գրաբարախառն աշխարհաբարից, մանավորապես՝ գրաբարի բառամթերքի ու շարահյուսության երբեմն անհարկի տարրերից: Սակայն արդեն այս անդրանիկ գեղարվեստական երկում ակնհայտ է Բաշալյանի կենսաճանաչողությունը, դիտելու և մարդկային հոգին ներթափանցելու

1 Նույն տեղում, էջ 26:

կարողությունը, երևույթները արվեստի միջոցներով ցուցադրելու վարպետությունը։ Ահա, օրինակ, հոգեկան ծանր ցնցումից գրեթե մահվան անկողին ընկած Գևորգի վիճակը պատկերող հատվածը. «Անկողնին մեջ պառկած էր նա, դեմքն ավելի գունատ, քան այն դեղին բարձը, որուն վրա հանգչեցուցած է իր լղար գլուխը։ Աչերն ավելի խոռոչացած են, այնչափ ներս քաշված, որ գերեզմանի փոսի մը տարօրինակ զգայնությունը կուտան տեսնողին և այդ փոսին խորը, մարմրուկ ցոլք մը կպլպլա, շիջանելու մոտ պատրույգի մը լույսին պես տատանոտ... Այտերն այնքան ներս խրած են, որ կարծես թե բերանին մեջեն իրարու են միացած։ Ու բոլոր դիմագծերուն վրա հոգնություն կկարդացվի, անբացատրելի խոնջություն մը, տրտում, թախծալից, սրտամորմո՜ք»[1]։

Շոշափելի կոնկրետությամբ այս հատվածում մեր առաջ հառնում է ֆիզիկապես տկար, բարոյապես ընկճված, հոգեպես հուսահատ երիտասարդի կենդանի կերպարը։ Գրողը դեղին գույնն է ընտրել բարձի համար, ընդգծելով հիվանդի դեմքի դալկությունը. նրա աչքերը համեմատել է գերեզմանափոսի հետ, որի խորքում մարմրող ցոլքը նման է շիջանելու մոտ պատրույգի տատանվող լույսին, ճիշտ այնպես, ինչպես Գևորգն է մահանալու մոտ, ապրել է ուզում, բայց խորհրդածում է «ցուրտ շիրիմի մասին»։ Հուզաթաթավ ու սրտառուչ են Աղավնի հանրմին նվիրված սակավաթիվ, բայց տպավորիչ տողերը, որոնց մեջ գծագրված է ուրույն մի բնավորություն՝

[1] Նույն տեղում, էջ 25։

լի հույզերով ու հույսերով, մտածելակերպով ու խոսքի հնչերանգներով։

«Հմայաթափի»-ն գեղարվեստական այն ստեղծագործություններից է, որոնք ընդունված է անվանել «ծրագրային»։ Այս բառի տակ սովորաբար նկատի է առնվում այն, որ հեղինակը տվյալ երկում պարզ կերպով դրսևորում է իր գեղագիտական հայացքները, շոշափում գրականագիտական-տեսական հարցերը, մատնանշում գործունեության «պլաններ»։ «Ութսունականների» առաջ, մանավանդ սկզբնական շրջանում, հրամայաբար ծառացած էր հենց այդօրինակ «ծրագրային» գործերի ստեղծման պահանջը։ Գեղարվեստական խոսքի ազդեցիկ ուժով նույնպես նրանք պիտի զարգացնեին և պաշտպանեին իրենց տեսակետները գրականության և մշակույթի մասին, պայքարեին ռոմանտիզմի դեմ, մերժեին հանուն կենսաբուխ, կենսահաստատ և «կտրուկ զարնող» (Արփիարյան) ռեալիստական արվեստի, ընդգծեին ռեալիստ գրողի առաջնահերթ խնդիրներն ու անելիքները։ Պատահական չէ, որ Ա. Արփիարյանի, Գ. Զոհրապի, Տ. Կամսարականի, Լ. Բաշալյանի և մյուսների մի շարք գեղարվեստական ստեղծագործություններում շոշափվում են գրականության թեմատիկայի, բովանդակության ու ձևի, լեզվի ու ոճի, նպատակների վերաբերյալ հարցեր։ Իհարկե, դա «ութսունականների» ինչ-որ «մենաշնորհը» չէր։ Հանրածանոթ են Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Րաֆֆու, Ռ. Պատկանյանի, Հովհ. Թումանյանի, Մուրացանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի և շատ ուրիշների «ծրագրային» գործերը։ Սակայն մեր նյութից չհեռանալու համար կու-

զենայինք հիշատակել միայն Ա. Արփիարյանի «Խնդմուկ աղջիկը» (1886) պատմվածքը (հետագայում՝ «Ոսկե ապարանջան»)։ Այստեղ գրաշար Ղուկասը՝ պատմվածքի կենտրոնական հերոսը, դիմում է «համբավավոր գրագետ» Եղիա Տեմիրճիպաշյանին հետևյալ պահանջով.

—Ճանըմ, Եղիա էֆենտիս, հրամանքդ ալ, ուրիշներն ալ ամեն օր վարժապետներուն խեղճ վիճակին վրա կը խոսիք, գրագետներուն ու խմբագիրներուն ցավերը ազգին աչքերուն առաջ կը դնեք, որպեսզի բան մը մտմտան, ճար մը ընեն։ Աղեկ կընեք, շատ աղեկ կընեք, օրհնյալ ըլլաք. ազգին երախտավորներն են անոնք։ Բայց զուլում, Եղիա էֆենտիս, գրաշարներն ալ ազգին աշխատավորները չե՞ն, գրաշարներն ալ էմեկտարներ չե՞ն, անոնք ալ հայ քրիստոնյա չե՞ն. բայց ինչո՞ւ օր մը օրանց մեկերնիդ մեզի ալ մտքերնիդ չբերիք, մենք ազգին խորթ զավակնե՞րն ենք...[1]։

Այսպիսով, գեղարվեստական երկի մեջ Արփիարյանը տվյալ դեպքում առաջ է քաշում «անխոսուն, գլուխը կախ բանվորների»[2] կյանքն ու աշխատանքը ստեղծագործության թեմա դարձնելու հարցը (նրա պատմվածքն ունի «Վեպ գործավորներու կյանքե» ենթավերնագիրը)։ Ու ինքն էլ գրաշար բանվորի միջոցով «ջրի երես» է հանում ու մերկացնում աշխատավոր մարդու ազնիվ վաստակը կլանող կեղեքիչ պաշտոնյաներին, աստիճանավորներին, թուրք «վելիներին» և հայ «չորպա-

---

1 Ա. Արփիարյան, Ընտիր երկեր, Երևան, 1951, էջ 328—329։

2 Նույն տեղում, էջ 329։

ճի-էֆենտիներին», որոնց մասին Ղուկասն ասում է. «Բերաննիս չոր հացի մը պատառ ալ չեն թողուր, ան ալ խափմիշ կընեն, իրենք կուտեն»[1]: Արփիարյանը ցույց է տալիս, որ Ղուկասի արդարացի բողոքից հետո էլ բանաստեղծ Տեմիրճիպաշյանը (և ուրիշներ) շարունակում է վերացական ոտանավորներ գրել, որոնք չեն օգնում ժողովրդի ցավերի բուժմանը, էմեկտար-աշխատավորների կենսական շահերի պաշտպանությանը: Այդօրինակ անտարբերությունը, ժամանակի հրատապ խնդիրներից հեռու մնալը և այդ ոգով շնչող «եթերային» գրականությունը քննադատում էին բոլոր «ուսուցողականները» թե՛ հրապարակագրության մեջ և թե՛ գեղարվեստական երկերում: Այդպես է վարվել նաև Բաշալյանն իր անդրանիկ նորավեպում, որտեղ, ինչպես տեսանք, հեղինակը քննադատում է հասարակության խոցելի կողմերը և յուրովի գծում իր ստեղծագործական հետագա ուղին:

1 Ա. Արփիարյան, Ընտիր երկեր, էջ 329:

ՎԵՐԻՆ ԽԱՎԵՐԻ ՎԱՐՔ ՈՒ ԲԱՐՔԵՐԻՑ

Երբ լույս տեսավ Լ. Բաշալյանի անդրանիկ նորավեպը «Հմայաթափը» (1888-ի դեկտեմբեր), արդեն սկսվել էր արևմտահայ ռեալիստական գրականության նոր վերելքը։ Հրապարակի վրա էին Ա. Արփիարյանի «Կյանքի պատկերներ» շարքի լավագույն ստեղծագործություններից շատերը, Գ. Զոհրապի «Անհետացած սերունդ մը» և Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպերը և մի քանի նորավեպերն ու պատմվածքները, Հրանդի (Մ. Կյուրճյանի) «Պանդուխտի կյանքեն» քրոնիկների մի զգալի մասը։ Դա ամուր հիմք դարձավ արևմտահայ ռեալիստական արձակի «կարճ ձևերի» և վիպագրության հետագա զարգացման համար։ Այդ հիմքի վրա շատ շուտով Գր. Զոհրապը պետք է մի նոր բարձրության հասցներ հայկական նորավեպը, իր ծանրակշիռ խոսքը պետք է ասեր երգիծանքի անզուգական վարպետ Ե. Օտյանը, իրենց ինքնատիպ տաղանդը պետք է ցուցադրեին Հ. Թլկատինցին, Երուխանը և մյուսները։ Ի դեպ, ամփոփելով հենց այդ նույն տարվա գրականության արդյունքները, Լ. Բաշալյանը «Թուրքիո հայ

6 906

գրականությունը 1888 տարվույն մեջ» հոդվածում գրել է. «Արդի հայ գրականությունը զգալապես կը բարեշրջի, և գրական ճաշակը ևս քան զևս կը դիմե կատարելության։ Հին ճոռոմ ու ճամարտակ գրություններեն հետո, գրական ասպարեզին վրա հետզհետե ծնունդ կ'առնեն երկեր, թեև սակավաթիվ, յորս կյանքը, մեր կյանքը կը թաթառ իր բովանդակ ճշմարտությամբ և զորությամբ»[1]։ Իրական կյանքը բովանդակ ճշմարտությամբ, իսկական արվեստով արտացոլող երկերի ստեղծման ուղղությամբ զարմանալի եռանդով ու արգասավորությամբ աշխատում էին բոլոր «ութսունականները», դրանց թվում նաև՝ Լ. Բաշալյանը։ Իր նորավիպագրական երախայրիքից հետո փաստորեն մի քանի տարում նա իրար ետևից գրում ու հրապարակում է իր ստեղծագործության գլուխգործոցները, որոնք արժանացել են ոչ միայն իր գրչակիցների ու արևմտահայ ընթերցողների ջերմ ընդունելությանն ու բարձր գնահատականին, այլև արևելահայ գրական շրջանների ուշադրությանը։ Նշանակալից է հատկապես այն փաստը, որ հայ խոշորագույն ռեալիստ արձակագիր և դրամատուրգ Ա. Շիրվանզադեն «Արևելք» և «Մասիս» պարբերականների վերաբերյալ այն հոդվածում, որի մասին արդեն խոսել ենք, արևմտահայ գրականության ռեալիստական ուղղության զարգացման և սոցիալական ու հասարակական խնդիրներ շոշափելու կարևորագույն երևույթը նշելիս, ասում է. «Գոնե այդպիսի տպավորություն գործեցին մեզ վրա պ. պ. Արփիար Արփիարյանի և Հրանդի (խոսքը Մ. Կյուրճյանի «Պանդուխտի կյանքեն» քրո-

[1] «Արևելք», 1889, № 1562։

նիկների մասին է—Ս. Մ.) հոդվածները ու պ. Բաշալյանի մի
բավական սրտաշարժ պատկերը պոլսական կյանքից»[1]:

Շիրվանզադեն նկատի ունի Լ. Բաշալյանի երկրորդ նորա-
վեպը՝ «Ղալաթիո «Բեսդ»-ը», որն իսկապես մի սրտաշարժ ու
հուզիչ պատմություն է միսիոներների ու հայ բողոքականների
զոհերից մեկի՝ մի տաղանդավոր երիտասարդի կյանքից: Նո-
րավեպն իր սուր ծայրով ուղղված է դավանափոխության դեմ,
որն էապես դիտվում է իբրև ազգուրացություն: Ասել ենք ար-
դեն, որ սուլթանհամիդյան բռնապետությունը մի որոշ ժա-
մանակ ճգնում էր մահացու հարված հասցնել հայ ժողովրդի
«սրտին ու մտքին» (Զոհրապ), ազգային զգացումներին, հո-
գևոր կյանքին: Դավանափոխության ամեն տեսակ ջատագով-
ները փաստորեն օգնում էին ուժեղացնելու այդ հարվածը, ուս-
տի, ամեն մի կրոնամոլությունից հեռու լինելով հանդերձ,
մյուս «ուխտանականների» նման Լ. Բաշալյանը ևս իր նորա-
վեպում պաշտպանում էր «ազգային կրոնքին դատը այնքան
պերճախոսությամբ»[2], ինչպես նշել է Ա. Արփիարյանը, նկա-
տելով, որ դա «ցեղին հարատևության» դատի պաշտպանու-
թյունն էր գլխավորապես: Նորավեպի նյութը, նույն Արփիար-
յանի վկայությամբ, նորություն չէր, «բայց վիպագրի մը տա-
ղանդը զորավոր կերևի, երբ անիկա կը հաջողի պարզ նյութ մը
պատմելով, ընթերցողին սիրտը գրավել ու մտքին ցնցողական

1 Ա. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 10, Երևան, 1962, էջ 90—91:

2 «Բանբեր գրականության և արվեստի», Բ գիրք, 1904, էջ 175:

զարկ մը տալ»[1], մի բան, որ «Ղալաթիա «Բեսդ»-ում հաջողվել է Բաշալյանին: Իրոք, մի սովորական, պարզ նկարագրությամբ է Բաշալյանն սկսում իր նորավեպը.

«Գացե՞ր էք Ղալաթիո Բեսդը:

Ղալաթիո ամենեն անշան ու միանգամայն ամենեն հետաքրքրաշարժ վայրերեն մեկն է ասիկա: Կաֆե մըն է կերպով մը, ու մյուս կաֆեներուն հետ ունեցած նմանությունը ա՛ն է մինակ, որ հո՛ն ալ անգործ ու պարապ մարդիկ կհաճախեն»[2]: Այդ կաֆեն հաստատել է անգլիացի մի միսիոներուհի՝ «իբր բողոքականության ծավալման միջոց մը». կա սրճարան և ընթերցարան, մուտքը և ընթերցանությունը ձրի են, կարելի է նստել առավոտից մինչև իրիկուն. պատերին գրված են հատվածներ «Սուրբ գրքից»՝ հայերեն, հունարեն, անգլերեն, թուրքերեն լեզուներով. «Ամբողջ մատենադարան մը կա հոն կրոնական հանդեսներու, որոնք առանձին հատորներով կազմված են, և բավականին ստվար կույտ մը կրոնական տետրակներու, որոնք տեղին սպասավորը անուշ ժպիտով մը կնվիրե ձեզի»[3]. այդ ամենն, իհարկե, բողոքական ոգով: Հաճախում են բացառապես հայեր ու հույներ, մեծ մասամբ՝ վարժարանի նորավարտ երիտասարդներ, անգործ դասատուներ, գործ փնտրող գրագիրներ, պաշտոնի հետամուտ քարոզիչներ, բոլորն էլ «կաղապարե թափված մարդիկ», մաքուր հագնված և «աչքե-

---

1 «Բանբեր գրականության և արվեստի», Բ գիրք, 1904, էջ 175:

2 Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 30:

3 Նույն տեղում, էջ 31:

րու մեջ միշտ հույսի ցոլքը»[1], աշխատանք գտնելու ակնկալությունը։ Խաղաղ ու հանգիստ է այդտեղ, մեկ-մեկ միայն տեղի են ունենում կրոնական վիճաբանություններ, բայց վեճերը երբեք կռվի չեն հասնում։ Եվ այդուամենայնիվ՝ «այդ մթնոլորտին մեջ չես գիտեր ինչ կա յուղոտ ու թմրեցուցիչ, որ կազդե ամենեն աշխույժ մարմիններուն ու ամենեն կրակոտ ուղեղներուն վրա»[2]։ Դա կրոնի թույնն է, որի անունն, իհարկե, Բաշալյանը չի տալիս, բայց որը հենց նրա բնորոշմամբ՝ թմրեցնում է միտքը, մթագնում ուղեղը, ընկճում մարմինը, առողջ ու կորովամիտ մարդուն դարձնում հոգևոր հաշմանդամ, ինչպես կտեսնենք նաև «Տերտերին ախտը» նորավեպին անդրադառնալիս։

Բողոքական միսիոներների այդ «որսավայր-որոգայթի» դիպուկ բնութագրումից հետո, Բաշալյանը մի կոնկրետ ու ցնցող օրինակ է մատնանշում, թե ինչպես կրոնամոլությունը պատճառ է դառնում մարդկային կյանքի խեղաթյուրմանը։ Թունդ կրոնամոլներ են Սինանյան եղբայրները, մեկը՝ հայ-լուսավորչական, մյուսը՝ բողոքական, ու այդ հողի վրա էլ դարձել են անհաշտ թշնամիներ։ Մի եղբայրը մահանալիս իր տասներկուամյա միակ տղային՝ Արմենակին կտակում է իր վերջին կամքը՝ ոչ մի գնով չուրանալ հավատը, չընդունել բողոքականություն։ Մորից արդեն վաղուց զրկված որբ երեխային իր խնամքին է վերցնում հորեղբայրը՝ «հայ-բողոքական հասարակության մեծահարուստ ու ազդեցիկ անդամներեն

[1] Նույն տեղում, էջ 30։

[2] Նույն տեղում, էջ 32։

մեկը»՝ Հակոբ Սինանյանը։ Չորս տարի Արմենակը անցկացնում է գիշերօթիկ դպրոցում, սովորում է ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, թուրքերեն, հմտանում մայրենի լեզվի մեջ, ձեռք բերում լուրջ գիտելիքներ, բայց ամեն ամիս հորեղբոր տունը գնալիս ուղղակի սարսուռ է զգում, գիտենալով, որ ի վերջո պահանջելու են բողոքական դառնալ։ Եվ իրոք, տղայի տասնվեց տարին լրանալիս, հորեղբայրն առաջարկում է ընդունել բողոքականությունը։ Շարունակ հոր կտակը մտաբերող Արմենակը մերժում է ենթարկվել, իսկ հորեղբայրը, որը «ցուրտ մարդ մըն էր»[1], ամենայն սառնասրտությամբ փողոց է նետում դեռահաս պատանուն... Ո՛չ հարազատներ ուներ որբը, ո՛չ ապրուստի որևէ միջոց, ո՛չ էլ կյանքի փորձ ու մի հարվածով նետվում է «կյանքի հատակը». խորտակվում է նրա փայլուն ապագան, հազիվ մի կերպ քարշ է տալիս մուրացիկի չափ ողորմելի իր գոյությունը... Հենց այդ վիճակում է նրան տեսնում հեղինակը Ղալաթիայի «Բեսդ»-ում, լսում նրա կյանքի ցավալի պատմությունը և «սարսուռով դուրս ելնում» միսիոներական կաֆեից։ «Դուրս ելած ատենս,— ասում է հեղինակը նորավեպի վերջին տողերում,— աչքիս զարկավ դռան ճակատը դրոշմված արձանագրությունը. «Աստված սեր է» և անոր հանդիպակաց կողմը մյուս վերտառությունը. «Ամեն ինչ որ կընեք՝ տիրոջը փառքին համար է»[2]։

Հեղինակի ընդգծած այս խորհիմաստ վերջույթը գեղարվեստական խոշոր մի ընդհանրացում է, որտեղ խտացված

1 Նույն տեղում, էջ 37։

2 Նույն տեղում, էջ 41։

ձևով ցուցադրված է բուրժուականության կեղծ բարեպաշտությունը, խոսքի ու գործի ահավոր հակասությունը, առհասարակ կրոնի էությունը։ Պարզ տրամաբանությունն իսկ մեզ բերում է այն եզրակացության, որ եթե աստված սեր է, ապա աստվածասեր Հակոբ էֆենդին ինչպե՞ս կարող էր այնքան ուժգնորեն ատել հարազատ եղբորը, նույնպիսի մի աստվածասերի և թշվառության դուռը հասցնել անչափահաս ու անփորձ մի պատանու... Եթե ամեն ինչ արվում է տիրոջ փառքի համար, նշանակում է՝ այդ նույն փառքն է պահանջում, որպեսզի «տիրոջ ծառա» էֆենդին դիմի ամենաանփառունակ, անգութ արարքի՝ կործանման մատնելով կենդանի մարդուն, իր մերձավորին։ Թերևս Հակոբ Սինանյանը մի նոր «Հայր Աբրահա՞մ» է և գործում է «տերը զոհ է պահանջում» սկզբունքո՞վ... Այդ դեպքում, եթե նույնիսկ վերանանք կրոնական զոհաբերության հակագիտական բնույթից ընդհանրապես, ապա Արմենակը ոչ միայն անմեղ ու անտեղի զոհ է, այլև սուր բողոք, ամոթալի նախատինք։ Դիպուկ է նկատել նորավեպիստը, թե իր արտաքին տեսքով, ողորմելի կենսավիճակով ու մաշված հագուստներով «հայհոյանք մըն էր այդ երիտասարդը» մի միջավայրում, որտեղ տիրում էր «բողոքական տաճարի մը պարզությունը և մաքրությունը», իսկ «սրճարանին երկու ծառաները կարծես սրբավայրի մը մեջ կքալեն»[1]։

Աստծո անունով սեր, իրականում մոլեգին ատելություն. տիրոջ համար փառք, «տիրասերի» անփառունակ վարվելակերպ, հայհոյանք և... սրբավայր։

1 Նույն տեղում, էջ 34 և 37 (ընդգծումը մերն է—Ս. Մ.)։

Անհամատեղելի այս հակադրությունների համադրությունն անգամ շատ ավելի խոսուն է ստացվել, քան եթե հեղինակը «իմաստասիրական» երկար ճառ աներ։ Այսպիսի դեպքերի համար է ասված, թե արվեստագետի գրիչը մի դիպուկ զենք է, որ անվրեպ հարվածում է բուն նպատակակետին։ Անվրեպ է գործում Բաշալյանի գրիչը նաև Հակոբ էֆենդու և Արմենակի կերպարները գծելիս և նրանց նկատմամբ որոշակի վերաբերմունք դրսևորելիս։ Գիտենք արդեն, որ ժամանակի խստագույն գրաքննադատությունը արգելում էր նույնիսկ ակնարկել ազգասիրության կամ ազգուրացության մասին։ Բաշալյանը գտել է այդ արգելքը հմտորեն շրջանցելու հնարը՝ ատելություն սերմանելով ազգային ղավանանքը և մարդկային հոգին ուրացող էֆենդիների նկատմամբ, միաժամանակ սահղծելով հայերի հավատը, այսինքն՝ տվյալ դեպքում ազգն ու հայրենիքը ոչ մի գնով չուրացող Արմենակի խորապես դրական ու համակրելի կերպարը։ Ընթերցողի մեջ նման որոշակի վերաբերմունք մշակելու հետ միասին, հեղինակը կողմնորոշում էր նրան, օգնում տեսնելու իր չարն ու բարին։ Որ կրոնափոխությունը չէ գլխավոր չարիքը, որի վրա ուշադրություն է հրավիրում Բաշալյանը, այլ ընդհանրապես սուլթանհամիդյան հայակուլ քաղաքականությունը և նրա ջրաղացին ջուր լցնող հայազգի հետադիմականները, պարզ երևում է նաև այն փաստից, որ հեղինակը ոչ պակաս ուշադրություն է նվիրում առհասարակ հոգևորականների, այդ թվում հայլուսավորչական կրոնի սպասավորների մի շարք բացասական կողմերը, մանավանդ՝ ժողովրդի ազատագրական պայքարի

կամքը ջլատող թմրեցուցիչ, ապանիչ բարոյական նորմաները: Այս իմաստով, բազմաթիվ հոդվածներից ու քրոնիկներից զատ, աչքի է ընկնում «Արմաշի ուխտագնացությունը» ակնարկաշարը: Ամենաբնորոշը «Գեղին տարփանքները» գլուխն է, որտեղ կոնկրետ օրինակներով ցույց է տրվում, թե ինչպես կրոնն իր «մի կալ հակառակ չարին» և նման այլ դոգմաներով մարդկանց դաստիարակում է վնասակար հեզություն, կործանարար հնազանդություն, ծուլություն, զրկում արժանապատվությունը և իրավունքները արժանավայել ձևով պաշտպանելու կամքից: Արմաշի վանքին մոտիկ գյուղերում նա տեսնում է այնպիսի մեղկություն ու հնազանդություն, այնպիսի ենթարկվածություն կրոնա-բարոյական դարավոր դոգմաներին, որ նույնիսկ երիտասարդ սիրահարները չեն համարձակվում իրենց կամքը կատարել և բողոքի փոխարեն գերադասում են մեռնել. մինչդեռ վանքից հեռու գտնվող վայրերում ջահելները չեն վարանում սիրած աղջկան փախցնել անգամ, եթե սիրո ճանապարհին որևէ արգելք է ծառանում:

Հիշատակելով փաստեր թե՛ մեկի, թե՛ մյուսի վերաբերյալ, մեջ բերելով երկու տարբեր գյուղերի բնակիչների պատմությունները, Լ. Բաշալյանը գրում է.

«Այս երկու գյուղացիներուն պատմության մեջ՝ իրենց գյուղերուն ամբողջ նկարագիրը խտացած է: Մեկ կողմեն արի, խիզախ, տիրական, մյուս կողմե թույլ, նկուն, վատորեն համակերպող:

Ամեն տեղ, վանքի մոտ ապրող գյուղացիները այսպես հարափոխված են, թե՛ մեր մեջ և թե՛ Եվրոպա: Մինչդեռ մյուս

գյուղացիները բնության հետ ամենօրյա ոգորման մեջ կփընտրեին իրենց հացը, անոր հաղթահարելով կվաստկին իրենց ապրուստը,— այդ ոգորման և հաղթանակի մեջ իրենց ֆիզիկական ու բարոյական ուժը զորանալով,— անդին վանքի գյուղացիները՝ ամեն բան վանքեն և ուխտավորներեն սպասելով, բնութենեն ձեռք քաշած, մեղկացած ու այլասերված մարդիկ են։

Ժողովրդական հայ խոսք մը կա, որ կըսե. «Հինգ բան կա, որ աստծո անեծքը կկրեն. Երուսաղեմի թերջիման, էջմիածնի ղռնապան, վանքի գեղական, էշերու բերան, կիներու դիվան»[1]։

Այս նշանակում է, թե որքան ուժեղ է կրոնի ազդեցությունը, այնքան վատորեն համակերպվող ու թուլակամ են մարդիկ, որոնք առհասարակ արժանի են լոկ արհամարհանքի, իսկ արհավիրքի դեպքում՝ անզոր են պաշտպանելու նույնիսկ իրենց անձնական կյանքը։ Ինչպես տեսնում ենք, Բաշալյանը, արդարև, չի խնայում ո՛չ ոքի, երբ խոսքը խիզախ, արի ու մաքառող սերնդի սխալ դաստիարակությանն է վերաբերվում։ Եվ ընդհանրապես նա մերկացնում է ոչ միայն ագետ ու շահասեր հոգևորականներին, այլև կրոնական սնահավատությունը, մի շարք արատավոր արարողությունները։ Ինչո՞ւ են, օրինակ, մարդիկ ուխտ գնում։ Ըստ ականատես հեղինակի՝ բավարարելու համար և՛ հոգեկան, և՛ մարմնական որոշակի պահանջմունքներ, խնդրելու տիրոջից՝ «իրենց ցավերու մեղմացումն և իրենց փափագներու իրագործումը»[2]։ Ուխտ են գնում ամոլ

[1] Նույն տեղում, էջ 189—190։

[2] Նույն տեղում, էջ 170։

կանայք, որ զավակ են ուզում, մայրերը, որ հասած աղջիկների համար փեսացու են խնդրում, հողագործներ, որ լավ հունձ են ըղձում, զանազան ցավագարներ, խուլեր, կույրեր, որ խելք, լսողություն, աչքի լույս են հայցում։ «Արմաշի ուխտագնացությունը երկու որոշ մասի կբաժնվի։ Եկեղեցին և բանայիրը (տոնավաճառ—Ս. Մ.)։ Մեկ կողմե հոգվույն ամենեն գերագույն ու սրբազան թռիչքները, ու մյուս կողմեն մարմնին ամենեն անասնական ու բիրտ բնազդներուն այլեբասան ստորնաքարշումը»[1]։ Վերջինս պարզ է ինքնին, իսկ հոգու թռիչքները ի՞նչպես են կատարվում։ Ահա այս հարցի պատասխանից նույնպես երևում է Բաշալյանի վերաբերմունքը վանքի ու վանականության նկատմամբ։ Նախ նրանով, որ ուխտավորները դրամական ու իրեղեն նվերներ են մատուցում, մատաղ են կտրում, մոմ վառում ու ջերմեռանդ աղոթում «Հրաշագործ աստվածածնի» պատկերի առաջ, որը «Մեծադիր պատկեր մըն է, արևելյան հին նկարչության հաստ ու անճարտար գծերով ու սաստիկ, ուժգին, պոռոտ գույներով։ Աստվածածինը, գլուխը թագով մը, գիրկն առած է մանուկ Հիսուսը, նմանապես բոլորովին զուրկ մանկական շնորհե է։ Այդ արտահայտութենե զուրկ պատկերին մեջ տիրամոր խոշոր աչքն է, որ տարօրինակ կենդանություն մը ունի, աչք մը՝ կարծես անդունդի մը վրա բացած, պակուցյալ, իր նայվածքին չեշտակի անշարժությամբ ու ցրտությամբ հալածելով զքեզ»[2]։

---

1 Նույն տեղում, էջ 169։

2 Նույն տեղում, էջ 175—176։

Կարծում ենք հենց այս նկարագրությունն անգամ շատ բան է ասում Լ. Բաշալյանի կրոնական (ավելի ճիշտ կլիներ ասել՝ հակակրոնական) զգացմունքների մասին։ Կծու հեգնանքով է նա պատմում նաև, թե ցրտություն ազդող այդ պատկերից են մարդիկ «հրաշք» սպասում, նրա առաջ ստեղծելով «հրմշտուք և իրարանցում», հառաչանքների ու «հեծության համանվագ»[1]... Իսկ բարեպաշտ ուխտավորների նվիրաբերած դրամների ու իրեղենների հաշվառումից հետո վանականների անսքող հրճվանքը և ուրախության աղաղակները դիտելով, Լ. Բաշալյանը բացահայտ ցավ է զգում, քանզի աղոթքները, պաղատանքները, հավատքը մի տեսակ ամփոփվում են փողի քսակի մեջ... Հեռանալուց առաջ այցելելով վանահորը, հեղինակը նրա սենյակում թափված է տեսնում մի ամբողջ հարստություն, որ եռանդուն կերպով հաշվառում ու գրանցում են վանականները. «Դրամատան մը ամբողջ գործունեությունը կա հիմա այդ սենեկին մեջ։ Ոսկիներուն և մեճիտիեներուն հնչյունը, կանոնավոր և համաչափ անկումներով՝ շըը՛խ, շըը՛խ, շըը՛խ, բանքայի մը ստորնահարկին գաղափարը կուտան քեզ։

...Հանկարծ ուրախության ձայն մը կբարձրանա. վեց հարյուր ոսկի՜։ Այս տարվան ամբողջ հասույթը վեց հարյուր ոսկի՜ եղած է։ Փա՜ռք տյառն։ Ամենուն դեմքը կփայլի, կվառի։ «Աղեկ տարիներեն» է այս տարին ալ։

---

1 Նույն տեղում, էջ 176։

Ու չեմ գիտեր ինչո՛ւ, դուրս ելած տանես, սիրտս սեղմված է...»[1]:

Սիրտը սեղմվում է, որովհետև հավատացյալների հոգևոր հափշտակվածությունից, արցունքներից, հառաչանքներից գոյացած եկամուտով հրճվում են վանականները: Իսկ իրենք՝ ուխտավորները, դեռ սրբավայրից չհեռացած հանձնվում են աշխարհիկ այն զգացումներին, որոնք «անիծյալ աշխարհի» ծնունդ են և հեռու որևէ սրբությունից. «Դեռ սայլերն վար չիջած, կեղծիքն ու չարությունը, երկու ամենեն զզվելի մոլորությունները, պիտի գան իրենց առջի տեղը բռնել այդ մարդերուն սրտին մեջ»[2]: Հեղինակն այն կարծիքին է, որ մարդկային հոգու կեղտերը, մոլորությունները թերևս մի կարճ ժամանակով, «քիչ մը ատենվան համար գոնե, գուցե մեկ քանի ժամվա համար միայն» չքվում, մաքրվում են ջերմեռանդ աղոթելիս, և դա լավ է այն իմաստով, որ մարդ կանգ է առնում մի պահ. «մտիկ ընելու ձայնին, որ ներսիդին կուգա», սակայն ոչ մի աղոթք, ուխտագնացություն փրկություն չէ աշխարհի ապականված բարքերից:

«Արմաշի ուխտագնացությունը» ականատեսի գրչի արդյունք է, գեղարվեստական հնչեղություն ունեցող ակնարկների մի շարք, ուր հանդիպում են նաև իրական, կենդանի մարդիկ, ինչպես, օրինակ, վարդապետ Եղիշե Դուրյանը (մեծ բանաստեղծի եղբայրը): Ի դեպ՝ հենց նրան էլ Բաշալյանը համարում է լուսավոր կետ վանքում, մի վանական, որի խուցը նրանցից

---

1 Նույն տեղում, էջ 190—191:

2 Նույն տեղում, էջ 194:

չէ՝ «ուր անձնդյուր ծուլությունը և սրավայնապարար հանդըստությունը կտիրեն, այլ ուսումնասիրության, անխոնջ աշխատության, ճարտաև զարգացման վայր մը, ուր պատկառանքով կմտնես և երկյուղածությամբ դուրս կելլես»[1]։ Եղիշե Դուրյանը սիրված անձնավորություն էր, հոգևորական, նաև գրականհասարակական գործիչ, հաճախ էր հանդես գալիս մամուլում, ու Բաշալյանը նրան գնահատում է ուսման, զարգացման նկատմամբ ունեցած սիրո, աշխատասիրության և ուսումնականության համար։ Նա ուղղակի գրում է, թե Արմաշի դպրեվանքին հրաժեշտ տալիս ափսոսանքներ է ունեցել, և դրա պատճառը էապես Դուրյանն է եղել, «որ իր քրիստոնեական մեծությամբ կլեցներ այդ վանքը»[2]։ Իսկ ընդհանրապես վանքից ստացած տպավորությունը այն է, որի մասին խոսեցինք արդեն և որը նուրբ արվեստով է արտահայտված ամբողջ ակնարկաշարում։

Իսկական ակնարկագրի սուր դիտողականություն, էականը որսալու հմտություն է դրսևորել Լ. Բաշալյանը՝ նրբանկատ ձևով, առանց ավելորդ աղմուկի՝ բացահայտելով և մերկացնելով ժամանակի կրոնական ու աշխարհիկ կյանքի խոցելի կողմերը։ Ճիշտ այդպես է վարվել նա նաև «Միջերկրականի հիշատակներ» ուղեգրական նոթերում, ուր ամեն գլուխ մի-մի առանձին ամբողջական նորավեպ է, իսկ «Մաթաքանի ճգնավորը» բաժինը լիովին ուղղված է կեղծիքի ու խաբեբայության դեմ։

---

[1] Նույն տեղում, էջ 132։

[2] Նույն տեղում, էջ 191։

Հունաստանի հարավային ծովերին գտնվող Մաթափանի համայի հրվանդանի մոտով հեղինակը բախտ է ունենում անցնելու երկու անգամ: Առաջին անգամ նա միայն հիացմունքի խոսքեր է լսում հրվանդանի վրա սպիտակ մի եկեղեցի կառուցած և միայնակ բնակություն հաստատած անանուն ճգնավորի մասին, որին համարում են «դիցաբանական էակի պես բան մը», մի կենդանի սուրբ. «Տասնևհինգ տարիե ի վեր, Միջերկրականի այս ճամփուն վրայեն անցնող ամեն նավերը, ո՛ր դրոշակի ալ պատկանին, պարտք կհամարին Մաթափանի առջևեն անցած ժամանակ հնչեցնել իրենց շչակը. ծովուն ողջույն մը՝ այդ ցամաքի միավորիկ մարդուն, հարգանքի պես բան մը... Բարեպաշտ նավապետները պարտք կհամարին հաճախ կեցնել անդ իրենց նավը և ուտելիք ղրկել ճգնավորին, անոր օրհնությամբը զորացած իրենց ճամփան շարունակելու համար անվտանգ»[1]: Երկրորդ անգամ անցնելով նույն ճանապարհը, հեղինակը ոչ միայն չի լսում նավի շչակի ձայնը, այլև տեսնում է կատարյալ արհամարհանք դեպի այդ նույն «սուրբը», նրա «օրհնությունը». նավապետները նայել անգամ չեն ուզում սպիտակ եկեղեցու կողմը. «Ու ցուրտ սկեպտությամբ մը նավաստիները կխնդան մենակյացին վրա, տարակույսներ հայտնելով անոր բարքին վրա, ծաղրելով անոր հավատքը»[2]: Ճգնավորը «գործող անձ» չէ, հանդես չի գալիս բուն գործողությունների մեջ, սակայն Բաշալյանը մեկ հիացմունքի, մեկ

---

1 Նույն տեղում, էջ 133:

2 Նույն տեղում, էջ 135:

հիասթափության սեղմ արտահայտության միջոցով քանդակում է մի կենդանի կերպար, որը կեղծ դիմակով սքողում է «անծանոթ ու աներևույթ էակի բոլոր հրապույրը»[1], բայց դիմակը պատռվում է և հրապույրը հօդս ցնդում անմիջապես։ Թե ինչպես է ճգնավորը «սրբի» համբավ ստեղծում իր համար և ինչու է խորտակվում «բարեպաշտների» հավատը, հեղինակին չի հետաքրքրում։ Բայց նա այն միտքն է զարգացնում, որ մարդը կոչված է բանաստեղծական շունչ տալու ամայի ժայռին, և միաժամանակ ընդունակ է պրոզայիկ դարձնելու ամենաշքեղ բանաստեղծությունը։ Ճիշտ այդպես է պատահում Մաթաբանի ճգնավորի հետ։ Մարդիկ իրենք են «աստվածություն» ստեղծում ու իրենք էլ այն տապալում են։ Ու որքան հաճելի, հիացմունքի ու հարգանքի արժանի է համարում Բաշալյանը ամայի կղզուն կանաչություն, կյանք տալը, այսինքն՝ լավի, բարու համար գործադրված մարդկային ուժը, այնքան էլ նողկալի՝ կեղծիքն ու խաբեբայությունը։ Այսպիսով, հուշագրական-ուղեգրական նոթերի մեջ Լ. Բաշալյանը գեղարվեստական ընդհանրացումներ է կատարում, երևույթները բնութագրում է որպես արվեստագետ։ Այդպես է ստեղծված նաև «Քարիսթայի ծոցին մեջ» գլուխը։ Այն սկսվում է կատաղի փոթորկից մոլեգնած ծովի և լեռնացած ալիքների վրա երերացող նավի ուղևորների հոգեվիճակի փայլուն պատկերմամբ, սակայն հեղինակի ուշադրության առանցքը մեկ այլ երևույթ է։ Իրենց շոգենավը, չորսօրյա համառ պայքարից հետո, ապաստան է գտնում

1 Նույն տեղում։

խաղաղ ծովախորշում, մինչդեռ ահեղ տարերքի՝ մռնչացող բաց ծովի մեջ մնում է թպրտացող մի փոքրիկ առագաստանավ։ Հեղինակի խնդրանքով նավապետը բացատրում է առագաստանավի անզորության պատճառները. «Միտքս ուրիշ տեղ է սակայն,— հուզված գրում է Բաշալյանը,— խեղճ առագաստանավին վրա։ Քանիչորս ժամե ի վե՞ր. ի՞նչ տանջանք, անձրևին տակ, հովին դիմաց, չվաններուն պլլված, գերմարդկային ճիգերով աշխատիլ, այնչափ մոտ ըլլալ փրկության նավահանգստին ու չի կարենալ հոն հասնիլ, ու վտանգն իր դեմ ունենալ, վերահաս, անխուսափելի։ Ու, անխորհրդաբար, կհարցնեմ նավապետին.

— Կարելի չէ՞ օգնության հասնիլ իրեն, եթե վտանգի մեջ ըլլա...

— Օ՜հ, ասանկ ատեն ամեն մարդ իր գլխուն ճարը կնայի»[1]։

Բաշալյանն իր հարցը համարում է անխորհուրդ, անտեղի, որովհետև առագաստանավն արդեն վտանգի մեջ էր, իսկ ինքը բաց գիտեր սեփականատիրական աշխարհի օրենքը, որի մասին հիշեցնում է նավապետը։ Ու նա ցավով է շարունակում, թե նավապետը ուրախ սրտով է նայում ուղևորների հետ, խաղաղ նավահանգիստ են մտնում նորանոր նավեր, և «հեգ առագաստանավը միայն հորիզոնին վրա միշտ միևնույն տեղն է, մահվան ու կյանքին մեջ տարուբեր»[2]։ Ո՞ւմ հոգն է, թե մարդիկ, թերևս ընտանիքի պատառ հացի համար տարերքի դեմ

[1] Նույն տեղում, էջ 145։

[2] Նույն տեղում, էջ 146։

մաքառող ձկնորսներ, անզոր են «փրկության նավահանգիստ» հասնել և պետք է կործանվեն։ Զորեղները փրկում են իրենց և դրանով բավարարվում, իսկ ուրիշներին օգնելու մասին մտածողները, ինչպիսին հեղինակն է, իրենք էլ այնքան ուժ չունեն, որ փրկեն առագաստանավը։ Կեղծիքը, նախանձու-թյունը, բարոյական ազնիվ նորմաների անկումը և առհասա-րակ մարդկային արատներն են թագավորում «Արդի ժամա-նակին մեջ,— ասել է մի առիթով Լ. Բաշալյանը,— ուր երա-զեն ավելի գործը, անդորրավետ խաղաղութենեն ավելի մարմ-նատանջիկ կրքերն ու խանդումները, վայելքեն ավելի հեշտա-խտությունը, սերեն ավելի միսը կոհրապետեն հաղթա-պանծ»[1]։

Այս իրողության ամենացայտուն գեղարվեստական ար-տացոլումը Լ. Բաշալյանի ստեղծագործության մեջ «Ա՛յս է եղեր» պատմվածքն է, հեղինակի ամենաընդարձակ գործը, եթե չհաշվենք «Թուրքահպատակի մը արկածները մեծ պատե-րազմին ատեն» ճանապարհորդական նոթերը, ինչպես նաև «Արմաշի ուխտագնացությունը» և «Միջերկրականի հիշա-տակներ» ակնարկ-ուղեգրությունները, որոնք կազմված են մի քանի ինքնուրույն, լիավարտ նորավեպերից ու պատմվածք-ներից։ Եվ այդ ամենաընդարձակը՝ ընդամենը ինը փոքրագիր էջ է... Դա մեկն է այն գեղարվեստական ստեղծագործու-թյուններից, որոնց մասին Ալեքսանդր Շիրվանզադեն ասել է, թե նրանց արժանիքները թերթերի քանակից չեն կախված։

[1] Նույն տեղում, էջ 32։

Նրանում տիպական հանգամանքների և ռեալ կերպարների կոնկրետ գործողությունների մեջ ցուցադրված է բուրժուական աշխարհի մի բնորոշ կողմը: Այն, որ վերնախավերի այլասերված միջավայրում, հիրավի, սերը մարմնին տիրանալու անհագուրդ կիրք է, հեշտասիրություն, որի համար ևս տեղի է ունենում յուրօրինակ մրցում: Այս են հաստատում Մառի Սիմյանի և Միքե Թումանյանի փոխհարաբերությունները, որոնց շուրջը հյուսված է պատմվածքի սյուժեն:

Առաջին իսկ տողերից հեղինակը հմտորեն ստեղծում է կրքոտ սիրահետումների մի բնորոշ համապատկեր. «Օգոստոսի տաք ու հեղձուցիչ իրիկուն մըն էր, կիրակի իրիկուն մը: Մթնոլորտը, էլեկտրականությամբ առլցյալ, միահեծան ճնշում մըն էր, անողոք, անդիմադրելի, զոր մարդ իզուր պիտի փորձեր ի բաց թոթափել... Հոգնություն մը կար ամեն դեմքերու վրա— մեղկություն այդ տաք մթնոլորտին...»[1]: Ահա այդ մթնոլորտում էլ հեղինակը ծանոթացնում է իր հերոսներին, որոնք շոգենավով Կղզիներից Պոլիս են վերադառնում: «Հայելիին ճիշտ քովը, անկյան մեջ, կիսովի ընկողմանած էր մանկամարդ կին մը, որու վրա կդառնային հաճախ ուղևորաց նայվածքները... Աչվըները, սևաթույր լայն թարթիչներու տակ, նվազկոտ ցոլք մը ունեին... այդ աչքը, մրագույն ծիրով շրջանակյալ, ամբողջ ապականություն մըն էր, չես գիտեր ինչ հրավեր մը՝ հրամայական և խուսափուկ միանգամայն... իր ճապուկ և առուգաբարձ լանջքին բովանդակ գեղովը հոն կմնար

1 Նույն տեղում, էջ 56:

ըղձալի և գրգռիչ, արանց աչքերուն մեջ կարդալով իր հառաջ բերած հույզերուն շողը, իր հաղթանակին կատարյալ գիտակցությամբը»[1]: Դա տիկին Սիմյանն է, իսկ նրա ճիշտ դիմացը նստած է «վայելուչ արդուզարդով» աչքի ընկնող, «գեղեցիկ ու վայելչակազմ երիտասարդ» Միքե Թումանյանը: Ու նրանց միջև սկսվում է «նայվածքներու մենամարտը», երկու կողմից էլ լեցուն անսքող ցանկասիրությամբ: Կրքերին գերի այդ զույգի առաջին ծանոթությունը տեղի է ունենում բալկոնին արագ: Շոգենավից իջնելիս, տիկինը «մոռանում է» վերցնել իր թաշկինակը... Երիտասարդը «նկատում» է այն և հանձնում տիրոջը, որը «շարամիտ խնդությամբ լեցուն ակնարկ մը» նետելով նրան, շարունակում է ճանապարհը: «Թաշկինակի խաղը» տիկինը սարքում է թակարդ դնող հմուտ որսորդի նման, այնպես որ որևէ կասկած չառաջանա իր հետ գտնվող ամուսնու մեջ, իսկ անծանոթ երիտասարդը չմտածի, թե գործ ունի «հասարակ» կնոջ հետ: Բայց մինչև տիկնոջ հեռանալն արդեն Միքեի մի ծանոթը հայտնում է, որ այդ «հրապուրիչ կնիկի» ամուսինը «ապուշի մեկն է», իսկ տիկինը... «Եվ Միքեի ականջին ի վար ծռելով քանի մը խոսք ըսավ մեղմաձայն, մինչ երիտասարդին աչվըները կվառեին հուսալից»[2]:

Տարբեր միջավայրի ու բնավորության մարդիկ են Մառին ու Միքեն, տարբեր կերպ են նայում նաև սիրո զգացման վրա: Մառիի ամուսինը «բարձր դիրք» է գրավում հանրության մեջ,

---

1 Նույն տեղում, էջ 57:

2 Նույն տեղում, էջ 60:

ինքը սերում է մի ընտանիքից, որը թեև «նախկին հարստու-
թյան բեկորներով», բայց «կպահեր դեռ իր փայլն ու շուքը ընկերության մեջ»։ Նա սկզբից ևեթ «շատ «խոսված» աղջիկ մըն էր եղած և ամուսնությենեն երկու տարի վերջը դարձյալ «կխոսվեր», ծերերը և կիները կդատապարտեին զինքը, իսկ ամուսինը «ինքը բան մը չէր գրուցեր»[1]։ Տիկին Սիմյանը «շքեղ սրահների» մշտական հյուրն է, թաշկինակի նման փոխում է հոմանիներին, հնարներ է գտնում, չվնասելով իր դիրքը, հագուրդ տալ կրքերին։ Բուրժուական ապականված բարքերի հարազատ ծնունդն է նա, ինքն էլ «մինչև ոսկորներուն ծուծը ապականյալ»[2]։ Սիրելը նրա համար այլ բան չէ, քան անձնատուր լինել և ... վարձատրվել, իհարկե, իր հասարակության մեջ «ընդունված» կանոններով...

Այս տեսակետից բնորոշ է նրա վերաբերմունքը Միքեի նկատմամբ։ «Դիրք պահելով», նա Միքեին աստիճանաբար ձգում է դեպի իրեն. երկար ժամանակ նրան հրապուրում է միայն խրախուսիչ հայացքներ նետելով վրան, անձնատուր լինելով լոկ նայվածքով։ «Անառիկ բերդ մը չէր ապաքեն, այլ պաշարյալը շատ պաշտպանողներ ուներ»[3]։ Ահա այդ «բերդը» գրավելու միջոցը, ինչպես համոզվում է Միքեն, փողն էր։ հարստությունը։ Տիկինը հաճույքով նրա հետ թուղթ է խաղում և... անընդհատ տանում. Հիպնոսացած երիտասարդը, օձի

---

1 Նույն տեղում, էջ 61։

2 Նույն տեղում, էջ 71։

3 Նույն տեղում, էջ 66։

աչքին նայող թռչունի նման, մոռանում է ամեն ինչ, կորցնում մեծ գումարներ, սիրահոժար տալիս «մինչև իր վերջին լուման»[1]: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ ակնկալվող հաճույքի համար անուղղակի վարձատրություն: Այսպիսով, միայն կիրքն ու դրամն է, որ Մառի Սիմյանին կապում է Միքեի հետ, ինչպես նրանից առաջ ու նրանից հետո՝ ուրիշների հետ:

Միքե Թումանյանը չի պատկանում բուրժուական «ոսկյա երիտասարդությանը»: Նա որբ է մեծացել, ապրում է քրոջ ընտանիքում. ճիշտ է, քեռայրը բավական ունևոր խանութպան է, կան նաև ուրիշ «հարուստ ու բարձր» դիրք ունեցող հեռավոր ազգականներ, բայց Միքեն սեփական աշխատանքով է հոգում իր կարիքները: Նա գանձապահ (արկղակալ) և գրագիր է մի վաճառատան մեջ, վաստակում է այնքան, որ անկախ դիրք է գրավում, քանի որ ամուրի է, «ընտանեկան բեռ» չկա վրան: Ազատ, ինքն իր կամքին թողնված երիտասարդը վարժվում է առանց դժվարությունների գոհացում տալ իր բաղձանքներին, սիրում է զվարճություն. «Մարմնույն հափրացումը, սակայն, չէր խեղդած բնավ սիրտը, և վարձկան վայելքներն ու դյուրին տարփանքները երբեք չէին հագեցուցած իր կրքոտ և անձնազոհության պատրաստ բնությունը: Տարբեր միջավայրի մը մեջ ու տարբեր պայմաններուն տակ, երազուն, խանդավառ, մելամաղձիկ մեկը պիտի ըլլար այս երիտասարդը, որ հիմակ կնոջ մը տեֆոլթեին կնայեր ամենեն առաջ ու կինդար սիրո վրա»[2]: Հանդիպումը Մառի Սիմյանի

---

1 Նույն տեղում, էջ 65:

2 Նույն տեղում, էջ 60:

հետ նրա հոգում ծնում է «անօրինակ բան մը». տիկնոջ «սիրուն գլուխը», սևաթույր աչքերը չեն հեռանում մտքից, մագնիսական ուժով ձգում, հրավիրում են վայելելու «ամենեն սաստիկ» հույզերը... Հենց այդպիսի կնոջն է Միքեն երազել շարունակ, փայփայել իր պատրանքներում և, ահա, իմանալով, որ նա «անմատչելի կուռք մըն չէր», համառորեն սկսում է հետապնդել նրան։ Տիկնոջ և՛ անմատչելի, և՛ չափազանց հրավիրող տոնը ուղղակի բորբոքում է կրքոտ երիտասարդի արյունը։ Միքեին թվում է, թե իր հափշտակվածությունը սովորական քմահաճույք չէ, ոչ էլ վաղանցուկ զգացում, այլ անդիմադրելի մի բաղձանք, «որ կամաց-կամաց կտիրապետեր իր բոլոր մտածմանց»[1]։ Այնուհետև մոտիկից ծանոթանալով Մաուի հետ, Միքեն ստվերի նման ամենուր հետևում է նրան՝ թատրոնում, երեկույթներում, հանդեսներում. «Այդ օրվընե սկսյալ,— պատկերավոր ձևով ասում է Բաշալյանը,— այդ խորհրդավոր մոլորակին արբանյակն եղավ, իր կամքին գերագույն զորությամբ մը ընդքարշ տարվելով անոր գծած լուսահետ պարույրին մեջ»[2]։ Բայց միևնույն «պարույրի» մեջ երկար մնալ չէր կարող միայն իր աշխատավարձով ապրող գրագիրը... Ու նա, կրքից կուրացած, օգտվում է իր պահպանության հանձնված գանձարկղից, վերադարձնելու մտադրությամբ անընդհատ վերցնում ոսկիներ, միջոցներ չունենալով, սակայն, ժամանակին փակելու պարտքերը։ Պակասորդը շուտով հայտնաբերվում է և Միքեին, բնականորեն, հեռացնում

---

1 Նույն տեղում, էջ 62։

2 Նույն տեղում, էջ 65։

են աշխատանքից։ Չորս ամսվա հետապնդումներից, կրքոտ նայվածքների մենամարտից ու բավականին շռայլ ծախսերից հետո, Միքեն հանկարծ սթափվում է, հասկանում, որ կարծես անդունդ է գլորվում, խրվել է ճահճի մեջ, որից պետք է դուրս գալ. «Միքենային ատամներուն տակ դրած էր արդեն իր մեկ թեն, և գուցե թե քիչ-քիչ, իր բոլոր մարմինը պիտի թավալեր այդ ատամներուն տակ և ջախջախվեր»[1]։ Բայց անկման մեջ անգամ, կարծես փոսի խորքից «հեռավոր աստղի մը պես» տեսնում է տիկնոջ «պաշտելի դեմքը»... Ու նա որոշում է միառժամանակ հեռանալ Պոլսից, որը կլանող ճահճից դուրս գալու միակ խելացի ելքն էր։ Երկու տարի նա աշխատում է գավառական մի քաղաքում, միշտ աչքի առաջ ունենալով «հավետ ըղձալի կնոջ» պատկերը, ձգտելով դրամ շահել ու նորից վերադառնալ Պոլիս. «Վստահ էր, իրը պիտի ըլլար այդ կինը»[2], ըստ որում երազելով, թե «նոր կյանք մը պիտի սկսեր իրեն համար, համակ խինդ և երջանկություն»[3]։ Ահագին փող վաստակելով, Միքեն վերադառնում է և վերսկսում հանդիպումները, ի վերջո գիրկն առնելով ըղձալի տիկնոջը։ Եվ ահա, երջանկության փոխարեն նա զգում է խոր հիասթափություն, ցնցվում է ողջ էությամբ, կարծես արթնանում երկարամյա քնից։ Ուժեղ, հրավառ, լափող նրա սերը, որ պարզ հափշտակություն էր, բորբոքուն կիրք միայն, միանգամից մարում է, սրտում թողնելով անհուն դատարկություն, ուղեղում՝ նող-

1 Նույն տեղում, էջ 67։

2 Նույն տեղում, էջ 68։

3 Նույն տեղում, էջ 69։

կանք իր անցկացրած կենցաղի ու վարքի նկատմամբ, «պժգանք իր իսկ անձին»։ Հետադարձ հայացք նետելով 27-ամյա կյանքի վրա, Միքեն զղջման սուր ծակոց է զգում սըրտում. «Այն հաճույքը, որուն համար իր երիտասարդությունը քայքայած էր, իրեններեն բաժնված, պատիվը կորուսած, առողջությունը խանգարած, հիմակ նողկանք կազդեր իրեն»[1]։ Տիկին Մառիի գրկից պոկվելով, նա շարունակ հարցնում է ինքն իրեն «Ա՞յս է եղեր։ Ասո՞ր համար ուրեմն իր կյանքը փճացուցեր էր»[2]։

Միքեի այս հոգեվիճակը, նրա զղջումը, անշուշտ, հեղինակի կամայականության արդյունքը չէ։ Պետք է նկատի ունենալ, որ Միքեի անբարոյականության կամ այլ ստոր գծերի մասին խոսք չկա պատմվածքում, թեև ընդգծվում է նրա կըրքոտ, հեշտասեր բնավորությունը։ Այնուհետև՝ տիկին Մառի Սիմյանի նման բարձր դասի գեղանի կնոջը նա տիրանում է չափից ավելի երկար տառապանքներից, փոթորկալի ապրումներից, ջղերի անսահման լարումներից հետո, մինչդեռ այդ կինը ոչ միայն «սովորական մահկանացու» էր, այլև բարոյապես ընկած, անձնատվության պատրաստ, թեև իրեն պահում է անմատչելի՝ թակարդ լարելով «պատվավոր» վարձատրություն ստանալու համար։ Միքեն տեսնում է, թե ինչպես Մառին կապվում է բարձրաստիճան և ունևոր մարդկանց հետ, իրեն ընդունում է՝ երբ գրպանը լիքն է, տրվում է հատկապես այն ժամանակ, երբ երիտասարդը գավառից վերադառնում է մեծ գու-

1 Նույն տեղում, էջ 71։
2 Նույն տեղում, էջ 72։

մար վաստակած։ Հաճույք ու զվարճություն սիրելով հանդերձ, Միքեն «իր բարոյական ուժին վրա վստահություն ուներ, կորովի բնավորություն ունեցած էր միշտ, իր անկումն իսկ ապացույց էր ատոր»[1]։ Կորովի բնավորության ամբողջ թափով ձգտել ու երեք տարվա տանջալից փորձերից հետո միայն հասնել մի նպատակի, որ հեռու էր որևէ վեհությունից, տևական ու բաղձալի երջանկություն բերելուց, մի՞թե կարող էր խանդավառել և ոչ թե հիասթափեցնել ու զղջման մղեր կիրթ ու ընդունակ երիտասարդին։ Նա պարզ տեսնում է, որ եթե շարունակի կապերը այդ կնոջ հետ՝ նորից կընկնի անդունդը. անդունդից նա չի վախենում, բայց վրեժով է լցվում հոգին, որոշում է «վայրագությամբ մը» պատասխան պահանջել նրանից և առհասարակ ապականված հասարակությունից՝ «իր խորտակված կյանքին համար»[2]։

Բաշալյանի պատկերած բուրժուական բարքերը կյանք են խորտակում, անբարոյականության տիղմի մեջ խեղդում կենդանի մարդկանց։ Փտած արմատի վրա են աճում այդ բարքերը, կենցաղը, բարոյական նորմաները, ընտանիքը, մարդկային փոխհարաբերությունները, որոնց մերկացմամբ Բաշալյանը հետապնդում է առողջ սերունդ դաստիարակելու կարևոր նպատակը։ Միքեի օրինակով նա հաստատում է, որ կամքի ուժ, կորով, հաստատակամություն պետք է դրսևորի երիտասարդը՝ ախտավոր ճահիճը չգլորվելու համար, այլապես, խրվելուց հետո դժվար է դուրս գալ։ Եթե Միքեն գոնե

1 Նույն տեղում, էջ 72։

2 Նույն տեղում։

կես ճանապարհից ետ չդառնար, հավանաբար դիմեր դրամ վաստակելու նոր միջոցների և ամբողջովին կխորտակեր իր ապագան։ Իհարկե, գրողը դեղատոմս չի առաջարկում ախտերը բուժելու համար, բայց դրանց ռեալիստորեն ցուցադրելն ու ձաղկելը «Ա՛յս է եղեր» պատմվածքի լուրջ արժանիքն է։ Հատկանշական է, որ «Հմայաթափ»-ի մեջ Գևորգը «սերը չէր ճանչնար», «Ա՛յս է եղեր»-ում Միքեն «կխնդար սիրո վրա», ու երկուսն էլ տուժում են, երկուսն էլ արցունք թափում, առաջինը՝ խոր վշտի ու հուսահատության դառն արտասուք, երկրորդը՝ հիասթափության, զայրույթի, վրեժխնդրության։ Երկուսի էլ սիրտը խոցվում է «բարձր հասարակության» մեջ, Գևորգինը՝ տիկին Ջյումպյուլյանի «ծիծաղկոտ սրահներում», Միքեինը՝ «Սիմյանների շքեղ սրահին մեջ»։ Սակայն Գևորգի համեմատությամբ Միքեն շատ ուժեղ, փորձված, արտաքինով գեղեցիկ, հոգեպես ամուր, «կյանքի դպրոցին» քաջածանոթ երիտասարդ է, որին անհնար էր մի հարվածով զցել արտաքին սիրո թակարդը և նրանից քամել կենսահյութն ու... դրամը։ Դա լավ հասկանում է փորձառու մարդորս տիկին Սիմյանը և երկար-երկար նրան քարշ է տալիս իր ետևից։ Միքեն ցավ է զգում ոչ թե պարտության համար, նա փաստորեն հասնում է իր ցանկացածին, այլ այն բանի համար, որ սխալ ճանապարհով է ընթացել։ Համենայն դեպս նրա պատրանքներն էլ խորտակվում են, նա ևս Գևորգի պես հանգում է «Ա՛յս է եղեր» հարցին, այն տարբերությամբ, որ Գևորգի հարցը վերաբերվում է իր կարդացած գրքերի մեջ պատկերվող երևակայական «դրախտային» կյանքին, որը ու

մի կապ չունի «կույր իրականության» հետ, իսկ Միքեինը՝ սիրո անունով բորբոքված կրքերի հրդեհի մարմանը։

«Ա՛յս է եղեր» պատմվածքը, նախորդ երկու նորավեպերի համեմատությամբ, հարուստ է բնանկարներով, բնության ու միջավայրի նկարագրություններով, որոնք դա։իս են օգնելու կերպարների հոգեբանության բացահայտմանը։ Պատմըվածքը ուղղված է բուրժուական վերնախավերի անբարոյականության մերկացմանը, ուստի բնությունն ու միջավայրն էլ կարծես հագեցված են կրքեր բորբոքելու ուժով։ Միքեն ու Մառին հանդիպում են շոգ մի օր, մանկամարդ տիկնոջը հառված մեղկ հայացքների շրջապատում. Նրանց առաջին համբույրն ու գրկախառնությունը կատարվում է մի սենյակում, որտեղ «լայն վարագույրները կմեղմեին առանձնոցին լույսը, ուր փոքրիկ վառարան մը իր եղկ տաքությունը կփռեր»[1]։ Նրանք բաժանվում են, երբ տեղում էր գարնան հորդառատ անձրև, կարծես լվանալով-մաքրելով ղղջացող երիտասարդի հոգին. «Ու հյուսիսային սաստկաշունչ քամին իր (Միքեի—Ս. Մ.) երեսին կզարներ տարափը, ու հայտնի չէր թե իր այտերն ի վար գլորվող ջուրը անձրևին կաթիլնե՞րն էին, թե՞ ոչ իր արցունքը»[2]։

Հեղինակի կետ-նպատակն է մաքուր ու աղնիվ տեսնել մարդկանց, նա հատուկ ընդգծում և համոզում է, թե այլ պայմաններում թերևս առաքինի ու օգտակար մարդ դառնար Մի-

---

1 Նույն տեղում, էջ 71։

2 Նույն տեղում, էջ 72։

քեն։ Դրանով և նա բողոքում է ժամանակի սոցիալական պայմանների, մարդու բարձր կոչումը արատավորող հասարակական միջավայրի դեմ։ Մարդը կոչված է բնության զարդը և պարծանքը լինելու, մինչդեռ սեփականատիրական կարգերը ծնում են այլանդակություններ ու չարբարակ պալարներ, որոնք հատուկ են ոչ թե միայնակ անձանց, այլ հասարակությանը՝ որպես ամբողջություն։

Այս իրողության, խեկապես «բունգրի նման սեղմ» դրսևորումն է Լ. Բաշալյանի «Մանրանկար» պատկերը։ Ընդամենը էջ ու կես ծավալ ունի «Մանրանկարը», որի մեջ, սակայն, խտացված է գրեթե այն ամենը, ինչ էապես հատուկ է մասնավոր սեփականատիրական, կապիտալիստական հասարակարգին՝ իշխելու մոլուցք և կուտակման տենչ, շահագործում և խաբեբայություն, նախանձ և կողոպուտ։

Հեղինակն իր սենյակում, պատուհանի մոտ նստած, դիտում է դիմացի ոչ-հեռու պարտեզը, որտեղ, գպրոցական արձակուրդների մեջ գտնվող մի խումբ մանուկներ, մեծահասակների վարքն ու բարքը ընդօրինակելու այդ ամենահմուտ արարածները, կազմակերպում են թատերական ներկայացում։ Մուտքն արժե չոթ պիլիս—չոթ քարեդնդակի փոքրիկ խաղալիք։ Հսկողությունը շատ խիստ է, ուստի թեև դռան մոտ հավաքվել է մանուկների ստվար մի բազմություն, շատ քչերին է հաջողվում ներս մտնել, վճարելով պահանջվող արժեքը և «իրենց ետևեն քաշելով մնացյալներուն ըղձական նայվածքները»[1]։ Հանդիսականներն անհամբեր սպասում են,

---

[1] Նույն տեղում, էջ 225։

հալվում, բայց երկյուղածությամբ են դիմավորում թատերապետին, որն ամենքի վրա «վերեն նայվածք մը կնետե... իր գերազանցության համոզված», դերասանները՝ «իրեն կհետևին գլխիկոր», վարագույրը բացվելիս, նույն թատերապետ Մարգակյանն է երևում ամենուր, որը մեկ-մեկ «ձեռքի փայտը քովը գտնվողներուն գլխուն կամ կռնակին կիջեցնե»[1]... Ի՞նչ պակաս իշխող է սա, իշխանական գավազանից ինչո՞վ է տարբերվում նրա ձեռքի փայտը, որի յուրաքանչյուր շարժումը ոմանց ցավ է պատճառում, ուրիշներին՝ ծիծաղ... Մի մանուկի հաջողվում է անվճար ներս ընկնել, որի համար առաջանում է աղմուկ-աղաղակ, դուրս վռնդելու մարտական կոչեր են հնչում։ «Իրենց վնաս մը եղած չէ, բայց քանի որ իրենք վճարեր են, չեն ընդունիր, որ ուրիշ մը ձրիաբար կարենա մասնակցել իրենց վայելքին...»[2]. մեկ ուրիշը յոթի փոխարեն վճարել է չորս պիլլա, պայմանով, որ ոտքի կանգնած դիտի ներկայացումը. ու թեև տեղ շատ կա, թույլ չեն տալիս նստել. «Ինչու՞ պիտի նստի, քանի որ իրենցմե վար է ան, իրենց պես յոթը պիլլա չէ տված»[3]։ Տեսնո՞ւմ եք, թե մանուկները որքան լավ գիտեն մեծերի սահմանած «կարգ ու կանոնը», «վարի» ու «վերի» հասկացողությունը, որի հիմքում դրված է ունեցվածքի չափը. որքա՜ն էլ ճշտորեն ընդօրինակում են իրենց հայրերի նախանձը, եսասիրությունը... Նոր հանդիսական չի գալիս, նոր վճարումների ակնկալություն

1 Նույն տեղում, էջ 226։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

չկա, ուստի թատերախումբը խաղում է «Թույլ, անհող», արդեն հասույթից զոհ են և հոգ չեն տանում ավելորդ էներգիա կորցնելու և երեխաներին զվարճացնելու, ու շուտով էլ պարզապես իջնում է վարագույրը, իսկ հանդիսականները «իրենց շահագործված ըլլալու բստուգության վերջապես համոզված, դժգոհության ձայներ կբարձրացնեն»[1]։ Եվ ահա այդ «շահագործողներին» էլ «շահագործող» է գտնվում. գանձապետը, յուրացնելով ամբողջ հասույթը, վաղօրոք փախել է... Բայց նրան էլ պիտի խաբի փերեզակը (մանրավաճառը), մի չնչին գումար վճարելով («տաս փարա») բոլոր խաղալիքների դիմաց և դրանք իսկական արժեքով վերավաճառելով...

Պատմելով այս ամենի մասին, հեղինակը վերջում գրում է. «Ի՜նչ մանրանկար մեծերու աշխարհքին»[2]։ Նման խմատալից, եթե կուզեք անսպասելի վերջույթը լուսարձակի պես օգնում է տեսնելու հենց այն, ինչ ցանկացել է ցույց տալ արձակագիրը։ Հիրավի, սկզբում թվում է, թե հեղինակը նկարագրում է սովորական, առօրյա, աննշան մի երևույթ՝ երեխաների խաղը. ու այդ մի հատիկ տողում «մանկական աշխարհը» հանկարծ մեծանում է, ընդունում ճիշտ այն ձևն ու բնույթը, ինչ հատուկ է բուրժուական աշխարհին։ Եվ նշանակալիցն այն է, որ այդ աշխարհի երևույթները սառն ու անտարբեր դիտողի դերում չի գտնվում Լ. Բաշալյանը. նրա յուրաքանչյուր տողում զգացվում է և՛ ցավ, և՛ հեգնանք, և՛ զայ-

---

1 Նույն տեղում։

2 Նույն տեղում, էջ 227։

թույթ, և՛ կարեկցություն։ Նա շատ լավ է ճանաչում աշխարհն ու մարդկանց, սոցիալական բևեռացումն ու կյանքի հակասությունները, որոնք արտացոլված են նրա բազմաթիվ հոդվածներում և հատկապես՝ նորավեպերում։

Կյանքի հակադիր բևեռների և անհաշտ հակասությունների արտացոլմանը նվիրված ամենահաջող ստեղծագործություններից է Լ. Բաշալյանի «Զարթոնք» գողտրիկ նորավեպը։

Ֆրանսիացիները Զարթոնք են անվանում (ֆրանսերեն՝ Ռևեյոն) ծնունդի խթման գիշերը։ Առաջներում մարդիկ, իբրև բարեպաշտներ, այդ գիշերը տաճարներում, եկեղեցիներում խոնարհաբար, ինքնամոռացմամբ տարվում էին «գերերկրային հրաշափառ տեսիլներու շլացումովը»[1]։ Հիմա, նոր ժամանակներում, այդ բարեպաշտների ժառանգները նույնպես խթման գիշերը տարվում են ինքնամոռացության ըղձանքով, բայց գերերկրայինը արդեն չկա, «փոխված է նույնչափ զորավոր հրայրքի մը—վայելքն իր ամենեն նյութական ու ամենեն հեշտական ձևերուն տակ, անձնատվություն այն ամեն հաճույքներուն, որք ուղեղը կգրգռեն ու ջիղերը կցնցեն»[2]։

Արդեն նորավեպի այս սկզբնամասի մեջ հեղինակը զգալ է տալիս, թե նույնիսկ կրոնական ավանդական ծեսերն ու ծիսակատարությունները այնքա՛ն են հեղաբեկվել նոր պայմաններում, տվյալ դեպքում՝ ֆրանսիական բուրժուական հասա-

---

1 Նույն տեղում, էջ 204։

2 Նույն տեղում։

րակության մեջ, որ, օրինակ, խմման գիշերվա սովորական պաս լուծելու արարողությունը վերածվել է ամենաիսկական գինարբուքի, ինքնամոռաց վայելքի։ Բաշալյանը բնավ միտք չունի փառաբանելու խմման նախնական ձևը. կծու ածականներով բնութագրելով թաթախման (խմման) ծիսակատարության նոր ձևը, նա ասում է. «Սկզբնական նույն զգացումն է, որ տարբեր ձևի տակ կվարի մարդկությունը... Սրտին նույն պետքը՝ տարբեր գոհացումով»[1]։ Եթե առաջ մարդիկ երկար ժամանակ պաս պահելով զրկում էին իրենց նյութապես և բավարարվում «հոգևոր սնունդով», հավատում «մեղքերի» համար թողություն ստանալու «երկնային հրաշքներին», ուստի պաս լուծելը նրանց մոռացնել էր տալիս նյութական զրկանքները, ապա հիմա միևնույն ինքնամոռացության զգացումը, նույնպես մեկ օրով, բացարձակապես ապականվել է. բանականության փոխարեն զարթոնք է ապրում կյանքը վայելելու անհագուրդ կիրքը. «Անհաշիվ, անխնա վատնում մըն է այս... Մեկ խորհուրդ մը ունի միայն՝ կարելի եղածին չափ շատ զվարճանալ»[2]։ Բազմություն է կուտակվում բոլոր այն վայրերում, «ուր աչքը, ականջը, կոկորդը և որովայնը վայելք մը կրնան գտնել»[3]։ Իրենց նյութական «պետքերը» հագեցնում են յուրաքանչյուրն իր գրպանի համեմատ՝ ոմանք փողոցներում, սովորական սրճարան-ճաշարաններում, գարեջրատներում, խմորեղեններով, կարկանդակներով, էժանագին խմիչքներով, ուրիշները՝ շքեղ կառքերով սլանում են դեպի «գեղեցիկ թա-

1 Նույն տեղում, էջ 204։

2 Նույն տեղում, էջ 204—205։

3 Նույն տեղում, էջ 205։

8—396

վերը, ապարանքներու խորխոր դռներուն մեջ անհետանալու։ Գող փեղկերին ետին, ճաշակն ու դրամը ի՜նչ մոգական հրաշագործություններ կատարած են»[1]։ Ոչ միայն բոլոր մարդիկ հավասար չափով չեն կարողանում բավարարություն տալ իրենց ցանկություններին, այլև հավասարապես ուրախ չեն այդ օրը. «Իրավ ուրա՞խ են ամենքն ալ,—հարց է տալիս հեղինակը ու ինքն էլ պատասխանում,— չէ՛ հարկավ»[2]։ Այդ պարթանքի «ամբողջությունը մոլուցք մըն է հիմա, որի մեջ եղողները կբորբոքե ու դուրսը մնացողին համար անհասկանալի բան մը կդառնա»[3]։ Ըստ որում՝ «դուրս մնացողներ» են ոչ միայն օտարերկրացիները և այլադավանները, այլև շատ-շատերը բուն ֆրանսիացիներից։ Այս հանգամանքն է ընդգծում Լ. Բաշալյանը, երբ համընդհանուր թվացող զվարճության, «բարձրաձայն քահքահներու», կերուխումի ժխորի մեջ լսում է առաջին հերթին պատառ հացի կարոտ երիտասարդ կնոջ մուրացող ձայնը... Գրողը հավաստում է, որ կան մարդիկ, որոնք խնջույք սարքողներն են, կա՛ն, որ այդ «խնջույքին փշրանքներով» պարզապես «խաբուսիկ երջանկություն մը կվայելեն»[4], իսկ ուրիշները բոլորովին անմասն են որևէ երջանկությունից։ Այդպիսիներից է այն կինը, որին պատահում է հեղինակը հինգ պարթոնքի գիշերը։ Եվ դա պատահական

---

1 Նույն տեղում, էջ 206։
2 Նույն տեղում, էջ 207։
3 Նույն տեղում։
4 Նույն տեղում, էջ 208—209։

հանդիպում չէ բնավ, հեղինակը տեսնում է բնորոշը կյանքում, շեշտելով, որ եթե փարիզցիներին համակած վայելքը միօրյա անցողիկ երևույթ է, ապա թշվառությունը՝ տիպական է ճնշող մեծամասնության համար։ Ուշագրավ է, թե հեղինակի կարծիքով ի՞նչն է այդ կնոջը նետել «կյանքի հատակը»։ Պատասխանն իմանալու համար պետք է նախ ծանոթանալ նորավեպի անանուն հերոսուհու կյանքի համառոտ պատմությանը, որ ցնցող գույներով ներկայացնում է արձակագիրը։ «Իր խեղճ կյանքը մտքիս առջև կբերեմ, իր գիշերահած ոգիի թախծալից կյանքն, որ պատառ մը հացի համար, ստիպված է ժամերով մայթերուն վրա պտտելու ձյունին ու անձրևին, անցորդներու արհամարհանքին և կարգ մը խստության ենթակա։ Ուրկե՛ սկսելով, ի՞նչ թավալգլոր վայրէջքով մը, հասած է այդ ստորիճանին,—չէ՛, այդ հատակին, ուրկե անդին ալ ստորիճան չկա»[1]։ «Գիշերահած» այդ թշվառը ինքը պատմում է, թե ծնվել է գյուղական մի խաղաղ անկյունում, ունեցել է ծնողներ ու հարազատներ, ուրախ պահեր է ապրել տոնածառի (ծննդյան ծառի) շուրջը թռվռալով, վարել է աղքատիկ, բայց անաղարտ կյանք։ «Բախտն այսպես ուզեր է, որ բաժանվիմ անոնցմե. Գեշ հով մը առեր հոս նետեր է զիս»[2]։ Ահա այդ «գեշ հովը» հենց այն չար ուժն է, որ «ընտրյալներին» բաժին է հանում շռայլությունն ու ցոփությունը, ունեզուրկներին՝ դառն աղքատությունն ու մշտական կարիքը, շատերին ճզմում, ստորաց-

1 Նույն տեղում, էջ 211։
2 Նույն տեղում, էջ 213։

նում, ծծել է տալիս «կյանքի մրուրը», ուրիշներին ստիպում է հեռանալ հայրենի հող ու ջրից, հարազատներից, թափառել օտար երկնքների տակ՝ պանդուխտին մաշող մորմոքը սրտում։ Նման «գեշ հովն» է, որ երբեմնի անմեղ գեղջկուհուն նետել է գեղեցիկ Փարիզի «շքեղ կեղտի» մեջ, իսկ իրեն՝ հեղինակին ստիպել է «հայրենի» բռնակալության հալածանքներից փախչել և ապաստանել նույն Փարիզում։ Հատկանշալի է, որ Կ. Պոլսի «Մասիս» հանդեսում 1892-ին լույս տեսած իր նորավեպում Բաշալյանը չէր կարող բացահայտորեն բուն անունով կոչել այդ «գեշ հովը»։ Սակայն նուրբ արվեստով հաստատում է, որ դա սոցիալական անարդարության ու բռնության իրավակարգն է, որի ճնշիչ «հովը» շնչում են ներքնախավերը՝ ջրից ցամաք հանված թփրտացող ձկան պես։

Դեմոկրատ գրողը ոչ միայն հասկանում է «ընկած» փարիզուհու թշվառ վիճակն ու տխուր ապրումները, այլև բաժանում է նրա ծանր վիշտը, կարեկցում անմեղ զոհին՝ որպես յուրովի բախտակից ընկերոջ։ Սկզբում անդունդ տեսնելով իր՝ մտավոր աշխատանքի մարդու և անձնավաճառ կնոջ սոցիալական դրության ու կենսավիճակի միջև, վերջինիս ողբերգական պատմությունը լսելիս նա ասում է. «Իր խոսքերը մտիկ կընեմ բերնեն կախված։ Ու ինձի այնպես կուգա, որ զմեզ իրարմե բաժանող անդունդը հիմա կլցվի, խելահեղ արագությամբ մը, ու ալ իրարմե հեռու չենք։

Ծրագը հանկարծ կմարի. բոցը, մեռնող օձի մը լեզվին պես համրոլոր տատանումներով իր շուրջ բոլորքը լիզելե հետո, կշշե ու կմարի։

Բայց սենյակը մութ չերևնար ինձի»[1]:

Մոմը հանում է, բայց մութ սենյակը հեղինակին լուսավոր է թվում, կրակը մարում է, բայց ցուրտ չի զգում, «հատակի մարդ» է դիմացը, բայց իրենից «հեռու չէ», խորթ ու օտար չէ, առավել ևս՝ ատելի չէ: Չէ՞ որ այդ կինն էլ սկզբում անհոգ, ազատ պահելով իրեն, հետո համակվում է զրուցակցի տրխությամբ, աշխատում է մխիթարել նրան, պատմում է իր կյանքի ցավալի պատմությունը, կարծես հարազատի մոտ թափելով վիշտը: Կենդանի մարդ է գրողի դիմաց, թշվառության մեջ տառապող, ախրող վատ բարքերի զոհ, բայց մարդկային սիրտը կարեկցելու հատկությունը, մխիթարելու պատրաստակամությունը երբեք չկորցրած: Ինքը՝ շարունակ մշտական կարիքի ու հոգսերի բեռից տրտում, բաժանում է զրուցակցի միայնության տրտմությունը, կանացի նուրբ խելամտությամբ հասկանալով, որ նա էլ անջատված է հարազատներից, հայրենի հող ու ջրից, զրկված է նոր տարի և նոր ծնունդ տոնելու ուրախությունից: Միևնույն «դեշ հովը» երկուսին էլ կտրել է հարազատ միջավայրից, մեկին նետելով ապականության ճահիճը, մյուսին ստիպելով վարելու տարագիր պանդուխտի հոգեմաշ մի կյանք:

«Ջարթոնքը» Լ. Բաշալյանի ամենահուզական նորավեպերից մեկն է, ուր վառ կերպով դրսևորված են գրողի խոհերն ու զգացմունքները պանդուխտի տխուր ճակատագրի վերաբերյալ, իսկ պանդխտությունը դիտված է որպես չարորակ ուռուցք սփականատիրական հասարակության անառողջ մարմնի

1 Նույն տեղում:

վրա, որպես ծնունդ ու հետևանք խչխող կարգերի, բարքերի ու օրենքների։

* * *

Պանդխտությունը սավերի նման ուղեկցել է հայ ժողովրդին։ «Հայոց կռունկը» դարերով թևածել է օտար երկնքների տակ, ու նրան հայ պանդուխտները շարունակ ուղղել են իրենց հայրենակարոտ սրտակեղեք հարցը. «Կռո՛ւնկ, մեր աշխարհեն խաբրիկ մը չունի՞ս...»։ Բայց պանդխտությունը ողբալի չափերի հասավ հատկապես անցյալ դարի երկրորդ կեսերից, կապիտալիստական հարաբերությունների զարգացման, գյուղի նահապետական տնտեսաձևի հեղաբեկման, դասակարգային շերտավորման ուժեղացման պայմաններում։ Այդ մասին ցնցող էջեր կան հայ նոր գրականության մեջ, այդ մասին են պատմում նաև արևմտահայ «ուխտանականների» բազմաթիվ ստեղծագործությունները։ Փաստական նյութով չափազանց հարուստ «Պանդուխտի կյանքեն» քրոնիկներում՝ Մ. Կյուրճյանը պանդուխտին նմանեցնում է Արտամետի նշանավոր խնձորին, որը թարմ, գեղեցիկ, ակնահաճո է մայր-ծառի վրա. բայց պոկվելով արմատից և անցնելով տեղից-տեղ՝ կամացկամաց սկսում է թառամել, թոշնել, ծածկվել կնճիռներով. թեև պահպանում է իր անուշ բույրը, խոր ցավ ու ափսոսանք է առաջ բերում սրտերում։ Իր «Այրին» նորավեպում Գ. Զոհրապը միայն իրեն հատուկ անկրկնելի ուժով տվել է հայ պանդուխտի ընտանեկան ողբերգության սրտահույզ պատմու-

թյունը։ Ա. Արփիարյանը, Տ. Կամսարականը, Ե. Օտյանը, Երուխանը, Թլկատինցին միահամուռ հատատել են պանդըխտության կործանարար էությունը և պայքար մղել այդ երևույթը ծնող ու սնող միջավայրի դեմ։ Նրանց շարքերում իր խոսքն է ասել նաև Լ. Բաշալյանը, գրելով մի շարք հոդվածներ, «Վրանին տակ» պատկերը, «Փափուկ մարդիկ» նորավեպը և այլն։

«Վրանին տակ»-ը մեկն է Լ. Բաշալյանի «Միջերկրականի հիշատակներ» ընդհանուր շարքի ստեղծագործություններից և հնչում է իբրև պանդխտության նվիրված լիարժեք, ինքնուրույն գեղարվեստական պատկեր։

Ճանապարհորդության ժամանակ հեղինակը շոգենավի վրա տեսնում է երեք «ծանոթ դեմք», երեք անձնավորություն, որոնց արտաքինից, շարժումներից ու վարվելակերպից անմիջապես գուշակում է, թե դրանք հայ պանդուխտներ են։ «Կխոստովանիմ,—ասում է նա,— թե գուշակության այս կարողությունը մեծ արժանիք մը չէ։ Երբ որ Մարսիլիո շոգենավի մը վրա, աղտոտ անկողնի մը քով երկնցած կգտնեք մարդ մը, որ ֆեսը գլխին, վայրահակ կմնա, տխուր, չորս կողմը անցածիններուն անտարբեր, մեկի դեմ հարյուր գրավ դրեք, որ հայ մըն է ան, ու խարբերդցի հայ մը, որ Ամերիկա կերթա կամ անկից կդառնա։ Գրավնիդ կշահիք»[1]։ Որքա՜ն տարածված պիտի լիներ երևույթը և որքա՛ն ակնառու՝ իր ցավալի հետևանքներով, որ իրավունք տար գրողին վստահորեն հայտնելու այսպիսի

1 Նույն տեղում, էջ 136։

կարծիք։ Ինչ վերաբերում է շոգենավի վրա գտնվող երեք ուղևորներին, ապա նրանք խսկապես դուրս են գալիս Ամերիկայից վերադարձող հայ պանդուխտներ։ Խարբերդի շրջակա գյուղերի այդ բնակիչները չորս տարի աշխատել են ամերիկյան գործարաններում և հիմա «հողնած ու հիվանդ կդառնային իրենց տեղը, Ամերիկայի փողոցներուն ոսկի ժողովելու պատրանքներն կորսնցուցած...»[1]։ Փշրվել են նրանց «ոսկե պատրանքները», հյուծվել են ֆիզիկապես, ընկճվել հոգով. նրանց կենսահյութերը չորս տարի շարունակ քամել է գործատունը— «հայ պանդուխտներուն այդ անհագ Մողոքը, որ այնքան զոհեր կառնե իրենցմե»[2]։ Նրանք երազել են աղքատիկ բնատնիքները թեթևացնել ծանր հոգսերից, չեն խնայել ուժ ու եռանդ. մեկը իրենցից նույնիսկ ծանր վնասվածք է ստացել՝ ոտքը թողնելով մեքենայի տակ։ Բայց փաստակել են այնքա՞ն չնչին գումար, որ «հանձն առեր էին ամենամութի այդ դժնդակ օրերուն, այդ երկար ճամփորդությունը ընել նավին կամուրջի վրա, իրենց անկողնին ու վերմակին մեջ փաթթված, անճրևին ու բուքին ենթակա»[3]։ Աշխատանքի վայրում՝ զրկանքներ, ճանապարհին՝ զրկանքներ, անձնուրացության աստիճանի հասնող սուղ ապրելակերպ—ահա ինչ գնով են պանդուխտները, և այն էլ երջանիկ պատահականությամբ դժբախտ դեպքերին զոհ չգնացած կամ բարոյապես չապականված անհատները, աննշան փաստակով վերադառնում հայրենի տուն, հարազատ-

1 Նույն տեղում, էջ 137։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

ների գիրկը։ Բաշալյանի ուղեկիցները համենայն դեպս երջանիկ են, որ ֆիզիկապես կենդանի են մնացել, բայց նրանց հոգին շարունակ կրծել է մտածմունքը՝ հարազատների ու հայրենիքի մասին։ Այս առթիվ հեղինակը, ինչպես և պետք էր սպասել ճշմարիտ արվեստագետից, հրապարակախոսական-գիտական ճառեր չի ասում, բայց հյուսում է այնպիսի մի հուզառատ ու սրտառուչ պատմություն, որ անհնար է չտեսնել, չշոշափել, չզգալ հայ պանդուխտի մորմոքուն սրտի բաբախյունը։ Հեղինակի միջնորդությամբ տախտակամածի երեք «բնակիչներին» տրամադրում են մի վրան։ Այդ լավության փոխարեն պանդուխտներն իրենց աղքատիկ միջոցներով՝ մեկ սրվակ գինի, ցամաք հաց և մի քանի ձիթապտուղ—հյուր են հրավիրում նրան, ու փոքրիկ վրանի տակ, անձրևից հետո թաց գետնի վրա, խոր մթության մեջ, սկսում է նախ անշուք հյուրասիրությունը, ապա պանդուխտին բացում տրակտատներից ավելի լավ բնութագրող «ղարիբության» երգը. «Ու ահա հաստ ու կոկորդային ձայն մը կբարձրանա հեռվեն, խորունկեն եկածի պես, ու Հայաստանի երգը մը կերգե ան, հեծության մը պես տրտում, աղաչանքի մը պես ողոքող։ Գիտեմ ե՛ս ալ այդ երգը։ Հաճախակի լսած ըլլալով մեր տունը եկող գավառացի ազգականներեն, երգ մը հինավուրց և միշտ նոր, զոր Խարբերդի ու Բալուի կիները կերգեն իրենց բացակա սիրելիներուն վրա, ախերով սկսվող ու վայերով վերջացող, ամբողջ ողբ մը, հառնում մը... Ես ալ կսկսիմ նույն երգին մեկ ուրիշ տունը... Հիմակ իրենք երեքը կսկսին... Ու երգը կտարածվի, տառապանքի համանվագ մը, բացված

վերքերու, սրտե հոսող արյունի, մաշեցնող կարոտներու, բղձանքներու, հուսահատության կոծ մը»[1]: Տառապանքի համանման համանվագ է պանդուխտի ամբողջ կյանքը, որի մային հյուսված երգի բնութագրումով էլ Բաշալյանը վեր է հանում այդ կյանքի էությունը: Պանդուխտի կյանքը մխիթարական ու լուսավոր կողմեր չունի, եթե, Բաշալյանի կարծիքով, չհաշվենք օտար երկրներին ծանոթանալու, երբեմն քաղաքակրթության հետ շփվելու հանգամանքը (իհարկե, նկատի է առնվում ոչ այն բարքերը, որ «քաղաքակրթություն» անվան տակ խեղդում են գեղջուկի պարզ ու մաքուր հոգին), իսկ պանդուխտի երգը նրա անմխիթարական կյանքի մեծագույն սփոփանքն է, թեթևացնում է սիրտը, արցունքներ քամում ու գեթ մի պահ կտրում առօրյա հոգեմաշ տառապանքներից: Ահա նավի վրա, անձրևի հորդ տարափից թրջված վրանի տակ, ցրտի ու մթության մեջ հնչում է այդ երգը, և իսկույն ամենքին համակում է «սրտի անհուն խանդաղատանք մը». «Հայրենական բաներու այդ վերհուշությունը չեմ գիտեր ի՛նչ ունի իր մեջը գորովական ու մխիթարող, որ կըթեթևցնե ճնշված սիրտս: Ա՛լ ցուրտ չէ այստեղ. զգացումներու ջերմությունը, որ այդ մարդերեն կուգա ինծի ու ինե անոնց կերթա, այդ վրանին ներքնակողմը կտաքցնե... Ու հիմա ճառագայթում մը կելլե մեր սրտերեն, որ կլուսավորե այս մութ անկյունը»[2]: Այսպես ուրեմն՝ «հայրենական բաներու վերհուշությունն» անգամ, հայրենի երգը, հայրենիքի շունչը այնքան զորեղ են,

---

1 Նույն տեղում, էջ 140—141:

2 Նույն տեղում, էջ 141:

որ հեռվից-հեռու մեղմացնում են ցուրտը, փարատում մութը, ջերմացնում սրտերը։ Ուստի՝ չի կարող լինել ուրիշ ավելի մեծ ողբերգություն, մահվանից էլ վատթար, քան պանդխտությունը, որը կտրում է մարդուն ծննդավայրից, ծնողներից, կնոջից, զավակներից և բոլոր լուսավոր «հայրենական բաներուց»։ Այս է Բաշալյանի «Վրանին տակ» պատկերի ենթաբնագիրը։ Նրանում մի առանձին հմտությամբ է նկարագրված նաև բնությունը, որի աճող տարերքի մեջ հեղինակը տեսնում է պանդուխտների կյանքին համահնչուն մի աղաղակ։ Նշելով, թե երբ պանդուխտները նավասենյակներ զբաղեցնելու փոխարեն ծվարում էին բարակ թելերով տախտակամածին ամրացված վրանի տակ, Բաշալյանը սրտի խոր ցավով գրում է.

«...Այն իրիկունը, հովը դուրսը կգոռա, ահավոր, արձակ միջոցին մեջ թավալելով իր հորձանքները։ Բնության մեծ ձայնն է, որ կբարբառի, իր ահագնությանը տակ ընկճելով քեզ։ Շոգենավին լուծքը կդղրդի, կայմերը կշառաչեն, շղթաները կկռնչեն. կր՜ռ, կր՜ռ, կր՜ռ, գագաղը գերեզման իջեցնող չվանին ճռնչյունին պես ավելի սաստիկ ազդելով քեզ անէության մահասարսուռ ցուրտը... Ինծի այնպես կուգա, որ հոգի մը ունին այն խեղճ նիհար թելերը, որ հիմակ հովին մտրակող ուժգնության տակ պրկվելով ու գալարվելով, ցավի աղաղակ մըն է, որ կարձակեն, տառապանքի..մարդկային արտահայտություն մը։ Սարսուռ մը կվազե, կհոսի այդ թելերուն վրա. որոնք ջիղ են համակ, ու իրենց գերազգրգռությունը կհյուսե այդ նվագը, պոտլեռյան (անկումային պոեզիայի նախահայր. «Չարության ծաղիկներ» ժողովածուի հեղինակ, ֆրանսիացի

բանաստեղծ Շառլ Բոդլերի մասին է խոսքը—Ս. Մ.) երգի մը պես հիվանդ ու կենդանի։ Այդ չվանները կապրի՞ն»[1]։

Նյութի, թեմայի ոգին արտահայտող այսպիսի բնանկարը պատիվ կարող էր բերել վրձնի հմուտ վարպետին անգամ։ Ոռնացող քամին կարծես շնփորում է մահերգը տարբերքի հարվածներին ենթակա հեք պանդուխտների, որոնց կյանքի թելը, իրենց պատապարող վրանի կապերի պես, հողմի բերանն ընկած ձգվում է շարունակ և ամեն րոպե կարող է կորվել։ Պրկված թելերը դիմանում են մի կերպ, մի կերպ ապրում են նաև պանդուխտները՝ սրտում միշտ մորմոք, հոգում՝ կործանման վտանգի սարսուռը, դեմքին՝ «չար բախտի» անխնա ապտակը...

Պանդուխտի դաժան ճակատագրից անբաժան են ոչ միայն ամենօրյա ծանր հոգսերը և հալածանքները, կարիքն ու կարոտը, այլև անիմաստ, աննպատակ զոհերը։ Այս մասին է Լ. Բաշալյանի «Փափուկ մարդիկ» նորավեպը, որն ինքն անվանել է «իրական պատմություն»։ Թույցե և իրականության մեջ չեն եղել կոնկրետ այն մարդիկ, որոնց ներկայացնում է հեղինակը, սակայն նրանց նմանները շատ կային կյանքում։ Այստեղ ևս գրողը պանդխտության դեմ ուղղված ճառերի չի դիմում, դատավճիռներ չի արձակում, սակայն նուրբ արվեստի ներգործուն ուժով դատապարտում է այդ երևույթը։

Մի քանի ամիս Պոլսում ապրելով, «դուրսեն եկած» Պողոսը ծանր հիվանդանում է, տեղափոխվում հիվանդանոց և

[1] Նույն տեղում, էջ 138 (ընդգծումը մերն է—Ս. Մ.)։

այնտեղ մահանում։ Ահա Նորավեպի ամբողջ բովանդակությունը։ Ըստ որում, հիվանդանում և մահանում է դեռևս որևէ աշխատանքի չանցած։ Պոլսում նա ապրում է ավելի վաղ քաղաք եկած մեծ եղբոր և հորեղբոր մոտ, որոնք «Պոլսո մեկ մութ ու խոնավ խանին անկյունը խանվեճիություն կընեին»։ Նրանք ուժերի ներածին չափ խնամում են Պողոսին, չեն շտապում աշխատանքի լծել, գիտենալով, որ «քիչ վերջը պիտի գար սպառող հոգնությունը, որ դուլ ու դադարում չպիտի ունենար, և որ պիտի կքեր իր շիպշիտակ հասակը ու թոռոմցներ այտերուն կարմիրը»[1]։ Եղբայրն ու հորեղբայրը կրել են պանդուխտին մաշող ցավերը և ափսոսում են Պողոսին, որը «Քսանը նոր անցուցած էր։ Խոշոր ու առույգ տղա մըն էր, արձակ օդի ու արձակ դաշտերու վարժված, որ կխեղդվեր խանին այդ մութ ու խոնավ անկյունը, դեռ չկրնալով բանի մը գործածել իր հաղթ բազուկները»[2]։ Գյուղում դեռատի կնոջն ու երեխային թողած երիտասարդը ամիսներ շարունակ համար գործ չի գտնում, առողջ թոքերն ապականում է խոնավ խանի հեղձուցիչ օդով, սիրտը մաշում կնոջ ու երեխայի կարոտով և ընկնում անկողին։ Ճիշտ է, ազգականներ կան գլխին կանգնած, սակայն աշխատանքը ոչ մի կերպ թողնել չեն կարող՝ հիվանդով զբաղվելու համար և նյութական միջոցներ չունեն բժիշկ հրավիրելու։ Օրհասական պահին միայն հիվանդի թևերն ընկած քարշ են տալիս հիվանդանոց, նոր տաժանքի ենթար-

1 Նույն տեղում, էջ 200։

2 Նույն տեղում։

կեղավ տղային, որի հաղթ կազմվածքից «հիմա չորացած մարմին մըն էր մնացեր»[1]։ Ու երբ մեկ շաբաթ հետո, հազիվ ժամանակ գտնելով, հարազատներն այցելում են հիվանդին, լսում են նրա մահվան լուրը։ Եթե լավ թե վատ տեր ունեցող պանդուխտն է նման վիճակի ենթակա, ապա ի՞նչ կլինի այն բազմաթիվ գեղջուկների դրությունը, որոնք մի մութ անկյուն անգամ չեն ճարում և մինչև գործ գտնելը ստիպված են ապրել դատարկ գրպանով... Իսկ ի՞նչ են ձեռք բերում թեկուզ այն պանդուխտները, որոնք Պոլսի մեծ եղբոր և հորեղբոր պես արդեն աշխատանք ունեն։ Ոչ միայն ոչինչ չեն շահում, այլև կորցնում են շատ բան, կրում վիրավորանքներ, արհամարհանք, քանզի խորթ տարր են համարվում «քաղաքակիրթ» աշխարհում... Այս իմաստով չափազանց բնորոշ է «խահվեճիներին» ցույց տրված վերաբերմունքը հիվանդանոցում։ Տրեխներ հագած հեզ ու խոնարհ այդ մարդիկ, որ հազիվ են վաստակում իրենց գոյության միջոցները, միայն արհամարհանք են առաջ բերում երիտասարդ բժշկի մեջ, որն «իր սիրուն մորուքը կշոյեր սիրելաբար, գլուխը բարձր բռնած, ինքզինքեն կատարելապես գոհ մարդու մը ապուշ երանությամբ»[2]։ Եվ մարդկային կյանքի այդպիսի «պահապանը», մարդասիրության մեծագույն օրինակը ցույց տալու կոչված մասնագետի՝ բժշկի տիտղոսը կրող այդ ինքնագոհ արարածը, իր մորուքը ավելի բարձր է գնահատում, քան կենդանի մարդկանց, որոնց

1 Նույն տեղում, էջ 201։

2 Նույն տեղում, էջ 202։

գրպանը դատարկ է, ուտի լեզուն էլ՝ կարճ: Հիվանդի մասին հարցնելու եկած պանդուխտներին նրա պատասխանն սկսվում է այսպիսի խոսքերով. «— Դուք ամոթ չունի՞ք, բե, ա՛ս ինչ **սեր-սեմ** (ապուշ) մարդիկներ եք: Ձեզի բարերարություն ընելն ալ ճշմարիտ հանցանք է: Ան վիճակին մեջ մարդ հիվանդանոց կերթի՞ն: Դուք ե՞րբ մարդ պիտի ըլլաք... Ամչցե՛ք, բե, դուք մարդ ըլլալիք չունիք: Ես արդեն եկած տունն զրուցեցի. ասի-կա գլուխ չի հաներ»: Իսկ երբ այդ զայրացկոտ, հայհոյական «զրույցից» գլուխ չհանելով, նրանք հարցնում են՝ «է՛յ հիմա ի՞նչպես եղավ մեր Պողոսը, աղա», վերջինիս զայրույթը գագաթնակետին է հասնում և տեղից վեր ցատկելով «բացատրում» է. «— Դահա (դեռևս) չհասկցա՞ք, բե, վայ **սերսեմ-ներիֆ**: Մեռա՛վ, բե: Գալուն **էրթեսի** (հաջորդ) օրը **մի**, իչյուն-նի (երրորդ) օրը **մի**, մեռավ: Ես **գարը** (արդեն) տեսածիս պես ըսի, որ պիտի մեռնի»[1]:

Որքան խիստ, ոչնչացնող է հեղինակի քննադատությունը նման «փափկանկատ» բժշկի նկատմամբ, նույնքան ուժեղ է խղճը՝ հողի աշխատավորին տեսնել իր հարազատ բնօրրանում, բնության դեմ մաքառելիս, հաղթ բազուկներով հողից բարիքներ քամելիս: Նրա խորին համոզմունքն է, որ Պողոսի նման առողջ երիտասարդը չպետք է լքի հայրենի օջախը, որովհետև նեղությունից դուրս գալու համար պանդխտությունը խաբուսիկ հույս է, ցնորամիտ պատրանք: Ճիշտ է, Բա-

---

1 Նույն տեղում, էջ 202—203 (ընդգծումները բնագրում, բառերի բացատրությունները մերն են—Ս. Մ.):

շալյանը լավ գիտեր, որ գավառների գյուղացիության սոցիալական դրությունը անմխիթարական էր, գեղջուկը կքված էր կարիքի, պարտքի, ճնշման ծանրության տակ։ Բայց ի՞նչ կարող էր շահել նա պանդխտությամբ, երբ ամենուր աշխատանքի մարդու համար կյանքը համակ ողբերգություն էր, ինչպես գրողն է ասել՝ «Թշվառության դաշտ»՝ ծածկված փշերով ու տատասկներով։ Այս իրողության արտացոլմանն էլ նվիրված է Լ. Բաշալյանի նորավեպերի ու պատմվածքների մեծ մասը։

«ԽՈՆԱՐՀ ՀԱՐԿԵՐԻ» ՊԱՐԶ ՀՈԳԻՆԵՐԸ

«Ութսունականների» գրական սերնդի բերած կարևորագույն նորություններից էր ներքնախավերի մարդկանց կյանքի աննախընթաց լայն պատկերումը, և հատկապես՝ նրանց հոգեկան ու բարոյական բարեմասնությունների ընդգծված դրսևորումը։ Լ. Բաշալյանը, մյուս «ութսունականների» նման, ծանոթ էր աշխատավոր զանգվածների ծով թշվառությանը, որի մասին արդեն ցնցող էջեր կային գրականության մեջ, գիտեր այն իրողությունը, որ սոցիալ-ազգային սաստկացող ճնշումը է՛լ ավելի խորացնում էր «հասարակ մարդկանց» ունեզրկությունն ու արժանապատվության ոտնահարումը, նրանց մեջ ներարկում բուրժուական ապականված բարքերի ոգին՝ հնազանդություն, հաշտվողականություն ստեղծված անարդար վիճակի հետ։ Բայց, այդուամենայնիվ, նա համոզված էր, որ տնտեսական կարիքի ու հոգևոր ստրկության շղթաներով

կաշկանդված պանդխտներն են բուն ժողովուրդը: Խոսելով Արմաշում հավաքված ուխտավորների մասին, նա գրել է. «Հոս է բազմության մը առավելությունը, որ միշտ, գիտողին համար, ընկերային ուսումնասիրության լավագույն միջոցն է, և ան է, որ ճշտագույն ծանոթություններ պիտի տա ժողովրդի մը բարքերուն, բնավորության, սովորությանց, տարազին, լեզվին վրա: Ժողովուրդը այդտեղ է, որ պիտի երևի իր ինքնության համարձակ ու անծածկույթ տեսարանին մեջ: Փափկանկատ դյուրազգածությամբ պետք չէ հեռու քաշվիլ ամբոխեն, նույնիսկ իր աղտոտության ու գռեհկության միջավայրին մեջ: Մեծագույն դասը անոր մեջ պիտի գտնենք»[1]:

Թո՛ղ որ Լ. Բաշալյանը ուղղակի կրկնում է Ա. Արփիարյանի այն միտքը, թե գրողը պարտավոր է չխորշել այն վայրերում լինելուց, ուր «գարշահոտություն կա», չմտածել անգամ «բյուզանդական փափկասուն ռունգերը» վնասելու մասին: Կրկնում է՝ մի անգամ ևս ընդգծելու համար գրողի բուն կոչումը՝ ապրել ժողովրդի հետ, ժողովրդի կյանքով և ծառայել ժողովրդին, որն, ինչպես գիտենք, «ութսունականների» գործունեության նշանաբանն էր: Լինել ժողովրդի մեջ, ըստ Բաշալյանի, նշանակում է «մեծագույն դասեր»[2] քաղել: Իսկ ի՞նչ դասերի մասին է խոսքը: Պատասխանը գրողի «Սյուղենիի վարպետ», «Նոր զգեստը», «Պալըխճի Գևորգ», «Դրացուհին», «Երկու կիներ», «Ջրի» և մյուս նորավեպերն ու պատմվածքներն են, որոնք համարձակորեն կարելի է դասել արև-

---

[1] Նույն տեղում, էջ 183:

[2] «Արևելք», 1885, մարտի 7:

մտահայ ռեալիստական արձակի, հայ դեմոկրատական գրականության փայլուն էջերի շարքը: Բոլոր այդ ստեղծագործությունների մեջ հեղինակի ուշադրության կենտրոնում գտնվում են «հասարակ մարդիկ»—պանդուխտի որբացած ընտանիք, գործավոր, երկաթագործ, ձկնորս, դերձակ: Սրանք ապրում են դառն կարիքի մեջ, բայց ազնիվ աշխատանքով, նյութապես աղքատ են, բայց հոգով հարուստ, հագուստը հնամաշ է, բայց սիրտը զուլալ, քրտինքով են վաստակում հանապազօրյա հացը, բայց պատրաստ են այն կիսել կարիքավորի հետ, ագահ ու անկուշտ չեն, բավարարվում են քչով, բայց ահա այդ քիչն էլ ձեռք են բերում մեծագույն դժվարությամբ, դժվարության մեջ էլ հենց դրսևորելով իրենց մարդկային արժանիքներն ու բարեմասնությունները: Վերջիններիս ցուցադրումը «ութսունականների», նաև Լ. Բաշալյանի կարծիքով՝ ամենակարևորն էր, գրականության առաջնահերթ, գլխավոր խնդիրը, քանի որ թշվառության մասին ավանդական ողբերը հեռու էին ժողովրդի ցավերը բուժող դարման լինելուց, իսկ բարեմասնությունների, առաքինությունների, բարձր հատկությունների վերհանումը կամրապնդեր հավատը սեփական ուժերի և հնարավորությունների նկատմամբ: Այս է պատճառը, որ աշխատավոր մարդու կյանքի ամենացնցող ողբերգությունն անգամ նկարագրելիս Լ. Բաշալյանը հեռու է մնում մռայլ գույներից և վհատեցնող տոնից, տեսնում է լավը, գեղեցիկը, լուսավորը՝ իր դրական կերպարների ներքնաշխարհում: Որքան մութ է գիշերը, այնքան պայծառ են երևում աստղերը—հանրածանոթ այս սկզբունքով է նա պատկերում աշխատանքի մարդկանց

սոցիալական դառն կյանքը և մարդկային վսեմ հատկություն-
ները։ Ահա, օրինակ, «Սյուղենիի վարպետ» պատմվածքը, որն սկսվում է «գրականագիտական», տեսական ուշադրավ մի «նախամուտքով»։

«Պարզ պատմություն մըն է ընթերցմանս։ Պատմություն բուն բառը չէ. մտացածին ու երևակայական դեպքերու այնպիսի ընկալյալ գաղափար մը կա այդ բառի մեջ, որ ճշտիվ չհամապատասխաներ իմ ներկայացնելիք իրական պատկերիս։ Վերջ ու սկիզբ չունի. շատերուն ալ հետաքրքրություն չպիտի գրգռե։ Մեր ընտանեկան խոնարհ հարկերու մեկ պարզ դրվագն է. ու եթե բանի մը չծառայե, գեթ գաղափար մը կուտա, թե չքավոր ընտանիք մը ի՛նչ միջոցներով կապրի Կ. Պոլսո մեր այլազան հայ ընկերության մեջ»[1]։

Մերժելով մտացածինն ու երևակայականը, Բաշալյանը չի մոռանում հիշատակել, որ «խոնարհ հարկերի» բնակիչների կյանքը, շատերին դուր չգալով հանդերձ, ուսանելի կողմեր ունի, որոնք չպետք է անուշադրության մատնվեն։ Եվ բուն պատմվածքում նա շեշտը դնում է հենց այդ կողմերի վրա։

Կարին քաղաքից Պոլիս պանդխտած շարքային «խահվեճի» Հակոբը մտադիր էր որոշ գումար վաստակել և վերադառնալ հայրենիք։ Անցնում են տարիներ, բայց նրա իղձը մնում է անկատար։ Ի վերջո կնոջն ու չորս երեխաներին մի կերպ տեղափոխում է իր մոտ և դեռ կարոտը չառած մահանում ժանտատենդից, գնալով՝ «գերեզմանին մեջ գտնելու այն

1 Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 73։

հանգիստը, զոր իզուր որոներ էր աշխարհիս վրա»[1]։ Երբ ու անտերունչ մնացած բազմանդամ ընտանիքին նա չի թողնում ապրուստի որևէ միջոց, չկան հարազատներ, չկա օգնող ձեռք։ Մեծ երեխան՝ տղան ընդամենը 13 տարեկան է, ընտանիքի մայրը՝ անփորձ ու խոնարհ, ամուսնու շվաքում ապրելու վարժված կին։ Թվում է, թե օտար, խորթ միջավայր ընկած թըշվառ այդ ընտանիքի կործանումն անխուսափելի է։ Եվ ահա այս դժվարագույն պահին միանգամից արթնանում են այդ կնոջ՝ Մարիամ տուտուի կենսունակ ուժերը. «Առջի մի քանի օրվան ցնցումեն ետքը, Մարիամ տուտուն ինքզինքը ժողվեց։ Գավառացի կնոջ այն կորովի և հաստատ բնավորությամբ, որ տարակա պանդուխտին տունը կանգուն կպահե գավառաց մեջ, սրտին խորը թաղեց իր վիշտը, արցունքը սրբեց և գործի ըսկըսավ»[2]։ Տղային դպրոցից հանում է և տալիս արհեստի, երկու սենյականոց բնակարանից փոխադրվում է մի էժանագին խրճիթ, սրճարանի խղճուկ կահ-կարասին վաճառում է, վաստակելով մի որոշ գումար, մոտ երկու ամսվա ապրելամիջոց, իսկ ինքը սկսում է զբաղվել լվացարարությամբ։ Ո՛չ կրթություն, ո՛չ արհեստ, ո՛չ նյութական միջոցներ և ո՛չ որևէ օգնող ունեցող Մարիամը այնպիսի բարեխղճությամբ ու ջանասիրությամբ է աշխատում, որ կամաց-կամաց կարգավորում է գործերը. «ակռան սեղմեց... ու ապրեցան», թեև, իհարկե, չոր ու ցամաք հացով, որովհետև «չոր հացը քիչ կուտվի,

---

1 Նույն տեղում, էջ 74։

2 Նույն տեղում։

խնայողություն մըն է»[1]: Խնայողությամբ ծանր, բայց ոչ անազնիվ կյանք վարելով, Մարիամը հաջողացնում է նաև ավագ աղջկան՝ տասներկուամյա Թագուհուն հանձնել սյուզենիի (ասեղնագործության) արհեստին, համբերությամբ սպասելով մինչև աշակերտուհուց նա դառնա վարպետ. «Մայր ու աղջիկ շատ գիշեր գլուխ գլխի տված կմտածեին այն հանդըստության օրերուն վրա, զորս պիտի վայելեին այդ ըղձացյալ տիտղոսին ստացումեն ետքը»[2]: Խեղճության ու հույսի մեջ անց են կացնում մի տարի, Թագուհին ստանում է «սյուզենիի վարպետ» բաղձալի տիտղոսը, որը նշվում է աղքատիկ, բայց սրտաբաց հյուրասիրությամբ: Հյուրերի գնալուց հետո «Մարիամ գիրկը առավ իր աղջիկը, կաթոգին սեղմեց զայն իր նիհար լանջքին վրա, ու արցունքի կաթիլներ իր այտերեն ի վար սկսան գլորիլ, այս անգամ սակայն գոհունակության արցունքներ՝ որք իր քաշված դիմագծերուն անճառ երանություն մը կպարգևեին»[3]: Այսպես էլ վերջանում է «Սյուզենիի վարպետ» պատմվածքը, ընթերցողին թողնելով ենթադրելու, թե ի՞նչպես է դասավորվելու Մարիամի ընտանիքի հետագա բախտը: Հասկանալի է, որ եթե Թագուհին ոսկե ձեռքեր էլ ունենա՝ ասեղնագործությամբ ոսկի չի դիզի ընտանիքի համար. հեղինակը մի տեղ նույնիսկ հաշվում է, որ լավագույն դեպքում նա կարող է վաստակել օրական երեքից-հինգ ղրուշ միայն, մի աննշան գումար, որ հազիվ բավարարի մեկ օրվա

---

1 Նույն տեղում, էջ 75:

2 Նույն տեղում, էջ 77:

3 Նույն տեղում, էջ 80:

ապրուստը։ Էականն այն է, որ որբևայրի կնոջ, չորս մատաղ երեխաների անօգնական մոր վշտի արցունքները փոխարինվում են երանության արցունքներով, թեև այդ երանությունն էլ դեռ հույսի, հավատի վրա է հիմնված։ Էականն այն է, որ ամենադժվարին, գրեթե անելանելի դրությունից անգամ մարդ կարող է պատվով դուրս գալ՝ լարելով իր ուժերը, դրսևորելով կամք, հավատ, հոգու արիություն, տոկալու ունակություն։ Շատ ուշագրավ է, որ մի ուրիշ հայ կնոջ՝ մշեցի մի գեղջկուհու դիմանկարը կերտելով, Բաշալյանն իր այդ քրոնիկը վերնագրել է «Հոգեկան ուժ»։ Պատմելով, թե ինչպես այդ կնոջ ամուսնու խնամքի տակ «մարդ դարձած» երեք տագրորդիները մերժում են որևէ ապաստան ու օգնություն, երբ ամուսինը մահանում է, որբևայրին փոքրիկ տղայի հետ Պոլիս տեղափոխվելով խնամում ու մեծացնում է միակ երեխային։ Բաշալյանը այդ «սրտահույզ պատմության» մեջ կարևոր է նկատում ոչ այնքան հարազատների անմարդկային վարվելակերպը, որքան հայ գեղջկուհու հոգեկան մեծ ուժը։ «Այս պատմության մեջեն,—իբրև եզրահանգում գրում է հեղինակը,— անուշ ու սրտապնդող խորհրդանշանի մը պես, դուրս կուգա պատկերը այդ կնոջ, որուն հոգեկան ուժը մխիթարանքի սքանչացում կ՚առթե»[1]։ Սքանչանալու առիթ է տեսնում Լ. Բաշալյանը հայ կնոջ բնավորության մեջ նաև «Երկու կիներ», «Անժել» և այլ գրվածքներում։

«Երկու կիներ»-ը, հեղինակի բնութագրմամբ, մի պատկեր է «Ղալաթիո սալահատակեն»։ Այդ սալահատակին մի

[1] Լ. Բաշալյան. Հոգեկան ուժ, «Հայրենիք», 1894, № 903։

տեղ հնամաշ ակորդեոն է նվագում մի կին, որի երկու փոքրիկ աղջիկները պարում են և սպասում անտարբեր անցորդների վարձատրությանը: Հեռուներից եկած թափառաշրջիկ է, թերևս գնչու, որ տխուր ու հոգնած հնչեցնում է «հունգարական աշխույժ ու զվարթ չարդաշ մը»[1], իբրև նվագի ու պարի վարձ ակնկալելով օրապարենի միջոցներ: Հեղինակը նրան չի դատապարտում. ամենազոր կարիքն է ստիպել նրան գոյության կռվում պաշտպանվելու իր ունեցած խղճուկ զենքերով՝ նվագով ու երեխաների պարով:

Նույն սալահատակի վրա, փոքրիկ աղջկա ձեռքից ամուր բռնած, անցնում է մշեցի հայ պանդուխտի կինը: Ավանդական ամոթխածությունը դեմքին, ավանդական տարազով այդ կինը՝ շրջապատի ընդհանուր ոգևորությանը և աղմուկին անուշադիր, գետնից հավաքում և գոգնոցն է գցում փայտի ու քակորի կտորներ, ապա «տխուր պարենը» լրացնելու պես, «փութկոտ քայլերով» հեռանում է:

«Ո՞ւր կերթար, Ղալաթիո ո՞ր զազրելի գուհին խորը, ո՞ր մութ ու մահահոտ խանին անկյունը: Չտեսա: Միայն թե կաճապարեր, որպեսզի գիշերը, երբ իր ամուսինը խան դառնա ցերեկվան տաժանելի հոգնածությանը տակ ընկճված ու ոսկորները կոտրած, կինը կարենար տաք կերակուր մը տալ անոր, Ղալաթիո սալահատակին վրայեն ժողված փայտի կտորներովը»[2]:

---

1 Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 155.

2 Նույն տեղում, էջ 157:

Որքա՜ն խոր ցավ կա այս սեղմ տողերի մեջ, որքա՜ն նախատինք՝ այն հասարակության հասցեին, որ կնոջն ստիպում է կամ նվագելով մուրալ, կամ մարդաշատ փողոցում փայտի ու քակորի փշրանքներ հավաքել։ Բայց կա նաև մի խոսուն ենթաբնագիր, այն, որ հայ կինը պատրաստ է արհամարհել «հասարակական կարծիքը» և իր աշխատանքով, թեկուզ և շատ չնչին, թեթևացնել ընտանիքի հոգսերը։ Հոգու խորքում իսկական «լուռ ցավ» է զգում մշեցի կինը, որոշ պաշար հավաքելով, բանուկ փողոցից ուղղակի փախչում է, գիտե, որ ոմանք «անպատվաբեր» կհամարեն իր արածը, բայց հոգատարությունը ընտանիքի նկատմամբ վեր է դասում ամեն ինչից։ Իր դառն աղքատության մեջ իսկ նա սիրող մայր է, որ ելք է որոնում նեցուկ դառնալու տաժանակիր գործի մեջ «ոսկորները կոտրտած» ամուսնուն և կիսաքաղց երեխաներին։

Ներքնախավերի մարդկանց հոգեկան ուժը և մյուս դրական հատկությունները կանանց մեջ տեսնելը Լ. Բաշալյանի համար պատահական երևույթ չէ։ Հայտնի է, որ հայ կինը կրում էր փաստորեն կրկնակի ճնշում՝ հասարակական և ընտանեկան, ապրում էր գրեթե ստրուկի վիճակում։ Ս. Տյուսաբի վեպերը հենց այդ վիճակի դեմ էին ուղղված, թեև նրանցում շոշափվում է առհասարակ կնոջ էմանսիպացիայի հարցը։ Ա. Արփիարյանը Տյուսաբին քննադատել է այն բանի համար, որ նա լավ չի ճանաչում իրական հայ կնոջը, մանավանդ գեղջկուհուն։ Եվ ահա, մյուս «ութսունականների» հետ միասին, Լ. Բաշալյանը ևս գրականության մեջ է բերում բնաշխարհիկ հայ կնոջ ռեալ կերպարը։

«Հասարակ մարդու» առօրյա հոգսերի և հոգունրբերանգների զարմանալի ճշգրիտ իմացության արդյունք է Լ. Բաշալյանի «Նոր զգեստը», մի հուզիչ ողբերգություն՝ մինատյուր ձևի մեջ։ Բովանդակությունը կարելի է պատմել մի-երկու նախադասությամբ. երկաթագործ Հակոբջանի տաս-տասներկու տարեկան տղան ամաչում է դպրոց գնալ հնամաշ զգեստով, որի համար նրան ծաղրում են։ Ու մինչ հայրը կհասցներ դրամ ճարել և գնել նոր զգեստ, տղան հիվանդանում է ու մահանում։ Ահա բոլորը։

Վ. Գ. Բելինսկին ասել է, թե բանաստեղծություններ կան, որոնց հմայքն անհնար է հաղորդել բովանդակության վերարտադրությամբ, դրանք պետք է անպայման կարդալ, զգալու համար կենդանի ծաղկի բույրը։ Նման մի արձակ բանաստեղծություն է ահա Լ. Բաշալյանի «Նոր զգեստը»։ Հեղինակին հաջողվել է խորապես հուզիչ ու համոզիչ արվեստով դրսևորել հատկապես Հակոբջան աղայի ներքին ապրումները, հանկարծակի բռնկվող ցասումը դպրոց չգնացած որդու դեմ, կոպտության համար խոր ափսոսանքը, հայրական ուրախությունը՝ երեխայի ցանկությունը կատարելու առթիվ և անհուն վիշտը ծանր կորստի համար։ Նախ՝ ինչո՞ւ է այնքան զայրանում Հակոբջանը, որ ապտակում է տղային մեկ օր դպրոց չգնալու պատճառով։ Նրա համար, որ նա պատկանում է այն «ընկերությանը», որի մասին Լ. Բաշալյանը գրել է. «Զարմանալի է, արդարև, թե կրթության կարևորության մտածումն ի՜նչ խոր արմատ կապած է հայ ընկերության ամենահետին խավերուն մեջ իսկ. ամենեն չքավոր հայը, պալըխճի թե բու-

լումպանի (ձկնորս թե ջրհանկիր—Ս. Մ.), իրական ցաւ մը կունենա իր զաւակը վարժարանեն «քաշած հանած» տանն և դպրոցական թոշակին (ուսման վարձի—Ս. Մ.) դժուարութիւնը կամ իր զաւակին մեկ քանի ղրուշի շահը միայն կարդարացնե զինքն հաչս իրեն և օտարներուն: Մեր մեջ կրթութիւնը պարտաւորիչ ընելու օրենքի մը պետքը չպիտի ունենանք ընաւ, գեթ ծնողաց համար»[1]: Այդպիսի ծնող է Հակոբջանը, որի հոգում պաշտամունքի է հասնում սերը ուսման նկատմամբ, ուստի չի կարողանում զսպել զայրույթը, երբ երեխան չի էլ բացատրում, թե ինչու հանկարծ որոշել է դպրոց չգնալ: Բացի այդ, շարքային արհեստավոր է նա, որ դառն քրտինքով է վաստակում կոպեկներ, վճարում ուսման վարձ, իսկ տղան կարծես ջուրն է գցում տանջանքով ձեռք բերված փողը: Ահա թե ինչու տղայի համառ լռությանն ի պատասխան «իր երկաթագործի լայն ու կոշտ ձեռքը այնպիսի ապտակ մը իջեցուց տղուն երեսին, որ Սեդրակ բարձրաձայն լացի և հեծեծանքի մեջտեղ գետինը գլորեցաւ»[2]:

Մոր միջամտությունից ու թախանձանքից հետո, վերջապես տղան խոսում է.

— Ի՞նչ ըրուցեմ, մայրիկ,—ըսաւ վերջապես Սեդրակ արցունքներուն մեջեն,—աս պատռտած լաթերովս ի՞նտոր դպրոց երթամ, ամենքը վրաս կխնդան կոր. անցած օր վարժապետը ըսաւ որ վրադ-գլուխդ քիչ մը շտկել չի տա՞ս: Ամենքը նոր-

1 Նույն տեղում, էջ 74:
2 Նույն տեղում, էջ 98:

նոր հագնվեր են, ես մինակ սաանկ ծվիկ-ծվիկ լաթերով դպրոց կերթամ կոր[1]:

Լացով ասված այս տխուր խոսքերը, որ չեն կարող չհուզել նույնիսկ կողմնակի մարդուն, ուղղակի քրքրում են Հակոբջանի հայրական սիրտը, և ափսոսալով երեխային ծեծելու համար, նա ասում է.

—Մի՛ լար, տղաս, մի՛ լար, դուն վաղը դպրոց գնա նորեն, ես քեզի աղվոր ձեռք մը լաթ կառնեմ, աղվոր-աղվոր կհագնիս:

Եվ սիրտն այնքան լցված էր, որ աչվըները թրջեցան[2]:

Խոստանալը դյուրին էր, բայց գործադրելը՝ չափազանց դժվար: Չէ՞ որ «երկաթագործը, արյուն-քրտինք մտնելով, հազիվ կրնար իր ընտանյացն օրական ապրուստը հոգալ: Ու՞ր տեղեն պիտի կրնար քով-քովի բերել չորս-հինգ մեճիտ, զավկին ձեռք մը զգեստ առնելու համար»[3]: Իսկ առնելը պարտադիր էր: Ու որոշում է սովորականից ավելի աշխատել, սովորականից ավելի խնայել, թեև այդ «սովորականները» գրեթե վերջին սահմանն էին, մի որոշ գումար էլ փոխարինաբար վերցնել մեկից և կատարել տղայի իղձը: Այդպես էլ վարվում է, նոր զգեստը գնում և տղայի ապագա ուրախության հաճույքը սրտում փայփայելով՝ բախում տան դուռը: Եվ ինչ: Երեխան կարմրուկով ծանր հիվանդ պառկած էր և մի քանի օր հետո՝ մահանում է, կրկնակի վիշտ պատճառելով ծնողներին՝

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 99:

որդեկորույս սրտի կսկիծ և դառնագին մորմոք նոր զգեստը չվայելելու առթիվ... Լ. Բաշալյանը ուղղակի բանաստեղծել է Հակոբջանի և նրա կնոջ՝ Էլպիսի վիշտը. անշուք հուղարկավորությունից հետո երեխայի նման լալով Հակոբջանը և կինը լուռ ու անձայն քաշվում են դատարկված սենյակը. «Էլպիս հանըմը ծունկերուն վրա տարածած էր հեգ Սեդրակին նոր հագուստները և զայն կդիտեր թաց աչվըներով:

Երկաթագործն ինքն ալ ձայն չի հաներ: Կնոջը քովը նըստավ, հագուստներուն մեկ մասն իր ծունկին վրա քաշեց, և ինքն ալ սկսավ լռիկ արտասվել:

Իրենց անհուն վշտին մեջ, բան մը չէին գտներ իրարու ըսելու: Վերջապես Էլպիս հանըմը, հեկեկանքի մը մեջ պոռթկալով.

—Ա՜խ, ըսավ, խըսմեթ չեղա՜վ որ հագնի»[1]:

Լավ է ասել Թեոդիկը, «Ամենուն տարեցույցի» մեջ Բաշալյանի մասին գրելով. «Մինչև այսօր ո՞վ կրնա իր «Նոր զգեստը» կարդալ առանց հեծկլտալու»[2]: Հիրավի, մինչև հոգու խորքը հուզելով ընթերցողին, արցունք կորզելով աչքերից, Բաշալյանը ուշադրություն էր հրավիրում «չքավոր ընտանիքների» վրա, մարդկայնորեն հասկանալի նրանց վշտի վրա: Նույն նպատակն է հետապնդում նաև «Ջրի» պատմվածքը, դարձյալ, ըստ հեղինակի՝ մի «պարզ պատմություն», որի կենտրոնական կերպարի մասին ասված են հետևյալ շատ

1 Նույն տեղում:

2 Թեոդիկ, Ամենուն տարեցույց, 1924, էջ 383:

իմաստալից և կողմնորոշող խոսքերը. «Իր պատմությունը կսկծալի էր, սրտի դպչող, պատմություն մը շատ տխուր: ընկերական անարդարության դեմ սրտմտեցնող, զայրացնող, ըմբոստացնող»[1]:

Այդ պատմությունը հատկապես զայրացուցիչ է, ըմբոստության առիթ տվող, որովհետև խոսքը վերաբերում է մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը, այն բանին, որ ընդունակ, խոստումնալից պատանիները, չքավորության և ուսման վատ դրվածքի հետևանքով, հնարավորություն չունեն զարգանալու, առաջադիմելու, դրանով իսկ՝ ծառայելու ժողովրդի ընդհանուր հոգևոր վերելքին: Իհարկե, այս հանգամանքը բխում է բուն պատմվածքի ոգուց և ոչ թե դրա մասին հատուկ զրույց է բացում հեղինակը: «Արթուն ու մտացի դեմքով» մի պատանու պատմությունն է ներկայացնում արձակագիրը. «Շատ քիչ տեսած եմ այդչափ շնորհքով պզտիկ տղա մը: Միշտ մաքուր ու կոկիկ հագնված էր. հագուստները հին էին, բայց պատռվածք մը կամ արատ մը չի կար վրան. Իր խոհուն դեմքին վրա տարիքեն առաջ եկած լրջությունը իր նուրբ ու կանոնավոր դիմագծերուն կուտար պզտիկ զորավոր կամքի արտահայտություն մը». աչք բացելով «թշվառության ու զրկանքի մեծ դպրոցին մեջ», դարձել է ինքնամփոփ, չափավոր, նաև «նուրբ կերպով բարեկիրթ»[2]: Դասերի մեջ «միշտ առաջինն» է: Բայց ահա նյութական նկատառումներով փակվում են գյուղական վարժարանի բարձր դասարանները, իսկ

---

1 Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 198 (ընդգծումը մերն է—Ս. Մ.)

2 Նույն տեղում, էջ 196:

այդ տղան միջոցներ չունի շարունակելու ուսումը մասնավոր բարձրագույն ուսումնարանում: Հայրը գրեթե սնանկացած մանր առևտրական է. «Գլուխը կախ էր միշտ, և օրվան ապրուստի մտմտուքը, որ հիմա մեր խանութպաններուն դեմքը կշարշրկե և տարիքեն առաջ կփոթթե անոնց դիմագծերը, կքած էր անոր հասակը»[1]: Գյուղ թափանցած կապիտալի կուտակման անհեղ մրցումը քայքայել է նրան, ուստի «մեծ բարիք» է համարում, երբ հաջողվում է երեխային ընդունել տալ մի «ազգային հանրային վարժարան», մի կերպ հոգալով երթևեկության ծախսերը: Տղան սովորում է ձրի, իսկ դասընկերները, ըստ էության որևէ չարոգի վարժապետից իմանալով այդ մասին, սկսում են ծաղրել նրան. «Սոսկալի նախատինքի մը պես երեսին նետեր էին այդ «ձրի» բառը»[2]: Բայց այդ դեռ ոչինչ. մի օր, գիշերը վառելու մոմ չունենալու պատճառով, չի կարողանում դասերը պատրաստել. «Դասատուն, որ այդ պաշտոնին գլուխ կգտնվեր եկեղեցիին մեջ աղքատին ձգած տասանոցներուն արդյունքովը, տղուն երեսն ի վեր պոռացեր էր.

—Ամո՛թ է, այստեղ ձրի եկեր ես, պետք է որ քեզ եղած շնորհքը արդարացնես:

Տղան ձայն-ձուն չէր հաներ. իրիկունը տունեն ներս մտած ատենը, լալով մորը գիրկը նետվեր էր, իր ամբողջ էությամբը դողդողալով ու հեծկլտալով, ցավագին հանգ-երգի պես մը մրմնջալով.

— Չէ՛, մեկ մըն ալ չեմ երթար հոն, միսերս ալ կտրես, չե՛մ երթար:

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում, էջ 198:

Ու պզտիկին անհոլի կսկիծին առջև հայրն ու մայրը տեղի
տվեր էին»[1]։

Զոււնևորությունը խորտակում է օժտված երեխայի ապագան, որը դպրոցը թողնելով, սկսում է հոր հետ այցելել շուկա...

Այս պատմվածքում ևս Բաշալյանը հատուկ անդրադառնում է չքավոր այդ ընտանիքի որդու բարեմասնություններին, ընդգծելով, թե նա «թշվառության ու զրկանքի դպրոցին մեջ» շատ ավելի բարեկիրթ էր, «բոլորովին տարբեր այն տղաքները, որք իրենց մեծերեն սորվեր են նստելու և ելլելու մեկ քանի կտոր-բրդուճ կանոններ, որոնց տակ չեն կրնար պարտկել իրենց կոշտ ու գռեհիկ զգացումները»[2]։ Ու հենց մաքուր զգացումներ և փայլուն ընդունակություններ ունեցողն է, որ դառնում է անարդարության զոհը, մի հանգամանք, որ իրոք զայրացուցիչ էր, ինչպես նշել է հեղինակը։ Հատկանշական է, որ գրեթե համանման մի անմեղ զոհ է նաև Գր. Զոհրապի «Այրին» նորավեպի հերոս Ներսեսը. առողջ, առույգ, խելացի այդ տղան աղքատության պատճառով մտնում է «բարեգործական» կոչվող ազգային հիվանդանոցի գիշերօթիկ դպրոցը և չդիմանալով անմարդկային վերաբերմունքին՝ հյուծվում է ու մահանում։ Բաշալյանի անանուն հերոսը ֆիզիկապես կենդանի է մնում, բայց դարձյալ հոգեկան մահացու հարված է ստանում «բարեգործական» դպրոցում՝ մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքից։

---

1 Նույն տեղում։

2 Նույն տեղում, էջ 196։

* * *

Մարդու մարդկայնությունը Լ. Բաշալյանի ստեղծագործության առանցքն է։ Նա մեծատառով Մարդ է համարում բոլոր նրանց, ովքեր, անկախ իրենց ազգությունից, դավանանքից և նյութական կարողությունից, բարի են ու ազնիվ, արդարամիտ ու գթասիրտ, պատրաստ են օգնության ձեռք մեկնել նեղյալին ու կարոտյալին։ Մարդը, ըստ Բաշալյանի, պարտավոր է նախ՝ ջերմ հոգի և պայծառ միտք ունենալ, ապա՝ հոգու ջերմությունից ու մտքի լույսից բաժին հանել թե մերձավորին, թե օտարին։ Մարդը՝ բնության զարդն է, կոչված շնչավորելու կյանքն ու բնությունը։ Մարդկային սերը լի պետք է լինի սիրով՝ նույնիսկ անլեզու կենդանիների նկատմամբ։ Այս միտքն է դրված Լ. Բաշալյանի «Կրիան», «Տերամի որդերը», «Աղավնիներ» ինքնատիպ ստեղծագործությունների հիմքում։

Սովորական ճանապարհորդական նոթերի՝ «Միջերկրականի հիշատակներ» շարքի առաջին գլուխն է «Կրիան»՝ արտասովոր կերպով հուզիչ այդ նորավեպը։ Բնության կողմից պատժված և մարդկանց կողմից մերժված մի շարքային նավաստու հոգեկան անվերջ ծանր ապրումների միայն մի պահն է ընթերցողի ուշադրությանը հանձնում հեղինակը, մի պահ, սակայն, որի մեջ դրված է մի ամբողջ կյանք։ Դա անգլիացի մի նավաստու կյանքն է, որ եղել է հոգեկան տառապանքների շարան։ Փոքրահասակ, տգեղ դեմքով մի կուզ է նա, սապատավոր, որին նավի վրա միշտ ծաղրում են ընկերները, նրա

ռանց այն էլ թույլ ու նկուն «ուսերուն վրա ծանրանալով ու ջանալով ավելի տափակացնել զայն, գետնին հավասարացնելու աստիճան»[1]։ Այսպես են վարվել նրա հետ ամենուր. վաղ հասակից մնացել է որբ, մեծացել օտարի դռներում, կաղմըլածքի ու աղքատության համար եղել «ամենուն ծիծաղին ու արհամարհանքին ենթակա»[2]։ Սուլի կյանքն է ընտրել, որպեսզի հեռու լինի բազմությունից։ Սակայն «Սուլուն, որպես ցամաքին վրա, մարդկային ապուշության զոհ»[3] է, ու տգեղ արտաքինի տակ թաքնված «խանդաղատանքի ամբողջ պաշարը»[4] տալիս է մի փոքրիկ... կրիայի։ Նրա համոզմամբ՝ շունը, կատուն կարիք չունեն այնպիսի մեծ խնամքի ու հոգատարության, որքան կրիան, որն ավելի անզոր է, ավելի անօգնական, զրկված է նավի վրա ինքնուրույն ապրելու միջոցներից, ուրեմն՝ պիտի պահանջվի իր ամենժամյա օգնությունը։ Այս երևույթը Լ. Բաշալյանը համարում է «միամիտ մարդու չնչին ու վսեմ հղացում մը»[5]. վսեմ՝ իր էությամբ, լավ ու բարի գործ կատարելու համար առավելագույն ջանքեր գործադրելու տեսակետից, և չնչին՝ քանի որ իսկապես կրիայի ձագին խնամելը չի կարելի համարել մեծ ու հանրօգուտ։ Կարևորը նավաստու ձգտումների ազնվությունն է, տգեղ արտաքինի տակ թաքնըված գեղեցիկ հոգին, սիրով լի սիրտը, որ բաբախում է ան-

1 Նույն տեղում, էջ 128։

2 Նույն տեղում, էջ 129։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, էջ 130։

5 Նույն տեղում։

գամ մի կրիայի համար։ Եվ կրիան մի տեսակ «մեծանում» է այդ անսահման սիրուց, դառնում խորհրդանիշը մարդկային ջերմության կարիքն զգացողի, թույլի, անզորի։ Նավաստու այդ սիրո մասին հեղինակը գրում է.

—Շա՞տ կսիրեք, ըսի, ձեր կրիան։

—Օ՜հ...

Ուրիշ բան չըսավ, բայց ի՜նչ խանդաղատական շեշտով մը արտասանեց այդ ձայնարկությունը, որուն զորությունը պարզ երկարով մը չեմ կրնար բացատրել այստեղ»[1]։

Բնության ու աշխարհի «չար ուժերի» ծանրությունը կրող նավաստին չի խորհում փոխադարձ չարության մասին, մխիթարանք է գտնում թեկուզ կրիայի նկատմամբ բարի սիրո մեջ, բայց այդ աննշան երջանկությունն անգամ չի կարողանում երկար վայելել։ Եթե ինքը «մարդկային ապուշության զոհ» է, ապա նրա սիրո առարկան զոհվում է նավի վրա գտնվող շանը, որն օգտվելով նավաստու կարճատև բացակայությունից, խժռում է տակավին չամրապնդված կրիայի ձագին... «Լուռ ցավերի» արդեն սովոր նավաստին աղմուկաղաղակ չի բարձրացնում այդ առթիվ, բայց ներքուստ ապրում է անդարմանելի ցավի, կատարյալ աղետի զգացում. «Չկրցավ լալ, բայց արցունքն իսկ պիտի կրնա՞ր սփոփել իր սիրույն այս վայրագ ու բիրտ ոչնչացումը, իր ներսիդին հոբինած գուրգուրանքի շենքին այս քայքայումը»[2]։

---

1 Նույն տեղում, էջ 129

2 Նույն տեղում, էջ 131։

դամ մի կրիայի համար։ Եվ կրիան մի տեսակ «մեծանում» է այդ անսահման սիրուց, դառնում խորհրդանիշը մարդկային ջերմության կարիքն զգացողի, թույլի, անզորի։ Նավաստու այդ սիրո մասին հեղինակը գրում է.

—Շա՜տ կսիրեք, ըսի, ձեր կրիան։

—Օ՜հ...

Ուրիշ բան չըսավ, բայց ի՜նչ խանդաղատական շեշտով մը արտասանեց այդ ձայնարկությունը, որուն զորությունը պարզ երկարով մը չեմ կրնար բացատրել այստեղ»[1]։

Բնության ու աշխարհի «չար ուժերի» ծանրությունը կրող նավաստին չի խորհում փոխադարձ չարության մասին, մխիթարանք է գտնում թեկուզ կրիայի նկատմամբ բարի սիրո մեջ, բայց այդ աննշան երջանկությունն անգամ չի կարողանում երկար վայելել։ Եթե ինքը «մարդկային ապուշության զոհ» է, ապա նրա սիրո առարկան զոհվում է նավի վրա գտնվող շանը, որն օգտվելով նավաստու կարճատև բացակայությունից, խժռում է տակավին չամրապնդված կրիայի ձագին... «Լուռ ցավերի» արդեն սովոր նավաստին աղմուկաղաղակ չի բարձրացնում այդ առթիվ, բայց ներքուստ ապրում է անդարմանելի ցավի, կատարյալ աղետի զգացում. «Չկրցավ լալ, բայց արցունքն իսկ պիտի կրնա՞ր սփոփել իր սիրույն այս վայրագ ու բիրտ ոչնչացումը, իր ներսիդին հորինած զուրգուրանքի շենքին այս քայքայումը»[2]։

1 Նույն տեղում, էջ 129

2 Նույն տեղում, էջ 131։

Մարդկային «պարզ հոգի» և «սիրատենչ սիրտ» պետք է ունենալ, կսկծալու համար այդպիսի մի աննշան կորուստի և առհասարակ կենդանի արարածների անմեղ ու անտեղի զոհ դառնալու առթիվ։ Այս է հաստատում Լ. Բաշալյանը նաև «Շերամի որդերը» նորավեպում։ Տասնամյա մի աղջիկ՝ Տյուրյուկը գուրգուրանքով ու խանդաղատանքով խնամում է հարյուրի չափ շերամի որդեր։ Իրենք թթենի չունեն, բայց տերևներ գտնում է հարևանների երեխաների օգնությամբ, նրանց համոզելով, «փաղաքշական խոսքերով, աղաչանքով, պզտիկ նվերներով»[1]։ Ամբողջ էությամբ հրճվում է որդերի աճման համար, ապրելով «անձառ երանության պահեր», հիացած իր աշխատանքի պտուղներով. «Կերպով մը նախաճաշակն էր այս—գրում է հեղինակը նուրբ հոգեբանի գրչով,—այն անհուն գոհունակության, զոր ապագային պիտի զգար, երբ իր կաթնվը, իր էության խորունկեն մզված կենսական հյութով, պիտի սնուցաներ իր զավակները»[2]։ Եվ ահա արդեն մեծացած և ավելի շատ կեր պահանջող որդերի համար Տյուրյուկը այլևս չի կարողանում թթենու տերև ճարել։ Կենդանիները սովից գալարվում են, տեղի է ունենում «օրհասական ճգնաժամ», որ հեղինակը նմանեցնում է մարդկային աշխարհում ևս «կյանքե ի մահ տանող, էությունե դեպի ոչնչությունը մոտեցնող գերագույն ժամերու ոգորումներուն»[3]։ Փլվում են Տյուրյուկի շքեղ երազները, ջուրն է ընկնում նրա ոգեշունչ աշխատանքը, և նա

1 *Նույն տեղում, էջ 150։*
2 *Նույն տեղում, էջ 151։*
3 *Նույն տեղում, էջ 153։*

ողբում է, ինչպես մայրը՝ հարազատ զավակի մահվան գալարումների պահին։ Դա սովորական վիշտը չէ այն երեխայի, որի խաղալիքը կոտրել են կամ գրքին թանաք թափել. այլ «ընդհանուր թախծություն մը, բուն ցավը, որ հոգվույն ալքերեն կըխի, չափահասի գիտակցական կսկիծ մը, որ գիտե, թե անդարմանելի բաներ կան, որոնց առջև ա՛լ մաքառիլ կարելի չէ ու անձնատուր ըլլալեն ուրիշ միջոց չիկա»[1]։ Գիտե, որ ինքը այլևս անզոր է փրկել մահացող անասնիկներին, առատ ու հորդ աղի արցունք է թափում, բայց և ելք է որոնում։ Ու մեծ եղբայրը (ինքը՝ հեղինակը) նրա թախանձանքով ձեռք է բերում տերևներ, քրոջ աղեկտուր լացը փոխարինելով ուրախության արցունքների։ «Երբոր Տյուրյուկ խենթի պես տերևները ձեռքես առնելով որդերուն վրա նետեց, ցատկեց վզիս փաթթվեցավ։ Հիմա նորեն կուլար, ու չե՛մ գիտեր ինչ խանդաղատանք մըն էր, որ իրմե ինձի կանցներ՝ իր սրտին վրա իմ սիրտս ուռցնելով և իմ արցունքներս խառնելով իր արցունքներուն»[2]։ Դա կյանք ու կենդանություն բերելու խանդաղատանքն է, ուրախության արցունքներ՝ մահին հաղթելու առթիվ։ Դա մարդու մարդկայնության ու մարդասիրության դրսևորումն է, կործանվող կյանքեր փրկելու նրա կոչման իմաստալից խորհրդանիշը։ Մարդկայնությունը պարտադիր չէ, որ երևան գա միայն հասարակական-քաղաքական մեծ իրադարձությունների ժամանակ. այն պետք է ապրի մարդու էության մեջ և դրսևորվի ամեն քայլափոխին, կյանքի բոլոր բնագա-

1 Նույն տեղում, էջ 152։
2 Նույն տեղում, էջ 154։

վառներում, բոլոր մեծ ու «մանր» գործերում։ Բարի, կարեկից ու արդար մարդկային հոգին մանրուքներ չի ճանաչում, ջերմացնում է ամենքին՝ ով կարիք ունի ջերմացնող սիրո ու գթության։ Այս իրողության գեղարվեստական արտացոլման տեսակետից Լ. Բաշալյանի լավագույն ստեղծագործություններից մեկը, անշուշտ, «Աղավնիներ» նորավեպն է։

«Աղավնիները» սկսվում է անանուն մի ծերունու և նրա երկու տարիքավոր քույրերի մենավոր, միակերպ, գրեթե ճգնավորական կյանքի վերաբերյալ մի համառոտ ակնարկով։ Կարծես «անհիշատակ ժամանակներե ի վեր» բնակվում են նրանք գյուղի ծայրի մի առանձնատան մեջ, «որուն կարմիր գույնը բորբոսած բալի երանգներ առած էր հիմա». դուռն ու լուսամուտները միշտ փակ են, որպես «վերջին մնացորդները հին բարքերու և հին ժամանակներու, երբ կյանքը՝ տան մեջ արգելափակ՝ դուրս նայելու կվախնար»[1]։ Ծերունիները մենավորիկ, գյուղից ուղղակի կտրված այդ տան հարմար բնակիչներն են, «ամենեն պատշաճ նկարն այդ շրջանակին»[2]։ Նրանք տանից դուրս են գալիս միայն կիրակի օրերը՝ եկեղեցի գնալու համար, ուր գնում, աղոթում ու վերադառնում են ավանդական դարձած լռությամբ, առանց շուրջը նայելու, համրաքայլ ու գլխահակ, միշտ ոտքերի տակը նայելով, ինչպես ասում են՝ «մրջյուն անգամ չտրորելու» մտահոգությամբ, աշխատելով չգրավել շրջապատի ուշադրությունը, ուշնչով աչքի չընկնել։ «Ու սրտահույզ բան մը կար այդ երեք ծերունիներուն

1 Նույն տեղում, էջ 214։

2 Նույն տեղում։

անցքին մեջ... Անցորդները պատկառանքով կդիտեին այդ կորաքամակ ծերունիներուն անցնիլը, գլուխնին վայրահակ, իբրև թե հողը դեպի իրեն քաշեր զիրենք: Փողոցին մեջ այդ խումբը տարօրինակ տպավորություն մը կթողուր, հին թանգարանի մը պատեն վար առնված ու կենդանացած պատկերի մը տպավորությունը, վերկենդանացում մը անհետացած սերունդի մը, մոռցված բարքերու, սովորություններու, տարազներու, տեսակ մը հարություն վաղնջուց քաղաքակրթության մը»[1]: Անհետացել կամ անհետանում է այդ հին սերունդը, բայց հնօրյա բարոյական պարզ նորմաները, կարգապահությունը, մարդկայնությունը, հարգանքն ու խոնարհությունը, որ հատուկ է եռյակին, երբեք չեն հնանա. ահա դրա համար է, որ մարդիկ պատկառանքով են նայում նրանց վրա, իսկ «ժամուն դուռը կեցող աղքատները վստահ էին, որ երեքն ալ զատ զատ պիտի ստանան իրենց կիրակնօրյա բաժինը»[2]: Ծերունին հիշեցնում է երբեմնի մեծատան նահապետին, որն ունի խորշոմներով ծածկված դեմք, թավ հոնքերի տակ ծածկված աչքեր, որոնց մեջ առկայծում է «ծանր ու դաժան արտահայտություն մը». շատ ցավեր է տեսել, մահը անժամանակ խլել է կնոջն ու միակ զավակին, սիրտը թողնելով «թափուր ու ամայի»[3]: Բայց մռայլ արտաքինի մեջ առկա է մի թաքուն խոր գթասրտություն, մի մարդ է, որի սիրտը չէր կարող մըշտապես մնալ դատարկ: Պատահաբար մի զույգ աղավնի է

1 Նույն տեղում, էջ 215:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

ներս մտնում ծերունու սենյակի բաց պատուհանից և այդ «խորին հանդարտության» մեջ բնակություն հաստատում. Ծերունուն թվում է, թե «այդ ճերմակ ու փափուկ թռչունները եկել էին իրենց գիրգ ու անուշակ անմեղությունն ու զվարթությունը բերել իրեն,—գոգցես հոգիները իր անհետացած սիրելիներուն»[1]: Եվ մի տեսակ «ավելորդապաշտությամբ» նա խնամում է աղավնիներին, որոնց համար սրտի խորքում «սեր մը սկսեր էր, որ հիմակ իր ամբողջ կյանքը կլեցներ»[2]: Այդ սերն աստիճանաբար փթթում է, խորանում. Ծերունու «կյանքին միակ զբաղումը, միակ մտածումը, միակ նպատակը» դառնում են աղավնիները, որոնք տարեցտարի ավելանում են, ավելացնելով նաև ընտելությունը մարդու հետ. խմբովին թառում են գլխին, ուսերին, թևերին, նրա ձեռքերի միջից կտցում կերը. «Ու ինք, թռչուններեն պաշարված, անոնց մեջ կորսված, սիրտը կուռեր հրճվանքեն, իր նայվածքը ա՛լ կկորսնցներ իր հնավուրց ու դժգոհ մարդու խիստ ու դժնե արտահայտությունը, թաց խանդաղատանքով մը լենալով»[3]: Եվ ահա այս անգամ էլ, ինչպես «Կրիան» նորավեպում, Բաշալյանը ցույց է տալիս, որ ծերունին բախտ չի ունենում մինչև վերջ վայելելու գոնե այդ փոքրիկ երջանկությունը: Պատահական հրդեհը մի գիշեր լափում է նրա մենավոր առանձնատունը, քայքայելով «ամբողջ հարստությունը և ծերության օրերուն հանգիստը»: Ճիշտ է, ծերունուն հաջողվում է կրակի դեմ պայքար

1 Նույն տեղում, էջ 216:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 217:

մղելով ազատել աղավնիներին. մոռանալով և՛ տուն, և՛ ունեցվածք, և՛ քրոջ սնդուկը, և՛ ապրուստի վերջին միջոցները, որ հրի ճարակ էին դարձել, նա «խենթ հրճվանքով մը մը կհամբուրեր թռչուններուն գլուխները, գգվելով, շոյելով զանոնք: Հետո ուզեց մեկիկ-մեկիկ համբուրել զանոնք, և հանկարծ ցավագին ա՜խ մը արձակեց:

Աղավնիներեն մին պակաս էր»[1]:

Սերունդների ջանքերով ստեղծված ունեցվածքի, կահկարասիների, հագուստի, բնակարանի կորուստը այնքան չի ազդում ծերունու վրա, որքան այդ մեկ հատիկ աղավնու պակասը: Վերջինս աղետը դարձնում է կատարյալ, ցնցում ծերունուն. խամրում է պատկառանք ազդող խիստ նայվածքը, հագնվում է խառնափնթոր, քայլում երերալով, աչքերն ստանում են տարտամ ու անորոշ արտահայտություն՝ «կենդանութենէ ու իմացականութենէ զուրկ, սովերով լեցուն»[2]: Մարդիկ նրան ամեն օր տեսնում են այրված տան մեջ մոխրակույտերը խառնելիս, սկզբում կարծում են «թե հալած ոսկին կամ արծաթի հետքեր կփնտրեր», իսկ երբ մի անգամ ուղղակի հարցնում են, թե ի՞նչ է որոնում.

— Թռչուններես մին չեմ գիտեր ինչպես կորսվեր է ան գիշերը,— պատասխաներ էր միամտությամբ,—կփնտրեմ, որ թերևս գտնամ մոխիրներուն տակեն[3]:

---

1 Նույն տեղում, էջ 218:

2 Նույն տեղում, էջ 219.

3 Նույն տեղում:

«Աղավնիներ»-ն ավարտվում է նորավեպի ժանրին հատուկ այսպիսի խնկապես անսպասելի վերջույթով։ Ընդորում առաջին հայացքից կարող է թվալ, թե ծերունին ցնցվել, բանականությունը կորցրել է մի չնչին, աննշան կորուստի համար։ Չէ՞ որ այրված առանձնատան մոխիրների մեջ նա որոնում է ոչ թե ոսկի կամ արծաթ, այլ սովորական մի աղավնի... իսկ մի թռչունի կորստյան հարվածը ինչու՞ պիտի պղտորեր շատ փորձանքների դիմացած և փորձված ծերունու միտքը։ Սակայն ծերունու վարմունքը պատճառաբանված է հոգեբանորեն, նորավեպի գեղարվեստական ամբողջ հյուսվածքով։ Ինչպես տեսանք նորավեպի վերլուծությունից, ծերունին հենց սկզբից ներկայացվում է որպես դառն ճակատագիր ունեցող հոգեպես շատ տառապած մի անձնավորություն, որին «չար բախտը» մեկուսացրել է հասարակությունից, դատապարտել մենավոր, լուռ ու տխուր կյանքի։ Դատարկվել, ամայացել է նրա երբեմնի լի սիրտը, և այդ ամայությունը ժամանակի ընթացքում լցվել է միմիայն աղավնիների սիրով, որոնք դարձել են նրա միակ մխիթարանքը և սփոփանքը, սպանիչ ձանձրույթի փարատողը, աշխարհի ու բնության հետ միացնող շղթան։ Շղթայի թեկուզ մի օղակի կտրվելն էլ լիովին բավական էր, որպեսզի ծերունին հոգեկան մի նոր և լուրջ հարված ստանար։ Բայց նա ամենևին էլ չի ընկալվում իբրև սովորական ցնորված, խելագար արարած։ Ընդհակառակը, ծերունական անիմաստ որոնումներն անգամ յուրովի հուշում են երբեմնի մեծ սրտի տեր, բարի ու մարդասեր անձնավորության մասին, որին կենդանի շունչը, թեկուզ աղավնու կեր-

պարանքով, ավելի է հուզում քան անկենդան ու անշունչ առանձնատունը, սնդուկը, կահ-կարասին, ողջ ունեցվածքը։ Հրդեհը ոչնչացնում է «վաղնջուց քաղաքակրթության» մի յուրօրինակ միջնաբերդ, բայց անանուն ծերունին ներկայանում է որպես այդ քաղաքակրթության բարոյական պարզ ու վսեմ նորմաների կրողը. իսկ նրան հասած վերջին հարվածը խորին ցավ ուափսոսանք է առաջ բերում ընթերցողի սրտում։ Աղավնիների մասին շատ են գրել բանաստեղծները, արձակագիրները (օրինակ՝ Հովհ. Թումանյանի «Աղավնու վանքը», Վ. Թոթովենցի «Աղավնիները» և այլն), բայց Լ. Բաշալյանի նորավեպը իր տեսակի մեջ ամենահուզիչն է և մնայունը։

ՍԻՐՈ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ «ԴՐԱՄԱՆԵՐ»

Ռեալ կյանքից առնված իր քրոնիկներից մեկում Լ. Բաշալյանը գրել է. «Անկարելի է ուրանալ, որ հայ ընկերության մեջ ընտանեկան և սիրո տռամները (դրամաները—Ս. Մ.) ժամանակե մը ի վեր ավելցած են կսկծալի համեմատությամբ մը»[1]։ Իբրև օրինակ, նույն քրոնիկում պատմում է, թե ինչպես 20-ամյա մի վարժուհի խաբվելով ու լքվելով «բարձրաստիճան մեկից», թույն է ընդունում ու մահանում։ Իրականության մեջ տեղի ունեցող նման դեպքեր է մատնանշում նա նաև «Սրտեն զարնված», «Ուրիշ մըն ալ», «Կյանքի խորտակումներ», «Սերը երդիկներուն տակ», «Ընտանիք» և շատ ուրիշ քրոնիկներում ու հոդվածներում։ Արհեստավոր տղան ու նույն խավի աղջիկը սիրում են իրար, սակայն աղջկա հայ-

---

1 Լ. Բաշալյան, *Մեռելի մը վրա*, «Հայրենիք», 1894, № 854։

րը գտնում է ուրիշ փեսացու, կատարվում է բռնի ամուսնություն, աղջիկը ենթարկվում է, բայց առաջին սիրո ցավից գերեզման է իջնում («Ուրիշ մըն ալ»)[1]: Անգործ թրև եկող և հարբեցող երիտասարդը մաքուր սիրո ազդեցությամբ սթափվում է, սկսում ազնվորեն աշխատել, միջոցներ ստեղծել ամուսնանալու համար. մինչդեռ հարազատները, նրա վաստակին աչք տնկած, հազար ու մի խորամանկ ու խարդախ հնարներով ստիպում են նշանը ետ տալ. աղջիկը վշտից մահանում է, տղան՝ նորից ընկնում գինետները («Կյանքի խորտակումներ»)[2]: Դեռահաս աղջկա թաքուն սերը ծաղրում, «բերնի ծամոն» է դարձնում նրա վարժապետը (սիրային նամակ գտնելով նրա տետրում), իսկ աշակերտուհին բարոյական ցավից անկողին է ընկնում ու մահանում. «Ամեն անգամ,— գրում է Լ. Բաշալյանը,— որ այս մահը միտքս կուգա, խորին բան մը կը զգամ, որուն մեջ չեմ գիտեր, թե ցա՞վը ավելի տեղ կը բռնե, թե՞ զայրույթը»[3]: Ե՛վ ցավի, և՛ զայրույթի զգացումներով է արձակագիրը դատապարտում նման երևույթները, «լոկ շահու վրա հիմնված ընտանիքի»[4] անկենսունակությունը, այլանդակությունները: Ֆրանսիական մի պիեսի բեմադրության առթիվ նա այն միտքն է հայտնում, թե բավական է, որքան «էրիկ-կնկա» պարտավորությունները հոլովելով գրականությունը ներկայացնում է նրանց դժբախ-

---

1 «Հայրենիք», 1894, № 882:

2 «Հայրենիք», 1894, № 961:

3 Լ. Բաշալյան, *Սրտեն զարնված*, «Հայրենիք», 1894, № 875:

4 Լ. Բաշալյան, *Ընտանիք*, «Հայրենիք», 1895, № 1333:

նությունը, պետք է դրան հակադրել երջանիկ լինելու նրանց իրավունքը, որ «ավելի մարդկային է»[1]: Այսպիսով, մյուս «ուխտոնականների» հետ միասին Լ. Բաշալյանը հանդես էր գալիս լայնորեն տարածված սիրո վաճառքի, նյութական շարժառիթներով ստեղծված ընտանիքի, մարդկային հույզերը դրամին ենթարկելու արատավոր բարքերի, կնոջ իրավազրկության և բոլոր այն մյուս երևույթների դեմ, որոնք տեղի էին տալիս ծանր ողբերգությունների: Արժե հիշել, որ նման ողբերգությունների արտացոլմանն են նվիրված Ա. Արփիարյանի առաջին իսկ «Կյանքի պատկերները», Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպը, Գ. Զոհրապի լավագույն նորավեպերից մի քանիսը: Ու դրանց շարքում, անկասկած, ուրույն արժեք ու նշանակություն ունեն Լ. Բաշալյանի «Դրացուհին», «Անժել», «Վերջին համբույրը», «Կաղանդչէք» և «Պալքենի Գևորգ» նորավեպերն ու պատմվածքները:

«Անժելը» մասամբ հիշեցնում է Ա. Արփիարյանի «Երանի մը գինը»: Երկու դեպքում էլ երիտասարդ փեսացուները չեն դիմանում սիրած աղջիկների ուխտադրուժ մերժումին և մահանում են վշտի ծանր հարվածից: Երևույթն ընդհանուր էր, և ռեալ կյանքի ճշմարտացի արտացոլումն է երկու ստեղծագործությունների աղերսակցության հիմքը: Ինչ վերաբերում է միևնույն երևույթը ինքնատիպ արվեստով, ինքնուրույն ոգով ու ոճով արտացոլելուն, որը մի գրողին տարբերում է մյուսից, ապա թե՛ Արփիարյանի, թե՛ Բաշալյանի նո-

---

1 Լ. Բաշալյան, «Արձանը», «Հայրենիք», 1895, № 1791:

րավեպերը գեղարվեստական ուրույն արժեքներ են։ Բաշալյանին հաջողվել է կերտել հայ աղջկա մի շատ հմայիչ կերպար՝ ի դեմս Անժելի, որը աղքատության ու ծանր վշտի մեջ իսկ հոգով գեղեցիկ է։ Հեղինակը բնավ չի իդեալականացնում Անժելին, չի թաքցնում նրա թույլ տված սխալները, որոնք ճակատագրական են, սակայն ընդգծում է նրա ապրումների վեհությունը, հոգեկան ազնվությունը և սխալներն ընդունելու ուժը։

Առաջին իսկ հանդիպմանը Անժելը հեղինակի սրտում առաջ է բերում հիացմունքի և կարեկցանքի անխառն զգացում, խոր տպավորություն է թողնում ոչ միայն իր խոշոր մելամաղձիկ աչքերով, նուրբ ու բարեձև կազմվածքով, կանացի նազելիությամբ, այլև լուրջ ու համեստ բնավորությամբ։ «Այդ աչվըները,— պատկերավոր ասում է հեղինակը,— թավախիտ ծառերու ստվերներուն տակ ծածկված խորհրդավոր լճակի մը զգայնությունը կուտային ինձի... Սևը կտիրապետեր իր աչվըներուն մեջ, և սպիտակուցը՝ այդ սևին հարակցությամբ ստվերացյալ՝ անսահման հրապույր մը կուտար անոր... Ամենեն ավելի սրտի կդպեր իր դեմքին անփայլ գունատությունը և հարատև խոնավությունն իր աչվըներուն, որպես թե միշտ արցունք ըլլար անոնց մեջ»[1]։ Հմուտ վարպետի ձեռքով այս խոսուն պատկերը քանդակելուց անմիջապես հետո, Բաշալյանն ավելացնում է. «Երբոր խոսեր, այն ատեն կզգայիր, թե ընկերական լավագույն աստիճանի

---

1 Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 89։

մը սահմանված էր այդ աղջիկը և պիտի կրնար իր կարողություններովը փայլիլ անդ։ Վարժարանն ելած էր անշուշտ, որովհետև մաքուր և անխառն հայերեն կխոսեր, քիչ մը ֆրանսերեն գիտեր և բավական ալ դաշնակ կնվագեր»[1]։ Ամեն մի օրինակելի ընտանիք զարդարելու կոչված այդ գեղանի ու հմայիչ աղջիկը դառնում է ամուսնության և ընտանիք կազմելու հարցում կողմնակի միջամտության, Պոլսում և այլուր կնոջ իրավազրկության, ուղղակի վնասակար սովորույթների անմեղ զոհերից մեկը։ Ճիշտ է, նա չի մահանում, սակայն փաստորեն իրեն դատապարտում է կենդանի մահվան, ցմահ մենակեցության. «Ոչ մեկ փափագ ունիմ, ոչ մեկ փառասիրություն,— տխուր ու համոզիչ տոնով ասում է Անժելը,— սիրտս մեռած է»[2]։ Ու երբ նա ինքն էլ ծանոթացնում է իր կյանքի «տխուր պատմությանը», զգում ես ու հավատում, որ իրոք աշխարհի չար օրենքները փշրել են նրա սիրտը, որը կոտրված ապակու նման այլևս անհնար է կպցնել։ Բաշալյանը հոգեբանորեն ու ճշմարիտ արվեստով հիմնավորել է Անժելի ինքնադատապարտվածությունը, ամենայն մանրամասնությամբ, բայց չափազանց սեղմ ձևով հաստատելով, որ նա այլ կերպ վարվել չէր կարող։

Ոչ շատ բարեկեցիկ և ոչ էլ շատ աղքատ ընտանիքի զավակ է Անժելը։ Վարժարանն ավարտելուն պես, ծնողները որոշում են «ժամ առաջ ամուսնացնել» նրան՝ միակ աղջկան

---

1 Նույն տեղում, էջ 89—90։

2 Նույն տեղում, էջ [illegible]

խախտավոր տեսնելու հույսով և մասամբ իրենց «բեռը թեթևացնելու» նպատակով։ Ու նշանում են մի գրագրի հետ, որը սիրում էր Անժելին մինչև նշանդրեքը. «Լուրջ ու տխուր երիտասարդ մըն էր, — պատմում է Անժելը, — և ժամերով դեմս կնստեր առանց խոսք մը զրուցելու, իր նայվածքին մեջ դնելով սակայն իր բոլոր սերն ու խանդաղատանքը։ Ես զինքը... բոլոր հոգովս չէի սիրեր, բայց շատ կհարգեի»[1]։ Մինչև ամուսնությունը Անժելի ծնողները այդ երիտասարդ Արսենին հայտնում են, թե այլևս համաձայն չեն նրան աղջիկ տալ և պահանջում են նշանը հետ վերցնել։ Հայտնվել էր ավելի հարմար փեսացու՝ «փայլուն ու դյուրակեցիկ երիտասարդ մը»[2], մասնավոր դեղարան ունեցող, բավական լավ վիճակի տեր, գեղեցիկ և կայտառ, «շեն և ուրախ մարդ մը»[3]։ Անժելը թեև «բոլոր հոգով» չէր սիրում Արսենին, սակայն միանգամից չէ, որ համաձայնվում է նշանը հետ տալ, տղայի խնդրանոք նշանի մատանին նույնիսկ պահում է իր մոտ որպես հիշատակ, սակայն իր համոզմամբ տկար է գտնվում և ենթարկվում է ծնողների կամքին՝ նշանվելով երկրորդ անգամ. «Ա՛լ չորս կողմես պաշարեցին զիս, և կարծես մրցման ելած էին Արսենին վրա գեշ զրուցելու համար։ Շատ բարկացկոտ է եղեր. ինքզինք անգամ չկրնար ապրեցնել, ո՞ր մնաց կինը... Սրտիս շատ ծանր եկավ Արսենին բաժնվիլս. մանա-

---

1 Նույն տեղում, էջ 92։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 93։

11—396

վանդ. որ տխուր նախազգացում մը ունեի, թե ինչ ծանր հարված մը պիտի ըլլար այս իրեն: Բայց տկար գտնվեցա: Առջի օրերը բավական դիմադրեցի, բայց հետո ընկճեցա, և ա՛լ դիմադրելու կարողությունս չմնաց: Այնչա՛փ ըսին, այնչա՛փ ըրին, որ խելքս գլխես գնաց»[1]:

Պետք է ասել, որ Անժելի ծնողները չեն ներկայացված որպես ագահ շահամոլներ, որոնք պատրաստ են իրենց դուստրը վաճառել հանուն անձնական երջանկության: Վաճառատան մեջ շարքային պաշտոն ունեցող նրա հայրը պարզապես ձգտում է, որ աղջիկն ավելի բարեկեցիկ կյանք ունենա, առանց հաշվի առնելու առաջին նշանածի անսահման սերը, որն իր ամբողջ խորությամբ ծանոթ չէր նրան: Անժելն էլ չէր զգում այդ սիրո ամբողջ ուժը, թեև ներքին բնազդով գուշակում էր տխուր հետևանքներ: Ու որքան էլ իրենց զավակի նկատմամբ բարի ցանկություններ ունեին Անժելի ծնողները, նրանք փաստորեն պատճառ են դառնում ծանր ողբերգության: Արսենը իր առաջին և մեծ սիրո կորստի ցավին չդիմանալով, ինքնասպանություն է գործում հենց Անժելի աչքի առաջ, իսկ վերջինս խորապես ցնցված այդ դեպքից, երդվում է այլևս ոչ սիրել, ոչ ամուսնանալ: Հույսով ու երազանքով լի երկու երիտասարդ կյանք խորտակվում են մի հարվածով: Ըստ որում՝ Արսենի ինքնասպանությունը որքան լուրջ մեղադրանք է սիրո հարցում կողմնակի միջամտության հասցեին, այնքան էլ համոզիչ է, գեղարվեստորեն պատճառա-

1 Նույն տեղում, էջ 92—93:

բանված։ Նա հրաժարվում է նշանի մատանին ետ վերցնել՝ հուսալով, թե Անժելը կգնահատի իր սերը՝ ու տեսնելով նրան նոր փեսացուի հետ «անփույթ զվարթությամբ» զբոսնելիս, հասկանում է, որ կործանված է այլևս իր սերը, առանց որի ապրելը իր համար անիմաստ էր. «Սովորական մարդ մը չէր ինքը,— ասում է Անժելը,— և թե անփութությամբ չպիտի կրնար տանել իր սրտին տրված հարվածը։ Այն հազվագյուտ մարդիկներեն էր, որք կա՛մ կսիրեն, կա՛մ կմեռնին։ Իրեն համար զիս սիրելը պարզ քմահաճույք մը չէր եղած, հապա սրտի անդիմադրելի պետք մը։ Եվ ես կարևորություն տված չէի՞ բնավ այն ամենուն, ու թեթևությամբ ոտնակոխ ըրած էի զինքը։ Ի՞նչպես չէի հասկցեր իր սիրտը։ Հետզհետե կըմբռնեի իր սիրույն մեծությունը, և այս հետադարձ զղջմանս մեջ, հիմա կսիրեի զինքը, ինձ համար մեռնելե՛ն ետքը։ Դեռ նոր կհասկնայի իր անսահման սերը»[1]։

Այստեղ, իհարկե, չպետք է որոնել ինքնասպանության արդարացում, բայց համոզիչ հիմնավորումը՝ կասկածից վեր է։ Ու նույնքան համոզիչ է նաև Անժելի ինքնադատապարտումը. հավատում ես, որ նա թեև ուշ, բայց զգում է իսկական սիրո վեհությունը, դրա համար էլ անքուն գիշերներ է լուսացնում, սրբությամբ պահում է Արսենի նշանի մատանին իբրև հիշատակ։ Նա հեռացնում է նոր նշանածին, որն, իմիջիայլոց, անմիջապես էլ ամուսնանում է մեկ ուրիշի հետ։ Չի կարելի չհավատալ Արսենի վերաբերյալ Անժելի հետև-

1 Նույն տեղում, էջ 95։

յալ հուզիչ խոսքերին, որ հավերժական սիրո յուրօրինակ ու սրտաբուխ երգի պես են հնչում. «Ա՜լ այնուհետև ինձի համար կարելի չէր ուրիշի մը հետ ապրիլ, նորեն ուրախ զվարթ ըլլալ... Անկից ի վեր բավական տարի անցած է։ Շատերը ուզեցին զիս, և ամենուն մերժողական պատասխան տվի... Անոր հիշատակին նվիրեցի ինքզինքս, և այդ հիշատակովը կապրիմ։ Իրմե այս մատանին միայն մնացած է ինձի, և գերեզմանին մեջ հետս պիտի տանիմ այս մատանին»[1]։

Հեքիաթների մեջ հանդես եկող սիրահար չէ Անժելը, այլ սովորական մահկանացու, մարդկային լիարյուն ու հմայիչ կերպար, որի սիրո դրաման առնված է իրական կյանքից և ուղղված է նույն կյանքի խոցելի բարքերի դեմ։

Նույնը պետք է ասել «Վերջին համբույրը» նորավեպի մասին, որտեղ կամքին հակառակ ամուսնացած աղջիկն է անմիջական զոհ դառնում, սիրած տղայի սրտում թողնելով կսկծացող վերք։ Այստեղ արդեն Բաշալյանը ավելի է շեշտում նյութական շահագրգռվածության դերը դժբախտ ընտանիքներ կազմելու գործում, ավելի ուժեղ է դատապարտում ոչ միայն ծնողների միջամտությունը, այլև երիտասարդ զույգի երկկողմանի պասսիվությունը։ Վերգին Միքայելյանի հայրը խանութպան է և, չնայած աղջկա համառ դիմադրությանը, «ծանր կռիվներին», նրան ամուսնացնում է «լավ կացության տեր» մի ոսկերիչի հետ։ Մինչդեռ Վերգինը սիրում է բժշկա-

[1] Նույն տեղում, էջ 96։

կան վարժարանի ուսանող Տրդատ Պարգևյանին, սերն էլ փոխադարձ է։ Պարգևյանը «շատ սիրած էր այն աղջիկը։ Իր չքավոր և աշխատալի ուսանողության տարիներուն մեջ ան էր եղած միայն իր հոգնությունը մոռցնող ու իրեն արություն ներշնչող պատկերը»[1]։ Ճիշտ է մտածում Տրդատը, թե «ճերմակեղենի խանութպանը, անշուշտ, բժշկական ուսանողին աղքատիկ ներկայեն ու անստույգ ապագայեն նախամեծար պիտի համարեր այդ ոսկերչին դյուրակեցությունը»[2]։ Սակայն ինքը ոչ ոքի ոչինչ չի ասում իր սիրո մասին, անգամ իր մորը, Վերգինի նշանդրությունից առաջ, ինչպես և հետո՝ «դիմում մը, ձեռնարկ մը չըրավ Վերգինի ծնողաց մոտ», թեև աղջկա հայրը «մեծապես կհարգեր զինքը իր պարկեշտ բնավորության համար»[3]։ Աղջկան միայն մեղադրելով ուխտազանցության մեջ, նա լուռ հեռանում է, ավարտելով վարժարանը, դառնում շնորհալի բժիշկ, աղքատների նկատմամբ հոգատար ու մարդասեր, հարուստների մոտ բարեկիրթ, և միշտ անձնվեր եռանդով լցուն դեպի իր գործը։ Տարիներն ու զբաղմունքը մոռացնել չեն տալիս սիրած աղջկա անեղծ ու անջինջ պատկերը, «երիտասարդության առաջին տարիներուն զգացմանց սրբությունը»[4], թեև Տրդատն ու Վերգինը կորցնում են իրար։

---

1 Նույն տեղում, էջ 83։

2 Նույն տեղում, էջ 84։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

Եվ մի գիշեր, երբ բժշկին շտապ կարգով հրավիրում են ծանր հիվանդին նայելու, Տրդատը տեսնում է մահվան անկողին ընկած Վերգինին։ Բաշալյանը ոչ մի տող չի նվիրում Վերգինի ընտանեկան կյանքի նկարագրությանը, առաջին սիրո կորստյան առթիվ կրած տառապանքներին, Տրդատի նկատմամբ մաշող կարոտին, չիրականացված երազանքներին, բայց հոգեվարքի պահին նրա ապրումների դրսևորումը հայելու պես արտացոլում է խորտակված սիրո ողբերգությունը։ Ֆիզիկապես մաշված, ուժասպառ և բանականությունը գրեթե կորցրած Վերգինը Տրդատին տեսնելիս մի պահ ցնցվում է, միտքը պայծառանում. «Գլուխը ետ-ետ գնաց, աչվըները շողացին խնդալիր ճառագայթացմամբ. շրթունքը բացվեցավ՝ մանկական ժպիտ մը ուրվագծելով. «Ա՜խ, Տըրդա՜տ» մրմնջեց նվաղ ձայնով մը, զոր բժիշկն ավելի գուշակեց շրթանցը շարժումեն, քան իմացավ և որ տաք շունչով մը գգվեց իր այտերը, և հուսկ հետին ճիգով մը իր թևերը երկընցնելով, Պարգևյանի վզին փաթթեց զայնս, գլուխը վար քաշելով, այնպես որ անոր շրթունքը եկան հպիլ իր շրթանց, իրենց տամուկ տաքությանը մեջ խառնելով իրեն վերջին համբույրը», իսկ մինչ բժիշկը գլուխն ազատում է նրա թևերից, Վերգինն արդեն մեռած էր. «Իր դեմքին վրա խաղաղավետ անդորրություն մը կտիրեր հիմակ, անճառ երանություն մը գերաշխարհիկ, որ խնդուն հանգստություն մը կպարգևեր այդ մաքուր դիմագծերուն, ցավի հետքն իսկ չթողլով...»[1]։

---

[1] Նույն տեղում, էջ 87։

Մի՞թե այստեղից պարզ չէ, որ Վերգինը շարունակ խորհել է Տրդատի մասին, երազել է գեթ մի անգամ տեսնել նրան, կարոտն առնել, որ նա չի մոռացել սրբազան սերը, որի հետ մահվան մահճում անգամ հանդիպելը նրան թվում է գերերկրային երանություն։

Բաշալյանը չի նկարագրում նաև Տրդատի հոգեկան ապրումները այդ ցնցող հանդիպումից հետո, բայց այդ ապրումների մասին դժվար էր ավելի պարզ ու որոշակի խոսք ասել, քան այդ արված է նրա մոր հետևյալ տագնապալի հարցումների մեջ. «Ի՞նչ է ան, ի՞նչ ես եղեր։ Դուն շատ ավրված կերևաս կոր, երեսդ պատ է դարձեր, մոխիր կտրեր ես, ըսե, ի՞նչ ունիս, սի՞րտդ կխառնվի, իլիմոնաթա մը չինե՞մ. Ճամփան վախցա՞ր, չէ նե մի սիրտդ գեշ եղավ, տակնուվրա եղար, հիվանդը շա՞տ գեշ էր»[1]։

Այսպես ուրեմն, թե Վերգինը և թե Տրդատը տարիներ շարունակ իրար չտեսնելով, իրարից լուր չունենալով հանդերձ, չեն մոռացել առաջին սերը, տառապել են անջատման առթիվ, սրտում փայփայել միմյանց պատկերը։ Սակայն երկուսն էլ այնքան ուժ չեն ունեցել, որ մինչև վերջ մաքառեն իրենց սիրո համար, կանխեն ցավալի դրաման։ Այդպես չպետք է վարվեն երիտասարդները, նրանք իրավունք ունեն և պարտավոր են պայքարել իրենց ընտանեկան երջանկության համար—ահա թե ի՛նչ է ուսուցանում հեղինակը։

Սերը վեհ ու ազնիվ, գեղեցիկ ու սրբազան մի զգացում է,

---

1 Նույն տեղում, էջ 88։

որն, ըստ Բաշալյանի, պետք է պահպանվի աչքի լույսի պես։ Այն թևավորում է մարդուն, մղում առաջ ու վեր, բայց աղարտվելիս կարող է դառնալ տառապանքների աղբյուր։ Եվ աղարտվում է գերազանցապես սոցիալական պայմանների պատճառով։ Ճիշտ է, Բաշալյանը դատապարտում է կողմնակի միջամտությունը և սիրողների անհետևողականությունը, բայց ողբերգության բուն աղբյուրը համարում է սոցիալական կյանքը։ Այս իմաստով առավել նշանակալից է «Դրացուհին» նորավեպը, Բաշալյանի լավագույն գեղարվեստական գործերից մեկը։ Այստեղ կենտրոնական հերոսի սիրո դրամայի միակ հիմքը այն կենսապայմաններն են, որ ժամանակից շուտ, ծաղիկ հասակում գերեզման են տանում նրա սիրած աղջկան։

«Դրացուհին» ընդամենը երեք էջ է, սակայն այդ «փոքր տարածության» մեջ հեղինակը կարողացել է դրսևորել սիրո ամենատարբեր նրբերանգները՝ բուռն հափշտակություն, ուրախություն ու վիշտ, կարոտ ու ափսոսանք, պայծառ երազանք ու պատրանքների խորտակում։ Առաջին հայացքից «պլատոնական» է թվում գրագիր Միհրանի սերը, սակայն իրականում դա մի անաղարտ զգացում է, իդեալական սեր՝ բառիս լավագույն իմաստով։ Իր գրասենյակում աշխատելիս, նա պատուհանից տեսնում է դիմացի տանը, նույնպես պատուհանի առաջ նստած, շոր կարող մի աղջիկ։ Օրեր, շաբաթներ, ամիսներ շարունակ նա նայում է այդ աղջկան։ Կամաց-կամաց մտերմանում են՝ հեռվից-հեռու հայացքներ փոխանակելով, ժպտալով միմյանց, Միհրանը օդային համբույր է ուղարկում, աղջիկը՝ մատով սպառնում է։ Ու դեռ իրար հետ

«լեղու չթրջած», աղջիկը մի օր անհետանում է, և Միհրանը նրան մեկ էլ հանդիպում է արդեն մահացած, դագաղի մեջ գերեզմանոց տարվելիս։ Միհրանը պարզապես չի հասցնում սիրտը բացել աղջկա առաջ, բայց այդ սիրտն արդեն լիքն էր իսկական սիրով։ Չի հասցնում ոչ միայն աղջկա վաղաժամ մահվան, այլև իր բնավորության առանձնահատկության պատճառով։ Միհրանը մանուկ հասակից «խաղաղ ու անմեղ» տղա է եղել և այդպիսին էլ մնացել. «բարի, չափազանց բարի, այն տիպարներե մին, որոց կպատշաճի ժողովրդական նկարագրեղ բացատրությունը՝ «Բերանը ա՛ղ դիր մորթե՛»[1]։ Բարոյապես մաքուր, կանանց հասարակությունից հեռու, գառան պես խոնարհ այդ անձնավորությունը չէր կարող անմիջապես վճռական քայլերի դիմել, չէր էլ ձգտում դեռ դրան, գտնելով, թե հեռակա բարեկամությունը նույնպես երջանկություն է և «այդչափ երջանկությունը կբավեր» իրեն, մանավանդ որ աղջիկն էլ առիթ չի տալիս «մտերմության հանգամանքը փոխելու»[2]։ Բայց այդ իսկական սեր է, որն իր մեջ ամփոփում է և՛ բարեկամություն, և՛ մտերմություն, և՛ երջանկություն։ Միհրանը շեշտում է, թե այդ աղջիկը առաջին իսկ հայացքից թվացել է հենց այն էակը, որի պատկերը ինքը փայփայել է իր սրտում. «Ճիշտ իմ սիրածիս պես էր,—ասում է նա,—քիչ մը նիհարկեկ, խոշոր կապույտ աչվըներով. մազերը դեղին էին, բայց աչքի զարնող դեղին մը, ոսկիի գույն. առջևի կող-

---

1 Նույն տեղում, էջ 43։

2 Նույն տեղում, էջ 46։

մեն այնպես կշտկեր ղանոնք, որ ամբողջ դեմքը կշրջանակվեր պղտիկ խոպոպիկներով. աստվածածնի պղտիկ դեմք մը, որ համբույրի մը մեջ պիտի սեղմեր»[1]։ Երիտասարդի համար աստվածային այդ էակի նկատմամբ նրա սերը նույնքան աստվածային է, անարատ ու ջինջ. իր այդ զգացմունքի մասին լավ է ասում հենց ինքը. «Քրոջ ու աղբոր պես բան մըն էինք եղեր։ Նորեն կըսեմ քեզի, պատուհանե պատուհան գռեհիկ սիրաբանություն մը չէր, ինչպես կպատահի. չէ՛, պարզ բան մը, որ կբավեր իմ հանդարտ սրտիս։ Այդ դեմքին այնպես վարժված էի հեռուհեռե, որ եթե զինքը օր մը չտեսնեի, այնպես պիտի տխրեի, երբ իրիկունը տուն երթալով մորս կամ քրոջս դեմքը չտեսնեի»[2]։ Նախ աստվածածնի, ապա մոր ու քրոջ հետ համեմատությունն անգամ վկայում է Միհրանի սիրո սրբությունը, որի ամբողջ ուժը և մեծությունը նախանձելի վարպետությամբ Բաշալյանը վերարտադրել է այդ երիտասարդի խոր ապրումների, հուզիչ պատմելաձևի, վարքագծի և նույնիսկ շարժումների նկարագրության օգնությամբ։ Միհրանի յուրաքանչյուր բառի մեջ զգացվում է խոր հմայվածություն, լուսավոր սիրո քաղցրություն, կորուստի դառնություն, միայն սիրահարված և մի հարվածով սիրո էակին կորցրած երիտասարդի հոգեբանություն ու ոճ։ Անհուն հրճվանքով է նա ներկայացնում իր երազանքների առարկային, սրտի ցավով է պատմում աղջկա թույլ օրգանիզմի և օրավուր նրան մաշող աշխատանքի մասին։ Աղջկա մահվան առթիվ իր ապ-

---

1 Նույն տեղում, էջ 45։

2 Նույն տեղում, էջ 46։

րումները նա արտահայտում է հոգեմաշ ժպիտով, ինչպես «երազի մը մեջ» խոսելիս, առանց ավելորդ հառաչանքների, բայց ամեն մի հառաչանքից ազդու թախիծով, առանց արցունքների, բայց արցունք կորզող հուզականությամբ. «Այո՛, ինքն էր, դիմացի աղջի՛կը, հոն պառկած, դագաղին մեջ... Մեռա՞ծ մի, այդ աղջիկը. չէ՛, հավատալս չէր գար: Ինձի այնպես կերևնար, որ իրեն կես բաց աչվըները, որոնք դեպի վեր ուղըղված էին, ինձի կնայեին տակավին իրենց խենթեցնող անուշությամբը... Հոն կեցած էի քար կտրած, մարմինս ավելի պաղ՝ պատուհանին երկաթներեն, որոնց կռթնցուցած էի գլուխս... Աչվըներս չէի կրնար կոր բաժնել անոր դեմքեն: Վայրկյան մը չտևեց այս, բայց սա գիտեմ, որ տասը տարվան դեպքեր չպիտի կրնային այնքան ազդել ուղեղիս վրա, որչափ այդ րոպեական թափորը: Ինքնիրմես ելած էի... ու ինձի այնպես կուգար, թե սրտես պատառ մը կտանեին այդ սև մարդիկը»[1]:

Տխուր վախճան ունեցող սիրո պատմությանը «Դրացուհին» նորավեպում ևս Լ. Բաշալյանը զուգակցել է նրբորեն կերտված բնանկարը, որը «մասնակցում է» երիտասարդի տխրությանը: Հեղինակը Միհրանին տեսնում և նրա «սիրո դրաման» լսում է նավի ներքնահարկում, բնության ամպրոպահույզ պահին, միակերպ անձրևի ժամանակ. «Շատ քիչ բան ծանոթ է ինձի այնքան սաստկապես մելամաղձիկ,— ասում է նա,— որքան վերջին շոգենավու մը ստորնահարկը, մանավանդ այդ տեսակ օդով մը... Տեսակ մի արհեստական

[1] Նույն տեղում, էջ 47—48:

գիշեր կտիրե այնտեղ, որուն լուսինն է ձեղունեն կախված լամպարն՝ իր դեղնաշորթ պլպլուքով և որուն աստղերը կկազմեն գլանիկի ծայրերն, որք սրահին ամեն կողմեն կծակեն այդ խավարը»[1]: Մտածմունքի մեջ խորասուզվելու, թմրության չափ ինքնամփոփվածության մղելու այդ մելամաղձիկ մթնոլորտում էլ մեղմաձայն հնչում է Միհրանի սիրավեպը, ընթերցողին պարգևելով, ինչպես Իսահակյանը կասեր՝ «արվեստի երջանկացնող պահեր»:

Իսկ ինչու՞ է տխուր վախճան ունենում Միհրանի այդքան ջերմ ու լուսավոր սերը: Չէ՞ որ նորավեպում չեն նշվում այդ սերը խափանող կողմնակի մարդիկ, չկա ծնողների կամ ուրիշ հարազատների շահադիտական միջամտությունը: Անմիջական միջամտություն ու արգելքներ չկան, սակայն կան սոցիալական ծանր պայմանները, որոնք ծաղիկ հասակում գերեզման են իջեցնում Միհրանի սիրած անանուն աղջկան: Դեռահաս աղջիկը ստիպված է վերջին ուժերն անգամ վատնել վաստակելու համար հանապազօրյա հացը: Նորավեպում այս մասին լայն պլանով չի խոսվում, բայց կան ակնարկներ, կարծեք իմիջիայլոց արված դիտողություններ, որոնք չափազանց խոսուն են և դիպուկ: Միհրանը պատմում է, թե այդ «աշխատասեր պզտիկ աղջիկը» վաղ առավոտից մինչև ուշ երեկո «ասեղը ձեռքեն չէր թողուր», թեև «երեսին գույն չկար», «հիվանդի դեմք ուներ»[2] և հանգստի ու բուժման կարիք... «Հեռակա» ծանոթություն հաստատելով երիտասարդի հետ,

1 Նույն տեղում, էջ 42

2 Նույն տեղում, էջ 145

գիշեր կտիրե այնտեղ, որտեղ լուսինն է ձեղունեն կախված լամպերն՝ իր դեղնաշորթ պլպլուքով և որտեղ աստղերը կկազմեն գլանիկի ծայրերն, որք սրահին ամեն կողմեն կծակեն այդ խավարը»[1]։ Մտածմունքի մեջ խորասուզվելու, թմրության չափ ինքնամփոփվածության մղելու այդ մելամաղձիկ մթնոլորտում էլ մեղմաձայն հնչում է Միհրանի սիրավեպը, ընթերցողին պարգևելով, ինչպես Իսահակյանը կասեր՝ «արվեստի երջանկացնող պահեր»։

Իսկ ինչու՞ է տխուր վախճան ունենում Միհրանի այդքան ջերմ ու լուսավոր սերը։ Չէ՞ որ նորավեպում չեն նշվում այդ սերը խափանող կողմնակի մարդիկ, չկա ծնողների կամ ուրիշ հարազատների շահադիտական միջամտությունը։ Անմիջական միջամտություն ու արգելքներ չկան, սակայն կան սոցիալական ծանր պայմանները, որոնք ծաղիկ հասակում գերեզման են իջեցնում Միհրանի սիրած անանուն աղջկան։ Դեռահաս աղջիկը ստիպված է վերջին ուժերն անգամ վատնել վաստակելու համար հանապազօրյա հացը։ Նորավեպում այս մասին լայն պլանով չի խոսվում, բայց կան ակնարկներ, կարծեք իմիջիայլոց արված դիտողություններ, որոնք չափազանց խոսուն են և դիպուկ։ Միհրանը պատմում է, թե այդ «աշխատասեր պզտիկ աղջիկը» վաղ առավոտից մինչև ուշ երեկո «ասեղը ձեռքեն չէր թողուր», թեև «երեսին գույն չկար», «հիվանդի դեմք ուներ»[2] և հանգստի ու բուժման կարիք... «Հեռակա» ծանոթություն հաստատելով երիտասարդի հետ.

1 Նույն տեղում, էջ 42

2 Նույն տեղում, էջ 145

նա վերջինիս հաճախ «ասեղը ցույց կուտար հուսահատությամբ. այո, կզգայի,— խոր ցավով ասում է Միհրանը,— իր ասեղին մեն մի հարվածը մեկ-մեկ կաթիլ կպակասեցներ իր արդեն պակաս արյունեն: Դեղին էր, ա՜խ, շատ դեղին...»[1]: Այս տողերում մեր առաջ հառնում է մի կերպար, որի նմանի մասին հետագայում Դ. Վարուժանը պիտի հյուսեր իր սրտաբուխ և սրտառուչ «Բանվորուհին», հուզառատ չափատողերում բնարերգելով «գործարան-գեհենի» մեջ տառապող «դժգույն ու քաղցած» համակրելի բանվորուհու վիճակը և զայրույթով նշավակելով նրա կենսահյութերը քամող, ֆիզիկապես և հոգեպես հյուծող սոցիալական կարգերն ու պայմանները: Բաշալյանը ևս, Վարուժանի նման, մեղադրական ճառ չի կարդում, բայց գեղարվեստորեն համոզում է, որ Միհրանի սիրո խորտակման՝ սիրած աղջկա վաղաժամ մահվան պատճառը ծանր կենսապայմաններն են: Ապահով ապրուստ ունենալու, մատաղ ուժերը ճարահատյալ հոգեմաշ աշխատանքի մեջ չսպառելու դեպքում, աղջիկը չէր հյուծվի, չէր թառամի: անժամանակ և տխուր վախճան չէր ունենա մի սեր, որը կոչված էր երջանկություն բերելու:

Ինչպես տեսանք, սիրո պրոբլեմը շոշափող վերոհիշյալ երեք ստեղծագործությունների մեջ էլ Բաշալյանը հիմնական շեշտը դնում է սիրային ողբերգության վրա, ողբերգության համար մեղադրելով և՛ հասարակական կյանքը, իրավակարգը, սոցիալական անարդարությունները, և՛ կողմնակի, շահագի-

1 Նույն տեղում, էջ 146:

տական միջամտությունը, և՛ երիտասարդ զույգերի անհետևողականությունը, նպատակին հասնելու ուժեղ կամքի բացակայությունը: Ու բոլոր դեպքերում սերը նա դիտում է որպես նուրբ ու պայծառ մի զգացում, որը չպետք է երբեք աղարտել, իսկ անաղարտության համար պետք է մաքառել, որովհետև ազնիվ, փոխադարձ սերն է իսկապես ամուր ու երջանիկ ընտանիքի հիմքը:

* * *

Սիրո հասակը Բաշալյանը համարել է մարդկային կյանքի ամենապայծառ, ամենանվիրական և ամենահուզումնալից պահը: Այդ հասակում, ըստ նրա, պարմանն ու պարմանուհին ապրում են «հոգեկան գինովիչ վիճակ», որի նկարագրությունը «կը պահանջե ամենեն սուր հոգեբանությունը, ամենեն վարժ դիտողությունը, ամենեն խայտախարդ ու նկարեն ոճը, ձեռքի այն ճարտարությունը, որ հպելով միայն կանցնի և որոշ ու գեղեցիկ գիծեր կը թողու սակայն»[1]: Հենց այսպիսի վարպետության արդյունք են Բաշալյանի փոքրածավալ «սիրո դրամաները», որոնցից որոշ առումով առանձնանում է «Կա-ղանդչեքը»: Սրա կերպարները ճիշտ այն հասակումն են, ինչ հեղինակը համարում է «կյանքի սխրալի պահ մը», երբ փթթում է առաջին սիրո զգացումը, ու թեև գծված են հպանցիկ, սակայն ճարտար ձեռքի հետքերը խիստ շոշափելի են:

---

1 Լ. Բաշալյան, Նոր գիրքերը, «Հայրենիք», 1895, № 1086:

Գավառից Պոլիս եկած պատանի Հակոբը սովորում է իրավագիտական վարժարանում, Կետիկ փաշայի մի անկյունում սենյակ է վարձել «Համեստ խանութպանի մը տան մեջ» և ապրում է «իր հույսերուն ու գրկանքներուն հետ»։ Ըստ որում «զրկանքները հույսերեն ավելի իրական էին։ Մեկ քանի մանր-մունր դասերե, զորս կրցած էր գտնել, հազիվ-հազ պետք եղածը կվճարեր անոթության ու ցրտե չմեռնելու համար», բայց միաժամանակ՝ «այն ամուր հոգիներե մին էր, որոնք տառապանքի մեջ կմխվին ու նոր ուժ կքաղեն անկից՝ շարունակելու իրենց ճամփան»[1]։

Զուններությունը հզոր մամլիչի պես ճնշում է նրա ունեցը, բայց անզոր է աղարտել «ամուր հոգին», թեև, բնականաբար, հոգեկան ծանր պահեր նա շատ է ունենում, ինչպես բոլոր ունեզուրկները։ Բաշալյանը չի պատկերում Հակոբի զըրկանքներն ու դառն խոհերը, համառ դոռեմարտը աղքատության դեմ, ուժերի գերագույն լարումն ու հոգնությունները։ Բայց այդ ամենը ցայտուն կերպով երևում են, երբ հեղինակը գրում է. «Եթե անդորրության ու խաղաղացման վայրկյաններ ուներ, իր դրացիներուն այցելության գացած իրիկուններն էին անոնք... Հակոբ իր զրգռված ջիղերուն հանդարտությունը կգտներ այդտեղ»[2]։ Դա էր տանտիրոջ՝ «աղեկուկ ու լոլին» դարբին Գևորգի ընտանիքն է։ Դարբնի կինը վախճանվել էր՝ թողնելով երեք որբեր, երկու փոքրիկ տղաներ և մի դեռահաս աղջիկ՝ Աղավնի անունով, որը ոչ միայն մայրաբար

1 Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 220։

2 Նույն տեղում, էջ 220—221։

խնամում է անչափահաս եղբայրներին, այլև «անընդհատ կար կկարեր դուրսի համար, աշխատելով լցնել տանը պետքերը, որոնց չէր հասներ հայրը իր աննշան ավուրչեքով»[1]։ Համեստ, լռակյաց, աշխատասեր այդ աղջիկը գրեթե չի խառնվում նոր և Հակոբի մտերմական զրույցներին, միայն մեկ-մեկ իր վճիտ ու հմայիչ աչքերով նայում է երիտասարդին ու անմիջապես էլ գլուխը կախում։ Դա լուռ սիրո բողբոջն է, որ արմատներ է գցում նաև Հակոբի սրտում, թեև երկուսն էլ, ամեն մեկը յուրովի, չեն էլ մտածում բացատրել իրենց զգացումը։ Եթե Աղավնին լոկ ջերմ հայացքներ է ուղղում Հակոբին, ապա սա «դարբինը կհարգեր, պզտիկները կսիրեր ու կհիանար մանկամարդ աղջկանը վրա, անոր պայծառ համբերատարությանը ու աննվաճելի անխռովությանը վրա»[2]։ Հիացմունքն ու հարգանքը այդ երիտասարդ սրտերում հող ունեն վերաճելու փոխադարձ սիրո, և այդ սերը շուտով դրսևորվում է՝ սրտահույզ կարեկցության, միմյանց լավություն անելու, ազնիվ մարդասիրության ձևով, բոլոր ավյալներն ունենալով ընդունելու իր բնականոն ձևը, որի մասին խոսելը դուրս է հեղինակի նպատակից «Կաղանդչեք» նորավեպում։

Աղավնու ընտանիքը ծանր կացության մեջ է ընկնում նոր տարվա նախօրյակին։ Դարբինը ծանր հիվանդանում է, կտրվում է չնչին եկամուտի աղբյուրը, պահանջվում են բուժման ծախսեր, աղջիկը հազիվ հասցնում է միայն «չոր հաց ճարել»... Հակոբի սիրտը մրմռում է. «Պզտիկները, ի՞նչ պիտի

1 Նույն տեղում, էջ 221։

2 Նույն տեղում։

էլլային պղտիկները տանից պտուղի, ու մանավանդ Աղավնիի սիրտը ի՜նչքան պիտի ուզեր անոնց տալէ մեկ մեկ ափ պտուղ դնել չկարենալուն համար»[1]: Աղավնիի սրտի ցավը մեղմելու ձգտումով Հակոբը դիմում է իր հնարավորությունների համեմատ հերոսական քայլի. Նրա «դրպանը պարապ» է, «վիճակն ալ շատ գեշ», վերջին կոպեկները ծախսել է ձըմռան հագուստ գնելիս, այնքան պարտքեր ունի, որ ամաչում է դիմել որևէ մեկին, սնվում է «պանիր-հացով», ունևոր բարեկամներ չունի... Եվ այսուամենայնիվ դրացուն օգնելու միջոց է գտնում՝ վաճառելով իր ամենանվիրական և միակ ունեցվածքը՝ մի քանի կտոր գրքերը: Ստացած փողով նա գնում է մրգեղեն և նոր տարվա երեկոյան բախում Աղավնու դուռը: Բնորոշ է, որ աղջկա ինքնասիրությունը չվիրավորելու համար, նա սկզբում մրգեղենի ծրարը թողնում է միջանցքում, կարծելով, որ թերևս հարկ չլինի այն մատուցել: Սակայն կաղանդի այդչափ տխուր դիմավորումը դարբնի ընտանիքում, երեխաների խղճուկ վիճակը, Աղավնու շփոթվածությունը մղում են նրան, ներողություն խնդրելուց հետո, սեղանին դնել իր համեստ կաղանդչեքը՝ մի քիչ խնձոր, թուզ, չամիչ, ընկույզ և կաղին: Երեխաների անսքող ուրախությունը անցնում է Աղավնու սրտի միջով և դիմելով երիտասարդին՝

— Ա՜խ, ի՞նչ է աս, մյուսյու Հակոբ, կվայլե՞, ըսավ Աղավնի հուզված ձայնով մը... աս ի՞նչ ձանձրություն... կամընցունեք կոր մեզի... շատ շնորհակալ ենք... ամա... ամա...

---

[1] Նույն տեղում:

— Ասածս սիրուն, օրիորդ Աղավնի, խոսքը մի՛ ընե, չէ նե հիմա կելլամ կերթամ: Ըրածս մեծ բան մը չէ, խոսքը անգամ չարժեր. մեղք են չոճուխները, թող քիչ մը խնդան, ասանկ իրիկուն է[1]:

Հիրավի, «բան մը չէ» Հակոբի նվերը, ընդամենը մի բուռ մրգեղեն... բայց այնպիսի գնով է ձեռք բերվել դա և այնպիսի մաքուր սրտով է մատուցվում, որ համեմատվել անգամ չի կարող որևէ մեծագումար «բարեգործության» հետ: Ի դեպ՝ առանց անուններ տալու, Բաշալյանը փաստորեն Հակոբի բարեսրտության մեծությունը հակադրում է այն «ազգային բարերարների» փոքրոգությանը, որոնք փառասիրաբար որոշ գումար տրամադրելով «ազգին ու եկեղեցուն», ճչում էին բարձրաձայն, աշխարհով մեկ տարածում իրենց «զոհաբերությունը» և փառաբանվում ամենուր: Հակոբը, զոհաբերելով հուսկ վերջին ունեցվածքը, չմտածելով նույնիսկ նոր տարվա իր անձնական ուրախության և վաղվա օրվա մասին, մարդուն զարդարող համեստությամբ է հանձնում իր նվերը, մտքով չի անցկացնում որևէ փոխհատուցում ստանալ: Բայց նույնքան մարդասեր, բարի ու ազնվասիրտ է նաև Աղավնին, լավ գործի համար վերջին ուժերը նվիրաբերելու պատրաստ նույնպիսի մի անձնավորություն: Ուրիշ ոչինչ չունենալով, նա երիտասարդին փոխհատուցում է ջերմացնող հայացքով, շնորհակալության և երախտագիտության սրտաբուխ խոսքերով, աչքերի «անօրինակ խանդաղատանքով»: Իսկ երբ «սիրուն գը-

1 Նույն տեղում, էջ 223:

լուխը» բարձրացնելիս նկատում է Հակոբի «գորովալի նայվածքին տաքությունը» իր ծալ-ծալ մազերի հորդ կոհակներին, «մեկնիմեկ, իր կարի կողովին մեջեն մկրատ մը առնելով անոնցմե փունջ մը կտրեց ու երիտասարդին երկնցնելով, վեհերոտ, դողդոջուն շարժումով մը.

— Կուզե՞ք, ըսավ, աս ալ թող իմ կաղընդչեքս ըլլա»[1]:

Անսպասելի այս վերջույթը, հեղինակային ժլատ և միայն տեղին միջամտությունները, դեպքերի շարժուն ընթացքը, քնարական շունչը «Կաղանդչեքը» նորավեպի բնորոշ կողմերն են, որոնք հատուկ են առհասարակ գրական այդ տեսակին: Նորավեպի միայն մի երկու էջում Բաշալյանը կերտել է երկու անմոռանալի մարդկային կերպար, սիրո հասակը թևակոխած երկու բնորոշ բնավորություն, երկուսն էլ նյութական կարիքից անբաժան, բայց հոգով հարուստ, բարի ու գեղեցիկ: Նրանց ուղեկցում է մի բնական թախիծ, Տերյանի նշած «անուշ տխրությունը», որն ունի միաժամանակ դիպուկ հարվածող ուժ և ուղղված է ժամանակի սոցիալ-տնտեսական կացութաձևի դեմ: Հասարակարգն է, որ շարունակ ճնշում է ունեզուրկներին, դառն արցունք քամելով նրանց աչքերից, իսկ երբեմն էլ ստիպում է շեղվել ճիշտ շավղից, ամենօրյա հոգսերը, ուղղակի «ծով դարդերը» գեթ մի պահ մոռացության տալու միտումով հանձնվել գինարբուքին: Բոլորովին չարդարացնելով ընդհանրապես շվայտությունը, ցավով նշելով «չար աշխարհի» հասցրած վերքերի մրմուռը մոռանալու հա-

1 Նույն տեղում, էջ 224:

մար մարդկանց երբեմնակի սխալ քայլերը, Լ. Բաշալյանը գրել է. «Բարոյախոսը թող պռստե հոնքերը և կծու խոսքեր թող մռմռա: Օ՜հ, այս աշխարհի ամեն ցավերուն, ամեն մտատանջության, ամեն կսկիծներուն մեջտեղ վայրկյան մը մոռացում, ինչ գնով որ ալ ըլլա, շա՞տ է»[1]:

Կարծեք ճիշտ այս հարցի պատասխանն է տրված «Պալըխնճի Գևորգ» ռեալիստական փայլուն պատմվածքում: Կենտրոնական դեմքը՝ ձկնորս Գևորգը, չիրականացված սիրո կըսկիծը մոռանալու նպատակով երբեմն-երբեմն իրեն գցում է «ծխոտ ու գարշահոտ կապելլային անկյունը», չտարվելով սակայն «երկարատև գինարբուքներով»[2], իսկ հետո նաև մի սիրային նամակի համար կանգնում է դատարանի առաջ: Ու դատվող այդ երիտասարդը ներկայացվում է որպես ամենադրական, խիստ համակրելի մի անձնավորություն, որի միակ «մեղքը» կրակված սրտի լափող սերն է: Գևորգը, հեղինակի բնութագրությամբ, ժողովրդական մի ամբողջ խավի «հանրածանոթ ու անփոփոխ տիպարն է», այն խավի, որ սովորաբար ճանաչվում է «ջրհանկիրներ անունով» և որի մեջ մըտնում են ձկնորսներ, հրշեջներ, մանրավաճառներ, նվագածուներ, մանր արհեստավորներ: Այդ դասի մեջ, ինչպես շեշտում է Բաշալյանը, սերը թերևս ամենից ավելի «իր տիրապետող ու անդիմադրելի պահանջումներն ունի, ավելի բնավոր, ավելի ճիշտ ու բնական, ավելի հզոր ու կենդանի, քան թավշապատ

1 Նույն տեղում, էջ 125:

2 Նույն տեղում, էջ 102:

առանձնոցներու եղկ ու յուղաթուրմ մթնոլորտին մեջ»[1]: Այս իրողությունը, ինչպես արդեն տեսանք, մեծ հաջողությամբ ցուցադրված է Բաշալյանի մի շարք ստեղծագործություններում: Ինչ վերաբերում է ձկնորս Գևորգին, ապա նա տուժել, պատարան է ընկել հենց այն պատճառով, որ իրոք նրա սերը հզոր է, կենդանի, անդիմադրելի հոգեկան պահանջմունք: Առույգ ու բարեկազմ, կորովի ու արիասիրտ քսանմեկամյա այդ երիտասարդը սիրել է իրենց տան մեջ սենյակ վարձած Աղավնուն, իր մայրը «այդ ամուսնությունը... հարմար չգտնելով», հեռացրել է աղջկան, որն ամուսնացել է մի երկաթագործի հետ»: «Խենթի պես սիրահարված» Գևորգի համար այդ ամուսնությունը դառնում է մի «ծանր հարված», բաժանման վերքը ապաքինելու փոխարեն, հետզհետե ավելի է կսկծացնում սիրտը. փորձում է նորից կապվել Աղավնու հետ, բայց աղջիկը մերժում է արատավորել իր և ամուսնու պատիվը. Գևորգը մի օր էլ իր լուսանկարը և մի նամակ է ուղարկում նրան՝ «բացատրելով իր սիրույն սաստկությունն և մահու սպառնալիքներ ընելով»[2] Աղավնու ամուսնուն. վախենալով, թե Գևորգի հետագա քայլերը կարող են ծանր հետևանքների հասցնել, Աղավնին այդ նամակը տալիս է իր ամուսնուն. իսկ վերջինս, որ գիտեր արդեն Գևորգի զգացումներն իր կնոջ համար և անոր նախկին սիրահարությունն իր կնոջ հետ, առիթեն օգուտ կքաղե և դատական իշխանության դիմելով ու Գևորգի նամա-

---

1 Նույն տեղում, էջ 103:

2 Նույն տեղում, էջ 105:

կը հանձնվում, պատիվ կպահանջե և ոտնահարիչներուն դեմ ալ պաշտպանություն»[1]: Ու հիմա դատարանում Գևորգն իրեն զգում է պատժված՝ մինչև դատավճիռը, քանի որ պատվախնդիր այդ երիտասարդի համար սերը սրբություն է, սրտի գաղտնիք, մինչդեռ Աղավնին հրապարակ է հանել այն. «Ձըկնորսն ինքզինքը կուտե նստած տեղը... Ծանր է իրեն անշուշտ այդպես հրապարակավ պարզված տեսնել իր սրտին վերքն, ա՛լ բոլորովին կորսնցուցած իր սրբությունը, ամենուն ձեռներուն մեջ աղտոտած, թարշամած, ապուշ հետաքրքրության ճարակ դարձած»[2]: Նա ցավում է սիրելու համար մեկին, որը կարող էր այդպես վարվել սիրո հետ, ուստի դատարանում ուրանում է ամեն ինչ, ժխտում Աղավնու հետ որևէ կապ, թեև ոչ ոքի համոզել չի կարողանում: Աղավնին հասկանում է Գևորգի հոգեվիճակը, ներքուստ թերևս ամաչում իր արարքից և սոսկում է երբեմնի սիրած տղայի երեսին նայելուց: Այս է հիմնականում այն պատմությունը, որ հեղինակն անվանում է «Գևորգին վեպը» և ավելացնում. «Ավասիկ ամբողջ տռամը, իր բոլոր պարզության մեջ»[3]:

Թե ի՞նչ վճիռ կկայացնի դատարանը, ի՞նչ պատիժ կտա Գևորգին—գրողը համարում է անհետաքրքիր, երկրորդական խնդիր և ընթերցողի ուշադրությունը հրավիրում է ձկնորսի նամակի վրա: Եվ միանգամայն ճիշտ է վարվում, որովհետև

---

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

այդ նամակը և նամակի առթիվ Բաշալյանի մեկնաբանությունները «Պալըխճի Գևորգի» էությունն են, մի հուզիչ սիրավեպ՝ դրամատիկ բովանդակությամբ և մանրանկար ձևի մեջ։

Նախքան բուն նամակը ընթերցողին մատուցելը, Բաշալյանը գրում է. «Որչափ ալ կրականին ըմբռնումն ունենանք, երբեք չպիտի կրնանք գրել նամակ մը այդքան ազդեցիկ ու այդքան անկեղծ, երբեք չպիտի կրնանք այդ ձկնորսին զգացումներն հայտնել նույնքան վայրադ բնականությամբ ու իր սերը բացատրել իր հասկցած եղանակովը։ Ուստի, արվեստագետին համար ի՜նչ անսահման հաճույք մըն է, երբ պատահմամբ ձեռք կանցունե այդպիսի առճյուման մը (փաստաթուղթ— Ս. Մ.), որ ընկերության մեջ ամբողջ դասակարգին ներքին աշխարհը կպարզե իրեն առջև այնքան ճշտությամբ»[1]։ Այնուհետև նա մեջ է բերում ամբողջ նամակը, որն իրոք կարդացվում է մեծագույն հաճույքով և ընկալվում իբրև հասարակական որոշակի մի խավի տիպական ներկայացուցիչի ու իր անհատական բնավորությունն ունեցող կոնկրետ անձնավորության հոգեբանության ու մտածողության, զգացմունքների ու դատողությունների ճշմարտից վերարտադրություն։ Բաշալյանն իրեն վերագրում է միայն այդ նամակի առանձին մասերը «մեկնաբանողի» համեստ դերը։ Ու որքան նախանձելի վարպետությամբ, ժողովրդական բարքերի ու լեզվի նրբերանգների խոր իմացությամբ նա ստեղծել է Գևորգի նամա-

---

1 Նույն տեղում, էջ 106։

կը, նույնքան իմաստալից մեկնաբանություններ է տվել դը-
րան։ Խոսքի սեղմության և բովանդակության հարստության հազվագյուտ նմուշ է այդ նամակը, և գրողը այն իրավամբ համարում է «ամբողջ գանձ մը», «ծովու մարդոց ընդածին բանաստեղծություն», որի սկզբում կա ձկնորսի վիրավոր սըրտի կսկիծը հաստատող մի գեղեցիկ ու ազդեցիկ պատկեր. «դանակը սիրտս խոթեցիր, դանակի կեսը սիրտիս մեջ թողեցիր»։ Նամակի մեջ, ըստ Բաշալյանի, ուղղակի փայլում է «ժողովրդական նրբամտությունը», որին հատուկ են թևավոր խոսքերը, սրախոսությունները, առածները։ Դրանց օգնությամբ ձկնորսը կարողանում է արտահայտել իր հոգու բոլոր ելևէջները։ Նախ՝ «գործվական գութն աղքատներուն համար։ Ի՞նչ խանդաղատանքով ֆուխարն (խեղճ, աղքատ—Ս. Մ.) կանվանե Մաննիկը, ինքը որ հարուստ մը չէ սակայն և շատ անգամ երկար չարչարանքով հազիվ օրապահիկը կրնա ճարել»[1]։ Հետո՝ «սիրո զգացմանց նրբությունները և ուժգնությունը», մերթ փաղաքշական խոսքեր («խուշրս», «հոքիս», «խելքըս-միտքս վրադ է»), մերթ սրտաշարժ բացատրություններ, մերթ հին հիշատակների խանդաղատանք, մերթ բուռն սիրո կրքոտ պոռթկումներ։ Բայց Գևորգի նամակում և հատկապես Բաշալյանի մեկնաբանությունների մեջ ամենանշանակալիցը և խորիմաստը երիտասարդ ձկնորսի մի այլ հատկությունն է, որի մասին կարդում ենք. «Եվ ամենեն ավելի գիտեցեք ծովու կոհակներուն դեմ մաքառող այս տղուն գերազանց անվեհե-

1 Նույն տեղում, էջ 111։

րությունը, ներողության համար ունեցած հոժարափույթ պատրաստակամությունը, վտանգին առջև իր գեղեցիկ անտարբերությունն և մահվան դեմ գերագույն արհամարհանքը... մահվան վտանգն ալ աչքն առած է այդ տղան, որ դեռ մանուկ՝ հորը դաշույնին հետ խաղացած է և ներկա գտնված անոր կռիվներուն, և հետո ինքն ալ անոր հաջորդած է՝ ծովուն ու ցամաքին մեջ բաժնելով արկածալից կյանքը»[1]: Հատուկ մեջբերում կատարելով նամակից, ուր Գևորգն ասում է, թե պատրաստ է ձեռք քաշել կյանքից, ինչպես նաև նշելով թերթերի մեջ ընկնելու համար նրա երկյուղը, Բաշալյանը շարունակում է. «Հոգիեդ ինչո՞ւ վաղ անցնիս, քա՛ջ տղա, պետք ես դուն: Լրագիրներուն մեջ անցնելե կվախնայիր, կկարծեիր, որ շա՜տ գեշ պիտի մտածեն քու վրադ: Չէ՛, խեղճ տղա, քու վերդ, քու կյանքդ կարդացողները քեզ նկատմամբ պիտի ունենան շայրույթե տարբեր ուրիշ զգացում մը, որ սակայն կարեկցություն ալ չէ»[2]:

Պատմվածքի ամբողջ իմաստը ամփոփված է ահա այս վերջնամասի մեջ: Սա գրական մի հնարանք է, կարելի է ասել՝ մի գյուտ, որն օգնել է հեղինակին փառաբանելու մարդու ազատ ձգտումները, վտանգի դեմ մաքառելու աներեր կամքը, անընկճելի բնավորությունը, քաջությունն ու անվեհերությունը: Երբ Գևորգին կանգնեցնելով դատական ատյանի առաջ արձակագիրը գրում էր՝ «Քաջ տղա, պետք ես դուն», ժա-

1 Նույն տեղում, էջ 111—112:

2 Նույն տեղում:

մանակակիցները հասկանում էին, թե ո՞ւմը և ինչո՞ւ է պետք խեղդել այդ երիտասարդը: Ժամանակի պատմական իրադրությունը, կոնկրետ պայմանները հրամայաբար պահանջում էին լինել Գևորգների պես արի ու անվեհեր, մաքառման ընդունակ և ինքնապաշտպանության պատրաստ: Իրականությունն այնպիսին էր, որ գնալով սրվում էր հայ ժողովրդի «լինել-չլինելու» բախտորոշ հարցը: Սան-Ստեֆանոյի հաշտագրի 16-րդ հոդվածը, որը պարունակում էր հայերի «նահանգական ինքնավարության» երաշխիք, փոխարինվել էր Բեռլինյան «վեհաժողովի» չարաբաստիկ 61-րդ հոդվածով. դա թվերի պարզ տեղափոխություն, թվախաղ չէր, այլ արևմտյան կեղծավոր դիվանագիտության կողմից հայ ժողովրդի անկախության, ինքնուրույն գոյության արդար իրավունքի բացահայտ ոտնահարում: Անկախություն ստացած Բալկանյան երկրների բախտը չէր վիճակվել նույն ճակատագիրը և բաղձանքներն ունեցող հայ ժողովրդին, չէին իրականացել ազգային-ազատագրական պայքարի բարձրացած արևմտահայության և այդ պայքարի հայրենաշունչ երգն ու վեպը հյուսող Պեշիկթաշլյանի, Ռ. Պատկանյանի, Րաֆֆու և մյուսների հույսերը: Սակայն պայքարի հուրը չէր մարել, բարձրանում էր ազատագրական կռվի մի նոր ալիք, որը թեև նույնպես պիտի փշրվեր՝ բախվելով «քաղաքակիրթ աշխարհի» սառն անտարբերությանը և արյունից շիկացած կեռ յաթաղանին, բայց պահանջում էր առավել համառ, տևական ու անձնվեր պայքար ոչ միայն սուլթանհամիդյան մոլեգնող ռեակցիայի, օր-ավուր սաստկացող ազգային ճնշման, այլև հայազգի աշխարհիկ ու կրոնական իշ-

խանավորների ոչխարային հնազանդության, լուռ հնազանդության, հլու կամակատարության ինքնասպան քարոզների դեմ։ Անա այդ պայմաններում էին գործում հայ ժողովրդի առաջավոր գավակները, գրողներն ու մտքի մշակները, այդ թվում՝ «ուխտանականները» և Լ. Բաշալյանը։ Իհարկե, նա ևս շատերի նըման հասու չէր «տաճկական բռնապետության Սցիլլայի և ռուսական աբսոլյուտիզմի Խարիբդայի միջև» (Էնգելս) գտնվող հայ ժողովրդի իրական ազատության ուղուն ու միջոցներին։ Բայց նա ևս գեղարվեստական խոսքի ներգործուն ուժով ուսուցանում էր զենքի դեմ զենք գործադրել, պալըխճի Գևորգների պես անվախ ու արիաբար մաքառել հանուն մարդկային արժանապատվության և արդար իրավունքի։ Չէ՞ որ այդպիսի անհատներից կազմված հասարակությունը միայն կարող է կռվել ազգային ազատության, ինքնուրույն գոյության և հարատևության համար՝ քանի դեռ աշխարհում թագավորում է «իրավունքը հզորագույնի», քանի դեռ՝ «սահման քաջաց՝ զենք յուրյանց»։ Այս է «Պալըխճի Գևորգ» պատմվածքի գաղափարական հենքը, այն «թաքնված տենդենցը», որն, ինչպես ասվեց, հասկանալի էր ժամանակակիցներին, ուստի ուներ դաստիարակչական էական նշանակություն։ Սակայն այս տեսակետից առավել աչքի ընկնող գեղարվեստական արժեքներ ըստեղծեց Բաշալյանը 1890-ական և 1900-ական թվականներին,

ԱՐԴԱՐ ՄԱՔԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՍԵՐԸ

Անցյալ դարի 90-ական թվականներին մի առանձին վայրագ բնույթ և դրսևորման դաժան ձևեր ստացան սուլթանհամիդյան բռնապետության սոցիալական և ազգային ճնշումները, հատկապես նրա վարած հայահալած քաղաքականությունը։ Ի հակադրություն դրա, նոր թափով ծավալվեցին արևմտահայության ժողովրդական շարժումները, ազգային-ազատագրական արդարացի ելույթները, պայքարը ազատության և մարդկային իրավունքների համար։ Ճիշտ է, այդ պայքարը չպսակվեց հաջողությամբ, սակայն ժողովրդի ազգային զարթոնքի, ընդվզող ուժերի համախմբման և մահացու սպառնալիքին՝ ազգաանհետացման վտանգին դիմագրելու կամք ու կորով դաստիարակելու գործին խոշոր ծառայություն էին մատուցել ու մատուցում էին «ութսունականները»։ Իրենց գործունեության առաջին իսկ քայլերից նրանք սրբազան պարտք էին համարում շարունակ հիշեցնել, որ դիմադրության անընդունակ, հոգեպես ընկճված, թուլակամ անհատները և նման անհատներից կազմված մարդկային զանգվածները դյուրությամբ կարող են կուլ գնալ, անհետանալ, մանավանդ՝ այն

ծանր, մղձավանջային պայմաններում, որ ստեղծել էր թուրքական բռնապետությունը իր հպատակության ներքո գտնվող ազգային փոքրամասնությունների համար։ «Ութսունականները», իբրև ճշմարիտ հայրենասերներ, սկզբից ևեթ հետապնդել ու հետապնդում էին ժողովրդի ինքնագիտակցության, ինքնապաշտպանության, ազգապահպանման կամքի դաստիարակության նպատակը, ձգտելով, որ նա պատրաստ լինի արդար մաքառման։ Իհարկե, ժամանակի խստագույն վարչակարգը և գրաքննությունը թույլ չէին տալիս հրապարակորեն, մամուլում, գրականության մեջ որևէ խոսք ասել ազատության, ճնշման ու հալածանքների դեմ պայքարի մասին։ Տ. Կամսարականը գրել է, թե նույնիսկ իր «Ընկույզին կողովը» նորավեպը, որտեղ ազատ անհատի և ըմբոստության գաղափարը հմտորեն քողարկված է՝ «Գրաքննությունը խղճմտորեն ջարդակոտոր ըրած էր»[1]։ Գրաքննության «ջարդարարության» մասին արդեն խոսել ենք, ուստի «ութսունականների» նախանձելի հմտության ու համարձակության վկայությունը պետք է համարել, որ նրանք որոնում ու գտնում էին իրենց մտքերը, ասելիքները մարդկանց հասցնելու ուղիներ ու հնարներ՝ իմաստալից սիմվոլներ, թափանցիկ պատկերներ, ակնարկներ։ Սկսած 80-ական թվականներից Ա. Արփիարյանը իր խմբագրած պարբերականներում տպագրում էր Րաֆֆու «Խամսայի մելիքությունները», Մ. Յու. Լերմոնտովի ազատատենչ բանաստեղծությունները ու պոեմները («Փախստակա-

[1] Տե՛ս Հ. Մարգարյան, Տ. Կամսարական, 1964, էջ 192։

նը», «Մծիրի» և այլն), Կովկասի լեռնաբնակների խիզախ ու ըմբոստ բնավորությունը շոշափող իր հուշագրությունները («Կովկասի հիշատակներ»), իսկ հետո ստեղծեց նաև «Կարմիր ժամուց» նշանավոր վիպակը, ուր մի անգամ ևս ընդգծված է այն միտքը, թե «գառնուկը գութան չի քաշի»[1], այսինքըն՝ հողն ակոսելու, հաց վաստակելու, ապրելու համար ոչխարային հեզությունը պիտանի միջոց չէ։ Ուշագրավ են Տ. Կամսարականի «Հարոն» և «Ընկույզին կողովը» նորավեպերը, մանավանդ վերջինիս վերամշակված օրինակը՝ «Մերկիկ» վերնագրով, որի կենտրոնական հերոսը՝ ընկուզավաճառ Մերկիկը՝ խոսուն խորհրդանիշն է մարդ-անհատի տիտանական ուժի և մարդու անհատականությունը կաշկանդող շղթաների դեմ հզոր ընդվզումի։ Նկարագրելով Մերկիկի վարմունքը գինետանը, նրա «մոլեգին ու խելահեղ» բռնցքահարվածը և արյունոտված ձեռքը, Կամսարականը գրում է. «Այս Մերկիկը, խելա՞ռ, արյունաթաթա՞խ նույնիսկ, իմ երազներու Մերկիկն էր... Հայ կտրիճը իր մռայլ ճակատագրին դեմ ծառացած ընդոստ՝ իր կռուփին ամեհի հարվածն արձակեր էր, ջախջախելու համար, կարծես, գեհենի ուժերը, որ խափաներ էին արխական իր կոչումը, ու ապրելու համար պահ մը, պահիկ մը գոնե, հսկայի իր խրոխտ կյանքը, զոր ան, բա՜բե, քաշկռտեր էր ցայն վայր, մթին խավերուն մեջ, անփառունակ ու նսեմ։ Ան դեն շպրտեր էր, ահա, վե՜րջապես, ընկույզի իր փուճ կողովը, թոթափեր էր իր պողպատե դաստակը անուր լուծին ամոթեն,

1 «Բանբեր գրականության և արվեստի», Ա. գիրք. 1903, էջ 21։

զարկեր, զարնվեր էր, արյուն փնտրեր էր ու իրենը կուտար այս պահուս ահա, մահվան իսկ հոժար, միայն թե մեռներ քաջագունի մը պես, գեղեցկորեն»[1]։

Բյուրեղի պես թափանցիկ այս միտքն է եղել հեղինակի նպատակը, որի մասին, իհարկե, սկզբնական տարբերակում (1892) նա չէր կարող այսպիսի շոշափելի կոնկրետությամբ խոսել, բայց որը հասկանալի էր ժամանակի ընթերցողներին։

Պետք է հիշատակել նաև Գ. Զոհրապի «Այինկա» նորավեպը, ուր կերտված է «այինկաճի» (ծխախոտի մաքսանենգ) Հակոբոսի ըմբոստ ու արի կերպարը և ընդգծված է հատկապես այդ «լեռներու զավակի» դաշույն ու հրազեն գործածելու հմտությունը, անվախ կռիվները հսկիչ-պահակների դեմ։

Ըմբոստության, խիզախության, պայքարի կոչող Տ. Կամսարականի և Գ. Զոհրապի հիշյալ նորավեպերից առաջ են ստեղծված Լ. Բաշալյանի «Խաչախչին» և «Տերտերին ուխտը» մեծարժեք նորավեպերը, ուստի պատահական չէ, որ տալով արևմտահայ գրականության ընդհանուր բնութագիրը, նշելով Լ. Բաշալյանի անուրանալի ծառայությունները ժողովրդի հոգևոր դաստիարակության գործում, նրա վերոհիշյալ երկու ստեղծագործությունների առիթով է, որ Ա. Արփիարյանը գրել է, թե նա «Ուրիշ պատերազմներու նախազգացությամբ ալ մտահոգ՝ իր պատմվածքներովը ազգին մարմնական կորովը կը պանծացներ ու կը սիրցներ»[2]։ Հիրավի, ժողովրդի պայ-

---

1 Տե՛ս «Անահիտ», 1932, № 5—6, էջ 47։

2 Տե՛ս «Բանբեր գրականության և արվեստի», Բ գիրք, 1904, էջ 175։

քաջանակությունը զարգացնելու, կամքն ու կորովը պանծացնելու և իսկական հերոսության մղելու ուղղությամբ արևմըտահայ «ուխտանականների» շարքում առաջին հաջող քայլեր կատարելու պատիվը պատկանում է Լևոն Բաշալյանին, և դա նրա խոշոր ծառայություններից մեկն է։ Հիշեցնենք, որ Տ. Կամսարականի «Հարոն» և «Ընկուզին կողովը», Գ. Զոհրապի «Այինկան» և «Զաբուղոն» լույս են տեսել 1892-ին, Ա. Արփիարյանի «Կարմիր ժամուցը»՝ 1902-ին (գրված է 1898-ին), իսկ Բաշալյանի «Խաչախչին» և «Տերտերին ուխտը»՝ 1890-ին։

«Տերտերին ուխտը» նորավեպից առաջ, և նույնիսկ հետո, պոլսահայ մամուլի էջերում դժվար է գտնել «կարճ ձևի» այդօրինակ մի փայլուն ստեղծագործություն, որի մեջ այդքան անսքող ձևով և գեղարվեստական ընդհանրացման մեծ ուժով գովաբանվեր հայ երիտասարդի հերոսությունը, զենք գործածելու հմտությունը, զինված պայքարը արդարության համար։

Նորավեպն սկսվում է այն տեսակետի հաստատմամբ, ըստ որի ժողովրդի մեջ ավանդաբար բարձր է գնահատվում իսկական քաջությունը, համարձակությունը, ի չար չգործադրվող ֆիզիկական ուժը.

«Ամբողջ գյուղին մեջ անոր պես կորիճ մը չի կար։ Թորոսենց Ակո՞բը, ո՛հ, յամա՛ն, յամա՛ն։

Երբ գյուղին մեջեն կանցներ իր աշխետ ձիուն վրա նըստած, հրացանը կռնակը և աջ ձեռքին մեջ սանձը ժողված խըրոխտաբար, լայնիրանը ձիուն գավակին վրա շիպ-շիտակ— ամենքն ալ իրարու ցույց կուտային զինքը սքանչացման ու հպարտության շեշտով մը.

— Աստված արևը պահի»[1]։

Հեքիաթների չարի ու անպարտ հերոսներին է ժողովուրդը միշտ արև-կյանք մաղթել, նրանց սխրանքներով է սքանչացել ու հպարտացել, ուստի հենց սկզբից Թորոսենց Ակոբը մեր առաջ կանգնում է որպես իրապատում հեքիաթի դրական հերոս, որի գործունեության մասին ընթերցողը լարված սպասում է լսել։ Այսպիսով, առաջին իսկ նախադասությունները մեզ տրամադրում են դեպի նորավեպի կենտրոնական կերպարը, թեև տակավին ծանոթ չենք նրա կյանքի և գործերի հետ։ Այնուհետև հեղինակը հավաստում է, թե «գեղջուկներու մաղթանքը» աստված իրոք լսում էր, որովհետև Ակոբը չափազանց արկածալից կյանք վարելով հանդերձ միշտ մնում էր անվնաս. «Քսան անգամ քիչ էր մնացեր որ մեռներ և քսան անգամն ալ ազատեր էր»[2]։ Մատաղ հասակից նա խաղացել է հրացանի ու գնդակների հետ, մասնակցել է վտանգավոր որսորդությունների ու անվերջանալի կռիվների՝ լեռներում ու անտառներում, ճանաչում է գավառի բոլոր հովիտները, խորախոր ճամփաները և անանցանելի լեռնապարերը, թեև քսան տարին դեռևս չի լրացել. «Բարձրահասակ չըսաւ տղա մըն էր, արևեն սևցած, քիչ մը նիհար, սև գանգուր մազերով ու կրակոտ աչվըներով»[3]. կյանքի մեծ մասը անցկացրել է տանից դուրս, բավականին ուսում է ստացել վարժարանում,

---

1 Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 113։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

ունևոր ընտանիքի զավակ է և քաջագործություններով հայտնի է ոչ միայն գյուղում, այլև ամբողջ գավառում: Հիմնական զբաղմունքը ծխախոտի մաքսանենգությունն է՝ «այինկաճիությունը», սակայն չի գործում մյուսների նման թաքուն, վախվխելով, մթին գիշերներին, այլ «արձակ-համարձակ, պայծառ լուսնին, լեռներն վար իջած առենը բարձրաձայն երգելով...

Այինկաճը կելլեր կեչեր տաղերի»[1]:

Ակոբի ամենասիրելի զբաղմունքը, սակայն, որսորդությունն է: Ըստ հեղինակի, նա բնության անխառն ու հարազատ զավակն է, նոր «քաղաքակրթության ազդեցութենե զերծ», որսի մեջ անգամ կեղծիք, «նամարդություն» չհանդուրժող, չի սիրում թաքստոցից կրակել կենդանիների վրա, այլ նախօրոք զգուշացնում է վարազին կամ եղնիկին, վազում որսի ետևից և վազքի մեջ էլ խփում անվրեպ: Մի նոր Սասունցի Դավիթ է կարծես հաղթահասակ այդ երիտասարդը, որ չի կարող «գող-գող գալ-գնալ», հեռու է նենգությունից և հույսը դրել է իր արագավազ ոտքերի, հաղթ բազուկների ու շեշտակի հարվածի վրա: Նրա հիմնական հատկությունը՝ անսահման սերն է զենքի նկատմամբ, իսկ զենքը գործադրում է միայն արդարամտորեն. «Իր հրացանը իր սիրուհին էր, գրեթե միշտ անկից անբաժան. ու կըրուցեին, թե մինչև իսկ գիշերը մեկ ձեռքով հրացանը բռնած կքնանար: Պաշտամունքի պես բան

1 Նույն տեղում, էջ 114. «Այինկաճին կուգա կանցնի լեռները» (Թարգմ. հեղինակի):

մըն էր ատիկա; ու վառոդն էր խունկը, զոր կմատուցանէր իբր նվեր այդ սրբության»[1]: Եվ իր այդ պաշտելի հրացանով նա միայն ծխախոտի մաքսանենգությամբ ու որսորդությամբ չէ, որ զբաղվում է, այլ «Իր գեղին պահապանն էր նաև... Երբ գյուղացիները իմանային, թե Թորոսենց Ակոբը գեղին չուրջը ման կուգա այդ գիշերը, հանդարտ ու անխռով քուն մը կքնանային: Չէ՞ որ շատ մը դեպքեր կարդարացնեին իրենց վստահությունը այդ քաջարի տղուն վրա»[2]: Նման դեպքերից մեկը հիշատակվում է նորավեպում: Մի ժամանակ գյուղացիները զարմանքով նկատում են, որ եկեղեցու պարտեզի եգիպտացորենը օրե-օր պակասում է: Ակոբը լսում է այդ մասին և մի քանի գիշեր հսկելով բռնում է գողերին՝ «երկու կաղթական Թուրքի», մեկի ականջը ծակում է գնդակով, մատնում փախուստի և ձիերը բռնագրավելով վաճառում է ու գումարը հանձնում եկեղեցուն՝ արդեն գողացված եգիպտացորենի փոխարեն: Ակոբը դրանով իսկ պաշտպանում է արդարությունը, պատժում գողությամբ զբաղվողներին: Թե՛ բնության գըրկում, թե՛ հասարակության մեջ արդարադատ ու համարձակ Ակոբը փաստորեն Լ. Բաշալյանի գաղափարատիպն է, որի գոյությունը ցանկալի էր, բայց որին նմանները համենայն դեպս չէին կարող չլինել հայկական լեռնագյուղերում: Ու այդպիսի խիզախների դեմ էլ ուղղված էին առաջին հերթին սուլթանհամիդյան բռնապետության անլուր կաշկանդումներն ու սահ-

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում, էջ 125:

մանափակումները, իսկ բռնապետության ջրաղացին, կամա թե ակամա, ջուր էին լցնում հայ հասարակության բարձր խավերի ներկայացուցիչներն ու հեզություն քարոզող քրիստոնեական կրոնի սպասավորները։ «Տերտերին ուխտը» նորավեպում, ահա, Ակոբի «անզուսպ եռանդը մարելու» գործով են զբաղվում նրա ունևոր ծնողները և նահանգի «սրբազան առաջնորդ» եպիսկոպոսը։ Բաշալյանը մեղադրական ճառ չի կարդում Ակոբի ծնողների հասցեին, ակնարկում է, որ նրանք իրենց միակ որդուն փորձանքից ազատելու համար են ձգտում նրան դարձնել տնասուն, բայց և հասկացնում է, որ նրա հայրը՝ Հաճի Աբթին աղան չարիք է համարում իր զավակի նմանների գոյությունը։ Երբ նա ամուսնացնում է որդուն, բայց դարձյալ չի կարողանում կտրել նրան զենքից ու քաջագործություններից՝ «Ան ատեն էր,— ասում է Բաշալյանը,— որ Հաճի Աբթին մտածեց, թե մեծ չարիքներուն մեծ դարմաններ պետք են»[1]։ Ու «դարմանն» էլ տեսնում է որդուն քահանա ձեռնադրելու մեջ... Որքան քաջարի, այնքան էլ ծնողասեր ու բարի երիտասարդը սրտի խոր ցավով, լալով համաձայնվում է դառնալ քահանա, իսկ ձեռնադրողը արարողության պահին նրան երդվել է տալիս.

— Ուխտ ըրե, որ ալ ձեռքդ հրացան չառնես։

Նորընծան գլուխը վեր առավ, անբացատրելի նայվածքով մը նայեցավ հորը, որ եպիսկոպոսի մոտ կանգնած էր, ու տըկար ձայնով մը.

---

1 Նույն տեղում, էջ 116—117։

— Կուխտեմ, սրբազան, բսալ։

Ու աչքերը լեցան»[1]։

Հովհ. Թումանյանի աննման ձևակերպմամբ հանրածանոթ է Ցիրցուսու այն միտքը, թե

Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին,
Թե չլինի կինն ու գինին։

Ակոբին չեն հաղթում ոչ կինը, ոչ գինին, մինչդեռ «կնոջ ինել չկրցածը եկեղեցին բրավ»[2]—ցավով ու ցասումով գրում է Բաշալյանը։ Նախկին տենդոտ, անհանգիստ, համարձակ երիտասարդը, հիմա արդեն Տեր-Մեսրոպ քահանան, դառնում է հանդարտ, անձայն ու անշշուկ, լուռ ու տրտում մի անձնավորություն՝ «տեսակ մը թմրության մեջ խորասուզված»։ Աստիճանաբար նիհարում է, տկարանում, ներքնապես ըմբոստանում, բայց այս անգամ էլ դրսևորում է մարդկային հզոր մի կամք՝ սրբությամբ պահում է տված երդումը, բավարարվելով միայն ցավագին հայացքներ նետելով «իր սիրեկան հրացանին, որ պատին վրա կժանգոտեր հիմա»[3]։ Գերբնական ուժով նա դիմանում է «ահավոր ու անողոք» վիճակին, աստիճանաբար թեաթափվում. «Քիչ քիչ աշքի ընդվզումներն ալ չունեցավ։ Իր բախտին համակերպեցավ և անվեհեր որսորդեն ու խաչախչեն տխուր ու աննշան մարդ մը մնաց, որ կընունք կըներ ու մեռել կթաղեր»[4]։

---

1 Նույն տեղում, էջ 117։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 118։

4 Նույն տեղում։

Որքան խանդավառությամբ ու գորովանքով է Բաշալյանը նկարագրում Ակոբի կյանքը ազատ բնության ծոցում, գազաններ որսալիս, գողեր բռնելիս, «այինկաճներին» հետևող պահակների դեմ կռիվ մղելիս, նույնքան դառնությամբ ու զայրույթով է ներկայացնում նրա՝ Տեր-Մեսրոպի պես հլու-հնազանդ արարած դարձնելու պատմությունը։ Անվնաս է Տեր-Մեսրոպը, բայց նրա գործը կարող էին կատարել շատ-շատերը, անվնաս էր նաև Ակոբը, բայց իր հանրօգուտ գործով՝ եզակի և անփոխարինելի։ Նրան քահանայացնելը հավասար է մարդասպանությունից էլ վատթար հանցագործության, իսկ «մեծ չարիքի» դեմ «դարման» որոնող Հաճին իր բարեկամ եպիսկոպոսի հետ իրականում կատարում են մեծագույն չարագործություն։ Տեր-Մեսրոպը երեք տարի շարունակ հրացան ձեռքը չի վերցնում, սակայն մի օր հարևան գյուղից վերադառնալիս տեսնում է մի անվարժ որսորդի պարապ կրակոցները և այլևս չհամբերելով հրացանը հափշտակում է գյուղացու ձեռքից ու տասներկու կրակոցով խփում է տասներկու տատրակ... Տուն վերադառնալիս տատրակները եփում է և հրամցնում հյուր եկած այն եպիսկոպոսին, որն իրեն քահանա էր ձեռնադրել և երդվեցրել՝ այլևս զենք չգործածել։ Նրբին մի հեգնանքով է Բաշալյանը պատկերում այդ եպիսկոպոսի ճաշկերույթը, դրսևորելով հումորի զարմանալի խոր զգացում, միայն մի քանի տողում տալով «իր փորի» համար ամեն քայլի ընդունակ կրոնավորի ամբողջական, սպառիչ բնութագիրը։ Նորավեպում կես էջից էլ պակաս տեղ գրավող այդ հատվածը, իհարկե, լիովին մերված է ամբողջությանը, բայց և այնպես կարելի է համարել

մի չքնաղ երգիծական քրոնիկ, որի նուրբ հյուսվածքի մասին դժվար է գաղափար կազմել՝ առանց այն կարդալու։ Ահա այդ հատվածը։

«Իրիկունը, սեղանի վրա, երբ մեծ ափսեի մը մեջ տատրակները բերվեցան՝ տակավին ծխաշունչ, կարմրած բրինձին վրա, Սրբազանը թևերը սոթթեց և.

— Հը՛, աս պատվական բան կերևա կոր, հը՛,— մըլտաց անհագ նայվածքով մը, լեզուն բերնին մեջ շաչեցնելով և թուքը կլլելով։

Եվ իրոք, երբ Սրբազանը մեկ քանի պատառով կուլ տվավ ամբողջ թռչուն մը, գովասանական բառերը վերջ չգտան։

— Օ՜ֆ, պատվակա՛ն, պատվակա՛ն։ Եղի պես վար կերթա կոր։ Ես ասանկ համով կերակուր կերած չունեի։ Տերտեր, գիտցած ըլլաս, վաղն իրիկուն նորեն կուզեմ։ Ջուրցն՝ բռնողին։

— Ծառա եմ, Սրբազան, ձենն հրաման կուզե մինակ։

— Ծո, խուլաճ խուլաճ իզին (Թույլատրում եմ—Ս. Մ.), ուզածին չափ թող բռնե։ Ըսե նայիմ ո՞վ է։

— Ձեր խոնարհ ծառան, Սրբազան։

— Ծո վա՜յ թշվառական, դո՞ւն ես։ Է՜յ, ինչ ընենք, ա՛լ մեյ մը ըսած գտնվեցա, ուխտեդ կազատեմ քեզի։ Բայց ասկից ետքը պատվական կտոր մը զարնելու ըլլաս նե, Առաջնորդարան զրկելու չմոռնաս։

Ու երկրորդ տատրակ մը քաշեց առջին»[1]։

Տերտերի ուխտը, այսպիսով, լուծվում է։ Տեր-Մեսրոպը

[1] Նույն տեղում, էջ 119։

մի հարվածով կրկին վերափոխվում է, դառնում նախկին Ակոբը և լույսը շքացված, հրացանն ուսին, հայտնվում անտառում։ Գունատությունն անցնում է, հասակը ուղղվում, աչքերը վառվում են երբեմնի երիտասարդական կրակով։ Առաջին կըրակոցից և առաջին եղնիկին որսալուց հետո՝ «Սկսավ դողդողալով պագնել իր հրացանին բունը, փողը, բլթակը, ու իր խուլական հրճվանքին չկրնալով ատով հագեցում տալ, ափ մը վառոդ առավ և սկսավ ուտել ձեռքին թափթփելով, բեղերուն ու մորուքին մեջ խառնելով, մինչ արցունքի լայն կաթիլները կուգային խառնվիլ փոշիին հետ և իր բերնի վրա, իր ունգերուն բոլորտիքը սև խմոր մը շաղվել»[1]։

Կույր գինամոլության կամ ստրմատենչ մոլուցքի հետ ոչ մի կապ չունի վերոհիշյալ նկարագրությունը, որով և ավարտվում է «Տերտերին ուխտը» նորավեպը։ Դա մարդ-անհատի վերածնության, կաշկանդվածությունից և ազատ ձգտումների սահմանափակությունից դուրս պոկված ուժեղ անձնավորության ուրախության բուռն, անզուսպ պոռթկումն է։ Նույնպիսի մի պոռթկում է Տ. Կամսարականի «Մերկիկը» նորավեպի կենտրոնական հերոսի՝ ընկուզավաճառ Մերկիկի բռունցքի հուժկու հարվածը սեղանին, բողոքի պոռթկում այն բանի դեմ, որ այդ վիթխարահասակ հսկան ստիպված էր շալակել փոքրիկ մի կողով ու շրջել շուկաներում, ասպարեզ և իրավունք չունենալով ըստ արժանվույն դրսևորելու իր ստանական ուժը։ Բաշալյանի Ակոբը երեք տարի ճաշակում է մարդկային անհատականության հանիրավի ճնշման ծանրությունը և այդ

1 Նույն տեղում, էջ 120։

թմրեցնող, սպանիչ վիճակից պոկվելով՝ խոլական հրճվանք է ապրում, որ միանգամայն բնական է։ Ազատության հրճվանքն է դա, ազատ և անկաշկանդ գործելու առթիվ հզոր մի խանդավառություն։ Հայ դասական գրականության ոգուն խորթ են զենքի, հրազենի կույր պաշտամունքը, զինամոլության քարոզը, սպանության վայրենի կոչերը և եթե «Տերտերին ուխտը» նորավեպում նկատվեր նման թեկուզև աննշան մի երանգ, ապա համոզված կարելի է ասել, որ այն տեղ չէր գտնի մեր գրականության ընտիր էջերի շարքում՝ Հովհ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Վրթ. Փափազյանի կազմած «Հայ գրողներ» գրքում (1910 թ.), չէր մտնի «Հայկական նովելներ»[1] ռուսերեն հայտնի ժողովածուի մեջ, որն, ի դեպ, թարգմանված է աշխարհի տասնյակ ժողովուրդների լեզուներով, վերջապես մեր օրերում չէր վերածվի կինոնկարի՝ մեծ հաճույք պատճառելով հանդիսատեսին։

---

[1] Հիշյալ գրքում («Армянские новеллы»), Լ. Բաշալյանի «Տերտերին ուխտը» թարգմանված է «Попранный обет» («Ոտնահարված ուխտ» կամ «Խախտված ուխտ») վերնագրով, որը չի բխում տեքստից և չի համապատասխանում հեղինակի մտահղացմանը։ Ինչպես ասացինք քիչ առաջ՝ Ակոբի լավագույն հատկություններից մեկն այն է, որ նա կամքի ուժ ունի չխախտելու, չոտնահարելու իր տված խոստումը, իր երդումը։ Ճիշտ կլիներ ուղղակի թարգմանել «Обет священника» (կամ «Обет попа»)։

Նույն գրքի այն բաժնում, ուր համառոտ տեղեկություններ են տրվում հեղինակների մասին, ասված է, թե Լևոն Բաշալյանը «Ստացել է բարձրագույն կրթություն Պետերբուրգում»։ Մեզ չհաջողվեց գտնել այդ մասին որևէ ուրիշ աղբյուր, ուստի կենսագրության մեջ չենք նշել, դա համարելով ոչ լրիվին հավաստի տեղեկություն։

Ընդգծելով Թորոսենց Ակոբի սերը հրացանի նկատմամբ, Լ. Բաշալյանը ուսուցանում էր լինել առնական, համարձակ դիմադրել ամեն տեսակ բռնություններին, կարողանալ հարկ եղած դեպքում զենքով պաշտպանվել զենքից, իսկ հարկը բացահայտ էր արդեն։ Ազգային-ազատագրական պայքարի մասին նա չէր կարող ակնարկել այն ժամանակ, երբ ընթերցողների սեղանին էր դնում նորավեպը, բայց հերոսական պայքարի կոչը պարզ հնչում է թե ենթատեքստում, թե բուն բնագրում։

Համեմատաբար մեղմ գույներով և առավել «թաքնված» տենդենցով, բայց սոցիալական և ազգային բռնությունների դեմ համարձակ մաքառելու միտքն է դրված Լ. Բաշալյանի նաև «Խաչախչին» նորավեպի հիմքում։ Կենտրոնական հերոսը՝ երիտասարդ գրաշար Համբարձումը, հոր մահից հետո բազմանդամ ընտանիքը կերակրելու համար ստիպված է դառնալ «խաչախչի», ծխախոտի մաքսանենգ և զոհվում է հսկիչ-դեռերի հետ կռվի բռնվելիս։ Այս է նորավեպի բովանդակությունը։ Բայց այս «համառոտ բովանդակության» մեջ տրված է իրական կյանքի էական կողմերից մեկի ճշմարտացի բնութագիրը, այն կյանքի, որտեղ նյութական կարիքը աշխատանքի մարդկանց դառն զրկանքների, հոգեկան տառապանքների, հաճախ նաև մահվան պատճառ էր դառնում։ Ինչո՞ւ է Համբարձումը ձեռք զարկում արգելված և վտանգավոր ծխախոտամաքսանենգության։ Դպրոցում նա ստացել է նախնական կրթություն, 16 տարեկան հասակում անցել է աշխատանքի, բոլեսալի դարբին հորն օգնի խնամելու մեծ ընտանիքը։ Բայց

ահա մահանում է հայրը, կտրվում է եկամուտի միակ աղբյուրը, սկսվում է ընտանիքի «սև օրը», քանզի հացագործը այլևս հաց չի տալիս առանց կանխիկ դրամի, մսավաճառն ու նպարավաճառը դուռը փակում են դարբնի ընտանիքի առաջ. «Համբարձումի համար տանջանքը սկսավ, նյութական ու բարոյական ահռելի տանջանքը»[1]: Այդ միջոցին նրա մի ընկերը առաջարկում է զբաղվել ծխախոտի մաքսանենգությամբ, որ և ընդունում է՝ «վտանգն աչքն առնելով»: Նյութական կարիքը այն հիմնական ազդակն է, որ Համբարձումին մղում է զբաղվելու խիստ վտանգավոր գործով: Սակայն ամեն ոք չէ, որ կարող է դիմել նման հանդուգն քայլի. «Ծխախոտ փախցնելը Ռեժիի (ծխախոտի մենաշնորհի ֆրանսիական ընկերություն Թուրքիայում—Ս. Մ.) դետերուն խիստ հսկողության տակ՝ դյուրին գործ չէ: Թողե՛ք տուգանքն ու բանտարկությունը, պետք է նաև ամեն վայրկյան մաքառել դետերուն դեմ, և դաշույնն ու ատրճանակը ձեռքե չթողուլ». ու Համբարձումը դառնում է «խաչախչի» նաև այն պատճառով, որ «հանդգնությունը չէր պակսեր քսանամյա պատանիին քով»[2]: Այսպիսով, դատապարտելով սոցիալական կարգերը, որպես չարիքի ու դժբախտության աղբյուր, Լ. Բաշալյանը միաժամանակ զարգացնում է այն միտքը, թե ապրելու համար պետք է նաև մաքառելու ուժ ունենալ, չվախենալ վտանգից և նույնիսկ մահից: Այդպիսին է Համբարձումը, որը շուրջ երեք տարի զին-

1 Նույն տեղում, էջ 50:

2 Նույն տեղում, էջ 51:

ված դետերի դեմ երբեմն կռիվ մղելով, բավականին բարեկեցիկ վիճակ է ստեղծում ընտանիքի համար: Միայն պատահականությունն է, որ այդ երիտասարդին մի անգամ, միայնակ ծխախոտ տեղափոխելիս, գցում է դետերի շրջապատման մեջ: Այդ պահին կայծակի արագությամբ նրա մտքով անցնում է ահագին տուգանքը, որ բռնվելու դեպքում պարտավոր էր վճարել կամ երկար ժամանակով նստեր բանտում, ընտանիքը մատնելով քաղցի, թերևս սովամահության. «Այդ մտածումը ի՛նչ քաջալեր տվավ իրեն, իր երիտասարդական անձնավստահ խիզախության մեջ ի՛նչ անսահման ուժ գըտավ—ինքը միայն կրնա զրուցել»[1], միայն թե տարճանակը ձեռքին դետերին կարգադրում է չմոտենալ իրեն. իսկ դետերը, արհամարհելով միայնակ երիտասարդի պահանջը, մոտենում են նրան ձերբակալելու համար. առանց վարանելու Համբարձումը կրակում է, ապա ինքն էլ կրծքից խոցված ընկնում: Նա գերադասում է ազատության մեջ, զենքը ձեռքին մեռնել, քան թե ընկնել մութ վնդան և հոգեպես տառապել թշվառ ընտանիքին օգնել չկարողանալու ցավից:

«Խաչախաչին» այն նորավեպերից է, որտեղ իբրև «գործող անձ» հանդես է գալիս բնությունը՝ մեծապես ուժեղացնելով երկի թողած տպավորությունը, է՛լ ավելի ընդգծելով այն դըժվարությունները, որոնց բախվում է կենտրոնական կերպարը, առավել ցայտուն դարձնելով վերջինիս անվախությունն ու մաքառման ուժը: Նորավեպի սկզբում Բաշալյանը գրում է.

[1] Նույն տեղում, էջ 52:

«Մութ ու մռայլ գիշեր էր։ Դեկտեմբերի կծու հով մը կոռնար այսահար, հոն, Սկյուտար, Գարաճա-Ահմետի գերեզմանատան նոճիներուն մեջեն, որոնց գալարատանջ հեծեծյունները օդը կլեցնեին»[1]։ Կատաղի քամու ողբաձայն մռնչյունների, «ցրտասարսուռ գիշերվա» տագնապալից աղաղակների տակ ժամերով պետք է սպասեր «խաչախչի» Համբարձումը՝ հանապազօրյա հացը վաստակելու համար։ Նման գիշերը հարմար էր նրա գործին, բայց որքա՜ն ֆիզիկական և բարոյական ուժ էր պետք դիմանալու համար...

Նորավեպի վերջում, Համբարձումի մահվան պահը նկատի ունենալով, հեղինակը գրում է. «Հիմակ հովը դարձյալ կփչեր ամեհի ու արշավասույր հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ։ Բնության տանջանքն էր ատ, անհուն թառանչ մը, ուր առլցված են կարծես ամեն ողբերն ու մորմոքները, բոլոր կոծերն ու հառաչանքները։ Իր ընթացքին մեջ կարծես իր հետ կբերեր իր կըտրած անցած վայրերուն բոլոր ցավի աղաղակները ու հեծկըլտանքները, ու հիմակ ալ ընդքարշ կառներ կտաներ մեռնող երիտասարդին հուսկ հետին խռնչյունը»[2]։

Սա սովորական բնանկար չէ, բնության երևույթների ինքնանպատակ նկարագրություն չէ, այլ շատ իմաստալից և խոսուն մի պատկեր, նորավեպի թերևս ամենանշանակալից մասը, որտեղ քամու հառաչաձայն ոռնոցի մեջ հեղինակը լսում և լսելի է դարձնում մարդկային ողբերն ու մորմոքները, Համբարձումին վիճակակից շատ-շատերի ցավի, տանջանքի, մահվան աղաղակներն ու հեծկլտանքները։

1 Նույն տեղում, էջ 49։

2 Նույն տեղում, էջ 55։

* * *

Հայրենի հողում, ավատա-կալվածատիրական Թուրքիայի բռնակալության լծի տակ հեծող պատմական Հայաստանում ամբողջ մթնոլորտը ցավի աղաղակներով ու մորմոքով հագեցավ, մանավանդ 1895—1896 թթ. հայկական ջարդերից հետո։ Այդ մասին հյուսված բազմաթիվ ու բազմաժանր ստեղծագործությունների առաջին լավագույն նմուշներից են Լ. Բաշալյանի «Կաղանդը» և «Ցեղին ձայնը»։ Խոսելով վերջիններիս մասին, Ա. Չոպանյանը գրել է. «Կաղանդ հոյակապ պատմվածքը..., Ցեղին ձայնը սքանչելի նորավեպին հետ, հայկական ողբերգության նվիրված գրական լավագույն էջերէն է և Բաշալյանի ու մեր նոր գրականության հրաշակերտներուն շարքը կը պատկանի»[1]։ Ուշագրավ է, որ Ե. Օտյանը ևս «Կաղանդը» համարել է «անկորնչելի հրաշակերտ»[2]։ Եվ իրոք, 1898-ի հունվարի 15-ին տպագրված այդ նորավեպ-պատկերը անզուգական գործ է՝ սկզբից մինչև վերջ հագեցված հայրենի հողի անսահման սիրով, սրտի խորքից բխած խոր ցավով՝ հարազատ ժողովրդի ողբերգության առթիվ և անհուն հավատով դեպի ազգային վերածնունդն ու հարատևությունը։

«Կաղանդը» որոշակի սյուժե չունի, չկան գործողություններ ու առանձին կերպարներ։ Հեղինակը պարզապես ներկա-

---

1 Ա. Չոպանյան, Լևոն Բաշալյանը և իր գործը, Լ. Բաշալյանի «Նորավեպեր և պատմվածքներ» գրքում, 1943, էջ ԺԸ։

2 Ե. Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 131։

յացնում է նոր տարին դիմավորելու երկու տարբեր պատկեր՝ մեկը ջարդերից առաջ, մյուսը՝ հետո։ Բայց ամբողջ այդ նկարագրությունը հույզի ու մտքի մի այնպիսի ներդաշնակություն է, որ «Կաղանդը» հնչում է ինչպես հայրենասիրական քնարական բանաստեղծություն, իսկական արվեստ՝ սրտի և մտքի վրա ներազդելու վիթխարի ուժով։

Պանդուխտ-տարագիր էր Լ. Բաշալյանը, փախել էր Պոլսից, ապրում էր Լոնդոնում, երբ գրեց «Կաղանդը»։ Ահա թե ինչու հենց սկզբից հայրենաբաղձ և հայրենասեր գրողի ջերմ ու սրտաբուխ խոսք է ուղղում նա հեռավոր ու հարազատ հայրենի երկրին։ Նրան մի պահ թվում է, թե ինքը երբեք չի եղել այդ երկրում, բայց երբեք էլ չի մոռացել այն. «Սիրտս անոր կերթա մեկեն. ընտանի, սերտ, ներքին բան մը կա անոր ու իմ միջև». միտքը, ըղձանքը, երևակայությունը, հոգին մայրերկրին են կառչած, թեև չի եղել բոլոր բնակավայրերում, լեռներում ու անտառներում, դաշտերում ու հովիտներում, բայց այդ ամենի մասին գիտե, երազել է միշտ, հողը միշտ ձգում է, ինչպես դարերով ձգել է բոլոր պանդուխտ որդիներին։ Երկիրը մեծ է, «ընդարձակ ու բյուրակերպ տարածություն մըն է»[1], տեղանունների մի համախառնում. «Մշո դաշտ, Շատախ, Կարին, Հալավ, Բասեն, Սիփան, Կարմրկապ, Հայոց Ձոր, Լուսոնք, Արածանի, Արտամետ, Գրգուռ, Մորենիկ, Վարդենիս, Բյուրակն, Տավրիկ... Բայց կշփոթվին, իրար կխառնվին, իրարու մեջ կընդելուզվին, ու քիչ-քիչ մեծ անուն մը կմնա

---

1 Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 228։

ամենուն վրա թևատարած—Հ ա յ ա ս տ ա ն»[1]: Վաղնջական ժամանակներից հայ ժողովուրդը ևս ավանդաբար տոնել է նոր տարին, տոնել է ցրտին ու բուքին, սառը ձյան մեջ անգամ գտնելով «տաքցնող բան մը», դառնության մեջ իսկ ժպտալով, բարի օրհնանքը շուրթին և սիրտը «հույսերով լցուն»:

Հայկական տարբեր վայրերի բերքն ու բարիքը, որ պարգևում է «ճոխ ու բարի բնությունը» և ստեղծվում է «ժիր ու չարքաշ մարդերու ձեռքով»—զարդարել են միշտ նոր տարվա սեղանները, միշտ այդ օրը եղել է «Լույս, աղմուկ, ոգևորություն ամեն կողմ»[2], մարդիկ բարի են հիշել և երկար կյանք մաղթել իրար ու նույնիսկ բանող կենդանիներին, իսկ տան մեծավորը, ավանդաբար առաջինը բարձրացնելով նոր տարվա բաժակը, ասել է միայն շնորհավորանքի, օրհնանքի, բարեմաղթանքի խոսքեր: Բնորոշ է, որ ընտանիքի նահապետի բարեմաղթանքների թվում Բաշալյանը հիշատակում է նաև հետևյալը՝ «Դառնիկ դատինք; քաղցրիկ ուտինք»[3]: Այս մեկ հատիկ մաղթանքն իսկ բավական է հասկանալու համար; թե հեղինակն ինչքա՞ն ճիշտ է զգացել մեր ժողովրդի հիմնական հատկություններից մեկը՝ աշխատասիրությունը, սեփական քրտինքով, ազնիվ վաստակով ապրելու ձգտումը: Ժողովրդի հավաքական կերպարն է ստեղծել գրողը՝ հանձին նոր տարվա սեղանն առաջինը օրհնող մեծ տանտիկնոջ, որի մասին ասված

1 Նույն տեղում, էջ 229.
2 Նույն տեղում, էջ 230։
3 Նույն տեղում, էջ 229:

է. «Կոճղն է ան տարիներեն պարնված, բայց միշտ ամուր ու տևական, հողին մեջ տարածած իր կենսալիր արմատները, որոնք իր գործը պիտի վերսկսին. վերանորոգման, շարունակության ավիշը կբարձրանա իր կանաչ ճյուղերն ի վեր, որոնք դեպի առաջ, դեպի վեր կխոյանան հույսի թռիչքներով»[1]: Անհատներն անցնում են, բայց ժողովուրդը մնում է, ծլարձակում, հարատևում, հաղթահարելով բազում դժվարություններ՝ ստեղծում բերք ու բարիք և ուրախության պահեր: Նոր տարվա տոնակատարությունը նման պահերից մեկն է, մի կարճատև ժամանակամիջոց միայն, երբ «Վայելքին ու մոռացման մեծ երանությունը կտարածվի ամեն կողմ, անջրպետելով երեկվան ցավերը ու վաղվա հոգսերը: Մեծ դադարն է ասիկա. անհետացնելով հոգնությունները ու զրկանքները, գալիք օրերուն համար նոր ուժեր պատրաստելով, ամրապնդելով արի հավատքը, որ դարերե ի վեր այդ հողին կկապե զիրենք՝ վհատիլ չգիտցող վստահությամբ մը, ակարանալ չգիտցող կորովով մը»[2]: Ժողովրդին կտրել մայր հողից, արմատահան արված ծառի պես կտրատել, սասանել կորովը, փշրել արի հավատքը—ահա «մեծ մարդասպանի» արյունոտ բռնապետության ստոր նպատակը, որի իրագործումն սկսվեց 90-ական թվականների կոտորածներով: Կոտորածների սոսկալի հետևանքների ցնցող պատկերն է տրված «Կաղանդի» երկրորդ բաժնում, որը նըվիրված է դարձյալ մի նոր տարվա նկարագրությանը: Գույները այստեղ միանգամից փոխվում են: Սկզբում, ինչպես տե-

1 Նույն տեղում, էջ 230:

2 Նույն տեղում, էջ 232:

ւանք, սառը ձյունն անգամ թվում էր տաք ու հաճելի, հիմա նույն ձյունը ահռելի ցուրտ է արձակում, նախկին ձյունածիծաղ լեռները դառնում են խոժոռ ու դաժան. ուրախ աղմուկին փոխարինում է մեռելային լռությունը, երգ ու ծիծաղին՝ բուի կռինչը, լի սեղաններին՝ ահավոր դատարկությունը: Սև ցավի նման սև յաթաղանն է անցել գյուղերով ու քաղաքներով, ամենուր թողնելով ավեր ու արյուն, դիակնե՛ր ու դիակնե՛ր: Եթե առաջին բաժնում հեղինակի աչքին հայրենի երկրում երևում էր սովորական ուրախ նոր տարի, ապա երկրորդ մասում նա դարձյալ նայում է դեպի նույն երկիրը. «Աչքերս կհառեմ դարձյալ մութին մեջ, նույն տարածությունն է, որ երևան կուգա, նույն շրջանակն է, որ կգծագրվի, նույն լեռները ու նույն դաշտերը, նույն փողոցները ու նույն գյուղի ճամփաները: Բայց ինչո՞ւ անունը, որ ամենուն վրա կտարածվի սավառնաթև[1], արյուն կկաթկթե:

Ձյունը նորեն պատած է ամեն կողմ, բայց ահռելի ցուրտ մը կելլե անկե, չար ու անողոք: Լեռները խոժոռ ու դաժան կընային, ու սարսուռ մը կվազե անոնց վրա: Հովը կփչե կատաղաբար, երբեմն սուր՝ ագռավներու կռինչի մը պես ու երբեմն բուերու, հազարավոր-բյուրավոր բուերու հոլոլմանը պես վայող:

Լռություն մը կախվի, ա՛լ չխոսող բաներու ահավոր լռություն մը: Հովն է, որ մինակը կձայնե, ու անոր մեջ մորմոքներ կհեծկլտան ու կսկիծներ կհառաչեն:

---

1 Խոսքը «Հայաստան» անունի մասին է (Ս. Մ.):

Մա՛րդ չկա դուրսը։ Ամայությունը իր սոսկումը կփռե ամեն կողմ։ Ամեն բան թախծություն մը հագած է, ա՛լ չապրող բաներու խորին թախծությունը։

Մոխիրի համ մը կա օդին մեջ։

Դաշտերը մերկ են ու ծառերը, կմախքներու պես կանգուն, անձկագին գալարումներով կդողդղան անոնց մեջ։

Տուները իրարու վրա սեղմված, ամքած են, ու ցավը ու անձկությունը կպատին անոնց վերև։

Սուգի երկիրն է ասիկա, հյուրամերժ ու անխնդում»[1]։

Բայց ինչո՞ւ նաև հյուրամերժ, երբ արևելյան հայտնի հյուրասիրությունը նաև հայերի բնորոշ գիծն է։ Այն պարզ ու սոսկալի պատճառով, որ հյուր ընդունող այլևս չի մնացել երբեմնի շեն ու լի, այժմ ավերակ ամայի օջախներում. «Բայց ահա երդիկի մը տակ սեղան մը կտեսնես։ Բազմություն մը նստած է անոր չորս բոլորտիքը, մեծ մայրը իր զավակներով, հարսներով, թոռներով։ Կաղանդի սեղան մըն է ասիկա, բայց ո՛չ նոր տարիի հացը կա վրան, ո՛չ պտուղներու կույտը, ո՛չ մեղր ու ո՛չ գինի։ Թոնիրին մեջ կրակը մարած է շատոնց։ Կանթեղ մը կպլպլա միայն անկյուն մը, ու անոր տատանոտ լույսն է միայն կենդանի այստեղ։

Որովհետև այդ բոլոր մարդիկը չե՛ն խոսիր, չե՛ն երերար, չե՛ն նայիր։

Աչքերս կհառեմ։

Ա՜հ, մեռած են։

---

[1] Լ. Բաշալյան. Ընտիր երկեր, էջ 233։

Ու ի՜նչ մահով։

Մեծ մոր աչքերը փորված են, ու անոնց խոռոչը կբացվի, կխորունկնա ահավոր։ Վզին վրա լայն վերքի մը շուրջը արյունը փխտացած է, սև ու փայլուն։ Իր քովը, անդրանիկ զավակը իրեն կռթնցուցած է իր գլուխը, որ մարմինեն անջատված է։ Իր պզտիկ հարսը դիմացը նստած է ծիծերը կտրված, ծունկերուն վրա սեղմված նորածինի մը դիակը։

Ու ամենքն ալ այսպես ահռելի վերքեր ունին, ու կյանքը խույս տված է ամենեն»[1]։

Հայկական եղեռնի ճշմարտապատում այս նկարագրությունը իսկական արվեստի երկերում միայն առկա այն հատվածներից է, որոնց ընթերցանության ժամանակ ինչ-որ բան կարծես սեղմում է կոկորդդ, լուռ արցունքներ քամում։ Դա երևակայության արդյունք չէ, այլ պատմական իրողություն, իրական բազում փաստերից միայն մեկը։ Դա սովորական պատկեր չէ, այլ հայրենասեր ու բնավեր արվեստագետի սրտի մրմուռը, անհուն կսկիծը, բարոյական տվայտանքը ամփոփող մի ընդհանրացում, որ չի կարող չցնցել մարդկային հոգին՝ անկախ նրա ազգությունից ու դավանանքից։ Դա սպանիչ մեղադրանք է վայրենության ստորին աստիճանի վրա կանգնած մարդ-արարածների հասցեին։ Դա նախազգացումն էր այն չլսված աղետի, որ 1915-ին պիտի պայթեր մի ամբողջ ժողովրդի գլխին, նաև մի նախազգուշացում՝ միջոցներ որոնել և կանխել համաժողովրդական սպանդը, ցեղասպանու-

1 Նույն տեղում, էջ 233—234։

թյան քաղաքականությունը, որ գործադրեցին հիտլերյան ճիվաղների հոգևոր նախահայրերը։

Մռայլ ու մահասարսուռ է Հ. Բաշալյանի պատկերած նոր տարվա գիշերը կոտորածներից հետո, սակայն համատարած լռության ու խավարի մեջ իսկ հեղինակը նկատում է պլպլացող կանթեղի կենդանի լույսի մի նշույլ. սպանված, խոշտանգված մարմինների կողքին տեսնում է ապրող մանուկներ։ Դրանք ողջ մնացած երեք փոքրիկներ են, գրեթե մերկ ու բոկոտն, ուտելիք չունեն. «Բայց պողպատի ամրությամբ կեցած են հոն ու կհսկեն օգավոր տան վրա։ Ու ժամերով, ժամերով արթուն, պզտիկ պահապանները կնային իրենց մեռելներուն, գիտակից աչվըներով, որոնք կվառեին»։ Նրանց դեմքին «պայծառություն մը կը տիրե հիմակ», թվում է, թե կենդանանում է տան խոշտանգված մեծ մայրը և ավանդական «օրհնությունը ու հավատավոր մաղթանքները կղրկե պզտիկներուն, որոնք իրեն կնային միշտ, գիտակից աչվըներով, որոնք կվառեին»[1]։

Մոխիրների մեջ, կարծես փյունիկ թռչունի նման, «պողպատի ամրությամբ» և գիտակից վառվող աչքերով երեք մանուկները ծլարձակումն են ընտանիքի ողջակիզված նահապետի, որին, ինչպես տեսանք, Բաշալյանը համեմատում է հողի մեջ խոր արմատներ ունեցող ամուր կոճղի հետ։ Ժողովուրդը օժտված է կենսահաստատ ու կենսունակ անսպառ ուժով, ապրել է ու պիտի ապրի, ծաղկի, բարգավաճի բոլոր փորձու-

---

1 Նույն տեղում, էջ 234։

թյուններին ու արհավիրքներին հակառակ։ Սա հեղինակի անխախտ համոզմունքն է, նրա հավատը, որը փոխանցվում է նաև ընթերցողին։ Այս իմաստով «Կաղանդը» իրավամբ կարելի է համարել «լավատեսական ողբերգություն», ուր հայրենի երկրին հասած օրհասական վտանգի առթիվ որդիական կսկիծը հեռու է վհատություն և հուսալքություն առաջ բերելուց։ Ողբերգական է Բաշալյանի գծած պատկերը, բայց իր մեջ ունի նաև գոտեպնդող լավատեսություն, վստահություն ժողովրդի հարատևության նկատմամբ։

Նույն բնույթն ու ոգին ունի նաև «Ցեղին ձայնը», Լ. Բաշալյանի թերևս ամենափայլուն հայրենասիրական ստեղծագործությունը, որն աչքի է ընկնում քաղաքացիական հուժկու պաթոսով և շոշափած հարցերի հրատապությամբ։ Այստեղ հեղինակը նախ բարձրացնում է կարևոր մի հարց՝ տարբեր երկրների և տարբեր խավերի մարդիկ ի՞նչպես են ընդունել հայկական ջարդերի լուրը և ի՞նչ վերաբերմունք են ցույց տվել։ Իհարկե, «Ցեղին ձայնը» գեղարվեստական գործ է, ուստի հեղինակը հրապարակախոսի նման չի առաջադրում այդ հարցը և անմիջապես պատասխանում։ Ո՛չ, նա ստեղծում է գեղարվեստական պատմություն իր հանդիպումների ու զրույցների մասին, և այդ պատմության մեջ է, որ դրսևորվում է գրողի անսքող բացասական վերաբերմունքը բոլոր նրանց նկատմամբ, ովքեր հայկական ջարդերն ընդունել են «կեղծավոր արցունքներով», ամուլ, անիմաստ, «ժլատ ու նվաստացնող կարեկցությամբ»[1]։

1 Նույն տեղում, էջ 236։

Հետմիջօրեի թեյին, ընդարձակ մի սրահում, հեղինակին ծանոթացնում են «հայկական հարցով» հետաքրքրվող անգլիացի Ջեյմս Քլարքի հետ: Ու անմիջապես Բաշալյանը վերհիշում է նման ուրիշ դեպքեր, երբ հարկ է եղել «ապուշ հետաքրքրություններ գոհացնել, վիրավորիչ տարակուսանքներ փարատել, արգահատանքներ կուլ տալ»[1]: Ինչո՞ւ: Որովհետև «քաղաքակիրթ աշխարհում» քիչ չեն մարդ-արարածներ, որոնք «տանջանքների թանգարանի» հանդիսատեսի շահագրգռությամբ են հետևում հայ ժողովրդի տառապանքներին, հանդես են բերում այնպիսի հետաքրքրություն, որը «անողորմ դանակի մը պես նորեն ու նորեն վերքերուդ մեջ կմխրճվի, ցավերուդ սրբությունը կպղծե». դրանք այն ապահով այլազգիներն են, որ ուզում են լսել ջարդերի մանրամասնությունները՝ «տեսակ մը ախտավոր ու մարդկային հաճույք գտնելով իր խաղաղ ապահովության մեջ՝ ուրիշներուն տառապանքին ահավորությանը առջև»[2]: Բայց նման այլազգիներից ետ չեն մնում նաև որոշ «ազգակիցներ», ազգային գործիչներ: Անգլիացի պառավ աղջիկների և միսիոներների նվաստացուցիչ կարեկցությունը և կեղծ արցունքները՝ «Մեր գործիչներեն շատերն ալ սնուցած են տխմարորեն,— գրում է Բաշալյանը,— մեր ազգային զարհուրելի տռամին մեջ ուրիշ բան չգտնելով ի տես դնելիք, բայց եթե լալկան ու ձեռնամած պաղատանքներու թոթովում մը»[3]:

---

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

Նոր ծանոթի հետ զրուցելուց առաջ հեղինակի հիշյալ խոր-հրրդածությունները «Ցեղին ձայնի» մեջ պատճառաբանված են։ Դրանք ընթերցողին տրամադրում են լսելու հետաքրքրական մի պատմություն, միաժամանակ նրա վերաբերմունքին որոշակի ուղղություն տալով։

Ծավալվող հետագա դեպքերի մասին պատմում է ինքը՝ անգլիացի դոքտոր Ջեյմս Քլարքը, թեև դրույը և ընթերցողը սպասում էին նրանից լսել միայն սովորական հարցեր։ Եվ այդ շատ հուզիչ ու անկեղծ պատմության մեջ գծագրվում է հայ ժողովրդի ազնվագույն բարեկամներից մեկի՝ իր իսկ՝ Քլարքի հմայիչ կերպարը։ Արդեն ծանոթության առաջին պահին, գրողի ձեռքը սեղմելիս, Քլարքը ցուցադրում է անկաշառ ջերմություն և ուղղամտություն, «որուն մեջ,— ըստ Բաշալյանի,—այ վերապահում չիկա»[1]։ Ու առաջին իսկ բառերով նա արտահայտում է իր սքանչացումը հայ ժողովրդի վերաբերյալ, որին հաստած աղետին ականատես էր եղել ինքը և հենց նոր էր վերադարձել Արևմտյան Հայաստանից։ Արձակագիրը միայն մի երկու բնութագրումներ է տալիս, նշելով, թե Քլարքը երեսունն անց «առույգ մարդ մըն էր,...շատ մտացի, շատ խոհուն արտահայտությամբ... Իր խաժ ու բարի աչքերը՝ երկար ու հետասնդող նայվածքով, իր թրթռուն շրթունքները՝ կենդանությամբ լեցուն, իր չայն ու գմբեթարդ ճակատը ներուժ մտավորություն մը կփռեին ամբողջ դեմքին վրա»[2]։ Ահա գրեթե ամբողջ հեղի-

---

1 Նույն տեղում, էջ 236։

2 Նույն տեղում։

նակային խոսքը։ Իսկ այն, ինչ պատմում է դոքտոր Քլարքը՝ նրա հոգեկան-բարոյական տառապանքների վկայությունն է։ Նա անկեղծորեն խոստովանում է, թե ինքը հայկական ջարդերի լուրն ընդունել է տարակուսանքով, շատերի նման միայն հարևանցիորեն լսել է ու լռել, հետո, երբ «պաշտոնական տեղեկագրերը» հաղորդել են անհերքելի փաստեր ու մանրամասնություններ, դարձյալ կասկածանքները լիովին չեն փարատվել. «Հակառակ ամեն փաստերուն,— ասում է Ջեյմս Քլարքը,—չէի կրնար կոր հավատալ այստեղ ամբողջ ցեղ մը բնաջինջ ընելու կարելիությանը, այսպես կազմակերպված, սիստեմատիկ վայրագության մը»[1]։

Բայց ի՞նչ միջոցներ էին ձեռք առնում այսպես կոչված «մեծ տերությունները»՝ կանխելու համար մահացու վտանգը։ Արդեն ասել ենք, որ Բաշալյանը գտնում էր, թե «հայկական հարցի» առթիվ և ընդհանրապես «եվրոպական ազգերը» ղեկավարվում էին սեփական շահերի տեսանկյունից միայն։ «Ցեղին ձայն»-ի մեջ նա չի անդրադառնում տարբեր պետությունների քաղաքականությանը, սակայն Քլարքի մի քանի արտահայտությունները ցույց են տալիս, որ հատուկենտ մարդիկ են միայն գործուն օգնության մասին մտածել, ի վիճակի չլինելով, իհարկե, վերջ դնելու մի ամբողջ կառավարության ռասայական քաղաքականությանը։ «Մեծ տերությունները» ջարդերի ժամանակ Հայաստան են ուղարկել մեծ մասամբ միսիոներների և առանձին անհատների, որոնք ունեին «նվիրատունե-

---

1 Նույն տեղում, էջ 237։

րուն և սովամահ թշվառներու հոգիներուն միջև պարտի-պահանջի ծիծաղելի ու անարգ հաշվեկշիռ մը բռնելու» առաջադրանքը, մարդկանց, որ լավագույն դեպքում դալիս էին «նպաստ բաշխելու որբերու և այրիներու»[1]։ Ահա Քլարքի միջոցով հեղինակի արտահայտած կարծիքը «դրսի օգնության» մասին։

Դոքտոր Ջեյմս Քլարքը այն եզակի անհատներից է, որ Հայաստան է մեկնում չունենալով նշված նպատակներից ու առաջադրանքներից և ոչ մեկը։ «Զիս առաջին անգամ հոն քաշողը եղավ,— ընդգծված ձևով ասում է Քլարքը, —**հասկնալու, ըմբռնելու** տարօրինակ պետք մը»[2]։ Եվ այն, ինչ նա տեսնում, հասկանում և ըմբռնում է, կազմում է «Ցեղին ձայնի» էությունը, գաղափարական առանցքը։ 1896-ի գարնանը մեկնելով Հայաստան, նրան թվում է, թե քայլում է արհավիրքի ու արյան ծովում. «Մահվան ամեն ծամածռությունները, ցավին բոլոր գալարումները, տանջանքին բոլոր զգայումները տեսա, այո՛, տեսա՛,—ընդգծում է նա,—ա՛լ այնչա՛փ անոնց ամենօրյա միօրինակ պատմությունները լսեցի»։ Նրա աչքի առաջ հառնում է մի «ավերակների երկիր», որտեղ «մահը լավ տեսած էր գործը, քայքայումը կատարյալ էր»[3]։ Մարդկայնորեն ցավում է դոքտոր Քլարքի զգայուն հոգին, և նա եզրակացնում է, որ ամբողջ երկրից մնացել է ոչ այլ ինչ, «բայց եթե անօրինակ մեռելատանի մը հիշատակը ընդհանուր մարդկու-

1 Նույն տեղում։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 238։

թյան խղճին վրա»[1]։ Պարզ է, թե «ընդհանուր մարդկություն» ասելով ինչ է հասկանում Քլարքը, և նրա այդ մեղադրանքը հնչում է որպես Բաշալյանի նշած «եվրոպական ազգերու» դեմքին իջնող ապտակի շառաչ։ Բայց այս դեռ «Ցեղին ձայնի» միայն մի կողմն է։ Մյուս շատ էական և նշանակալից կողմն այն է, որ երբ սոցիալական որոշ խնդիրներ ուսումնասիրելու, «գիտնականի հետաքրքրություն մը գոհացնելու եկած» դոքտորը, ցնցված աննախադեպ նախճիրից պատրաստվում է «հեռանալ այդ անիծքի երկրեն», նրա ուշադրությունը գրավում է «արտակարգ երևույթ մը»։ Այնտեղ, ուր կարծես մահը դրել էր իր ոչնչացնող, ամենակործան թաթը, նկատվում է կյանքի խլրտում, արթնացում, վերածնունդ։ Դոքտորը հարկ է համարում նորից անցնել այն վայրերը, որտեղ եղել էր մի անգամ և որոնք համարում էր «մշտնջենական անշարժության դատապարտված» և ամենուր տեսնում է շարժում ու կենդանություն. երկրագործը հարևան քրդից փոխ առած արորով հերկում էր արտը. կոշկակարն իր խանութի մոխիրների ու փլատակների միջից գտած հերունով փողոցի մի անկյունում սկսել էր աշխատել. խանութպանը շալակով մի քանի ապրանքներ հասցնում էր խնդրատուներին, «արհեստավորը նորեն ծալապատիկ նստած էր կոտրած բեզկեանի մը առջև, որ սակայն կարտադրեր, ուսուցիչը տղաքներու խումբ մը ժողված խարխուլ ախոռի մը անկյունը, կկարդացներ զանոնք»[2]։ Սրանք.

1 Նույն տեղում։

2 Նույն տեղում, էջ 239։

ըստ Քլարքի, մանր, «նիհար» գործեր էին, բայցևայնպես՝ կյանքի առաջին քայլերը դեպի շարժում և ոգևորություն. «Զարթնումն էր, վերածնունդը, ու ամենքն ալ քիչ-քիչ անոր գինովութենեն կբռնվեին։ Ամէնօրյա ճիգն էր, որ կսկսեր, անդուլ, բանիմաց, ամբողջական ճիգը, որ ընկերությունը կշինե, որ հառաջադիմությունը կստեղծե։ Դեմքերուն վրա, այն թախծության քով, որ չի փարատիր,... հավատքին լրջությունը կար նորեն ու կամքին պրկումը։ Աշխատանքին լծված էին, ազատարար ու մխիթարող վաստակին, ինչպես մարդ փրկության խարիսխին կպչեր։ Ապրի՛լ կուզեին կոր, ու պիտի ապրեին... Անոր կամքը ունեին՝ հակառակ ամեն բանի, ընդդեմ ամեն բանի, ու ոչինչ կրնար կեցնել զիրենք»[1]։ Եվ մի գեղեցիկ պատկերով Քլարքը ընդհանրացնում է, թե այդ մարդիկ տառապանքների մեջ անգամ ուժ էին գտնում, կենսունակ մի հյութ, այն «ձյունածաղկին պես, որ ձյունին տակ կփթթեցնե իր առողջ ու ազվոր թերթերը»[2]։ Ահա այս է դոքտորի աչքին զարկող «արտակարգ երևույթը», որը համեմատելով կոտորածների ու ավերումների հետ, ասում է. «Ա՛լ մնացի հմայված։ Ասիկա նույնչափ և ավելի արժանի էր հետաքրքրության, որչափ առաջինը»[3]։ Կեղծ կարեկցանքի, լալկան ողբերի, վիրավորական ցավակցության, դատարկ խոստումների, անիմաստ անեծքների փոխարեն դոքտոր Ջեյմս Քլարքը հայ գրողին

---

1 Նույն տեղում, էջ 239—240։

2 Նույն տեղում, էջ 240։

3 Նույն տեղում, էջ 239։

ուղղում է իսկական սփոփանքի գոտեպնդող, լավատեսական խոսքեր, խոր հավատ ներշնչում ժողովրդի կենսունակության և հավերժորեն ապրելու կամքի ու կարողության նկատմամբ։ Սա է «Ցեղին ձայնի» էական արժանիքը, որը ակամա հիշեցնում է մեծ Թումանյանի «Թեպետ և բախտը մեզ շատ հարվածեց» բանաստեղծության հետևյալ քառյակը.

Եվ իր փլատակ տների տակից
Ելնում է ահա հզոր ժողովուրդ,
Իր վեհ ճակատին տանջանք ու թախիծ,
Խորունկ հայացքում մեծ կյանքի խորհուրդ[1]։

Այդ մեծ կյանքի խորհուրդն է տեսնում դոքտոր Քլարքը հատկապես որբացած հայ մանուկներից մեկի՝ Սաքոյի հայացքում, որի մասին պատմում է մի առանձին ոգևորությամբ և ճշմարիտ մարդասերին հատուկ պաթոսով։

Ինքն էլ վարակվելով «վերականգնումի, դարմանումի տենդով», Քլարքը Մալաթիայում բաց է անում մի որբանոց, ուր ընդգրկում է քանի չափ երեխաներ, նրանց խնամելով և բարոյապես զինելով «այն ծանր, անխնա, ոգին ի բոին ոգորումին համար, որ իրենց կսպասեր այդ արության ու տոկունության հողին վրա»[2]։ Մի օր մոտակա գյուղերից որբանոց են բերում մի իննամյա տղա։ Տեղ չլինելու պատճառով տնօրենը մերժում է որևէ նոր ընդունելություն, սակայն այդ մանուկին

---

1 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1950, էջ 170։
2 Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 240։

անմիջապես տեղավորում է որբանոց. «Կարյունի պես բան մըն էր,—ասում է Քլարքը,—գանգուր առատ մազեր ունէր, երկու կողմէն ուռուցիկ ճակատով, կրակե աչքերով». չգիտե, թե որտեղից է գալիս և ուր է գնում. հիշում է միայն, որ հոտաղ է եղել, նախիրը քշել-տարել են թալանչիները, գյուղ վերադառնալիս այն գտել է ավերակ, դատարկ, բնակիչներին սպանված կամ գյուղից հեռացած. ու ինքն էլ բռնել է թափառումի անորոշ ճանապարհը. «Ձմեռ մը եկեր էր, գարուն մը անցեր էր, ու ան այսպես կերթար լեռնե-լեռ, գյուղերե ու քաղաքներե անցնելով, առանց կանգ առնելու: Ի՞նչպես ապրեր էր. չէր գիտեր, ապրեր էր»[1]: Բնության գրկում կոփվել է, ուժեղացել, դարձել անհանգիստ, ըմբոստ, չի ուզում կաշկանդված ապրել որբանոցում, երբեք անգամ փախչում է, նորից բռնում բերում են: Ու հանկարծակի զարմանալիորեն հանդարտվում է, երբ գիրք են տալիս ձեռքը և սովորեցնում կարդալ: Այլևս ոչ միայն փախչելու փորձ չի անում, այլև չի մասնակցում մանկական խաղերին, ժամերով միայնակ նստում է՝ գլուխը հակած դասագրքի վրա, կարծես ջանալով վերծանելու «գրերուն իմաստը», տարվում է «սորվելու մոլեգին ցանկությամբ մը»: Երբ մի անգամ դոքտոր Քլարքը հարցնում է, թե Սաքոն ի՞նչ կուզենար, որ աստված տար իրեն, երեխան լուռ թերթում է գիրքը, մի քանի րոպե խորհում, ապա վառվող աչքերը դոքտորին դարձնելով պատասխանում է.

—Կուզեմ, որ խելք տաս ինձի...

---

1 Նույն տեղում, էջ 241:

«Ցեղին ձայնն էր, որ կխոսեր իր բերնովը»[1]—հիացած ու զարմացած եզրակացնում է դոքտորը: Իրոք, այդ մանուկը խորհրդանշում է մեր ժողովրդի տխուր ճակատագիրը պատմության դաժան քառուղիներում, նրա դիմացկանությունն ու պայծառ երազանքները, ազնիվ ու վսեմ նպատակները:

Մանուկին ծեծել են ու նախիրը թալան տարել, ծննդավայրն այրել են, դարձրել ավերակ, սպանել կամ մայր օջախից հալածել են ծնողներին, հարազատներին, ընկերներին... Կիսամերկ ու կիսաքաղց թափառելով շատ օրեր, տեսել է մահ ու արյուն... Բայց ահա կույր վրեժի, փոխադարձ ոչնչացման, արյան փոխարեն արյուն ոթելու մասին չէ, որ մտածում է, այլ թերևս «Անգիտակցաբար, բնականորեն կխնդրեր այն զենքը, որ պիտի ապրեցներ ցեղը ներկա քաղաքակրթության մեջ, միակ ուժը, որ իրեն անհրաժեշտ էր: Արյունին մեջ ուներ այդ պետքը դեպի իմացականությունը, դեպի գիտությունը, դեպի հառաջադիմությունը, դեպի հաղթանակը: Ատով էր, որ իր ցեղը տևեր էր ու պիտի տևեր:

Չէ՛, այդ ձգտումովը, դեպի այդ հորիզոնները լարված կամքով մը, վախ չկա, որ հայությունը կորսվի, պարոն,—հարեց դոքտորը ոտքի ելլելով:—Ամիսե մը նորեն Հայաստան պիտի դառնամ»[2]:

Միանգամայն ճիշտ դիրքերից տալով հայ ժողովրդի ընդհանուր բնութագիրը, նրա էական հատկության մեկնաբանու-

---

1 Նույն տեղում, էջ 242:

2 Նույն տեղում, էջ 242—243:

թյունը, դոքտոր Քլարքը, անշուշտ, սխալվում է, երբ մի տեղ խոսում է նաև «ստորին» և «բարձրագույն» ցեղերի մասին։ Նրա սրտահույզ և ոգեշունչ պատմության մեջ այդ պարբերությունը հնչում է որպես վրիպակ։ Այն տպավորությունն է ընտացվում, թե արյան ու ավերումների սարսռեցուցիչ տեսարաններից ցնցված գիտնականը մի պահ մոռացել է ճիշտ ձևակերպել իր ցասումն ու զայրույթը, իր սառը և հանգիստ դատողությունը։ Մի ամբողջ ազգության ծրագրված բնաջնջումը, որի վավերականությանը նա համոզվում է անձամբ, սեփական փորձով, նրան պարզապես հանում է հունից և, իհարկե, Բաշալյանի «համաձայնությամբ» մի ակնթարթ մղում սխալ խորհրդածությունների։ Սակայն ամբողջ «Ցեղին ձայնը» նովելում, անգամ այդ խորհրդածությունների մեջ չկա ազգամոլության, ազգային ատելության, թշնամական վրիժառության որևէ քարոզ։ Ինչպես բոլոր դեմոկրատ, առաջադեմ հայ գրողները, Լ. Բաշալյանը հեռու է ազգային թշնամանք բորբոքելու մտքից, նա գնահատում է ազնիվ մարդուն՝ անկախ մաշկի գույնից, լեզվից, դավանանքից, գնահատում է ըստ բարի կամ չար, գեղեցիկ կամ տգեղ, օգտակար կամ վնասակար գործերի։ Հենց «Ցեղին ձայնի» մեջ անգլիացի դոքտորի կերպարը դրական է, համակրելի ոչ միայն նրա համար, որ նա հայասեր է, այլև այն պատճառով, որ մարդկային մարդ է, գործում է մարդասիրաբար։ Մենք արդեն տեսանք, թե Բաշալյանը որպիսի ջերմությամբ է խոսել բախտից հալածված ֆրանսուհու («Ջարթոնք»), մարդկային չարության զոհ, բայց գթասիրտ անգլիացու («Կրիան») մասին։ Ֆրանսիայի մայրա-

քաղաքը նա անվանել է «իմ սիրած Փարիզը» («Միրո գիշեր»), խանդաղատանքով ու հիացմունքով է պատկերել աշխարհի ամենատարբեր քաղաքները, որոնք տեսել է ինքը («Միջերկրականի հիշատակներ», «Թուրքահպատակի մը արկածները մեծ պատերազմին ատեն»): Ի լրումն այդ բոլորի, գրախոսելով մի անգլիացու ճանապարհորդական նոթերի գիրքը, ուր համակրանքի խոսք կա թուրք ժողովրդի հանդեպ, Բաշալյանը գրել է. «Մենք ալ համակիր ենք, եթե թուրք ըսելով կը հասկնա մուսուլմաններու զանգվածը, որոնք քրիստոնեաներուն չափ կը ճնշվին»[1]: Մենք էլ չենք խոսում նրա բազմաթիվ հոդվածների, քաղաքական տեսությունների, թարգմանությունների մասին, որոնք վկայում են դեմոկրատ գրողի ծառայությունները ժողովուրդների բարեկամության, հոգևոր կապերի ամրապնդման գործին:

Լ. Բաշալյանը հայրենասեր էր. նրա սիրտը, բնականորեն, ցավում է հայրենի հողի համար, որը նա համարում է մեծագույն սրբություն, ամենաթանկն ու հարազատը աշխարհում, անմոռանալի մասունք: Բնորոշ է այս տեսակետից նաև «Հայրենի հողը» ինքնատիպ գրվածքը: Մի ճանապարհորդի գրքից Բաշալյանը հիշատակում է եղելություն այն մասին, թե ինչպես Թուրքիայից դեպի Սևանա լճի ափերը գաղթած հայ ընտանիքներից մեկի նահապետը, մի ալևհեր ծերունի, հանկարծ ճանաչում է նոր գաղթավայրի եկեղեցին, հուզված հազիվ վեր-

---

1 Լ. Զարթումյան (Լ. Բաշալյան). Ասիական Թուրքիո մեջ, «Նոր կյանք», 1899, № 1, էջ 15:

հիշում, որ դա իր ծննդավայրն է, որտեղից շատ տասնամյակներ առաջ ծնողները հեռացել էին բախտ որոնելու: Այս եղելության շուրջը հյուսելով մի սքանչելի պատմություն՝ անանուն ծերունու թափառումների վերաբերյալ, Բաշալյանն ընդգծում է հայրենի հողի անշեջ կարոտը և անթառամ հիշատակը նրա սրտում: Հայրենակարոտ մի ծերունի կա նստած յուրաքանչյուր ազնիվ մարդու մեջ, որը ստիպված հեռանում է հայրենի հողից, և չարիքն, ըստ Բաշալյանի, ոչ այնքան պանդխտությունն է, որքան հայրենի հողը մոռացության տալը. «Մեզի համար կորուստը այն օրը պիտի ըլլար, երբոր բոլոր այդ մեկնողները սրտով ալ բաժնվեին իրենց երկրեն, երբոր աչվնին ետևին չըլլար»[1]: Մայր հողից կտրվել և հայրենիքն իսպառ մոռանալ—ահա ստույգ մահը. «Հայրենիք պիտի երթալ—ասիկա մեր նշանաբանն ըլլալու է օտարության հողին վրա... Հայրենիք, որ ցավեն ավերված, երբեք այնքան անուշ երևցած չէր մեզի»[2]: Օտար հողի վրա, որքան էլ մթնոլորտը ջերմ լինի, բարենպաստ, ուրիշ ժողովուրդ չի ծաղկի: Այս է Լ. Բաշալյանի «Հայրենի հողը» երկից բխող տրամաբանական եզրակացությունը: Եվ նա ինչպես իր, այնպես էլ բոլոր մյուս հայրենասեր գրողների սրբազան պարտքն էր համարում՝ վառ պահել ժողովրդի սրտում թե ազատության և թե հայրենի հողի հավերժական սերը:

---

1 Լ. Զարումյան (Բաշալյան). *Հայրենի հողը*, «Նոր կյանք», 1899, № 24, էջ 370:

2 Նույն տեղում:

ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԵՐԸ, ԽՈՍՔԻ ՎԱՐՊԵՏԸ

Լեոն Բաշալյանի այն բոլոր նորավեպերն ու պատմվածքները, որոնց մասին խոսեցինք, գրված են մինչև 1900-ական թվականները։ Իսկ ի՞նչ է ստեղծել նա հետագա, ավելի քան քառասուն տարիների ընթացքում։ Արդեն ասել ենք, որ մեր ձեռքի տակ չի եղել ֆրանսիական «Լը Ֆուայե» («Օջախ») ամսաթերթի ամբողջ համալիրը, ուստի չենք կարողացել անդրադառնալ նրանում տեղ գտած բոլոր նյութերին, Ա. Չոպանյանի վկայությամբ՝ տաօրյա հարցեր շոշափող «ամուր հոդվածներին», որոնք պատկանում են խմբագիր Լ. Բաշալյանի գրչին։ Իսկ ընդհանրապես մամուլի էջերում, Սփյուռքում ու մեզ մոտ լույս տեսած Բաշալյանի ժողովածուների մեջ. բացի մի քանի գրական-հրապարակախոսական հոդվածներից և հարցազրույցներից, մեզ ծանոթ են «Ելտըզ Քյոշկեն Երևան» (1920), «Լուռը» (1927), «Ժանպալայա» (1927), «Անցորդի մը օրագիրը» (1936), «Թուրքահպատակի մը արկածները մեծ պատերազմին ատեն» (1939) և մի երկու ուրիշ ստեղծագործություններ։ Գրական բեմելի առաջին մի քանի տարիների հայկական հոդվածների, գրախոսությունների, քրոնիկների,

շուրջ երեսուն գողտրիկ նորավեպերի, պատմվածքների, ակնարկների համեմատությամբ վերոհիշյալ գործերը պարզապես աննշան տոկոս են կազմում։ Հենց դրա համար են Բաշալյանին համարել «դասալիք», նաև՝ «ծույլ» (Զոպանյան)։ Սակայն գրողի վերջին չորս տասնյակ տարիների գրական հետաքրքրությունների թեկուզ մի որոշ չափով ծանոթանալու համար անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել նաև հիշյալ նյութերի վրա։

Այդ նյութերը ցույց են տալիս, որ վերջին տասնամյակները Լ. Բաշալյանի գրական կյանքում եղել են գերազանցորեն հուշագրությունների տարիներ։ Անցյալի վերհուշ են «Ելտըզ Քյոշկեն Երևանը», «Անցորդի մը օրագիրը», մանկական հիշողություն է «Լատուտը», ուղեգրական-մեմուարային գործ է «Թուրքահպատակի մը արկածները...»։ Այս առթիվ պետք է նշել, որ Բաշալյանը, դժբախտաբար, չի թողել հանգամանալից օրագիր-հիշատակարաններ, ինքնակենսագրական-հուշագրական ընդարձակ նոթեր, թեև շատ բան կարող էր ասել ժամանակի և ժամանակակիցների մասին։ Նա օժտված էր դիտելու, էականը տեսնելու կարողությամբ, եղել էր «ութսունականների» եռանդուն պայքարի հորձանքում, շրջագայել էր, ինչպես ասում են, «աշխարհի կեսը», անձամբ ճանաչում էր բազմաթիվ գրողների, մամուլի, մշակույթի, հասարակական գործիչների։ Ոմանց մասին հոդվածներ, իհարկե, նա գրել է (Տիգրան Երկաթ, Ա. Արփիարյան և ուրիշներ), սակայն իսկական իմաստով մեմուարներ, ցավոք, չի թողել։ Մինչդեռ ի վիճակի էր ստեղծելու գեղարվեստական հաճույք պատճառող ուղեգրա-

կան հուշ-ակնարկներ, ինչպիսիք են «Միջերկրականի հիշատակները» և «Արմաշի ուխտագնացությունը»։ Այդ է հաստատում ահա նաև «Ելտըզ Քյոշկեն Երևան» հուշ-պատկերը, որը թեև ծավալով փոքր է, հուզիչ է ու բովանդակալից։ Ուշագրավ է, որ Թեոդիկի «Ամենուն տարեցույցի» մեջ տպագրված այդ հուշ-պատկերից առաջ հանդիպում ենք Լ. Բաշալյանի ձեռագիր-ինքնագրով շարադրված հետևյալ խորհրդածությանը. «Իղձը լծակն է կյանքին, առանց անոր այս աշխարհը չեղածի պես պիտի ըլլար մեզի։ Ուրիշ խոսքով՝ մենք այն օրը կմեռնինք, երբ ան մեր մեջ կը մեռնի»[1]։ Ըղձալ և հուսալ, հավատալ նույնիսկ անկարելիի կարելիությունը— ահա այն միտքը, որ դրված է «Ելտըզ Քյոշկեն Երևան»-ի հիմքում։ Այստեղ հեղինակը սկզբում հիշատակում է պատմական այն փաստը, որ դեպի Ասիա կատարած իր հայտնի արշավանքից առաջ Ալեքսանդր Մակեդոնացին իր բոլոր ունեցվածքը, հարստությունը բաժանեց ուրիշներին, իրեն թողնելով միայն ապագայի հույսը։ Սա կարծես գալիս է հուշելու այն մասին, որ հայ ժողովուրդը դարերի ընթացքում շատ բան է կորցրել՝ հող, անկախություն, պետականություն, ազատություն, սակայն միշտ վառ է պահել լավ ապագայի հույսը, հավատացել է գալիքին, մաքառել ու տոկացել, և նրա պայծառ երազանքները անպայման կիրականանան, որքան էլ դա դժվարին, անհնարին թվա։ Կար ժամանակ, որ հնարավոր չէր նույնիսկ մտածել, թե շարքային մարդը, մանավանդ հայրենասեր հայ գրողը, կարող է ազատ ներս մտնել «արյունոտ սուլթան» Համիդի շահական պալատը՝

---

1 Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1921, էջ 203։

Ելտըզ-Քյոշկը։ Բայց ահա 1909-ին, երբ բռնակալն աքսորված էր Սելանիկ, և պալատը օգտագործման էր հանձնված բարեգործական մի կազմակերպության, Լ. Բաշալյանը ոչ միայն մտնում է Ելտըզ-Քյոշկ, այլև հսկիչին կաշառելով բազմում է շահի թիկնաթոռին... Այդ պահին՝ «Մտածումս,—ասում է գրողը,—հույսին թևերուն վրա կը սլանար դեպի ամեն կարելիությունները, ամեն իրականացումները՝ հայության ամենեն ավելի փայփայած երազներուն և բաղձանքներուն»[1]։ Նկատենք, որ 1920-ի հոկտեմբերին, երբ գրված են այս տողերը, Լ. Բաշալյանը հույսեր էր կապում իր ասած «անկախ Հայաստանի ղեկավարների» հետ, սակայն գիտենք, որ նա հետագայում տեսավ ու լիովին համոզվեց, թե հայ ժողովրդի իսկական ազատությունը, անկախությունը, փայփայած դարավոր երազանքների իրականացումը ձեռք բերվեցին սովետական իշխանության հաղթանակի շնորհիվ։ Եվ ձեռք բերվեցին այնպիսի մի ժամանակ, երբ Արևմտյան Հայաստանում արդեն հայ չէր մնացել, երբ կոտորածները, գաղթը, համաճարակը խլել էին ու խլում էին անհամար զոհեր, երբ ժողովրդի վերջին բեկորները կանգնած էին կործանման անդունդի եզրին։ Ուրեմն, իրոք որ անկարելի թվացողն էր, որ դարձավ կարելի, և դրան էր ըղձում, հավատում Բաշալյանը, թեև չէր տեսնում փրկության ուղին՝ բանվոր դասակարգի սոցիալիստական հեղափոխությունը։ Էականը այն է, որ փրկության հույսը նա փայփայում էր սրտի խորքում, արծարծում իր ստեղծագործություննե-

---

[1] Լ. Բաշալյան, Ելտըզ-Քյոշկին Երևան, «Ամենուն տարեցույցը», 1921, էջ 382։

րի մեջ և փոխանցում ժողովրդին, ուրախանալով նրա առաջընթացի համար և դառնանալով նրան հասած համազգային աղետների պատճառով:

Հայկական ողբերգության առթիվ հայրենասեր գրողի դառնացած հոգու, հայրենի հողից բռնությամբ վտարված հայրենաբաղձ տարագրի ցավի ու կարոտի սրտաբուխ արտահայտությունն է «Անցորդի մը օրագիրը»: Չնայած բավականին պրոզայիկ վերնագրին, դա սովորական օրագիր չէ, այլ մի յուրօրինակ արձակ բանաստեղծություն, հուզաշաղախ խորհրդածություն կյանքի ու մահվան, աշխարհի ու տիեզերքի, մարդու մեծ կոչման և հաճախ փոքրոգի արարքների մասին: Մարդը՝ ամենազոր, հրաշագործ այդ հանճարը, հաճախ կերտելու, արարելու փոխարեն ավերում է, սպանում, աշխարհը երջանկության հովտի վերածելու փոխարեն դարձնում է «արցունքներու ծով»: Կյանքն ու տիեզերքը ի սկզբանե սխալ են կառուցված, և սխալի արմատը հենց մարդիկ՝ իրենք են. «Ի՞նչ ենք մենք տիեզերքին հանդեպ: Կետ մը: Ի՞նչ է տիեզերքը մարդկային հանճարին հանդեպ: Ավելի փոքր կետ մը: Հիմարը մենք ենք, որ նույն մեծությունով կը չափենք իրերն ու մարդիկը, վիճակն ու ճաշակները, հաճույքի համար կը գործածենք վայրկյանը և ցավերու համար տարին՝ իբրև չափանիշ: Ինչո՞ւ: Մեր անմտությենե»[1]: Մարդկային անմտությունը բոլոր չարիքների աղբյուրն է, անարդար կյանքը կանգուն պա-

[1] Լ. Բաշալյան, Անցորդի մը օրագիրը, «Անահիտ», 1936, № 1—3, էջ 77—78:

հող սյունը, մինչդեռ, ըստ Բաշալյանի, «Պետք է մեռնի այս կյանքը՝ ավելի նոր ծնելու համար»։ Խորհրդածություններ են սրանք հայկական ջարդերի, այդ խսկապես աննախընթաց անմարդկային ոճրագործության առթիվ։

Գեղարվեստական շնչով գրված վերհուշ է նաև «Թուրքահպատակի մը արկածները մեծ պատերազմին ատեն»։ Ճանապարհորդական այս նոթերում կան ինքնակենսագրական որոշ տվյալներ, տեղեկություններ առաջին աշխարհամարտի իրադրության մասին, որոշակի վերաբերմունք այն երկրների նըկատմամբ, որոնցով անցել է հեղինակը պատերազմի տարիներին, բնության ոգեշունչ նկարագրություններ։ Հենց սկզբից նշելով իր ձերբակալությունը ֆինն-ռուսական սահմանի վրա, Ռուսաստանի համար ռազմանյութ ձեռք բերելու նպատակով Անգլիա գնալու-վերադառնալու ճանապարհին, Բաշալյանը գրում է. «Ասիկա սովորականեն դուրս արկած մըն է, զոր կուզեմ պատմել. մանավանդ որ, անձնական դեպքի մը առավել կամ նվազ շահեկան արժեքեն ավելի, մեծ պատերազմին ատեն դաշնակից երկրներուն մեջ Թուրքահպատակ հայերու կացության մասին ստույգ վավերագրի մը առավելությունն ունի»[1]։ Իրեն ձերբակալում և մեկ շաբաթով պահում են բանտում որպես Թուրքահպատակի. ուրիշ Թուրքահպատակ հայեր ևս Անտանտի երկրներում հալածվել են իբրև թշնամական տերության քաղաքացիներ, թեև հայտնի էր, որ «Հայերը, մանավանդ Թուրքիո ապարեն իջնելև (պատերազմի մեջ մտնելուց—

[1] Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 248։

Ս. Մ.) հետո սրանց դաշնակիցներու հետ էին»[1]։ Բաշալյանը հանգամանորեն վերհիշում է ցարական «խիստ ու կասկածոտ» ռեժիմը, ժանդարմերիայի (օխրանկա), անգլիական ոստիկանության վերաբերմունքն իր նկատմամբ, իր կրած նեղությունները, ապա ջերմ ու անկեղծ հիացմունքի խոսք է ասում Ռուսաստանի, Ֆինլանդիայի, Սկանդինավյան երկրների ժողովուրդների մասին, բարձր գնահատելով մարդկային առաքինությունները՝ մաքրասիրությունը, պարկեշտությունը, բարեկրթությունը, պարտքի և իրավունքի խոր գիտակցությունը։

Քննարկված վերջին ստեղծագործությունները ցույց են տալիս, որ Լ. Բաշալյանի տաղանդը բնավ էլ չէր խամրել և որոշակի պայմանների ու ցանկության դեպքում կարող էր փայլել նոր ուժով։ Այս իրողության խոսուն հաստատումն է «Լոռստ»-ը, հեղինակի վերջին տարիների՝ մեզ ծանոթ ամենահաջող գեղարվեստական գործը, նույնպես սրտահույզ մի վերհուշ անցյալից։

Լոռստը կամ չեքլեմպիճը լոտենի (փռշնի) մեծ ու բարձրաբերձ ծառի վրա աճող պտուղն է, մանր կորիզով, հասունանալիս՝ սև ու քաղցրահամ։ Բաշալյանը պատմում է, թե մանուկ հասակում ինքը շատ է սիրել այդ պտուղը։ «Ամեն բանե առաջ՝ հաղվագյուտ էր ան,— կարոտով ու հիացմունքով գրում է նա,— բոլոր աղնվական բաներուն պես, ու չէիր կրնար մեկ քանի փարայով կամ ղուրուշով գնել զայն անկյունի մրգավաճառեն։ Իր հմայքն անոր մեջն էր, որ պետք էր անձամբ գտնել ու հոգնիլ զայն գտնելու համար, ու ծառն ի վեր մագլցիլ հա-

1 Նույն տեղում, էջ 249։

նելու համար իր անմատչելիությյան։ Գողտրիկ բաներու անդիմադրելի հրապույրն ուներ ան, բայց ինչքան մե՜ծ էր վարձատրությունը, երբ ձեռքըդ իր վրա կդնեիր ու գրպաններդ անով կլեցնեիր»[1]։ Ինքն իմացել է լոռեռնու միայն երկու ծառ, որոնցից մեկը՝ Կ. Պոլսի վանքի այգու գերեզմանատանը՝ «Դուրյանի շիրիմեն ոչ հեռու»[2], քաղել է հասուն պտուղները և վայելել «խորունկ բերկրանքով»։ Հետագայում հեղինակը, ինչպես ինքն է հանգամանորեն թվարկում, ճաշակել է աշխարհի ամենատարբեր մրգերն ու խորտիկները, «բոլոր բարիքները, զոր առատաձեռն բնությյուն մը շռայլեր է մարդուս զգայական հրճվանքին համար»—Երևանի ասքերի, Գենտի կնասա, Պոդամի ելակ, Գրոզնիի ձմերուկ, «Հյուսիսի եղջերուին ծխած զիստը, որ կարծեմ ամենեն համեղ ուտելիքն է, զոր մարդկային խելքը խլած ըլլա բնությյան զաղտնիքներեն»։ Քուռի գետաբերանում ջրից հանած սևրուգայի թարմ խավիար՝ «զորշ պղտիկ մարգրիտի նման, որ երկնային պարգև մըն է իրոք», Էլբրուսի ծաղկավետ լանջերին սնվող գառան խորոված, լանգգոզի «սագի լյարդը, որ ֆրանսիական հանճարի ամենեն պանծալի ստեղծագործությյուններեն մին է ապահովապես», նորվեգական կաքավ, Զանգվի կարմրախայտ, «Կամչատկայի րիապչիկը» (РЯБЧИК—աքար, անտառակաքավ), Ռիշտի փլավ, Սևանի իշխան ձուկ... Սակայն «ի՜նչ են անոնք չեքլեմպիճին քով,—ինքնավստահ պնդում է գրողը,— որուն չափ համով բան ես չեմ ճաշակած երբեք»[3]։ Ինչո՞ւմն է այդ մանրիկ, շա-

[1] Նույն տեղում, էջ 246։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 245—246։

տերին անծանոթ, մեծահասակներին չհետաքրքրող (այլապես կաճեցնեին և շուկաներում կվաճառեին), աննշան պտուղի հմայքը, որ հեղինակն այն անվանում է անկրկնելի, «զմայլելի ու աննման» և անհուն կարոտով ու սիրով է խոսում այդ պտղիկի մասին։ Պատասխանը պարզ է դառնում «չտուտ»-ի եզրափակիչ հետևյալ տողերից.

«Այնչա՛փ ման եկա անկից ի վեր աշխարհիս վրա և ո՛չ մեկ տեղ չհանդիպեցա չեքլեմպիճի։ Ի զուր փնտրեր եմ զայն օտար երկինքներու տակ, ճամփաներուն երկայնքը ու անտառներուն եզրը։ Ու թերևս լավ է որ չեմ գտներ զայն վերստին, անգամ մը ևս չկրելու այն սրտաճմլիկ ցավը, որ հասուկ տարիքի թույնն է և Հիասթափություն կկոչվի, ու թերևս շնորհապարտ պետք է ըլլամ բարեխնամ դիպվածին, որ զայն կըպահե իր հեռավոր և անվերադառնալի քաղցրության մեջ, իմ Մանկությանս պես»[1]։

Անցած ու անվերադառնալի մանկության հիշատակներով է, ահա, թանկ ու աննման չեքլեմպիճ (չտուտ) պտուղը։ Նրա հետ ոչ մի միրգ, ոչ մի ուտելիք չի կարող համեմատվել, ինչպես ոչ մի բան մարդուն չի կարող պատճառել մանկության օրերի ուրույն քաղցրությունը։ Թո՛ղ որ մանկությունը լինի աննշան, ոչնչով աչքի չընկնող, չեքլեմպիճի պես աննկատ, միևնույնն է, այն մնում է անմոռանալի, հեռավոր ու անկրկնելի պայծառ երազ, մի երջանիկ պահ մարդկային կյանքում։ Բաշալյանը գտել է ինքնատիպ միջոց, հաղվագյուտ սեղմ տո-

[1] Նույն տեղում, էջ 247։

ղնրում և հուզական բուռն թափով վերարտադրելու համար մանկության «անվերադարձելի քաղցրությունը»։

* * *

Լևոն Բաշալյանի առաջին նորավեպի («Հմայաթափ») և գեղարվեստական վերջին ստեղծագործություններից մեկի՝ «Լոռուտ»-ի միջև ընկած է շուրջ քառասնամյա մի ժամանակաշրջան։ Եվ բոլոր այդ տարիներին, ինչպես նաև դրանից հետո ստեղծած իր երկերում, ավել կամ պակաս չափով, նա ի հայտ է բերել «կարճ ձևի» և սեղմ խոսքի ինքնուրույն վարպետի անուրանալի տաղանդ։ Նրա անունը սերտորեն կապված է արևմտահայ ռեալիստական արձակի, այդ թվում՝ նորավեպի և պատմվածքի սկզբնավորման ու զարգացման մեծ երախտավորներ, հայ դասական գրականության սիրված ու ճանաչված ներկայացուցիչներ Հակոբ Պարոնյանի, Ա. Արփիարյանի, Գ. Զոհրապի, Տ. Կամսարականի, Ե. Օտյանի, Ա. Չոպանյանի, Հ. Թլկատինցու, Երուխանի, Ռ. Զարդարյանի, Առանձարի և ուրիշների հայտնի անունների հետ։ Գրական այդ պայծառ համաստեղության մեջ ուրույն ու արժանի տեղ ունի Լևոն Բաշալյանը, որի սակավաթիվ, բայց բարձրորակ նորավեպերը հայ դասական նովելի փայլուն նմուշներից են։ Լ. Բաշալյանի ստեղծած «էպիկական փոքր ձևերին» հատուկ են այդ ժանրի հիմնական բնորոշ կողմերը՝ ծավալի փոքրություն և բովանդակության հարստություն, բնության ու հոգեվիճակների հակիրճ ու անհրաժեշտ նկարագրություն, գործողության արագ զարգացում, «դեպքերի ընթացքի խստորեն հետևողական շա-

րադրանք»[1], երբեմն անսպասելի, բայց իմաստալից վերջույթ, երգիծական երանգավորումներ, չափի նուրբ զգացում, լեզվական բարձր կուլտուրա։ Ռուսական արձակի մեծանուն վարպետ Ալ. Տոլստոյը մի առիթով գրել է. «Նովելը արվեստի դժվարագույն տեսակն է։ Մեծ վիպակում կարելի է «խոսքը կտուրը գցել» հրաշալի նկարագրություններով, սրամիտ դիալոգներով, ինչով ուզում եք. իսկ այստեղ դուք ձեր ամբողջ հասակով գտնվում եք ընթերցողի հայեցակետում։ Դուք պետք է լինեք խելոք. նշանակալից փոքրը ձեզ չի ազատում մեծ բովանդակությունից։ Դուք պետք է լինեք հակիրճ, ինչպես բանաստեղծը սոնետ գրելիս, բայց այդ հակիրճությունը պետք է ստացվի վարպետության խտացման ճանապարհով, միմիայն ամենաանհրաժեշտի ընտրությամբ»[2]։ Ահա այդ «վարպետության խտացման ճանապարհով» է ընթացել Լ. Բաշալյանը իր լավագույն նորավեպերն ու պատմվածքներն ստեղծելիս։ Նա կարողանում էր ընտրել ամենաանհրաժեշտը կյանքում, շոշափել ժամանակի ամենակենսական հուզող խնդիրները և դրանք բարձրացնել նույնիսկ սովորական, առօրյա, աննշան դեպքերի, դեմքերի, առարկաների, կենդանիների, երևույթների մասին պատմություններ հյուսելով։ Սովորական մի սրճարան, տարածված մի սիրահետում կամ սիրային ողբերգություն, հասարակ մի զգեստ, ձկնորսի մի փոքրիկ նամակ, մի կրիա, մի աղավնի, չերամի մի որդ, ավանդական մի ուխտագնացություն, մանկական առօրյա մի խաղ,

---

1 *М. Горький*, О литературе, М., 1953, стр. 377.

2 *А. Л. Толстой*, О литературе, М., 1956, стр. 355.

նոր տարվա մի դիմավորում, մի հանդիպում օտարերկրացու հետ—և ահա հյուսվում են այն գողտրիկ նորավեպերն ու պատմվածքները, որոնց մասին խոսեցինք։ Մեծածավալ երկեր չի ստեղծել Բաշալյանը, չի ընդգրկել համակողմանի, համապարփակ կենսագրվածներ, սակայն հյուսել է փոքր ու սրտահույզ իսկական դրամաներ ու ողբերգություններ, ըմբոստության, ազատագրական պայքարի, լավատեսության ու հայրենասիրության ոգով հագեցված «ճնճղուկի կտուցի չափ» փոքր, բայց սրտեր թափանցող և հոգիներ փոթորկող ստեղծագործություններ։ Վերջիններիս մեջ գրեթե միշտ ներկա է ինքը՝ հեղինակը, որը մերթ ունկնդիր է ու զրուցակից, մերթ դեպքերի ականատես ու մեկնաբանող, բայց միշտ էլ որոշակի վերաբերմունք է ցուցաբերում՝ սիրում է կամ ատում, ուրախանում կամ տխրում, կասկածում կամ հավատում, կարոտում կամ ափսոսում, խորհում ու դատում, բոլոր այդ բազմերանգ զգացմունքներն ու խոհերը լիովին փոխանցելով նաև ընթերցողին։ Բաշալյանի նորավեպերը և պատմվածքները իրական կյանքի «պատառիկներ» են, որոնք նա անվանել է «Նորավեպ Պոլսո կյանքե» («Հմայաթափ»), «Պարզ պատմություն» («Սյուզենի վարպետ», «Ջրի»), «Իրական պատմություն» («Փափուկ մարդիկ»), «Ժողովրդական բարքեր» («Պալըխճի Գևորգ»), «Փարիզյան կյանքե» («Սիրո գիշեր»), «Միջերկրականի հիշատակներ» («Կրիան», «Վրանին տակ»), «Կաղանդի պատմություն» («Կաղանդչեքը») և այլն։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե դրանով հեղինակը նախօրոք զգուշացնում է, թե տվյալ գործը ի՞նչ բնույթ ունի, ի՞նչի մասին է։ Սակայն դա արվում է է՛լ

ավելի շեշտելու համար ռեալիստական ստեղծագործության վավերականությունը, կյանքից առնված լինելու հանգամանքը. ընդգծելու համար դրանց հակադրությունը այն «եթերաճեմ բանաստեղծության, որ կապույտին մեջ կծնի ու անով կսնի, անուրջներով կօրորի և պատրանքներով կհեշտանա»[1]: Հայտնի է, որ նույն կերպ են վարվել նաև Ա. Արփիարյանը, որն իր ժողովածուն անվանել է «Կյանքի պատկերներ», Գր. Զոհրապը, որի նորավեպերն ունեն «Բժշկի մը պատմությունը» («Տալիլա»), «Բարեկենդանի պատմություն» («Դիմակը») և նման այլ ենթավերնագրեր, Ռ. Զարդարյանը, որ իր գործերը կոչել է «Մանկան մը պատմություն» («Պուտ մը ջուր»), «Մոխիրներու մեջեն» («Ցեղին զավակը»), «Գավառական կյանքի պատկեր» («Տերտերին հարսը»): «Ութսունականների» համար, որոնք բարձրացնում էին արևմտահայ ռեալիստական գրականության հիմքերը, հատկապես կարևոր նշանակություն ուներ իրական կյանքը վերարտադրելու փաստի ընդգծումը: Սակայն «կյանքի փաստն» ինքնին դեռևս արվեստ չէ և այդ մասին Բաշալյանը խոսել է իր գրական բեմելի առաջին իսկ շրջանում: Գնահատելով Գ. Զոհրապի «Անհետացած սերունդ մը» վեպը այն տեսակետից, որ հեղինակը «կը ներկայացնե մեզի կյանքն յուր մանրակրկիտ ճշտությամբ և ամեն երևույթներուն ներքև», Բաշալյանը նրան «առաջնակարգ վարպետ» է համարում, վեպի համառոտ բովանդակությանը ծանոթացնելուց հետո գրելով. «Այս կմախքին վրա հեղինակը ի՜նչ սրտագրավ և սրտահույզ դրվագներ հորինած է, ի՜նչ այլազան և հրաշալի

[1] Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 109:

պատկերներ ավելցուցած է»[1]։ Ստեղծագործական երևակայությամբ «կյանքի փաստերին» նոր հնչեղություն տալու, գեղարվեստական դրվագներ հորինելու և սրտեր հուզելու վարպետ էր նաև Բաշալյանը։

Նրա կերտած կերպարները արվեստագետ-գրողի «հորինած» մարդիկ են, բայց ոչ երևակայական ու մտացածին, այլ ամեն քայլափոխին հանդիպող, տվյալ հասարակության տարբեր անդամների, տարբեր խավերի ներկայացուցիչների որոշակի հատկությունների մարմնացումը։ Տեսանք, որ Բաշալյանը մտադրություն է ունեցել նաև վեպ գրել, մի բան, որ կարծում ենք կհաջողվեր նրան, որովհետև նրա «կարճ ձևերը» իսկապես մեծ վեպի «միջուկներ» են, ինչպես ասում են՝ «խտացված վեպեր»։ Իսկ ամեն մի բովանդակալից հակիրճության, լայն տարողություն ունեցող սեղմության, փոքր տարածության մեջ մեծ մտքեր դնելու կարողության ակնաղբյուրը գրականության մեջ՝ լեզուն է, Մ. Գորկու բնորոշմամբ «մարդագիտության արվեստի» այդ նախանյութը։ Այդ նյութին Բաշալյանը տիրապետում էր ըստ ամենայնի, ինչպես հմուտ ոսկերիչը իր նուրբ արվեստին։ Խոսքի արժեքը խորապես գիտցող մեծահամբավ Վահրամ Փափազյանը իր սրտառուչ հուշերում Բաշալյանին անվանում է մի «թավշահնչյուն արձակագիր», որի «գրչի տակ նախադասությունը ոսկերչի դժվարին արվեստով հղկված ադամանդազարդ գոհարեղեն էր»[2]։ Ինքը՝ Բաշալյանը բազմիցս ընդգծել է, թե հայոց

---

1 Տե՛ս «Մասիս», 1887, № 3877.

2 Վահրամ Փափազյան, *Սրտիս պարտքը*, 1959, էջ 133։

լեզուն եղել է իր համար պաշտամունքի առարկա, որի նկատմամբ «անսահման սեր» է տածել և ամեն ինչ արել է նրա «անարատ ու անստգյուտ պահպանման, անոր գեղեցկացման ու ճոխացման համար»[1]։ Խոսելով իր գրական գործունեության տարբեր շրջանների մասին, նա հատուկ անդրադարձել է գրական լեզվին. «Առաջին օրեն աշխատել եմ, որ անիկա ըլլա ճիշտ ու ճկուն գործիք մը, լավ լարված, լավ ագուցված, ձեռքի հլու-հնազանդ գործիք մը՝ կերպավորելու համար մտածումներդ ու զգացումներդ»[2]։ Համեստորեն լռելով հայ գրականությանը մատուցած իր ծառայությունների մասին, նա մի ցանկություն է հայտնել. «Կը բաղձայի, որ ինծի համար ըսվեր. «Հայ լեզվի խղճամիտ ու նվիրված աշխատավոր մը եղավ»։ Միտքս կուգա հիմա մեր գրականության մեկ մեծ վարպետին՝ Սայաթ-Նովայի հորդորը. «Գիր սիրե, ղալամ սիրե, դավթար սիրե»։ Ես կրնամ ըսել, թե բոլոր ուժովս սիրեցի գիրը, գրիչը և գիրքը»[3]։ Եվ պետք է ասել, որ հայոց լեզուն հղկելու, ճոխացնելու ուղղությամբ նրա իսկապես նվիրված ու արդյունավետ աշխատանքը գնահատվել է։ Բաշալյանի առաջին իսկ նովելի մասին խոսելիս Ա. Արփիարյանը առաջին պլանի վրա է դրել նրա «անստգյուտ ոճը և պերճ հայերենը», հետագայում նշելով, թե «մեր գրության մեջ տիրապետող հռետորական ոճը սկսավ կամաց-կամաց տեղի տալ վճիտ, դյուրըմբռնելի

---

1 Ճառ Լևոն Բաշալյանի, «Անահիտ», 1934, № 5—6, էջ 91։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 94։

ոճի մը»[1], այդ գործում մեծ է համարել նաև Բաշալյանի դերը։ «Ինչ որ ալ ըլլան իր գրչին եկած նյութերը, Բաշալյանը միշտ ազնվական ոճով կը գրե, կրնամ ըսել նաև՝ ազնվապետական»[2]։ Բաշալյանի լեզվի և ոճի մասին բուռն հիացմունք է արտահայտել ականավոր գրող և բանասեր Ա. Չոպանյանը։ Տակավին 1900-ին տալով Լ. Բաշալյանին նվիրված իր զեկուցման համառոտ բովանդակության շարադրանքը, նա գրել է. «Ըսի որ Միսաքյանն ու Գրիգոր Օտյանն հետո, Բաշալյանն է, որ ամենակարևոր դերը կատարած է մեր գրական աշխարհաբարին քերականական ու գեղեցկագիտական գրեթե վերջնական կազմավորումին մեջ և թե իր առույգ և վայելչաձև ոճով մը հագված ազնվոգի էջերը... և ներում նորավեպերը մեր արդի մատենագրության ամենեն շքեղ մեկ գլուխը կը կազմեն»[3]։ Շուրջ երեքուկես տասնամյակ հետո, Ա. Չոպանյանը նույն բարձր կարծիքն է հայտնել Բաշալյանի լեզվի և ոճի մասին։ Նշելով, թե Բաշալյանը կարճ ժամկետում թոթափում է իր ուսուցիչ Ռ. Պերպերյանի ազդեցությամբ ձեռք բերած «ռոմանտիկ ճաշակը», Չոպանյանը հաստատում է, թե նա ժառանգում է նույն «Հմուտ գրագետի» լեզվական կուլտուրան՝ «Հայոց լեզվին պաշտամունքը, ճարտար շարադրությունը, ճշգրիտ ու հստակ ոճի բծախնդիր հետամտությունը, և օժտված է ընե արվեստագետի խառնվածքով մը, կը դառնար քիչ հետո արևմտահայ աշխարհաբարի ամենեն վարպետ արվեստագե-

1 «Բանբեր գրականության և արվեստի», Ա գիրք, 1903, էջ 180։

2 Նույնը, Բ գիրք, 1904, էջ 176։

3 Տե՛ս «Անահիտ», 1900, № 6—8, էջ 190։

տը, այդ շրջանի ամենեն խնամոտ ու վայելուչ արձակագի-
րը»[1]: Ըստ Զոպանյանի՝ Բաշալյանը յուրացրել էր նաև ֆրան-
սիական ռեալիստ մեծ գրողների՝ Ֆլոբերի, Մոպասանի և
մյուսների լեզվական վարպետությունը՝ «Տարազրության մեջ
խտացում՝ ավելորդին հապավմամբ, նրբաշնակ ու հստակ
կառուցվածք՝ նյութին արտահայտման մեջ, ճշգրիտ ու հարա-
զատ լեզու («գտնել ամեն մեկ գաղափարի կամ զգայության
համար միակ ճիշտ բառը, որ կա և այն ֆրազին մեջ իր բուն
տեղը դնել», ինչպես կ՚սեր սքանչելի Ֆլոբերը իր աշակերտ
Մոպասանին), հակիրճ, ժուժկալ ու նույն ատեն վայելուչ, նոր,
լավ հավասարակշռված ֆրազներով ամուր և առույգ ոճ մը»[2]:
Չափազանց ուշագրավ է նաև Բաշալյանի ժամանակակից ու
հասակակից, նույնպես գեղարվեստական խոսքի հմուտ վար-
պետ Տ. Կամսարականի հեղինակավոր կարծիքը, որի համա-
ձայն «Իր արվեստովը՝ ան (Լ. Բաշալյանը— Ս. Մ.) գրելու գը-
րեթե վերջնական եղանակ մը ընծայեց նաև մեր արևմտահայ
գրականության»[3]:

Առանձին ստեղծագործությունների վերլուծության ժամա-
նակ մենք աշխատել ենք հնարավորին չափ ցույց տալ Լ. Բա-
շալյանի լեզվական վարպետությունը, ոճի հստակությունը,
պատկերավոր մտածողությունը, սեղմ ու գեղեցիկ շարադրան-

1 Ա. Չոպանյան, Լևոն Բաշալյանը և իր գործը, Բաշալյանի «Նորավեպեր և պատմվածքներ» գրքում, էջ Զ:

2 Նույն տեղում, էջ Է:

3 Տ. Կամսարական, Լևոն Բաշալյանի գրական գործը, «Անահիտ», 1934, № 5—6, էջ 90:

քը։ Կուզենայինք բերել ևս մի-երկու օրինակ միայն։ Ճնշման, կողոպուտի, վայրագության վարժված, իրեն ոչ հաճելի մարդկանց նկատմամբ ատելությամբ լեցուն մեկին բընութագրելու համար Բաշալյանն ասում է. «թույն կվազե երեսեն» («Թուրքահպատակի մը արկածները...»)։ Դրան հակառակ՝ հեզ ու բարի, գթառատ ու անչար մարդու մասին գըրում է. «բերանը աղ դիր մորթե» («Դրացուհին»)։ Երիտասարդի թշվառ վիճակի տևողականությունը, բայց ոչ հավիտենականությունը, նա մատնանշում է մեկ նախադասությամբ անգամ. «Քոթանակ մը չէր թվեր այդ վիճակը իրեն համար, այլ պատմուճան մը» («Ղալաթիո «բեսդ»-ը)։ Այսինքն՝ նա չէր կարող շուտով բարելավել իր դրությունը, ինչպես մարդիկ շուտ-շուտ փոխում են իրենց քոթանակը՝ ներքնաշորերը, բայց և հույսը լիովին չէր կորել տակավին, որովհետև պատմուճանը թեև ուշ-ուշ, բայց փոխում են։ Այդ նույն երիտասարդը մութ ու մռայլ է, երկարատև թերասնումից՝ նիհար ու հյուծված. «Մոլորուն ու խոր աչքեր ուներ, բայց խոր ա՛յնչափ, որ բիբերուն ցոլքը այնպես կվառեր հոն, ինչպես սիգառեթի մը ծայրը գիշերվան խավարին մեջ։ Այտերը այնչափ ներս քաշված էին, ու վտիտ այնքան, որ բերանին մեջեն զիրար կհամբուրեին կարծես»։ Նա չի հրաժարվել կյանքից, ապրելուց, բայց կիսամեռ դրության մեջ է, ուստի նրա ժպիտը՝ «գերեզմանի մը եզրը բուսած ծաղկի» տպավորություն է թողնում։ Փոթորկի ուժը հեղինակը վերարտադրում է հետևյալ պատկերով. «Փոթորիկը կաղինի մը պես կխաղցնե մեր շոգենավը» («Միջերկրականի հիշատակներ»), իսկ ֆիննական լճերի ու անտառների բազմա-

բանակությունը շեշտում է այսպես. «լիճ ու անտառ, անտառ ու լիճ անընդհատ պահվրտուք կխաղան երկաթուղիին հետ» («Թուրքահպատակի մը արկածները...»):

Օրինակները կարելի է բազմապատկել, սակայն պատկերավոր արտահայտությունների, համեմատությունների, դիպուկ, իմաստալից նկարագրությունների հանրագումար են Բաշալյանի լավագույն ստեղծագործությունները, ամեն մեկը մի-մի ամբողջական պատկեր, ուր յուրաքանչյուր բառ, արտահայտություն, լեզվագործածություն ունի իր ուրույն տեղն ու դերը և գործին հաղորդում է հստակություն, բանաստեղծական հնչեղություն, ախորժալուր երաժշտականություն, հաճույք պատճառելու ներգործուն մեծ ուժ։ Մենք հարկ չենք համարում ծանրանալ բուն տեքստից կտրված առանձին պատկերների վրա, գտնելով, որ առավել կարևոր է անդրադառնալ այն հարցին, թե Լ. Բաշալյանը ինչպե՞ս է հասել այն վարպետությանը, որ օրինական հիացմունք է պատճառել նրա մասին խոսք ասող բոլոր գրողներին ու բանաստեղծներին։

Ամենից առաջ նա ձգտել է՝ կարելույն չափ հարստացնել իր բառապաշարը, տիրապետել հայոց լեզվի հարուստ շտեմարանին, բառակազմության, շարահյուսության օրենքներին, խոսքի անսահման նրբերանգներին և «բառերով նկարելու» (Գորկի) դժվարին ու հաճելի արվեստին։ Իսկ լեզուն, ըստ Բաշալյանի, ումի՞ց պետք է սովորել առաջին հերթին։ Այս առթիվ նա ունի հետևյալ ուշագրավ դիտողությունը. «Իրերու և առարկաներու համար գրքերե առնված ու բանասերներե գործածված այնքա՛ն բառեր կան մեր մեջ, որոնց վրա կխնդա հայ

գյուղացին, երբ որ իր առջև կգործածես կանոնք։ Իրարու նման նող բաներու հատկացված են ատոնք՝ իրենց հմտությունը գրքերն քաղող ուսումնականներու կողմե, բայց բուն նշանակության քովն ի վեր կսլքտան։ Մեզի համար, որ դպրոցին մեջ սորվեր ենք մեր լեզուն, թաղար պետք է ըսել ծաղկամանին։ Կհիշեմ, որ Ալեքսանդրապոլի մեջ, հայ պառավի մը մատնանիշ ընելով իր պարտեզին անկյունը ծաղկաման մը, ըսի իրեն.

—Օ՜, թաղար ալ ունիս։

— Թաղա՞ր,— զարմացավ պառավը ժպտելով։ Տո՛ւնդ չքանդվի, թաղարը էն ամանն է, որուն մեջ թոնիրեն ավելցած մոխիրը կդնենք»[1]։

Պարզ երևում է, որ Բաշալյանը առաջնությունը տալիս է ժողովրդի մեջ գործածական, ամենքին մատչելի, հասկանալի լեզվին, որի վրա ոչ թե «խնդա հայ գյուղացին», այլ նրա միջոցով հաղորդակից դառնա կյանքին, աշխարհին. չէ՞ որ գեղարվեստական գրականությունը ստեղծվում է ժողովրդի, Աբովյանի ասած՝ «հարիր հազարի» համար և ճանապարհ չի հարթի դեպի մարդկանց սիրտը, չի ծառայի ժողովրդի կենսական շահերին, ուրեմն՝ չի արդարացնի իր սրբազան կոչումը, եթե մատչելի չէ զանգվածներին։ Սակայն այս չի նշանակում, թե Բաշալյանը կոչ էր անում գրել այն խոսակցական լեզվով, որ գործածում էին գյուղացիները, արհեստավորները, ձկնորսները, առևտրականները և մյուս խավերը, թե առհասարակ դեմ էր «գրքերն առնված» բառերին։ Նա չի ժխտել երբեք մեր

---

1 Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 244։

գարավոր մշակույթի հոխ ու հարուստ լեզվի՝ գրաբարի նշանակությունը, որով սնվել է ինքը դպրոցում և ամբողջ կյանքում օգտագործել է գրաբարյան բազմաթիվ բառեր, գործածություններ, երբեմն նույնիսկ՝ ոչ անհրաժեշտաբար (գոգցես, կերպիվ իվիք, ի վեր անդը, ևս քան զևս և այլն)։ Նա պարզապես բառամթերքի խնլացի, մտածված, ըստ հարկի ընտրության և տեղին գործադրման պահանջն է առաջ քաշում։ Այս իմաստով ուշագրավ է նաև նրա գրախոսությունը Միհրան Հովհաննիսյանի «Քնարիկ» ժողովածուի մասին, որը լույս է տեսել Կ. Պոլսում, 1895-ին և, հեղինակի կարծիքով, պարունակում է «ժողովրդական երգեր»։ Բաշալյանը հենց սկզբից այն միտքն է հայտնում, թե իսկական ժողովրդական երգը մի «ճշմարիտ գոհար» է, ուր յուրաքանչյուր բառ, պատկեր, համեմատության կոնկրետ ու որոշակի տեղ ու դեր ունի տողի, քառյակի, ամբողջ բանաստեղծության ճարտարապետական ընդհանուր կառուցվածքի մեջ։ Իբրև օրինակ՝ նա բերում է մի բնորոշ քառյակ մեր ժողովրդական բանահյուսությունից.

Հոգեկս ես, հոգեկս ուզես,
Չէ չասեմ, հանեմ տամ քեզ.
Վախնամ թե աչերս ուզես,
Ալ ինչո՞վ նայեմ ես քեզ։

Այսպես է ստեղծվում պարզն ու վսեմը, երբ սովորական, «շարքային» բառերով վերարտադրվում են իմաստալից մտքեր, խորունկ խոհեր և հույզեր. «Ժողովրդական բանաստեղծություն մը գրելու համար,—եզրակացնում է Բաշալյանը,—ոչ

միայն պետք է գիտնալ խոսված լեզվին բոլոր դարձվածքները, հապա կարենալու է զգալ ու արտահայտել ճիշտ ժողովրդին պես»[1]: Իսկ ժողովուրդը շարունակ հղկում, կոկում, հարստացնում է լեզուն և չի սիրում ավելորդ խոսք, փքունություն, ճառայնություն: Ահա ես մի օրինակ, որ բերում է Բաշալյանը, ցույց տալու համար, թե ժողովուրդն ինչպե՜ս է երգում սիրած աղջկա գեղեցկությունը.

Ուստի կուգաս հուշիկ-հուշիկ,
Թուխ-թուխ աչեր, սպիտակ թուշիկ,
Կարմիր երես, պագն անուշիկ:

Ընդամենը երեք տող՝ և մեր առաջ կենդանի կանգնում է թխաչ, սպիտակաթուշ, կաքավաքայլ հայուհին:

Ահա ժողովրդական երգերին հատուկ այդ սեղմությունը, բովանդակալից հակիրճությունը և իմաստալից պատկերավորությունն է, որ անտեսել է «Քնարիկ» ժողովածուի հեղինակը: Նա սկզբում հորինել է հանգեր ու վանկեր, ապա ճգնել է դրանց «հարմարեցնել» միտքը, ստեղծել է փքուն բառերի կույտ, «խալպ»՝ կեղծ ու շինծու «խաղեր»... Ոչ բառամթերքի ընտրությունն է հաջող կատարել և ոչ էլ կարողացել է կառուցել երգը: Մինչդեռ իսկական գրողը, արվեստագետը պետք է ոչ միայն լավ իմանա մայրենի լեզուն, այլև կարողանա հնչեցնել այն յուրովի, առանց կրկնելու ուրիշներին, միայն իր սեփական ձայնով, ոգով ու ոճով: Այս մասին շատ է խոսվում

[1] Լ. Բաշալյան, Նոր գրքեր, «Հայրենիք», 1895, № 1152:

Լ. Բաշալյանի բազմաթիվ հոդվածներում, բայց կուզենայինք նշել նաև «Պալըխճի Գևորգ» պատմվածքը, որն ուղղակի մի խոսում, գեղարվեստական «փաստաթուղթ» է, ուր ոչ թե ասվում է, թե ինչ պիտի անել, այլ ուղղակի արվում է այն, ինչ ճիշտն է հեղինակի համոզմամբ։ Պատմվածքում մեջ բերելով ձկնորսի նամակը, հեղինակը «ղեղչել», դուրս է նետել մի շարք կոպիտ, գռեհիկ, իր ասած՝ «բիրտ» բառեր ու արտահայտություններ, որոնք կարող էին «շատերու դյուրազգացությունը վիրավորել»։ Նա թողել է, սակայն, ժողովրդական լեզվի շունչը, ոգին, պատկերավոր խոսքը, «ժողովրդական նրբամտությունը», որը հանդես է գալիս «սրախոսություններու, առածներու, խոսքի դարձվածքներու, բառախաղերու և այլնի մեջ», գործածել է այնպիսի բառեր, պատկերներ, համեմատություններ, որոնք լիովին դրսևորում են ձկնորսի հարափոփոխ զգացումները, հոգեվիճակը, մտորումները։ Ահա, թե ինչու նամակն ստացվել է «այդքան աղեցիկ ու այդքան անկեղծ»։ Ուրեմն գրողը, ըստ Բաշալյանի, պարտավոր է խստիվ ընտրություն կատարել, օգտվելով մայրենի լեզվի անսպառ գանձարանից, ճոխ ու ճկուն գրաբարից և կենդանի խոսակցական լեզվից, վերցնել ամենաանհրաժեշտը, գեղեցիկը, իմաստալիցը, որ ամենից ավելի պիտանի է տվյալ երևույթը, հոգեվիճակը, առարկան, գործողությունը բնութագրելու համար, տվյալ միտքը կամ զգացմունքը արտահայտելու համար։

Իսկ ի՞նչ է անհրաժեշտ նման ընտրություն կատարելու, գեղարվեստական խոսքի վարպետությանը տիրապետելու հա-

մար։ Անհրաժեշտ է, ամենից առաջ՝ մշտական, անխոնջ, քրտնաջան աշխատանք, այն «դժվար տքնությունը», առանց որի՝ Չարենցի խորին համոզմամբ՝ անհնար է հասնել պարզ ու վսեմ արվեստի բարձունքներին։ Այս գիտակցությամբ է ստեղծագործել Լ. Բաշալյանը, և այս մասին ուսանելի գիտողություններ ունի նա «Թուրքահպատակի մը արկածները մեծ պատերազմին ատեն» ճանապարհորդական նոթերում։ Այստեղ նա հավաստում է, որ նույնիսկ թարգմանության փորձեր անելիս, ինքը միշտ տքնել է, ուղղակի քրտինք թափել։ Հիշատակելով իր անձուկ հոգեվիճակը Ֆիննական բանտում, ուր առաջին աշխարհամարտի տարիներին մեկ շաբաթով նրստեցնում են իրեն իբրև Անտանտի տերությունների թշնամի Թուրքական պետության հպատակ, Բաշալյանը գրում է. «Փըրկությունս Վերհարնը եղավ, որուն քերթվածները հայերենի կթարգմանեի ժամերով, առանց ընկրկելու անասելի դժվարություններեն, որոնց տեղյակ են իրազեկները. ընդհակառակը, խոչընդոտները որքան մեծ ըլլային, այնքան ավելի համառությամբ կմխրճվեի անոնց մեջ, մինչև ամեն բան մոռանալու աստիճան, բոլոր էությամբս անձնատուր ամբողջական ճիգին, որ կպրկեր ուղեղս... Ամեն դժվարության հետզհետե հաղթելու, ուզած հարուստ և անբռնազբոս հանգերս գտնելու և կատարելության մոտենալու բերկրանքը երբեմն ճաշին մինչև ընթրիք կտանեին զիս անզգալաբար։ Չաշխատած ժամերուս ու անկողնիս մեջ ալ, չափեր ու հանգեր էին, որ կլլկեին միտքս։ Հատած մը օրերով տանջեց զիս»[1]։ Բերելով այդ հատածը, որ

1 Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 265—266։

երկու տողից է կազմված, Բաշալյանը խոսում է չափի ու հանգի, ռիթմի ու երաժշտականության մասին, մերժում բառերի «կարծր բախումը», պաշտպանելով «ամեն բանե առաջ երաժշտություն» սկզբունքը, որպես բանաստեղծական միտքը և հույզը տեղ հասցնելու միջոցներից մեկը:

Ավելորդ է ասել, որ թարգմանության վրա այսքան ճիգ ու ջանք թափող գրողը, և այն էլ թարգմանության, որ կատարել է լոկ իր համար, չմտածելով անգամ տպագրության մասին[1], ի՜նչ լարվածությամբ ու պարտքի խոր գիտակցությամբ պետք է աշխատեր իր ինքնուրույն երկերն ստեղծելիս: Եվ արդյունքն այն տեղին, իրավացի հիացմունքն է, որ պատճառել է Բաշալյանի լեզվական կուլտուրան հեղինակավոր շատ գրողների ու բանասերների: Գրողներից և գրականությունից Լ. Բաշալյանի սպասելիքները, նրանց անելիքների վերաբերյալ կարծիքներն ու խորհուրդները մենք արդեն տեսանք նրա գրական հայացքներին ծանոթանալիս: Մեզ թվում է, սակայն, որ անհարկի խստություն է հանդես բերել խոսքի ականավոր վարպետ Ա. Շիրվանզադեն՝ Լ. Բաշալյանի ստեղծագործություններից քաղված մեկ պարբերության հիման վրա՝ նրա ոճը համարելով «չերթ ու գիրիլ»[2]: Նշենք անմիջապես, որ այդ

---

1 Բաշալյանը գրում է. «Չեմ գիտեր, թե ինչի՞ կայանք տվի վերջապես. ու երբեք ալ պիտի չգիտնամ», քանզի չի պահպանվել այդ թարգմանությունը (նույն տեղում):

2 Ա. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 10, 1962, էջ 674:

պարբերությունը բերված է վրիպակներով և առհասարակ բավականին երկարաշունչ է, պատշաճ չափով չհղկված։ Եվ, այսուամենայնիվ, Շիրվանզադեի ղայրույթը մենք հակված ենք վերագրելու ոչ այնքան, ավելի շուտ ոչ թե Լևոն Բաշալյանին, այլ այն թյուր տեսակետին, ըստ որի «արևմտահայ բարբառը» ավելի հարուստ է, ճկուն, գեղեցիկ, օրինակելի, ուստի արևելահայ (ռուսահայ) գրողները պարտավոր են «հետևել տաճկահայ գրողների ոճին ու լեզվին», ուղղակի գրել արևմտահայերենով։ Ծանրակշիռ նկատառումներով, համոզիչ փաստերով հերքելով ու մերժելով այդ հավակնոտ, անիմաստ «լեզվաշինությունը», Ա. Չոպանյանին ուղղած նամակում Ա. Շիրվանզադեն գրում է. «Բաց եմ անում հենց «Անահիտի» առաջին համարը, կարդում եմ առաջին պատահած էջը և ահա ինչ գոհար եմ գտնում. «Կարմիր ու վարդագիսակ ճերմակ ժերանիումներու (ժերանիումներու)[1] փարփառ ու դիմացես գործերուն (դիմացկուն գույներուն) պռոթկումովը, պոռոտ ածուներու մեջտեղ, մարգագետին մը, հատակ ու պարզ, իր կակուղ, հորդ ու թավ կանաչությունը կը ղեղուր, հյուսիսի այն խոշոր (յուղոտ) ու թավշային կանանչը, այնքա՛ն ուժով ու հյութեղ, այնքա՛ն պատկերը (պատկերի), ներկի կանաչ մը, որ ալ արհեստական կը թվի»։ Եվ այսպես գրում է Ձեր գոված ու փառաբանած Լևոն Բաշալյանը և այսպիսի մի ղերթ ու գիրիլ ոճ մեզ համար Դուք օրինակելի եք համարում»[2]։

---

[1] Փակագծերում տալիս ենք ճշտված տեքստի բառերը։

[2] Ա. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 10, էջ 674։

Շիրվանզադեի մեջ բերած պարբերությունը Բաշալյանի «Ցեղին ձայնից», իհարկե, բավականին դժվարամարս է (էլ չենք խոսում վրիպակների մասին) և բարդ։ Եվ առհասարակ Բաշալյանի ստեղծագործությունը, նրա լեզուն ու ոճը բացառապես անթերի, բացարձակ կատարելության տիպար համարելուց հեռու ենք մենք։ Ինքը Բաշալյանը իրավացիորեն գրել է, թե «Անթերի բան չկա այս աշխարհիս վրա»[1]։ Նրա թերությունները մենք աշխատել ենք չքողել, առանց, սակայն, ծանրանալու դրանց վրա։ Ինչ վերաբերում է Շիրվանզադեի նշած պարբերությանը, ապա մեր համոզմամբ, դա «խառնափնթոր դարձվածքների» հավաքածու չէ, որը «կարդալիս ընթերցողի գլուխն է պտտում և սիրտը խառնում»[2]։ Իր հիշյալ նամակում Ա. Շիրվանզադեն, վրդովված այն բանից, որ ոմանք աղքատ, թույլ էին համարում արևմտահայ գրական լեզուն, ինքն էլ ի պատասխան դատապարտում է արևմտահայերենը՝ գտնելով, որ այն «չունի կրակ, հյութ և մանավանդ դրամատիզմ. ահա ինչու ազդեցիկ դեպքեր ու տեսարաններ նկարագրելու համար անպետք է»[3], համոզմունք հայտնելով, թե «կհաղթի այն բարբառը, որի գրականությունը ավելի կենսունակ ու հարուստ կլինի»[4]։ Տարիներ հետո անդրադառնալով նույն հարցին, Շիրվանզադեն գրել է (1919). «Ապագան պատկանելու է երկուսին

---

1 Լ. Բաշալյան, Ընտիր երկեր, էջ 246։

2 Ա. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 10, էջ 674։

3 Նույն տեղում, էջ 675։

4 Նույն տեղում, էջ 673։

էլ, բայց երկուսին միացած։ Ոչ մեկը նրանցից չի հաղթել և ոչ մեկը չի պարտվել։ Նրանք կմիանան ու կձուլվեն և մենք կունենանք մի հարուստ ու սքանչելի գեղարվեստական լեզու։ Ռուսահայ բարբառը ձուլարանի մեջ կձգե իր ժողովրդական առողջությունը և իր դրամատիզմը, Թուրքահայ բարբառը՝ գրաբարից վերցրած ընտիր բառերը և ֆրանսերենից յուրացրած նրբությունները»[1]։ Ահա այդ ընտիր բառապաշարի, լեզվական նրբության ու պարզության համար է ըստ արժանվույն գնահատվել նաև Լ. Բաշալյանը, որի նույն «Ցեղին ձայնը» կարդալուց անմիջապես հետո Շիրվանզադեն գրել է. «Լ. Բաշալյանը զուրկ չէ շնորհքից, գիտե հետաքրքրել»[2]։ Այո, Բաշալյանը շնորհալի արձակագիր էր և խոսքի նուրբ վարպետ, որի ստեղծագործությունը, ժամանակակիցների միահամուռ վկայությամբ, սկզբից ևեթ «խանդաղատեց, գորովեց, գրավեց, սրտապնդեց երիտասարդն ու ծերը»[3]։ Այս իրողությունը հաստատող բազմաթիվ փաստերից կուզենայինք հիշատակել մի-երկուսը ևս։ Բաշալյանի ստեղծագործության նկատմամբ խնկապես խանդաղատանքով ու գորովանքով լցված «երիտասարդն ու ծերը»՝ փարիզահայ ուսանողները, տեղի ուսանողաց միության դիվանի նախաձեռնությամբ և մի շարք անվանի գրական-հասարակական գործիչների՝ Ա. Չոպանյանի, Ն. Օտյանի, Սիամանթոյի, Զ. և Տ. Եսայանների, Ա. Պարթևյանի և ուրիշների

---

1 Նույն տեղում, էջ 574։

2 Նույն տեղում, էջ 670։

3 «Բանբեր գրականության և արվեստի», Բ գիրք, 1904, էջ 175։

մասնակցությամբ, տակավին 1900 թվականի մայիսին հարկ են համարել մի երեկույթ կազմակերպել ի պատիվ Լոնդոնից ժամանակավորապես Փարիզ ժամանած սիրելի գրողի: Հոբելյանական որևէ տարեթիվ չկար նշելու: Ինքը՝ Բաշալյանը հեռու էր փառասիրությունից, մեծարվելու, թմբկահարվելու տենչից: Այդ երեկույթը պարզապես հայրենանվեր գրողի և հրապարակագրի նկատմամբ ինքնաբուխ սիրո, նրա վաստակին արժանին հատուցելու ներքին ցանկության անկաշկանդ արտահայտությունն էր: Ժամանակակիցները հենց դրանով են բացատրում այդ օրերին գժտված, իրար դեմ լարված «հակառակորդ բանակների»՝ այսպես կոչված հակաչոպանյանների և չոպանյանների համատեղ մասնակցությունը երեկույթին[1]: Մանավանդ՝ նրանց պարագլուխներից մեկի՝ Ա. Չոպանյանի նախագահությունը և մյուսի՝ Ս. Պարթևյանի բանախոսությունը: Մանավորաբար Չոպանյանը այդ առթիվ գրել է, թե միմիայն Բաշալյանի նկատմամբ ունեցած հարգանքից է, որ ինքը հանձն է առել նախագահելու երեկույթին: Այս է վկայում նաև Ե. Օտյանը, ըստ որի, հավաստիանալով, թե բանախոսության մեջ իր մասին որևէ վիրավորական ակնարկ

---

[1] Ե. Օտյանի հուշերում այս մասին կարդում ենք. «Սուրեն Պարթևյան արդեն իր «Վաղվան ձայնը» հրատարակած էր Մանչեսթրի մեջ և կատաղի պայքար մը մղած էր Արշակ Չոպանյանի դեմ:

«Վաղվան ձայնը» դադրելեն ետքն ալ (արդեն միայն հինգ թիվ լույս տեսած է) խուլ հակառակությունը մնացած էր Չոպանյանի և Պարթևյանի մեջ: Այս վերջինը առանձին չէր և իրեն հետ ուներ ամբողջ հակաչոպանյան խմբակ մը...»: (Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 207—208):

չի լինելու Պարթևյանի կողմից, Ա. Չոպանյանն ասել է. «Եթե այդպես է՝ շնորհակալությամբ կընդունիմ նախագահությունը. մանավանդ, որ Լևոն Բաշալյան իմ լավագույն բարեկամներես մին է և ինձի համար հաճույք մըն է ի պատիվ իրեն տրված երեկույթի մը նախագահել։

.... Հետո առաջին անգամ ինքը խոսք առավ ու Բաշալյանըն ու իր գրականությունը ներկայացուց ներբողալից բառերով»[1]։

Իրոք, մի անկեղծ ու անկաշառ «ներբողական» է Չոպանյանի բացման խոսքը։ Ներկաների բուռն հավանության արժանացած իր խոսքում նա Բաշալյանին բնութագրում է որպես մտքի ու մշակույթի նրախտավոր մշակ, ազնիվ բնավորություն ու կարող գրիչ, որը միշտ ձգտել է «ազնվության, անձնվիրության, խրոխտության տարրը մտցնելու մեր խառնաշփոթ և ցլդիկ բարքերուն մեջ», շեշտում է նրա առաջատար և բազմարդյուն գործունեությունը արևմտահայ աշխարհաբարի զարգացման, հարստացման, հղկման բնագավառում, նրա «մշտատև ջանքը» հայ գրականությանը և հարազատ ժողովրդին «օգտակար ըլլալու» ուղղությամբ[2]։ Ուշագրավ է, որ մեկ տարի հետո նորից անդրադառնալով այդ երեկույթին, Չոպանյանը գրել է. «Միշտ հիացմունք հայտնած եմ իր (Բաշալյանի—Ս. Մ.) ճապուկ, նուրբ ու վայելուչ արձակին, իր տաք ու գորովագին զգայնությանը, ընկերական ցավերու ըմ-

---

1 Ե. Օտյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 208—209։

2 Ա. Չ. (Չոպանյան). Երեկույթ մը ի պատիվ Լևոն Բաշալյանի, «Անահիտ», 1900, № 6—7—8 (միացյալ), էջ 190։

բռնման մեջ իր դրած անկեղծ ու մարդկային շեշտին, այն կարևոր դերին, որ կատարած է մեր աշխարհաբարի պարզացման մեջ և այն օգուտին, որ իր ազնիվ ձգտումներ քարոզող հրապարակախոսական հոդվածները բերած են մեր հասարակության»[1]: Բայց երեկույթում Բաշալյանին մեծարելու գործում Պարթևյանը ձգտել է «գերազանցել» Զոպանյանին, նպատակ ունենալով՝ «Բաշալյանին բարձրացնելով հանդերձ՝ հարվածել Զոպանյանը», ուստի նրա բանախոսության մեջ՝ «Լեվոն Բաշալյանի գրական տաղանդին վրա արդար գովեստներու հետ՝ ծայրե ի ծայր թունալից ակնարկություններ կար Զոպանյանի հասցեին»[2]: Մանրամասնությունների մեջ չմտնելով, նշենք, որ Պարթևյանն իր բանախոսությունում արևմտահայ նոր գրականությունը բաժանել է երեք հիմնական շրջանի՝ «պատվելիական շրջան», «իրապաշտ դպրոց» և «անորակելի գրականություն», վերջինս չափազանց թափանցիկ ակնարկներով կապելով Զոպանյանի ստեղծագործության հետ, առանց, իհարկե, նրա անունը հիշատակելու: Զոպանյանին «խոցելու» համար, նա հատկապես բարձր է գնահատել «իրապաշտ դպրոցի» ավելի ավագ սերնդի ներկայացուցիչներին, Բաշալյանին համարելով այդ դպրոցի ամենակարկառուն դեմքը: Նույն միտքն է պարզացրել նա՝ նաև «Խարազան» (1900, Փարիզ) գրքույկում, Ե. Օտյանի բնորոշմամբ՝ «պարսավատետրում», որտեղ արդեն բացահայտորեն հանդես գալով Զո-

1 Ա. Զ. (Զոպանյան), Գրքեր և թերթեր, «Անահիտ», 1901, № 3, էջ 77:

2 Ե. Օտյան. Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 208—209:

պանյանի դեմ, Բաշալյանին բնութագրել է որպես «անեղերական հասկացողությամբ գրագետ»: Ու որքան էլ մենք չհամաձայնվենք չափազանցված գովեստների, շռայլ մակդիրների հետ, չենք կարող չնկատել թե Զոպանյանի, թե Պարթևյանի ջերմ վերաբերմունքը Բաշալյանի նկատմամբ: Իհարկե, անձնական ինչ-որ շեշտ կա այդ վերաբերմունքի մեջ, սակայն Բաշալյանի հանդեպ սերն ու հարգանքը ընդհանուր էր, որ դրսևորվել է ոչ միայն գրական-մտավորական շրջաններում, այլև ժողովրդական զանգվածների լայն խավերում[1]: Ահա միայն մի փաստ: Երբ Բաշալյանը 1905-ին մեկ ամսով այցելեց Եգիպտոսում բնակվող հարազատներին (մորը, քրոջը և եղբորը), նրան սրտաբաց ընդունեց ամբողջ եգիպտահայությունը: «Իր գալուստը,—գրել է Ե. Օտյանը,—ուրախությամբ ընդունվեց, բնականաբար, իր բարեկամներուն կողմե, որոնց մեծ մասը Եգիպտոս կը գտնվեր նույն ատեն: Եգիպտոսի մտավորական երիտասարդությունն ալ ջերմ ընդունելություն մը բրավ իրեն ու թե Գահիրեի և թե Ալեքսանդրիո մեջ ի պատիվ իրեն սեղաններ տվավ»[2]: Արևելահայության մեջ ևս Բաշալյանը ճանաչված ու սիրված դեմք էր: Արդեն ասել ենք, որ նրա նորավեպերն ու պատմվածքները դեռևս 1901—1902 թվականներին տպագրվել էին Ա. Արասխանյանի «Մուրճ» ամսագրում

1 Բնորոշ է, որ ինքը՝ Լ. Բաշալյանը նույն երեկույթում բանախոսել է «Հանրության ծառայելու իդեալը» թեմայով, գրողի հիմնական կոչումը համարելով ծառայել ժողովրդին (տե՛ս «Անահիտ», 1900, № 6—7—8, էջ 190):

2 Ե. Օտյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 395:

(«Ղալաթիո «Բեսգ»-ը», «Տերտերին ուխտը», «Խաչախչին», «Աղավնիներ», «Վրանին տակ») և «Հայ գրողներ»-ի երկրորդ գրքում (1910), ըստ որում հայ գրականության այդ հատընտիր-ծաղկաքաղի մեջ մեկ հեղինակից չորս ստեղծագործության ընդգրկումը մեծ պատիվ էր Բաշալյանի համար։ Սակայն նրա տաղանդի հանրային գնահատման ուղղությամբ ամենանշանակալիցը պետք է համարել անվանի գրողի և հրապարակախոսի գրական-հասարակական գործունեության 50-ամյա հոբելյանի տոնակատարությունը, որը տեղի ունեցավ 1934-ի փետրվարի 24-ին Փարիզում, Մյութուալիթեի սրահներից մեկում, Հայ գրողների ընկերակցության միության նախաձեռնությամբ։ Այդ հոբելյանի մասին սփյուռքահայ մամուլում ասված է. «Հայ մտավոր կյանքի նշանակալից տոն մըն էր այս, ուր փառաբանվեցավ ժամանակակից հայ արձակի նրբագույն արվեստագետներեն մին»[1]։ Հոբելյարի կյանքի ու գործի վերաբերյալ հմտալից զեկուցումներ են կարդացել Ա. Չոպանյանը և Անայիսը (Եվփիմե Ավետիսյանը)։ Առաջինի զեկուցումը նախ տպագրվել է «Անահիտ»-ում (1934, № 5—6), ապա հեղինակը վերամշակել և դարձրել է Լ. Բաշալյանի «Նորավեպեր և պատմվածքներ» (1943 թ. Փարիզ) ժողովածուի առաջաբանը, որին մենք արդեն անդրադարձել ենք։ Ինչ վերաբերում է Անայիսին, ապա իր ելույթի առթիվ նա հետագայում գրել է. «... Մասնակցեցա Լ. Բաշալյանին ի պատիվ եղած հավաքույթին խոսողներուն և պատմեցի, ինչ որ գիտեի

1 «Անահիտ», 1934, № 5—6, էջ 95։

իր մասին Պոլսո մեջ, ի վեր հանելով իր ոճաբանի անմրցելի տաղանդը և փափագ հայտնելով, որ Թողլով ամեն գրաղում, նորեն գրականության տա ինքզինքը»[1]: Ցերեկույթում, սակայն, մի առանձին ուժով է հնչում Բաշալյանի վաղեմի բարեկամ և գրչեղբայր, անվանի արձակագիր Տ. Կամսարականի ողջույնի խոսքը, որ նա հղել է հոբելյարին՝ Ա. Չոպանյանին հասցեագրված սրտառուչ նամակում: Խորին երախտագիտությամբ ընկալելով այդ խոսքը, Բաշալյանը հատուկ շնորհակալություն է հայտնել Կամսարականին, «որուն հոյակապ նամակին ընթերցումը,—ինչպես ինքն է ասել,—գրական վայելք մը եղավ ամենուս»[2]: Թերևս ինչ-որ չափով հանդիսավորության շունչ կա Կամսարականի նամակում, սակայն դա անկեղծ և սրտաբուխ խոսք է, Բաշալյանի գործունեության, գրական վարպետության, լեզվի ու ոճի, հայրենի գրականությանը և ժողովրդին մատուցած ծառայությունների սեղմ ու ջերմ գնահատականը: Ցավ հայտնելով, որ չի կարող անձամբ ներկա լինել իր «սիրելի բարեկամի» հոբելյանական ցերեկույթին և դիմելով բանախոսող Ա. Չոպանյանին, նա գրում է. «Գիտես որ հիսուն տարիներու հիշատակներով նվիրագործված բարեկամություն մը կը կապե զիս Բաշալյանին: Կուզեի իր մոտ ըլլալ այսօր մեր բարեկամության հոբելյանը ընելու պես ... Կը երևակայեմ, թե ինչ ջերմ ու պերճ բառերով պիտի պանծացնես Բաշալյանին գրական վաստակը. տեղն է ըսել՝ «նկա-

1 Անայիս, Հուշեր, Փարիզ, 1949, էջ 329—330:

2 Ճառ Լևոն Բաշալյանի, «Անահիտ», 1934, № 5—6, էջ 94:

բողը արժանի է նկարչողին»։ Ինչ որ ինծի կը մնար՝ ձայնակից միայն ըլլալ էր քեզի, բայց հոգեկան պետք մըն է ինծի՝ արտաքուստ մեկ բառըս միացնել գոնե քուկիններուդ ու հայտնել իմ խոր ու անայլայլ հիացումս իր շքեղ ու մեծ տաղանդին համար։

Գրական բարձր խղճմտանք մը եղավ Բաշալյան։ Խմբեն («ութսունականների»—Ս. Մ.), որուն կենսատու մեկ տարրն էր ինքը, իր դեմքը ամենեն վեր կը բարձրանա իբր զուտ, ամենահարազատ, տիպար գրագետ։ Ազնվական հոգի մը «կը քալե» իր տողերուն մեջեն, ու իր բառերեն հյութ կը հոսի՝ եթե կտրենք զանոնք։ Իրմով մանավանդ մեր գրականությունը պիտի ստանար տակավ ֆրանսերենին շնորհներն ու անոր ժուժկալության թափանցուն հրապույրները։

Բաշալյան իր խոր շնչով ու իր խորհրդապաշտ գրչին հմայքովը նպաստեց սրբելու հայ զգայնությունը, ու ան իր դերն ունեցավ այդպես՝ երեկվան հայ սերունդին ազգային հոգեկան կազմության մեջ։

Իր արվեստովը՝ ան գրեթե վերջնական եղանակ մը ընծայեց նաև մեր արևմտահայ գրականության։ Իրեն է, որ խորհեր եմ ամեն անգամ որ գրական դեմին հաճախանքը կրեր ու փորձեր եմ։ Եթե ձեր ոճն է որ կը պահպանե, կը զմռես խորքը։ Բաշալյանին գործը, իր տեսակ մը կատարելությամբը, պիտի դիմանար, կը հավատամ, ժամանակի ավերներուն։ Չեմ գիտեր արժանիք մը, որ ասկե ավելի զուգնագյուտ (զույգն-բառից— Ս. Մ.) ըլլա գրական արտադրության մը համար։

Իր արվեստագետի հոգին չինչ գեղեցկության ցոլքով

ոլիտի ծածանի միշտ իրեն ժամանակակից հայ մտածման վրա: Իր գրական գործը թանկագին վկայություն մըն է հայ հոգեկան շարժումներուն՝ շրջանի մը մեջ՝ այնքան թրթռուն հայրենասիրական վսեմ հուզումներով, բայց եղերական նաև, ավա՜ղ, անագորույն անլուր աղետներով...»[1]:

Մեջբերումը մեծ ստացվեց, բայց այնքան խոսուն է, դիպուկ ու բնորոշ, որ հարկ չհամարեցինք կրճատել, անհրաժեշտ չգտնելով նաև որևէ մեկնաբանություն: Կուզենայինք միայն ավելացնել, որ հոբելյանական ցերեկույթում Լ. Բաշալյանի շնորհակալության խոսքը նրա ազնիվ հոգու, համեստության, մարդկայնության և հայրենասիրության մի նոր վառ դրսևորումը եղավ: Հաղորդելով կարևոր ինքնակենսագրական տեղեկություններ, իր խոսքում նա գնահատում է գրչակից ընկերներին և հայրենիքի, մայր լեզվի, հայրենի գրականության ու մշակույթի սերն է պատգամում սերունդներին: Հենց սկզբից նշելով, թե «իմ համեստությունս երբեք այսքան մեծ փորձանքի հանդիպած չուներ», նա հատուկ ընդգծում է, որ եթե ժամերով լռությամբ տարել է «գովեստներու տարափը», ապա միայն այն պատճառով, որ բոլոր գովեստները վերագրել է «անսահման սիրո», ամենաջերմեռանդ պաշտամունքի առարկա հայոց լեզվին ու գրականությանը: Այդ նույն պաշտամունքը ավանդելով երիտասարդությանը և հատկապես «հայրենի հո-

---

1 Տ. Կամսարական, Լևոն Բաշալյանի գրական գործը, «Անահիտ», 1934, № 5—6, էջ 90:

դեն դուրս» գտնվող սփյուռքահայության, նա ասում է. «Եթե կարելի չէ ըսել, թե իր լեզուն գիտցող և սիրող ամեն հայ՝ հայ է մտքով ու սրտով, բայց իր լեզուն չգիտցող և չսիրող հայը՝ պակասավոր ու անդամահատված հայ մըն է աներկբա»: Չէ՞ որ մայր լեզուն «ռուս մեծ գրագետի» (Տուրգենևի—Ս. Մ.) խոսքերով ասած՝ «մխիթարանքը և ապավենն է այն անձկության, տարակուսի ու ցավի օրերուն, ուր կապրինք»[1]: Ձուլման, ուծացման դեմ պայքարի հզոր զենքը՝ մայրենի լեզուն ամուր պահելու-պահպանելու ազնիվ հայրենասիրական կոչ է սա, որն այսօր էլ չի կորցրել իր ուժն ու նշանակությունը:

* * *

Լ. Բաշալյանը ապրեց, ստեղծագործեց և իր մահկանացուն կնքեց իբրև հայրենասեր գրող ու հրապարակագիր, որի նշանաբանը կարելի է համարել՝ «միշտ ժողովրդի հետ, ժողովրդի համար»: Երիտասարդական ամբողջ ավյունով ու խանդավառությամբ նա մաքառեց հարազատ ժողովրդի ազգային զարթոնքի, ազատության, անկախության, հարատևության համար: Սրտի խորին կսկիծով նա տեսավ արևմտահայության անլուր ողբերգությունը և անհուն ցնծությամբ դիմավորեց հայ ժողովրդի վերածնունդը, ազատ ու ապահով կյանքը սովետական իշխանության պայմաններում: Անթերի ու անսխալ չեղան նրա ստեղծագործությունը և գործունեությունը: Նա,

1 Ճառ Լևոն Բաշալյանի, «Անահիտ», 1934, № 5—6, էջ 92:

անկասկած, կոչված էր և ի վիճակի էր ավելի խոշոր ծառայություն մատուցելու մեր գեղարվեստական գրականության, հոգևոր մշակույթին, քան փաստորեն մատուցել է։ Գրական երկնակամարում նա փայլատակեց ասուպի նման, սակայն կարևորն այն է, որ թողեց բավականին լուսավոր հետքեր։ Մենք փորձեցինք անցնել ահա այդ հետքերով, առանց հանգամանորեն անդրադառնալու այն բոլոր նյութերին, որոնք պատկանում են տաղանդավոր գրողի ու հրապարակախոսի գրչին կամ վերաբերում են նրան։ Մեր նպատակն էր հաստատել, որ հանիրավի «մոռացված», ըստ արժանվույն չգնահատված պայծառ դեմքերից մեկի՝ Լևոն Բաշալյանի գրական վաստակը լիովին արժանի է, որպեսզի նրա հեռավոր շիրիմին դրվի շատ համեստ մի հուշարձան, ինչպիսին կուզենայինք տեսնել մեր ներկա գրքույկը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	5
Կյանքի ուղին	10
«Ութսունականների» շարքերում	34
Նորավիպագրության նախափորձը	65
Վերին խավերի վարք ու բարքերից	81
«Խոնարհ հարկերի» պարզ հոգիները	123
Սեր և ընտանեկան «դրամաներ»	156
Արդար Լաբառում և հայրենի հողի սերը	188
Վերջին գործերը, խոսքի վարպետը	227

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՍԱՐԻԲԵԿ ԱՐՄԵՆԱԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

САРИБЕК АРМЕНАКОВИЧ МАНУКЯН

ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆ

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատ. խմբագիր Կ. Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Հրատ. խմբագիր Ա. Հ. ՇԱՂԳԱՄՅԱՆ
Կազմը Ն. Հ. ԽԱՆՋԱԴՅԱՆԻ
Տեխ. խմբագիր Ս. Կ. ՋԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ Փ. Հ. ՄԱԴՍԱՆՅԱՆ

ՎՖ 03314 Հրատ. 2933 ԽՀԽ 1120 Պատվեր 396 Տպաքանակ 1000

Հանձնված է արտադրության 30/IV-1968 թ.: Ստորագրված է տպագրության 20/1-1969 թ., տպագր. 16,75 մամ.+1 ներդիր, հրատ. 8,5. մամ., պայմ. 11,4 մամ., թուղթ № 1, 70×108 1/32: Գինը 74 կոպ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան,
Երևան, Բարեկամության, 24:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0048035

A T/10241